



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱԿՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱԿՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

4(112)2023






ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱհմանադրական ԴԱՏԱՐԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱհմանադրական ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ  
4(112)2023



## Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՅՅԱՆ,  
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Շ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է.  
ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՉԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝  
ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

*Տեղեկագրում տպագրվող գիտական հոդվածներն ամրողությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Սահմանադրական դատարանի պաշտոնական դիրքորոշումների հետ։ Սահմանադրական դատարանը պատասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար։*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ «ՄՈՒՏՔԻ» ՀԱՄԱՐ  
ԱՆՀԱՅԻ ՀԵՄԸ (ԽՆԵՐՑԻԱՅԻ ՈՒԺԸ ԿԱՄ  
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ «ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» ԱՆՏԵՍՈՒՄԸ  
ԻՐԱՎԱԿԻՐԱԾ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ) – **Ա. ԴԱԶԱՐՅԱՆ** ..... 11
  - ՔԱՂԱՔԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԷՈՒԹՅՈՒՆԸ  
ԻՐԱՎՈՒՄԻ «ԵՏ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏՔԱՍՈՒՄ  
**Ա. ԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** ..... 39
  - ԹՄՐԱՀԱՆՁԱԳՈՐԾԻ ԱՆՁԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՄՐԱՀԱՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՆԿԱՐԳԵԼՄԱՆ  
ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ – **Գ. ԻՄՐԱՅԵԼՅԱՆ** ..... 49
- ՊԱՏԱՍԽԱՆԱՆՈՐԻՆ ՄՆԱՆԿ ՃԱՆԱՋԵԼՈՒ ՀԻՄՔՈՎ  
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ԴԵՊՐՈՒՄ  
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԱՆՀԱՅԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՅԸ՝  
ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ – **Ա. ԹԱԴԵՎՈՒՅԱՆ,**  
**Լ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ** ..... 63

### ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

- О ПРАВОМЕРНОСТИ ОДНОСТОРОННЕГО ИЗМЕНЕНИЯ ДОГОВОРА  
БАНКОВСКОГО СЧЕТА ФИНАНСОВОЙ ОРГАНИЗАЦИЕЙ И ПОРЯДОК  
НАДЛЕЖАЩЕГО УВЕДОМЛЕНИЯ КЛИЕНТОВ О ЕГО ИЗМЕНЕНИИ –  
**Р. АМИРОВА**  
(ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲԱԼԿԱՅԻՆ  
ՀԱՇՎԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԶԱՓՈԽԹՅԱՆ ԵՎ ԱՅԴ ՓՈՓՈԽՈՒԹՅՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՊԱՏճԱՃ ԾԱՆՈՒՑԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ - <b>Ռ. ԱՄԻՐՈՎԸ</b> ).....	88
▪ ԵՐԵՒԱՅԻ ԻՆՔՍՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՄԱՆ ԵՎ ԾՆՆԴԻ ԳՐԱՏՑՄԱՆ ՀԻՄՆԱՆԴԻՐՆԵՐԸ ՓՈԽՆԱԿ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏՈՒՄ - <b>Տ. ԱԴԱՄՅԱՆ</b> .....	110
▪ «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒՅԹԻ ԸՆԿԱԾՈՒՄԸ ՈՒԽԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՎԱՔԱՂՔԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ	
▪ (ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՎՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ) - <b>Հ. ԱՄՐԿԻՍՈՎ</b> .....	128
▪ ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ СУРРОГАТНОГО МАТЕРИНСТВА И НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ, ВОЗНИКАЮЩИЕ ПРИ РЕАЛИЗАЦИИ ПРАВА. НРАВСТВЕННЫЕ И РЕЛИГИОЗНЫЕ АСПЕКТЫ - <b>М. АЙՐԱՊԵՏՈՎА</b> (ՓՈԽՆԱԿ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿՄՐՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԻՐԱՎՈՒՄՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԸ. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ - <b>Մ. ՀԱՅՐԱՊԵՏՈՎ</b> ) .....	143
▪ ԱՊՈՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՒՆԱԳԱՆԱՄԱՆ ՀԱՅՅ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԱՌԱՋԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ - <b>Մ. ԻՎԱԶԱՐՅԱՆ</b> .....	168
▪ THE CONSTITUENT ASSEMBLY OF AGHVEN AND THE CONSTITUTION CANONICAL AS THE EXPRESSION OF THE ARMENIAN CONSTITUTIONAL THOUGHT - <b>K. ADAMYAN</b> (ԱՂՎԵՆԻ ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՆՈՆԱԿԱՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԴՐԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ - <b>Կ. ԱԴԱՄՅԱՆ</b> ) .....	193

## **II. «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1699-1708)**

- ՈՌԻՔԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ԳՈՀԱՐ ԳԱԼՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ՕՐԵՆՍԳՐԹԻ 344-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1699, 7 Նոյեմբերի 2023 թվականի) .....205
- «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....242
- 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-ԻՆ ՍՈՉԻՈՒՄ ԱՏՈՐԱԳՐՎԱԾ  
«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԱՍԻԴԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՃԱՆԱՋՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՄԱՁՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ  
(ՍԴՈ – 1700, 21 Նոյեմբերի 2023 թվականի) .....254
- «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....258
- «ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՐԿԱԴԻՐ ՎՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ԱՆՁԱՆՑ՝ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1701, 21 Նոյեմբերի 2023 թվականի) .....267
- «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....272

- 2016 թվականի ՀՈՒՆՎԱՐԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԸՆՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱՁՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1702, 21 Նոյեմբերի 2023 թվականի) .....281
- << ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....286
- 2023 թվականի ՀՈՒԿԻՍԻ 18-ԻՆ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎԱՏՐԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՏՑ ԹՈՒՅԼԵՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1703, 21 Նոյեմբերի 2023 թվականի) .....295
- << ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....300
- ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 26-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ ՆՈՒՅՆ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ (ՄԻՆՉԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ <0-131-Ն ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԳՈՐԾՈՂ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1704, 21 Նոյեմբերի 2023 թվականի) .....309
- 2023 թվականի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՊԵԿ-Ի

Միջաշխազին ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ «ԿԱՆԱԶ, ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՍՏԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1705, 28 Նոյեմբերի 2023 թվականի) .....325	
▪ «ՀԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....332	
▪ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻՋՅԱՆ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի՝ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄՈՒՏՖԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՀԱՋԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՓՈԽԸՆԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՄՐՋԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1706, 5 ԴԵԿՈ�եմբերի 2023 թվականի) .....341	
▪ «ՀԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....345	
▪ ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 398-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1707, 19 ԴԵԿՈ�եմբերի 2023 թվականի) .....355	
▪ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌԵՎԱՐԱՆ ՄԵԿ ՀԻՆգԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ	

ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ, 138-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՏՎՅԱԼ ԱԿՏԻ ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ - 1708, 19 դեկտեմբերի 2023 թվականի) .....	372
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿՈՐ Ա. ՎԱՂԱՐԺՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....	394

### **III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

#### **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է  
ԵԽԵՎԿ ՄՈՒԽԹՈՐԻՆԳԻ ՀԱՆՁԱԺՈՂՈՎԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՄԱՁԵԿՈՒՑՈՂՆԵՐԻՆ.....409
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ՄԱԿ-Ի  
ՀԱՏՈՒԿ ԶԵԿՈՒՅՈՂԸ.....411
- ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵԽ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ  
ՂԵԿԱՎԱՐԻՆ.....412
- ՍԴ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՏՈՒԿ ՄՐՑԱՆԱԿ՝ ԱՐՑԱԽԻՑՆԵՐԻ, ԲՈՒՆԻ  
ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆՍ  
ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ.....413
- ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՀ-ՈՒՄ ԵՄ ԴԵՍՊԱՆԻՆ.....414

#### **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ**

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ Ա.  
ՇԱՀԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ  
ԴՊՐՈՑԻ ԱՃԱԿԵՐՏՆԵՐԸ.....415

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԾՆԿԱԼՎԵԼ ԵՆ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆԻ»  
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ .....416
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԾՆԿԱԼՎԵԼ ԵՆ  
ԳԵՂԱՆԻՍԻ ԵՎ ՔԱՍԱԽԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ  
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ .....417
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԾՆԿԱԼՎԵԼ ԵՆ ՀԱՅ-  
ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ .....418
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԿԱՐԵՎՈՐՈՒՄ Է ԲՈՒՀ-ԵՐԻ ՀԵՏ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈԹՅՈՒՆԸ .....419

### ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՀԱՅ  
ԻՐԱՎԱԲԱՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ .....421
- «Հ Մ ԵՎ ՄԻՊ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ՝ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿԻ» ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ .....423
- ՄԴ ԴԱՏԱՎՈՐ Ա. ԹՈՒՆՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԵՎՐԱՍԻԱԿԱՆ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԻԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ VI ՄԻՋԱՉԳԱՅԻՆ  
ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ .....425
- ԱԳՐԵՍԻԱՆ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ. ՔՆՆԱՐԿՈՒՄ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ .....426
- ՄԴ - ԵԽ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ  
ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ .....427

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԵՐ**

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ Է ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ՍՏՐԱՄԲՈՒՐԳ. .... 428
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՍԵՐԲԻԱ. .... 430
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ Է ԿԱՏԱՐԵԼ ԲԱԹՈՒՄ. .... 431
- <<ՍԴ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԹՈՒՄՈՒՄ ՀԱՆԻՊԵԼ Է ԱԻՀ ԳԻՆ ՆԱԽԱԳԱՀՆ ՀԵՏ. .... 433



## ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ Սահմանադրական դատարանի  
նախագահի օգնական,  
իրավաբանական գիրությունների  
թեկնածու

### **ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅՑԹ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ «ՄՈՒՏՔԻ» ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇԸ «ԿԱՍԿԱԾԻ» ՇԵՄԸ (ԻՆԵՐՑԻԱՅԻ ՈՒԺԸ ԿԱՄ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ «ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» ԱՆՏԵՍՈՒՄԸ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ)**

#### **Ամփոփագիր**

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) ուժի մեջ մտնելու այս արդեն ոչ կարճ ժամանակահատվածում ի հայտ եկավ հետաքրքիր մի հանգամանք, հայկական իրավակիրառ պրակտիկան չնկատեց (կամ անտեսեց) այն առանցքային, բնորոշման մեջ շռայլ չէ ասել՝ անգամ հեղափոխական փոփոխությունը, որ տեղ էր գտել օրենսգրքում և ուղիղ կապված էր անձի մեղադրյալի կարգավիճակի հետ:

Իրավակիրառ պրակտիկան չնկատեց (կամ անտեսեց) Օրենսգրքով հանրային մեղադրանքի գործերով մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ «կասկածի» «խորհրդային» շեմից հրաժարումը և կասկածի բոլորովին նոր շեմի, չափանիշի սահմանումը:

Միևնույն ժամանակ, սակայն, հոդվածում փորձ է արվում հիմնավորվել, որ օրենսդիրը հրաժարվել է «խորհրդային» «կասկածի» շեմից միայն մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար, իսկ մեղադրյալի

մինչդատական վարույթից (դեպի դատական վարույթ) «Ելքի» համար այդ չափանիշը պահպանվել է:

Սույն հոդվածը նվիրված է մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար կասկածի շեմերի փոփոխության հարցերին, քննարկվում է նման փոփոխության անտեսումը իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև բացահայտվում նման փոփոխությունների պայմաններում քրեադատավարական մի շարք երաշխիքների կենսագործման հնարավորությունները:

**Հիմնաբառեր.** մեղադրյալ, կասկածի շեմ, նվազագույն կասկած, հիմնավոր կասկած, բավարար ապացույցների համակցություն, քրեական վարույթի սուբյեկտ, քրեական վարույթի օբյեկտ:

### 1. Ընդհանուր դրույթներ

Մեղադրյալի «մուտքը» քրեական դատավարություն տեղի է ունենում երկու ձևով. (1) դատախազի կողմից հանրային քրեական հետապնդում հարուցելու (Օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մաս, 6-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետ) կամ (2) մասնավոր մեղադրանքի գործերով տուժողի կողմից դատարան ներկայացրած քրեական հայցի հիման վրա դատարանի կայացրած քրեական վարույթ սկսելու որոշման հիման վրա (Օրենսգրքի 453-րդ հոդվածի 2-րդ մաս):

Նախկինում այն դատավարական որոշումը, որով տեղ էր գտնում մեղադրյալի «մուտքը» քրեական դատավարություն, հենց կոչվում էր «անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում» (1998 թ. ք.դ.դատ.օր.-ի 202-րդ հոդված), նոր օրենսգրքով հանրային մեղադրանքի գործերով այդ դատավարական ակտը անվանափոխվեց՝ հիմք ընդունելով ոչ թե դրա արդյունքը (մեղադրյալի «մուտքը»), այլ՝ այդ ակտի գործառնական նշանակությունը՝ դրանով ազդարարվող ձևական քրեական հետապնդման հարուցման սկիզբը: Ըստ այդմ՝ ակտն անվանակոչվեց «հանրային քրեական հետապնդում հարուցելու» որոշում:

## 2. Քրեական վարույթ մեղադրյալի «մուտքի» (կարգավիճակ ձեռք բերելու) համար անհրաժեշտ «կասկածի» շեմը<sup>1</sup>

Մեղադրյալի, նրա օրինական շահերի ապահովման տեսանկյունից առանցքային կարևորություն է ստանում այն հարցը, թե «կասկածի» ի՞նչ շեմի առկայության դեպքում է, որով պաշտոնապես (ձևական առումով) քրեական հետապնդում հարուցելու պաշտոնական փաստաթղթում պետք է ամրագրվի մեղադրյալի մուտքը քրեական դատավարություն:

### 2.1. Քրեական վարույթ մեղադրյալի «մուտքի» համար անհրաժեշտ «խորհրդային»<sup>2</sup> կասկածից վեր, համոզմունքի չափանիշի ձևավորումը

Հարցի վերաբերյալ ոռւսական և հայկական մասնագիտական գրականության մոտեցումը (1800-ական թվականների վերջերից սկսած) եղել է այն, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ է «կասկածի» խիստ բարձր ասդիմանի շեմ:

Այսպես, եթե 1800-ականների վերջի և 1900-ականների առաջին տասնամյակի գրականության մեջ (մինչհեղափոխական գրականության)<sup>3</sup> նշվում էր, որ նման որոշման կայացման համար անհրաժեշտ էր «համոզվել, որ քննությանը ներգրավված անձը հիմնավորապես կասկածվում է հանցանքի մեջ»<sup>3</sup> (ընդգծումը՝ Հեղ.), ապա արդեն 1930-40-ականներից սկսած իրավակիրառ պրակտիկայում անձին որպես մեղադրյալ էին ներգրավում միայն նրա մեղավորության խիստ բարձր կասկածի շեմի առկայության, իսկ հետո նաև՝ կասկածից վեր ապացուցվածության՝ համոզման շեմի առկայության պայմաններում:

Այդպիսի մոդեռնան արդյունքում, որով ըստ Էության կա'մ կասկածի չափանց բարձր, կա'մ կասկածից վեր՝ համոզման, շեմ էր դրվում անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման կայացման համար, ժամանակային առումով ինքնարերարար հետ էր ընկնում այդ որոշման կայացումը և, որպես արդյունք, մեղադրյալի «մուտքը» (անձի՝ մեղադրյալի

<sup>1</sup> Հոդվածում քննարկվելու են միայն հանրային մեղադրանքի գործերով մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» և մեղադրյալի՝ մինչդատական վարույթից (դեպի դատական վարույթ) «ելքի» համար անհրաժեշտ «կասկածի» շեմերի հարցերը:

<sup>2</sup> Խոսքը Հոկտեմբերյան հեղափոխության մասին է:

<sup>3</sup> Տե՛ս **Фойницкий И.Я.** Курс уголовного судопроизводства. Том I. Издание 4-е. – СПб: Типография товарищества "Общественная польза", 1912, էջ 75:

կարգավիճակ ձեռք բերելը) հեղաձգվում էր դեպի մինչդադական վարույթի ավարտական փուլ<sup>1</sup>:

Այս պրակտիկան պատկերավոր նկարագրում է խորհրդային անվանի դատավարագետ Մ. Չելցովը՝ նշելով, որ գործի նյութերը սպառիչ հավաքելուց հետո էին քննիչները նոր միայն որոշում կայացնում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, հարցաքննում նրան, իսկ այնուհետև՝ հայտարարում քննության ավարտի մասին<sup>2</sup>:

Թեև այդ պրակտիկան սկզբնական շրջանում միանշանակ չէր ընդունվում գիտական հանրության կողմից, և որոշ ականավոր դատավարագետներ շարունակում էին պնդել, որ որպես մեղադրյալ ներգրավելու համար ոչ թե համոզմունքի առկայություն, այլ միայն կասկածի որոշակի չնչին շեմի առկայություն է անհրաժեշտ, և որ անձին իբրև մեղադրյալի ներգրավումը և նրանից հարցաքննությամբ ցուցմունքներ ստանալը ոչ մի դեպքում չպետք է լինեն վերջին քննչական գործողությունները<sup>3</sup>, այնուամենայնիվ, իրավակիրառ պրակտիկան և գիտական հանրության մեծամասնությունը, այլ՝ հակառակ մողեցման կողմանկից էր: Մեծամասնության տեսակետն այն էր, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ է իրավասու մարմնի ըստ էռության բացարձակ համոզվածությունը անձի կողմից հանցանքի կարարման մեջ<sup>4</sup>:

1960-ականներին մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար գիտության մեջ և իրավակիրառ պրակտիկայում գերակշռող այդ մոտեցումն արդեն օրենսդրական ամրագրում ստացավ. քրեական դատավարության օրենսգրքում ուղիղ ամրագրվեց որպես մեղադրյալ ներգրավելու որոշում կայացնելու ոչ թե կասկածի, այլ անհրաժեշտ

<sup>1</sup> Ste'у Коновалов С.Г. Постсоветские реформы досудебного производства в свете германских процессуальных институтов. - М.: ИД «Городец», 2023, Էջ 165:

<sup>2</sup> Ste'у Чельцов-Бебутов М.А. Обвиняемый и его показания в советском уголовном процессе.

- М.: Изд-во Министерства Юстиции СССР, 1947, Էջ 15:

<sup>3</sup> Ste'у Чельцов-Бебутов М.А. Նշվ. աշխ., Էջ 15:

<sup>4</sup> Ste'у Полянский Н.Н. Вопросы теории советского уголовного процесса. - М. 1956, Էջ 186, Жогин Н.В., Фаткуллин Ф.Н. Предварительное следствие в советском уголовном процессе. - М., 1965, Էջ 191-192:

«համոզմունքի» շեմ պահանջող չափանիշը<sup>1</sup> այդ որոշման համար ծևակերպելով բանաձևային նշանակություն ունեցող հանրահայր «բավարար ապացույցների համակցության» չափանիշը:

Այդ կերպ, հայկական քրեական դատավարություն մտավ «բավարար ապացույցների համակցության» հիման վրա անձի կողմից հանցանք կատարելու համոզմունքի չափանիշը (1961թ. ՀԽՍՀ քր.դատ.օր.-ի 135-րդ հոդված), որը պահպանվեց **մինչ 2021թ.** (1998թ. քր.դատ.օր.-ի 202-րդ հոդված):

Արդեն 1980-ականների վերջերին քրեական դատավարության ամենահեղինակավոր դասագրքերում (կուրսերում) տեղ գտած մոտեցումներով անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշում կայացնելու համար անհրաժեշտ կասկածի շեմի վերաբերյալ այդ մոտեցումն ըստ էության առանցքային կերպով գերիշխող դիրք ուներ:

Ավելին, այդ ժամանակաշրջանում դոկտրինում սկսեց ծևավորվել այն մոդեցումը, որ «բավարար ապացույցների համակցությունը» կարող է ծևավորված համարվել, եթե գործով ձեռք բերված ապացույցներով ապացուցվեն **հանցակազմի բոլոր փարրերը**, այդ թվում՝ անձի մեղավորությունը: Գիրության մեջ նշվում էր, որ միայն այդ դեպքում է, որ ապացույցների համակցության գնահատման հիման վրա հնարավոր կլինի

<sup>1</sup> Անգամ օրենսդրութեն «բավարար ապացույցների համակցության» չափանիշի ամրագրումց հետո էլ գիտության մեջ փորձեր եղան հակազդելու որպես մեղադրյալ ներգրավելու համար «համոզմունք» ունենալու չափանիշին, սակայն, ապարդյուն: Այսպես, օրինակ, խորհրդային ականավոր քրեադատավարագետներից Մ. Ստրոգովիչն այս առնչությամբ նշում էր. «Օրենքը չի խոսում այն մասին, որ այդ ապացույցները պետք է բավարար լինեն մեղադրյալին մերկացված համարելու, մեղավոր համարելու, մեղադրյալին հանցազործ համարելու համար»: Գիտնականը նկատում էր, որ անձին որպես մեղադրյալ ներգրավումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունն ապացուցված է, քանի որ «հենց իր՝ քննիչի համար անգամ անձին որպես մեղադրյալ ներգրավելը չի համարվում մեղադրյալի մեղավորության մասին վերջնական եզրահանգում» (ընդգումներ՝ հեղ.) (տե՛ս **Строгович М.С.** Պրաво обвиняемого на защиту и презумпция невиновности / М.С. Строгович; под ред. [и с предисл.] Савицкого В.М. - Москва: Наука, 1984, էջ 33): Նոյն ժամանակներում, մեղադրյալ ներգրավելու կասկածի շեմի բարձրացման միտումի դեմ ընդվզում էին այլ հեղինակներ, օրինակ, Ա. Լարինը գրում էր, որ մեղադրյալ ներգրավելու որոշմամբ (հեղինակը օգտագործում է քրեական պատասխանատվության ներգրավել հնացած եզրույթը): «... մեղադրյալի մեղավորության մասին քննիչի եզրահանգումը վերջնական չէ, հավասարի չէ, այլ նախնական է, ինդրահարուց, հավանական գիտելիք է, այսինքն հանդիսանում է վարկածներից մեկը» (ընդգծում՝ հեղ.) (տե՛ս **Ларин А.М.** От следственной версии к истине. - М.: Юрид.лит., 1976, էջ 143):

«հավասպի» եզրահանգման հանգել առ այն, որ անձը կափարել է իրեն վերագրվող հանցանքը, այլ կերպ ասած՝ միայն այդ պայմաններում է, որ կարող է առկա համարվել անձի կոմից հանցանք կափարելու իրավասու մարմնի **համոզմունքը**:

Այսպես, խորհրդային քրեական դատավարության վերջին կուրսի հենինակները այս առումով գրում էին. «(...) անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ է հաստատել հանցագործության դեպքը հասպարող փասփական հանգամանքները, կափարված արարքում հանցակազմի առկայությունը և բավարար լինեն միայն ենթադրելու, այլ ոչ թե համոզելու համար, որ հանցագործությունը կափարել է որպես մեղադրյալ ներգրավված անձը։ Գործնականում դա կարող է հանգեցնել քաղաքացիների անհիմն հետապնդման և քաղաքացիների անձնական և գույքային իրավունքների ոտնահարման։ (...) Այդ իսկ պատճառով որպես մեղադրյալ ներգրավմանը պեսքը է նախորդի անձի մեղավորության համոզմունքը՝ հիմնված բոլոր ապացուցների համակցության գնահատականի վրա։ Այլ կերպ ասած՝ քննիչը պետք է ունենա տվյալների այնպիսի ամբողջականություն, որը բավարար հիմքեր կտար որպես մեղադրյալ ներգրավելու հիմքերի առկայության մասին հավասպի, այլ ոչ թե հավանական եզրակացության համար» (Ընդգծումներ՝ հետ):<sup>1</sup>

### Միջանկյալ եզրահանգումներ

Որոշակիորեն ընդհանրացումներ անելով կարելի է փասփել, որ խորհրդային դատավարական գրականության ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ թե՛ դրկորինալ մակարդակում, թե՛ նաև իրավակիրառ պրակտիկայում կար միտում էլ ավելի բարձրացնելու անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար կասկածի առանց այն էլ բարձր՝ դեռ 1800-ականների վերջերից ձևավորված շեմը։

<sup>1</sup>Տե՛ս Կурс советского уголовного процесса. Общая часть / Алексеев В.Б., Алексеева Л.Б., Божьев В.П., Бойков А.Д., и др. / Под ред. Бойкова А.Д., Карпецца И.И. - М.: Юрид. лит., 1989, էջ 458-459:

Արդյունքում՝ խորհրդային գիտության մեջ գերակշռող ընկալում ձևավորվեց, որ քրեական վարույթ մեղադրյալի «մուտքի» համար անհրաժեշտ է կասկածից վեր չափանիշ՝ **համոզմունք**, որն էլ հետագայում արդեն ձևակերպվեց խորհրդային օրենսդրի կողմից հանրահայք «բավարար ապացույցների համակցություն» բանաձևային նշանակություն ունեցող բառակապակցությամբ:

«Բավարար ապացույցների համակցությունը» հավասարվեց հանցակազմի բոլոր դարրերի ապացուցվածության և անձի մեղավորության մասին համոզմունքին:

**2.2. Քրեական վարույթ մեղադրյալի «մուտքի» համար «կասկածի» անհրաժեշտ շեմի վերաբերյալ ժամանակակից ոռուական մուտեցումները**

Ժամանակակից ոռուական հեղինակավոր դասագրքերում և քրեական դատավարության օրենսգործի գիտագործնական մեկնաբանություններում նույնպես պահպանվում է մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար կասկածից բարձր՝ համոզմունքի շեմի խորհրդային իրավունքից եկող մոտեցումը:

Ուստի գիտնականները նշում են, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ է, որ բավարար ապացույցներով, այսինքն՝ վերաբերելի, թույլավորելի և հավասարի ապացույցների համակցությամբ հասլաղվեն ապացուցման ենթակա այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են դեպքը (ժամը, տեղը, միջոցը և հանցանքի կատարման այլ հանգամանքները), անձի մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, նրա մեղքի ձևն ու հանցանքի կարարման շարժադիրը, այն հանգամանքները, որոնք բնութագրում են մեղադրյալին, ինչպես նաև հանցանքով պատճառված վնասի բնույթն ու չափը<sup>1</sup>: Ըստ այդմ՝ նշվում է,

<sup>1</sup> Տե՛ս Կурс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. Л.В. Головко. - М.: Статут, 2017, էջ 735, տե՛ս նաև՝ mutatis mutandis Научно-практический комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации/ Под общ. ред. В.М. Лебедева; науч. ред. В.П. Божьев. - 7-е изд., перераб. и доп. - М.: Изд. Юрайт, 2010, էջ 529:

որ այս որոշմամբ արձանագրվում է, որ անձի կողմից հանցանք կատարած լինելու կասկածը վեր է ածվել համոզվածության<sup>1</sup>:

Վերջին հրատարակություններում արդեն այս մոտեցումը էլ ավելի է խորանում: Այսպես, օրինակ, դոկտոր Ս. Ռոսսինսկին, արձանագրելով, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար «բավարար ապացույցների համակցությունը» պեղը է «(... կանխորոշի քննիչի գործնականում բացարձակ համոզվածությունը վերագրվող քրեորեն հեղապահության արարքի կարարմանը անձին մերկացման մեջ»<sup>2</sup>, նշում է, որ այդ որոշումը նախնական քննության, քննիչի աշխատանքների արդյունքը պետք է լինի, որ այդպիսի որոշում կայացնելիս քննիչը պետք է «բացարձակ համոզված լինի իր կողմից ներկայացված քրեական պահանջի անվիճելիության և ապացուցվածության մեջ, այսինքն՝ մեղադրանքի կողմի համար դրական ելքով քրեական գործի հետագա դատական հեռանկարի մեջ»<sup>3</sup> և որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշմամբ, որպես ընդհանուր կանոն, պեղը է ավարտվի նախնական քննության հիմնական, այսինքն՝ «քննության» փուլը<sup>4</sup>:

Այս առնչությամբ գիրնականը նշում է, որ այդ որոշումը պեղը է «...հանդիսանա ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների հաստատման ուղղությամբ կատարված քննչական (այլ դատավարական) գործողությունների համակցության տրամաբանական ավարտը և իրականացվի (կայացվի՝ Հեռ.) քրեական գործի նյութերը հետագա

<sup>1</sup>Տե՛ս Կոնովալօ Ս.Գ. Постсоветские реформы досудебного производства в свете германских процессуальных институтов. - М.: ИД «Городец», 2023, էջ 166: Այս համատեքստում ուշադրության է արժանի, որ անձին վաղաժամ մեղադրյալ ներգրավելը մեղադրանք ներկայացնելու համար հիմք ծառայող բավարար ապացույցների համակցության բացակայության պայմաններում Ռուսաստանի բարձր դատարանների կողմից ևս քննադատվել է ու գնահատվել իրև օրենքի պահանջների չպահպանում և անձի ու քաղաքացու իրավունքների ու ազատությունների անհիմն սահմանափակում, տե՛ս Определение Конституционного Суда РФ от 21.12.2004 N 467-О "По жалобе гражданина Петра Ефимовича на нарушение его конституционных прав положениями статей 46, 86 и 161 Уголовно-процессуального кодекса Российской Федерации":

<sup>2</sup>Տե՛ս Ռոսսինսկի Ս.Բ. "Пилотные" обвинения в досудебном производстве по уголовному делу не только противозаконны, но и безнравственны // Судебная власть и уголовный процесс, 2021, № 3, էջ 77:

<sup>3</sup>Տե՛ս Ռոսսինսկի Ս.Բ. նշվ. աշխ., էջ 77:

<sup>4</sup>Տե՛ս Ռոսսինսկի Ս.Բ. նշվ. աշխ., էջ 79:

քննության համար դատարան ուղարկելու նախաշեմին»<sup>1</sup>: Ուստիև, հեղինակը իսպագոյն քննադատության է ենթարկում նախնական քննության ավելի վաղ փուլում որպես մեղադրյալ ներգրավելու այն իրավակիրառ պրակտիկան, երբ քննիչները որոշում են կայացնում անձին որպես մեղադրյալ ներգրավելու՝ առանց մեղադրյալի հանցանքի մեջ մեղավորության համոզմունքի՝ այդպիսի որոշումներն անվանելով «պիլուգային» մեղադրանքներ<sup>2</sup>, որոնք, ըստ նրա, ապօրինի են և բարոյական տեսանկյունից խնդրահարույց:

**2.3. Քրեական վարույթ մեղադրյալի «մուտքի» համար «կասկածի» անհրաժեշտ շեմի վերաբերյալ ժամանակակից հայկական մոդեցումները (1998 թ. << քրեական դատավարության օրենսգրքի գործողության պայմաններում)**

1998 թ. քրեական դատավարության օրենսգրքը նույնպես պահպանել էր քրեական դատավարություն մեղադրյալի «մուտքի» համար (որպես մեղադրյալ ներգրավելու որոշման համար) կասկածից բարձր՝ համոզմունքի շեմը ամրագրող չափանիշը: 1998 թ. քր.դատ.օր.-ի 202-րդ հոդվածի 1-ին մասում իր ամրագրումն էր ստացել անձի մեղավորության մասին համոզմունքի, հանցակազմի բոլոր տարրերի ապացուցվածության խորհրդային բանաձևումը. անձը կարող էր որպես մեղադրյալ ներգրավվել հանցանքի մասին վկայող «բավարար ապացույցների համակցության» հիման վրա: Ըստ այդմ՝ թե՛ դոկտրինը<sup>3</sup> և թե՛ իրավակիրառական պրակտիկան, պահպանելով խորհրդային իրավունքին բնորոշ մեղադրյալի «մուտքի» համար կասկածի այդ բարձր շեմը, նաև պահպանում էին ավանդական այն մոտեցումը, ըստ որի ապացույցների «բավարարության» շեմը առկա կլինի, երբ այն «ներառի հանցակազմի բոլոր պարփառիր հավկանիշները բնութագրող փաստական դիմումները»<sup>4</sup>:

<sup>1</sup>Տե՛ս **Россинский С.Б.** նշվ. աշխ., էջ 79:

<sup>2</sup>Տե՛ս **Россинский С.Б.** նշվ. աշխ., էջ 81:

<sup>3</sup>Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ), Մաս 2, Գիտ., խմբ. Ա. Ղամբարյան, Երևան, Տիգրան Մեծ, 2017, էջ 381:

<sup>4</sup>Տե՛ս Վոճարեկ դատարանի 05.11.2010 թ. կայացրած թիվ **ՏԴ/0115/01/09 որոշման** 18-րդ կետը:

Այլ կերպ ասած՝ որպես մեղադրյալ ներգրավելու «բավարար ապացույցների համակցության» չափանիշը ևս մեկնաբանվում և կիրառվում էր այնպես, ինչպես ավանդական խորհրդային մոտեցման դեպքում էր. դրա համար անհրաժեշտ էր «կասկածից» վեր շեմ՝ *հանցակազմի բոլոր հարկանիշների ապացույցների համակցությամբ հասցարում* (անձի պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների պարզումն այդ որոշման համար ոչ պարտադիր էր և կարող էին բացահայտվել վարույթի հետագա ընթացքում<sup>2)</sup>):

Նման պայմաններում, հատկապես 2000-ականների սկզբերի իրավակիրառ պրակտիկայում հաճախ էր հանդիպում անձին որպես մեղադրյալ ներգրավումը նախաքննության ավարտին մոտեցող պահերին<sup>3</sup>:

### **3. Քրեական վարույթ մեղադրյալի «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի «խորհրդային» բարձր շեմի դիլեման**

Քրեական վարույթ մեղադրյալի «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի բարձր շեմը հիմնավորվում էր անձին քրեական հետապնդման չենթարկելու, նրա անձնական և գույքային իրավունքներն անհարկի չսահմանափակելու նպատակով:

Սակայն, մեղադրյալի վարույթ «մուտքի» համար կասկածի շեմի բարձրացմանն ուղիղ համեմատական «հետաձգվում էր» անձի կողմից մեղադրյալի կարգավիճակի ձեռքբերումը նախաքննության ընթացքում՝ տեղափոխելով մեղադրյալի «մուտքը» նախաքննության վերջնամաս:

Իր հերթին մեղադրյալի «մուտքը» նախաքննության վերջնամաս տեղափոխելը ստեղծում էր մի վիճակ, երբ անձը, ում նկատմամբ առկա էին որոշ տվյալներ, որոնք վկայում էին նրա կողմից հանցանք կատարելու հնարավորության մասին, ավելին, անգամ այն դեպքերում, երբ նրա՝

<sup>1</sup>Տե՛ս՝ նաև՝ **Բիշարյան Կ.Ա.** Подозреваемый и защита его прав в уголовном процессе Республики Армения. Монография / Под ред. проф. В.П. Божьева. - Еր., 2007, էջ 27:

<sup>2</sup>Տե՛ս, օրինակ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ), Մաս 2, Գիտ., խմբ. Ղամբարյան Ա., Երևան, Տիգրան Մեծ, 2017, էջ 377:

<sup>3</sup>Տե՛ս՝ **Ավագյան Վ.**, Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը, - Եր.: «Օրենք և իրականություն» հրատ., 2006, էջ 135-136:

հանցանքի կատարման մերկացման ուղղությամբ կարող էին կատարվել քննչական գործողություններ, հանդես չէր գալիս վարույթում իրեն սուբյեկտ, նա չէր օժտվում հստակ կարգավիճակով և շարունակում էր վարույթին մասնակցել ոչ թե մեղադրյալի, այլ՝ առավելագույնը վկայի կարգավիճակում՝ չունենալով իր դեմ իրականացվող փաստացի քրեական հետապնդումից պաշտպանվելու հնարավորություն և **այդպիսով իսկ վարույթում հանդես գալով առավելապես իրեն օբյեկտ<sup>1</sup>:**

Այլ կերպ ասած՝ մեղադրյալի քրեական վարույթ «մուգքի» համար շեմի բարձրացումը սպեհուում էր մի դիլեմա. խորհրդային օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան, դոկտրինը անձի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության նպատակով մեղադրյալի քրեական վարույթ «մուգքի» համար որքան բարձրացնում էին կասկածի շեմը, այնքան վրանգվում էր ենթադրյալ հանցանք կարարած անձի (փաստացի քրեական հերապնդման վիճակում գտնվող անձի) իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, քանի որ վերջինս չէր ունենում իր դեմ իրականացվող փաստացի քրեական հերապնդմանը հակազդելու որևէ իրավական կարգավիճակ: **Ուստիև վերջինս գործնականում մինչդադար կարույթին (մինչ դրա վերջնամասը) հանդես էր գալիս առավելապես իրեն օբյեկտ:**

4. Քրեական հերապնդման ենթարկվող անձի կարգավիճակի փարբերակումը (դիֆերենցացիան)<sup>1</sup> իրեն խորհրդային (հերփորհրդային) իրավունքում մեղադրյալի քրեական վարույթ «մուգքի» համար անհրաժեշտ կասկածի «խորհրդային» բարձր շեմի գործարկման անհրաժեշտ պայման

<sup>1</sup> Մարդու, նրա արժանապատվության պետության կողմից արժնորման և քրեական դատավարությունում մեղադրյալի սուբյեկտայնացման կապի, այդպիսի արժնորման բացակայության և քրեական դատավարությունում մեղադրյալի<sup>1</sup> իրու դատավարական օբյեկտ հանդիսանալու հարցերի մասին, տե՛ս **Ղազարյան Ա.**, Մայրցամաքային խառը տիպի քրեական դատավարությունում մեղադրյալի սուբյեկտայնացման համընդիանուր միտումը և դրան հակառակ ընթացող հայկական օրենսդրական զարգացումները (Վերաբնիշ դատարանում գրավիր ընթացակարգով կալանքի (դրա երկարաձգման) միջնորդությունների քննության արդյունքում կայացված որոշումների վերանայման լույսի ներքո), << Սահմանադրական դատարան, Տեղեկագիր, Նո 3 (111), 2023 թ., Էջ 67-111:

**Խորհրդային** իրավակիրառ պրակտիկան (sic!), բախվելով վերը նշված խնդրին, վերադարձեց քրեական հետապնդման ենթարկվող անձի **սուբյեկտայնությունը**. սկսեց աստիճանաբար ձևավորել մի նոր սուբյեկտ՝ «կասկածյալ» սուբյեկտ, որը հետագայում արդեն՝ 1960-ականներից սկսված, իր ամրագրումը ստացավ խորհրդային (հետխորհրդային) քրեական դատավարության, այդ թվում՝ հայկական օրենսգրքերում:

Այսինքն՝ խորհրդային (հետխորհրդային) իրավունքում մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի բարձր շեմով ստեղծվող բացը սկսեց լրացվել և քրեական հետապնդման ենթարկվող անձի օբյեկտայնացման խնդիրը լուծվել քրեական հետապնդման ենթարկվող անձի կարգավիճակի տարրերակմամբ (դիֆերենցացիայով): ըստ կասկածի աստիճանի:

Քրեական հետապնդման ենթարկվող անձը մինչ մեղադրյալի կարգավիճակ ստանալը, այսինքն՝ մինչ վարույթն իրականացնող մարմնի<sup>1</sup> նրա կողմից հանցանքի կարարման կասկածից բարձր՝ համոզմունքի ձևավորումը (մինչ անձի մեղավորության և հանցակազմի բոլոր այլ գործությունների ապացուցումը), հնարավոր է ստանար կասկածյալի կարգավիճակ՝<sup>1</sup> այդպիսով ձեռք բերելով սուբյեկտի կարգավիճակ մինչդադարական վարույթի ավելի վաղ շրջանում, որով էլ հնարավոր էր դառնում որոշակիորեն լուծել նրա իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության խնդիրը:

5. Քրեական հետապնդման ենթարկվող անձի կարգավիճակի միասնականացումը (ունիֆիկացիան) և մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի շեմի իջեցումը, որպես քրեական հետապնդման ենթարկվող անձի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության միջոց

<sup>1</sup> Եթե 1998 թ. << քր.դատ.օր.-ով կար կասկածյալի կարգավիճակի ձեռքբերման երկու հիմք՝ ձերբակալվելը կամ խափանման միջոց անձի նկատմամբ կիրառվելը (1998 թ. քր.դատ.օր.-ի 62-րդ հոդվածի 1-ին մաս), ապա, օրինակ, ՈԴ օրենսդրությունը, անձի կարգավիճակի ձեռքբերման ինքնուրույն հիմք է դիտարկում նաև անձի նկատմամբ քրեական գործի հարուցումը, ինչպես նաև կասկածի մասին տեղեկացումը (ՈԴ քր.դատ.օր.-ի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետեր):

Քրեական հետապնդման ենթարկվող անձի կարգավիճակի միասնականացումը (ունիֆիկացիան)<sup>1</sup>, ուղիղ ազդեցություն է ունենում մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի շեմի ցածրացման վրա: Բանն այն է, որ քրեական հետապնդման ենթարկվող անձի միասնականացման պայմաններում, երբ քրեական հետապնդման ենթարկվող անձը քրեական վարույթում ունենում է (կարող է ունենալ) միայն մեկ դատավարական կարգավիճակ՝ մեղադրյալի<sup>2</sup> կարգավիճակ, ապա արդեն մեղադրյալի քրեական վարույթ մուտքի համար կասկածի բարձր (կամ կասկածից բարձր՝ համոզմունքի) շեմ դնելը խնդիր կսղեղծի փաստացի քրեական հետապնդման վիճակում գտնվող անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար. վերջինս տևական ժամանակ՝ մինչև կասկածի (կամ կասկածից բարձր՝ համոզմունքի) համար անհրաժեշտ շեմին հասնելը, չի ստանա դատավարական կարգավիճակ, այսինքն՝ մինչ մինչդատական վարույթի վերջնամասը գրկված կինքի իր սուբյեկտայնությունից, ըստ այդմ նաև՝ գրկված լինելով իր իրավունքների ու օրինական շահերի (արդյունավետ) պաշտպանության հնարավորությունից:

Ոստին՝ փաստացի քրեական հետապնդման վիճակում գտնվող անձի կարգավիճակի միասնականացմանը (ունիֆիկացիային) գուգահեռ ազգային քրեադատավարական համակարգերում **իջեցվում է** (պետք է իջեցվի) մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի շեմը՝ այդպիսով իսկ ապահովելով վարույթի վաղ փուլերից մեղադրյալի իրեն սուբյեկտ հանդես գալու հնարավորությունը: Համանման մոտեցում է որդեգրել նաև Օրենսգիրքը:

**6. Քրեական դատավարության գործող օրենսգրքով մեղադրյալի՝ քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի շեմի նվազեցումը**

<sup>1</sup> Այս միտումը տեղ է գտնում ժամանակակից հետխորհրդային մի շարք երկրներում (Ռուսաստան, Լիտվա, Էստոնիա և այլն), մանրամասն տե՛ս **Կոնօվալօվ Ս.Ռ.** նշվ.աշխ., էջ 172-179:

<sup>2</sup> Որոշ երկրներում՝ միայն կասկածյալի:

Օրենսգրքում քրեական հետապնդման ենթարկվող անձի կարգավիճակը ունիֆիկացված է. Օրենսդիրը հրաժարվել է կասկածյալի կարգավիճակից, և, չհաշված ձերբակալվածի խիստ կարճատև կարգավիճակը, սահմանում է քրեական հետապնդման ենթարկվող անձ մեկ միասնական մեղադրյալի կարգավիճակ:

Նման պայմաններում արդեն վարույթ մեղադրյալի «մուտքի» համար «խորհրդային»՝ կասկածից բարձր՝ հանցանքի կատարման մեջ անձի մեղավորության մասին համոզմունքի շեմի պահպանումն ուղղակիորեն կվտանգեր քրեական հետապնդման ենթարկվող անձի նախաքննության փուլում սուբյեկտայնությունը: Վերջինս, չունենալով այլընտրանքային որևէ կարգավիճակ, նախաքննության մեծագույն հատվածում առավելապես հանդես կգար իբրև քննության օբյեկտ՝ չունենալով որևէ կարգավիճակ. միայն նախաքննության վերջին մոտեցող մասում, երբ կհավաքվեին «քավարար ապացույցներ», այսինքն՝ նախաքննության ավարտի հայտարարումից առաջ միայն (ինչպես որ իրականացվում էր խորհրդային 1930-40-ականն ներկայացված ժամանակներում) անձը ձեռք կբերեր դատավարական մեղադրյալի կարգավիճակ, որպիսի իրավիճակը ուղիղ հակասության մեջ է մտնում անձի արժանապատվության հետ<sup>1</sup>, այնպես էլ առանցքային կերպով ներազդում է մեղադրյալի պաշտպանության իրավունքի արդյունավետության վրա:

Ուստի այս համատեքստում բախսվելով նման խնդրի՝ Օրենսդիրը կամա-ակամա բախսվեց մեղադրյալի «վարույթի» մուտքի համար անհրաժեշտ կասկածի շեմի իջեցման խնդրին:

Որպես լուծում Օրենսդիրը հանրային քրեական հետապնդում հարուցելու որոշման համար հրաժարվեց կասկածից վեր՝ բարձր շեմ ամրագրող «խորհրդային» «քավարար ապացույցների համակցություն» համոզմունքի չափանիշից (1998 թ. քր.դատ.օր.-ի 202-րդ հոդվածի 1-ին

<sup>1</sup> Տե՛ս Դագարյան Ա., Մայոցամաքային խառը տիպի քրեական դատավարությունում մեղադրյալի սուբյեկտայնացման համընդիանուր միտումը և դրան հակառակ ընթացող հայկական օրենսդրական զարգացումները (Վերաբնիչ դատարանում գրավոր ընթացակարգով կայանքի (որու երկարաձգման) միջնորդությունների քննության արդյունքում կայացված որոշումների վերանայման լույսի ներքո), << Սահմանադրական դատարան, Տեղեկագիր, Նո 3 (111), 2023 թ., էջ 67-111:

մաս), փոխարինելով այն բոլորովին այլ՝ «անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի» չափանիշով (Օրենսգրքի 189-րդ հոդված):

Հենց իրենք՝ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հեղինակներն այս առիթով գրում են. «(...) Օրենսգիրքը հրաժարվել է **կասկածյալին** վարույթի մասնավոր մասնակից համարելուց (...) Դա պայմանավորված է երկու հանգամանքով.

1/ **Էապես իջել է անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համար անհրաժեշտ ապացուցողական շեմը**, այսինքն՝ քրեական վարույթում մեղադրյալ ունենալու համար այսուհետ բավարար է անձի կողմից **հանցանքի կատարումը վկայող փաստերի առկայությունը**,

2/ **մեղադրյալ չհանդիսացող, սակայն հանցագործության մեջ կասկածվող անձը վարութային հարաբերություններին մասնակից կարող է դառնալ միայն մեկ ձևով՝ երբ ձերբակալվել է հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում**<sup>1</sup> (միայն թավ ընդգծումներն իմն են՝ Հեղ):

Ինչպես ակնհայտ է դառնում մեջբերված հատվածից, ըստ հեղինակների, մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար կասկածի շեմը «հանցանքի կատարումը վկայող փաստերի» չափանիշով այնչափ է իջեցվել, որ բոլոր դեպքերում, երբ լինի անձի կողմից հանցանք կատարած լինելու կասկած, արդեն պետք է անձը վարույթին մասնակից դարձվի իբրև **մեղադրյալ** (բացի անձին անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալելու դեպքից):

Այդպիսով՝ օրենսդիրը լուծեց քրեական հետապնդման ենթարկվող անձի սուբյեկտայնության խնդիրը կարգավիճակի ունիֆիկացիայի պայմաններում՝ հրաժարվելով մեղադրյալի վարույթ «մուտքի» համար խորհրդային «ապացույցների բավարար համակցության» չափանիշից՝ փոխարենը ամրագրելով նոր՝ «անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի» չափանիշ:

<sup>1</sup> Տե՛ս Ղոկապյան Հ., Մելքոնյան Դ., Նիկողոսյան Ա., Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, 2022 թ., էջեր 110-111:

«Անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի» չափանիշն արդեն ժամանակակից հայ իրավաբանին առնվազն ծանոթ է ՄԻԵԴ իրավաբանությունից, մասնավորապես նրա կողմից «հիմնավոր կասկածի» չափանիշի սահմանումներից: Սակայն, եթե վերջինի՝ «հիմնավոր կասկածի» դեպքում, անհրաժեշտ են «հանցանքի կատարումը վկայող փաստեր (տվյալներ կամ ապացույցներ)» **միաժամանակ նաև**, որ դրանք «օբյեկտիվ դիտորդին **համոզիչ լինեն**, որ հավանական է՝ անձը հանցանք է կատարել», ապա, Օրենսգրքի սահմանաձ՝ «անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի» չափանիշի պայմաններում բացակայում է «օբյեկտիվ դիտորդին **համոզիչ լինելու** «հիմնավոր կասկածի» համար անհրաժեշտ պայմանը (շեմը):

Ըստ այդմ՝ Օրենսդիրը, լուծելով քրեական հետապնդման ենթակա անձի սուբյեկտայնացման խնդիրը, մեղադրյալի «մուտքի» համար անհրաժեշտ շեմը իջեցրեց «հանցանքի կատարումը վկայող փաստերի» շեմի, որն իրենից ներկայացնում է քրեորեն հետապնդելի արարքի կատարման նվազագույն հավանականություն, որի ծագումը պետք է համընկած համարել քրեական վարույթի ընթացքում առաջին անձնավորված կասկածի ծագման հետ:

Քրեորեն հետապնդելի արարքի կատարման նվազագույն հավանականության կասկածի նման ցածր շեմի դեպքում մեղադրյալի «մուտքի» համար (1) **անհրաժեշտ** չէ, որ հավաստվի անձի ենթադրյալ հանցանքի կատարումը և նրա մեղավորությունը (ինչպես «բավարար ապացույցների համակցության» չափանիշի դեպքում էր), **անհրաժեշտ** չէ նաև, որ անձի կողմից հանցանքի կատարման մասին կասկածը լինի **համոզիչ** (հիմնավոր կասկածի շեմ), (3) այլ միայն **անհրաժեշտ** է ծագի հանցանքի կատարման **անձնավորված կասկածը**, այսինքն, որ անձի կողմից ենթադրյալ հանցանքի կատարումը, ելնելով կրիմինալիստիկական փորձից, լինի **ողջամկորեն հնարավոր** (ողջամկորեն ոչ

բացառելի) կասկածներից մեկը, որը, սակայն, չի բացառում այլ կասկածների հնարավորությունը<sup>1</sup>:

Կասկածի այդպիսի շեմը ողջամկորեն հնարավոր բարբերակներից մեկն է, որը պետք է ունենա փաստական որոշակի հենք, բարձր լինի այսպես կոչված ինտուիտիվ զգացողություններից, հստակ անձնավորի ենթադրյալ հանցանք կատարած անձին, սակայն այն ընդհանրապես չի պահանջում և չի ենթադրում հանցակազմի (բոլոր) տարրերի ապացուցվածություն կամ անձի կողմից հանցանքի կատարման համոզականություն (բարձր հավանականություն): Այդպիսի կասկած կարող է լինել, օրինակ, այն դեպքերում, երբ հանցագործության մասին բանավոր հաղորդմամբ կոնկրետ անձը մատնանշվում է իրեն հանցագործության կատարող՝ հստակ անձնավորող տվյալների մատնանշմամբ (անձի անունը, ազգանունը, նրա վերաբերյալ այլ անհրաժեշտ տվյալների առկայություն):

## 7. Զարգացած իրավակիրառ պրակտիկայի թույլադրելիությունը նոր օրենսգրքի կարգավորումների իրողության պայմաններում

Նախորդիվ ասվածի լույսի ներքո անդրադարձ կատարելով նոր օրենսգրքի գործարկման պայմաններում իրավակիրառ պրակտիկային՝ կարելի է արձանագրել, որ այն ոչ միայն չփոփոխվեց (բացի եզակի բացահիկ դեպքերից)<sup>2</sup> պահպանելով գոեթե մեկ հարյուրամյակ առաջ

<sup>1</sup> Այս լույսի ներքո, հայկական իրավաբանական նորագույն գրականության մեջ հարցի վերաբերյալ արտահայտված մոտեցումը, թե Օրենսգրքի 189-րդ հոդվածի տեսանկյունից անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի գնահատման տեսանկյունից անհրաժեշտ է, որ բոլոր ապացուցների նախնական գնահատման հիման վրա դատախազը հանգի հետևողություն, որ «... մեղադրյալն վերագրվող հանցանքի համար իրավասու դատարանի կողմից նրա դատապարտումը մեծապես հավանական է» (տե՛ս Հովհաննեսյան Գ., «Կասկածի դեպքում հօգուտ մեղադրյալի» (IN DUBIO PRO REO) //Պետություն և իրավունք N 2 (96) 2023, էջ 207), պետք է դիտարկել իրեն միայն և քրեադատավարական օրենսգրքում համակարգային փոփոխությունները հաշվի չառնող: Ավելին՝ նման մոտեցմամբ շիփուրում են մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի շեմը՝ մինչդատական վարույթից մեղադրյալի դեպի դատական վարույթ «ելքի» համար անհրաժեշտ կասկածից վեր շեմի հետ: Ի դեպք հեղինակը հենց իր այդ տեսակետը հիմնավորելու համար Օրենսգրքի 189-րդ հոդվածի բովանդակության բացահայտման տեսանկյունից հրում է անում մեղադրական եղակացությամբ նախաքննության ավարտը կանոնակարգող դրույթին՝ Օրենսգրքի 199-րդ հոդվածին, տե՛ս, նոյն տեղում:

ձևավորված «խորհրդային» մոտեցումը՝ մեղադրյալի վարույթ «մուտքի» համար հանցակազմի բոլոր տարրերի ապացուցվածության, անձի կողմից հանցանք կատարելու մեղավորության համոզմունքի չափանիշը, այլև՝ հանրային քրեական հետապնդման առավելագույն ժամկետների անցման հետևանքներից բխող նեղ գերազեսչական կամ անձնային մրգավախություններով պայմանավորված, գործնականում սկսվեց մեղադրյալի «մուտքը» քրեական վարույթ էլ ավելի հերածվել՝ այն գրեթե ամբողջապես մոդեռնելով նախաքննության վերջնամասին:

Այդպիսի իրավակիրառ պրակտիկան, որն ուղղի հակառակ է մեղադրյալի արդար դատաքննության իրավունքի բաղադրատար՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովմանն ուղղված հանրային քրեական հետապնդման ժամկետների ինստիտուտի նպատակային նշանակությանը<sup>1</sup>, ոչ այլ ինչ է, քան քրեական հետապնդման ենթարկվող անձի սուբյեկտայնության մերժում գրեթե ամբողջ նախաքննության ընթացքում և խախտում է անխախտելին՝ անձի արժանապատվությունը (Սահմանադրության 23-րդ հոդված՝ նախաքննության ընթացքում մեղադրյալի պաշտպանության իրավունքը դարձնելով ոչ իրական, պատրանքային: Ուստիև այդպիսի պրակտիկան հրատապ փոփոխության անհրաժեշտություն ունի:

**8. Օրենսգրքով քրեական վարույթ մեղադրյալի «մուտքի» համար կասկածի շեմի նվազեցումը և մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության երաշխիքները**

**8.1. Մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի (նվազագույն, հիմնավոր) հասկարումը **ապացուցներով**:**

Վերը արդեն նշվեց, որ կասկածի շեմի բարձրացումը խորհրդային իրավունքի կողմից նպատակ էր հետապնդում երաշխավորել քրեական

<sup>1</sup> Քրեական վարույթով «ողջամիտ ժամկետի» հաշվարկը կարող է սկիզբ առնել ոչ միայն ձևական առումով քրեական հետապնդման հարուցման, այլ փաստացի քրեական հետապնդման հարուցման պահից, եթե քրեական գործով քննության կամ վարույթի շրջանակում ձեռնարկված միջոցառումներն էական ազդեցություն են թողել գանգատարերի վրա, տե՛ս վերաբերելի մասով ՄիԵԴ Liblik and others v. Estonia գործով (գանգատներ թիվ 173/15, 181/15, 374/15, 383/15, 386/15 and 388/15) 2019 թ. մայիսի 28-ին կայացված վճիռը § 94:

հետապնդման ներգրավման ենթակա անձի իրավունքների պաշտպանությունը, և հակառակը՝ Օրենսգրքով կասկածի շեմի նվազեցման պայմաններում առաջ է գալիս մեղադրյալի իրավունքների պաշտպանության խնդիրը։ Իբրև վերջինիս իրավունքների պաշտպանության երաշխիք, օրենսդիրը պահպանել է մեղադրյալի կարգավիճակի ընկալման **ձևական մոտեցումը**. մեղադրյալ է ոչ թե այն անձը, ում նկատմամբ առկա է «նվազագույն» կամ «հիմնավոր» կասկած, այլ այն անձը, ում նկատմամբ առկա թեկուզ «նվազագույն» կասկածը **հավաստվում է քրեադատավարական ապացույցներով** (Օրենսգրքի 189-րդ հոդվածի 4-րդ մաս) և ում նկատմամբ կայացվել է հանրային քրեական հետապնդում հարուցելու որոշում (Օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետ):

Այլ կերպ ասած՝ անձին մեղադրյալի կարգավիճակ տալու համար միայն բովանդակային կողմը՝ նրա նկատմամբ առկա (նվազագույն, հիմնավոր) կասկածի աստիճանը դեռ բավարար չէ, անհրաժեշտ է որոշակի ձևական կողմ՝ անձի նկատմամբ առկա կասկածը (նվազագույն, հիմնավոր) հավասկրվի քրեադատավարական ապացույցներով (Օրենսգրքի 189-րդ հոդվածի 4-րդ մաս):

Օրենսդրի այսպիսի մոտեցումը մի կողմից ապահովում է վարույթի կասկածի անձնավորման սկզբնական պահերից մեղադրյալին ներգրավելու հնարավորությունը, մյուս կողմից՝ սահմանելով կասկածի քրեադատավարական ապացույցներով հաստատման պահանջ, երաշխավորում է թույլատրելի, վերաբերելի և հավաստի ապացույցների հիման վրա քրեական հետապնդման հարուցման որոշման կայացումը:

Հանրային քրեական հետապնդման հարուցման համար անհրաժեշտ ոչ միայն **բովանդակային** (կասկածի նվազագույն, հիմնավոր աստիճան), այլ նաև այդ **ձևական** (կասկածի հավաստումը քրեադատավարական ապացույցներով) կողմերի միասնության պայմաններում է, որ Օրենսդիրը հարկադրված «կառուցել է» ձերբակալվածի ժամանակավոր (քվազի) կարգավիճակը, ով թեև ձերբակալվել է անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիման վրա (առկա է հանրային քրեական հետապնդման հարուցման համար անհրաժեշտ բովանդակային կողմը),

սակայն, միևնույն ժամանակ, անհօականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալման պահին և դրանից հետո որոշակի կարճափև ժամանակահարվածում դեռևս բացակայելու է հանրային քրեական հետապնդման հարուցման համար անհրաժեշտ ձևական կողմը՝ կասկածի ապացույցներով հասդարվելը:

Միայն կասկածի՝ ապացույցներով հաստատվելուց հետո, քննարկվող դեպքում՝ ձերբակալման արձանագրության, ձերբակալվածի ցուցմունքի, այլ ապացույցների, օրինակ, անձի իբրև հանցանքի կատարող մատնանշող վկայի ցուցմունքի հիման վրա կասկածի հաստատման դեպքում (քննարկվող դեպքում՝ հիմնավոր կասկածի հաստատման) հնարավոր կինի անձի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում:

Նման պայմաններում արդեն՝ նախկին իրավակիրառ պրակտիկային հայտնի «վկա-կասկածյալի» վարույթի մասնակցության հնարավորությունները, ըստ էության, հասնում են նվազագույնի. այդպիսի հնարավորություն կարող է լինել միայն այն կարճաժամկետ ու բացառիկ դեպքերում, եթե անձի նկատմամբ առկա նվազագույն (կամ հիմնավոր) կասկածը դեռևս չի հավասկավել քրեադարձական ապացույցներով:

**8.2. Մեղադրյալի նկատմամբ հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորությունների դարբերակումը՝ ըստ մեղադրյալի նկատմամբ առկա կասկածների ասդիճանի**

Քրեական հետապնդման ենթարկվող անձի կարգավիճակի միասնականացման և մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի շեմի նվազագույն աստիճանի իջեցման պայմաններում Օրենսդիրը, որպես մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության երաշխիք, նաև անուղղակիորեն տարբերակել է մեղադրյալի նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցները՝ ըստ մեղադրյալի նկատմամբ առկա կասկածների աստիճանի:

Մեղադրյալի նկատմամբ առաջին՝ նվազագույն կասկածի աստիճանի առկայության պայմաններում, նրա նկատմամբ կարող են կիրառվել դատավարական վերաբերելի սանկցիաները (Օրենսգրքի 141-րդ հոդված), մեղադրյալի կամ նրա գործողությունների համար գույքային պատասխա-

նատվություն կրող անձի գույքը կարող է արգելադրվել (Օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ, 132-րդ հոդվածի 1-ին մաս):

Կասկածի այս նվազագույն աստիճանի պայմաններում, սակայն, չի կարող կիրառվել որևէ խափանման միջոց (Օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մաս): Մեղադրյալի նկատմամբ կասկածները նվազագույնից միայն հիմնավորի կասկածի անցման պայմաններում է, որ վարույթն իրականացնող մարմինը իրավասու կիրառել (միջնորդել, որ կիրառվի) խափանման միջոց (դրա(նց) կիրառման համար անհրաժեշտ այլ պայմանների և հիմքերի առկայության դեպքում):

Ավելին, նման դեպքերում՝ մեղադրյալը խափանման միջոցի կիրառման փաստից և այդ որոշումից իսկ արդեն ինքնարերաբար տեղեկացվում է իր նկատմամբ առկա կասկածների առավել ամրապնդման՝ հիմնավոր կասկածների վերաճման մասին: Սա ինքնին պակաս կարևոր չէ մեղադրյալի պաշտպանության մարտավարության պլանավորման և ընդհանուր առմամբ պաշտպանության արդյունավետ կազմակերպման համար:

#### *9. Մեղադրյալի «Ելքը» մինչդադարական վարույթից*

Մեղադրյալի ելքը մինչդատական վարույթից հնարավոր է երկու եղանակով՝ նրա նկատմամբ քրեական հետապնդման դադարեցմամբ (քր.դատ.օր-ի 12-րդ հոդված) կամ մեղադրական եզրակացությունը հաստատելու (կամ այն վերակազմելու դեպքում) դատախազի որոշմամբ մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերը իրավասու դատարան հանձնելով:

Երկրորդի պարագայում՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու (կամ այն վերակազմելու) որոշման դեպքում կրկին առաջ է գալիս մեղադրյալի նկատմամբ առկա կասկածի շեմի հարցը:

Ահա այստեղ, այս որոշման համար է, որ պահպանվել է «բավարար ապացույցների» համակցության ծևակերպումը, այսինքն՝ «անձի կողմից հանցանք կատարելու կասկածից վեր՝ համոզմունքի» «խորհրդային» չափանիշը: Օրենսդիրը դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու (կամ այն վերակազմելու) որոշման կայացման

պայման է համարում դատարանում մեղադրյալին վերագրվող արարքը կատարելու մեջ նրա մեղավորությունն ապացուցելու համար անհրաժեշտ «բավարար ապացույցների» առկայությունը (Օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):

Իր հերթին՝ քննիչը, որպեսզի հավաքված բոլոր ապացույցները գնահատելով հանգի հետևողայն, որ մեղադրյալին վերագրվող հանցանքի համար իրավասու դատարանի կողմից նրա դատապարտումը մեծապես հավանական է, ուստիև ձեռնամուխ լինի մեղադրական եզրակացություն կազմելուն (Օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մաս) իր հերթին պետք է հավաքված ապացույցների համակցությունը «բավարար համարի», այսինքն ծնավորի համոզմունք անձի կողմից հանցանքի կարարման մասին:

Միայն անձի մեղավորության, հանցակազմի դարրերի, ապացուցման ենթակա այլ հանգամանքների ապացուցվածության պայմաններում է, այսինքն «բավարար ապացույցների համակցության» առկայության պայմաններում է, որ քննիչը կարող է կանխորոշել դարպախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու (կամ այն վերակազմելու) որոշման կայացման անհրաժեշտ պայմանի առկայությունը (Օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), ըստ այդմ՝ նաև անձի դատապարտման մեծապես հավանականությունը:

Ինչ վերաբերում է «մեծապես հավանականությանը», ապա այդպիսի ծևակերպումը ոչ թե վկայում է քննիչի՝ մեղադրյալի կողմից հանցանք կարարելու կասկածները համոզմունքի չվերաճելու և խորհրդային այդ չափանիշի բացակայության մասին, այլ լոկ այն մասին, որ ապացույցների պարզած ապացուցման սկզբունքից բխող ապացույցների ազատ և բարեխիղճ գնահարման պահանջը (Օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ մաս), ենթադրում է, որ վարույթի հետագա փուլերում՝ վարույթն իրականացնող մարմինը կաշկանդված չի լինելու նախորդ փուլերում ապացույցներին դրված գնահարականով, ինչպես նաև՝ դարպական վարույթի ճանաչողության՝ նոր ապացույցների ձեռքբերման ինքնուրույն հնարավորությամբ:

Այսպիսով՝ մեղադրյալի մինչդադարական վարույթից ելքի համար է, որ թե՛ քննիչի և թե՛ դադարախազի կողմից՝ համապատասխանաբար մեղադրական եզրակացություն և մեղադրական եզրակացությունը հաստատելու (կամ այն վերակազմելու) որոշումները կայացնելիս պետք է առկա լինի «բավարար ապացույցների համակցությունը» և ըստ այդմ՝ մեղադրյալի կողմից հանցանք կատարելու համոզմննքը:

#### 10. Եզրահանգումներ

1. Դեռևս 1800-ականների վերջերից և 1900-ականների սկզբերից, քրեական դատավարության տեսության մեջ ձևավորվում է այն մոտեցումը, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ է «կասկածի» բարձր շեմ:

Հետագայում՝ խորհրդային դոկտրինը և իրավակիրառ պրակտիկան, ենելով մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի ապահովման անհրաժեշտությունից, մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ «կասկածի» շեմն էլ ավելի են բարձրացնում, որը պահպանվում է նաև մեր ժամանակներում:

2. Սակայն, մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ «կասկածի» բարձր շեմը առաջ է բերում փաստացի քրեական հետապնդման ենթարկվող անձի ապասույթեկտայնացման իրավիճակ. անձը մեղադրյալի կարգավիճակ է ծեղզ բերում մինչդատական վարույթի ավարտին, ինչը գործնականում հանգեցնում է մի իրավիճակի, որ վերջինս մինչդատական վարույթում հանդես է գալիս առավելապես իբրև վարույթի օբյեկտ:

3. Խնդրի լուծման համար խորհրդային (հետխորհիային) լուծումը քրեական հետապնդման ենթարկվող անձի կարգավիճակի տարրերակումն էր (ողիքերենցացիան), որի պայմաններում հնարավոր էր լինում պահպանելով մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ «կասկածի» բարձր շեմը, միևնույն ժամանակ նաև պահպանել փաստացի քրեական հետապնդման ենթարկվող անձի սուբյեկտայնությունը:

4. Դրան հակառակ՝ քրեական հետապնդման ենթարկվող անձի կարգավիճակի միասնականցումը (ունիֆիկացիան) անհնար է դարձնում պահպանել մեղադրյալ ներգրավելու (հանրային քրեական հետապնդման

հարուցման) համար անհրաժեշտ «կասկածի» խիստ բարձր շեմը: Այս պատճառով օրենսդիրը հրաժարվեց բանաձևային նշանակություն ունեցող «խորհրդային» «բավարար ապացույցների համակցության» չափանիշից՝ փոխարինելով այն «անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի» չափանիշով:

5. *Հանրային քրեական հետապնդում հարուցելու համար անհրաժեշտ «կասկածի» օրենսդրի կողմից սահմանված նոր չափանիշը՝ «անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերը», ցածր է անգամ «հիմնավոր կասկած» չափանիշից:*

Եթե «հիմնավոր կասկածի» դեպքում՝ անհրաժեշտ է «հանցանքի կատարումը վկայող փաստեր (տվյալներ կամ ապացույցներ)» **միաժամանակ նաև**, որ դրանք «օբյեկտիվ դիտորդին **համոզիչ լինեն**, որ հավանական է՝ անձը հանցանք է կատարել», ապա, Օրենսգրքի սահմանած «անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի» չափանիշի պայմաններում բացակայում է «օբյեկտիվ դիտորդին **համոզիչ լինելու**» «հիմնավոր կասկածի» համար անհրաժեշտ պայմանը (շեմը):

6. «Հանցանքի կատարումը վկայող փաստերի» շեմը իրենից ներկայացնում է քրեորեն հետապնդելի արարքի կատարման նվազագույն հավանականություն: Այդ «կասկածի» ծագումը պետք է համընկած համարել քրեական վարույթի ընթացքում առաջին անձնավորված կասկածի ծագման հետ: Նման կասկածի համար անհրաժեշտ է, որ անձի կողմից ենթադրյալ հանցանքի կատարումը, ենելով կրիմինալիստիկական փորձից, լինի ողջամկորեն հնարավոր (ողջամկորեն ոչ բացառելի) կասկածներից մեկը, որը, սակայն, չի բացառում նաև այլ կասկածների հնարավորությունը:

«Կասկածի» այդպիսի շեմը ողջամկորեն հնարավոր գարբերակներից մեկն է, որը պետք է ունենա փաստական որոշակի հենք, բարձր լինի այսպես կոչված ինտուիտիվ զգացողություններից, հստակ անձնավորի ենթադրյալ հանցանք կատարած անձին, սակայն այն ընդհանրապես չի պահանջում և չի ենթադրում հանցակազմի (բոլոր) տարրերի ապացուցվածություն կամ անձի կողմից հանցանքի կատարման համոզականություն (բարձր հավանականություն):

7. Նման փոփոխությունների պայմաններում, իրավակիրառ պրակտիկայում «խորհրդային» բարձր չափանիշի իներցիայի ուժով մեխանիկական պահպանումը անթույլատրելի է, հանգեցնում է քրեական հետապնդան ենթարկվող անձի մինչդատական վարույթում, դրա մեջ մասում, իբրև օբյեկտ հանդես գալուն :

8. Կախված կասկածի աստիճաններից, օրենսդիրը տարբերակել է նաև («նվազագույն կասկած», «հիմնավոր կասկած»), մեղադրյալի նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցները:

9. Օրենսդիրն ամբողջությամբ չի իրաժարվել «բավարար ապացույցների» համակցության խորհրդային բանաձև-չափանիշից՝ ամրագրելով այն իբրև մեղադրյալի մինչդատական վարույթից (դեպի դատական վարույթ) «ելքի» համար չափանիշ:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. **Ավագյան Վ.**, Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը, - Եր.: «Օրենք և իրականություն» հրատ., 2006 թ.:

2. **Հովհաննիսյան Գ.**, «Կասկածի դեպքում հօգուտ մեղադրյալի» (IN DUBIO PRO REO)/Պետություն և իրավունք N 2 (96) 2023 թ.:

3. **Ղազարյան Ա.**, Մայրության խառը տիախի քրեական դատավարությունում մեղադրյալի սուբյեկտայնացման համընդիանուր միտումը և դրան հակառակ ընթացող հայկական օրենսդրական գարգացումները (վերաբնիչ դատարանում գրավոր ընթացակարգով կալանքի (դրա երկարաձգման) միջնորդությունների քննության արդյունքում կայացված որոշումների վերանայման լույսի ներքո), <<Սահմանադրական դատարան, Տեղեկագիր, No 3 (111), 2023 թ.:

4. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ), Մաս 2, Գիտ., Խմբ. Ա.Ղամբարյան, Երևան, Տիգրան Մեծ, 2017 թ.:

5. **Ղուկասյան Հ.**, **Մելքոնյան Դ.**, **Նիկողոսյան Ա.**, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, 2022 թ.:

6. Курс советского уголовного процесса. Общая часть / Алексеев В.Б., Алексеева Л.Б., Божьев В.П., Бойков А.Д., и др. / Под ред. Бойкова А.Д., Карпеця И.И. - М.: Юрид. лит., 1989.
7. **Бишарян К.А.** Подозреваемый и защита его прав в уголовном процессе Республики Армения. Монография / Под ред. проф. В.П. Божьева. - Еր., 2007.
8. Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. Л.В. Головко. - М.: Статут, 2017.
9. **Жогин Н.В., Фаткуллин Ф.Н.** Предварительное следствие в советском уголовном процессе. - М., 1965.
10. **Коновалов С.Г.** Постсоветские реформы досудебного производства в свете германских процессуальных институтов. - М.: ИД «Городец», 2023.
11. **Ларин А.М.** От следственной версии к истине. - М.: Юрид. лит., 1976.
12. Научно-практический комментарий к уголовно-процессуальному кодексу Российской Федерации / Под общ. ред. Лебедева В.М.; науч. ред. Божьев В.П., - 7-е изд., перераб. и доп. - М.: Изд. Юрайт, 2010.
13. **Полянский Н.Н.** Вопросы теории советского уголовного процесса. - М., 1956.
14. **Россинский С.Б.** "Пилотные" обвинения в досудебном производстве по уголовному делу не только противозаконны, но и безнравственны // Судебная власть и уголовный процесс, № 3, 2021.
15. **Строгович М.С.** Право обвиняемого на защиту и презумпция невиновности / М. С. Строгович / Под ред. [и с предисл.] В. М. Савицкого. - Москва: Наука, 1984.
16. **Фойницкий И.Я.** Курс уголовного судопроизводства. Том I (издание 4-е). - СПб: Типография товарищества "Общественная польза", 1912.
17. **Чельцов-Бебутов М.А.** Обвиняемый и его показания в советском уголовном процессе. – М: Изд.-во Министерства юстиции СССР, 1947.
18. Վոճարել դատարանի 05.11.2010 թ. կայացրած թիվ ՏԴ/0115/01/09 որոշման 18-րդ կետը:

  19. ՈԴ ՍԴ 21.12.2004 N 467-Օ որոշում "По жалобе гражданина Пятничука Петра Ефимовича на нарушение его конституционных прав положениями статей 46, 86 и 161 Уголовно-процессуального кодекса Российской Федерации":
  20. ՄիԵԴ Liblik and others v. Estonia գործով (գանգատներ թիվ 173/15, 181/15, 374/15, 383/15, 386/15 and 388/15) 2019 թ. մայիսի 28-ին կայացված վեհու:

**ПОРОГ "ПОДОЗРЕНИЯ", НЕОБХОДИМЫЙ ДЛЯ  
"ВСТУПЛЕНИЯ" ОБВИНЯЕМОГО В УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС  
(СИЛА ИНЕРЦИИ ИЛИ ИГНОРИРОВАНИЕ  
ЗАКОНОДАТЕЛЬНОЙ "РЕВОЛЮЦИИ" В  
ПРАВОПРИМЕНИТЕЛЬНОЙ ПРАКТИКЕ)**

**Аннотация**

Со вступления в силу нового Уголовно-процессуального кодекса РА, за этот уже не малый срок выяснилось интересное обстоятельство: армянская правоприменительная практика не заметила (или проигнорировала) ключевое, не будет излишним даже сказать революционное изменение, которое нашло место в Кодексе и было напрямую связано со статусом обвиняемого лица.

Правоприменительная практика не заметила (или проигнорировала) отказ от "советского" порога "подозрения", необходимого для "вступления" обвиняемого в уголовный процесс по делам о публичном обвинении, и определение совершенно нового порога, стандарта подозрений.

Однако в то же время в статье делается попытка обосновать, что законодатель отказался от "советского" порога "подозрения" только для "вступления" обвиняемого в уголовное производство, а для "выхода" обвиняемого из досудебного производства (в судебное производство) этот критерий был сохранен.

Данная статья посвящена вопросам изменения порогов подозрения для "вступления" обвиняемого в уголовное судопроизводство, обсуждается игнорирование такого изменения в юридической практике, а также в статье раскрываются возможности реализации ряда уголовно-процессуальных гарантий в условиях таких изменений.

**Ключевые слова:** обвиняемый, порог подозрения, минимальное подозрение, обоснованное подозрение, совокупность достаточных доказательств, субъект уголовного процесса, объект уголовного процесса.

## THE THRESHOLD OF “SUSPICION” REQUIRED FOR A DEFENDANT TO “ENTER” A CRIMINAL TRIAL (FORCE OF INERTIA OR IGNORING THE LEGISLATIVE “REVOLUTION” IN LAW ENFORCEMENT PRACTICE)

### Annotation

With the entry into force of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia in this, not a short period, an interesting circumstance became clear: Armenian law enforcement practice did not notice (or ignored) the key, in the definition of which it would not be superfluous even to say revolutionary change, which found a place in the Code and was directly related to the status of the accused person.

Law enforcement practice has overlooked (or ignored) the abandonment of the "Soviet" threshold of "suspicion" required for a defendant to "enter" criminal proceedings in public prosecution cases and the definition of an entirely new threshold, the standard of suspicion.

At the same time, however, the article attempts to justify that the legislator abandoned the "Soviet" threshold of "doubt" only for the "entry" of the accused into criminal proceedings, while for the "exit" of the accused from pre-trial proceedings (into court proceedings) this criterion was retained.

This article is devoted to the issues of changing the thresholds of suspicion for the "entry" of the accused into criminal proceedings, discusses the neglect of such a change in legal practice, and the article reveals the possibility of realizing a number of criminal procedural guarantees in the conditions of such changes.

**Keywords:** accused, threshold of suspicion, minimum suspicion, reasonable doubt, totality of sufficient evidence, subject of criminal proceedings, object of criminal proceedings.

*<ողվածք հանձնված է իմբագրություն 16.01.2024 թ., պրվել է գրախոսության 18.01.2024 թ., ընդունվել է դպագրության 18.01.2024 թ.:*

DOI: 10.59560/18291155-2023.4-39



**ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**  
 << Սահմանադրական դավարանի  
 նախագահի խորհրդական,  
 Հայ-ռուսական համալսարանի դոցենսը,  
 իրավունքի մագիստրոս,  
 քաղաքական գիտությունների թեկնածու,  
 դոցենսը

**ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՐԱՎՈՒՆՔԻ ՀԵՏ  
 ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ<sup>1</sup>**

**Ամփոփագիր**

Հոդվածը նվիրված է իրավունքի հետ փոխգործակցության համատեքստում քաղաքականության հասկացության էության բացահայտմանը: Ուսումնասիրելով քաղաքականության հասկացության ծագումնաբանությունը՝ հետազոտության ընթացքում առանձին ուշադրություն է դարձվել քաղաքականության հասկացության մի շարք սահմանումներին: Վերլուծելով քաղաքականություն բարի ծագումնաբանության առանձնահատկությունները՝ փաստվել է, որ մի շարք լեզուներով քաղաքականությունը, անգամ բարօգտագործման տեսանկյունից, ունի միևնույն իմաստը:

**Հիմնաբառեր.** իրավունք, քաղաքականություն, պետություն, քաղաքականության էություն, քաղաքականության հասկացություն, սոցիալականարգավորիչ:

## 1. Ներածություն

Ժամանակակից աշխարհում «քաղաքականություն» ամենամեծ տարածում ունեցող և բազմիմաստ բառերի շարքին է դասվում: Այօրյա

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է << բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (Թեմայի ծածկագիր՝ 22YR-5E006):

կյանքում հաճախ մեր կողմից քաղաքականություն է անվանվում ցանկացած նպատակային գործունեություն: Ընդ որում, անկախ նրանից, թե դա պետական այրերի, կուսակցական մարմինների, մասնավոր ընկերության ներկայացուցիչների, թե անզամ կենցաղային՝ կին-տղամարդու, ընկերների, ազգակիցների միջանձնային հարաբերություններին վերաբերող գործունեություն է:

Հարկ է նշել նաև, որ երկարամյա կիրառության ընթացքում մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված՝ «քաղաքականություն» բառը ձևախեղման է ենթարկվել և հաճախ, հատկապես մեր օրերում, այն ընկալվում է որպես անարդարության, նենգության, «կեղտոտ գործերի» հիմանից:

Քաղաքականության վերաբերյալ տարատեսակ մոտեցումների ձևավորումն ու տարածումը կապված է ոչ այնքան քաղաքականության մասին սակավ գիտելիքներ ունենալու, որքան այս երևոյթի բարդության և բազմաշերտության հետ:

Իրավունքի հետ զուգահեռ հանդիսանալով ժամանակակից հասարակությունների կարևորագույն ինստիտուտներից մեկն ու հիմնային նշանակություն ունեցող սոցիալական կարգավորիչը<sup>1</sup> այն գտնվում է միանգամից գիտության մի քանի ճյուղերի գիտնականների ուշադրության կենտրոնում: «Քաղաքականություն» հասկացության գիտական մեկնաբանությունները, տարբերվելով ամենօրյա պատկերացումներից, տարբերվում են նաև իրարից: Չնայած բավականին լայն կիրառմանն ու երկարամյա գիտական հետազոտմանը, առ այսօր չի հաջողվել ձևավորել «քաղաքականություն» հասկացության միատեսակ սահմանում:

## **2. «Քաղաքականության» հիմնական սահմանումները**

Մասնագիտական գրականության մեջ շրջանառվում է «քաղաքականություն» հասկացության շուրջ երեք հարյուր սահմանում, որոնք երբեմն հակասության մեջ են մտնում միմյանց հետ:

Օրինակ՝ Պլատոնը «քաղաքականությունը» սահմանում էր որպես համատեղ ապրելու արվեստ, Հեգելը՝ որպես բանականության արտա-

<sup>1</sup> Հարությունյան Ա., Իրավունքի հությունը՝ իրավունքի հասկացության ծագումնաբանության համատեքստում, ՍԴ Տեղեկագիր, 3 (111), 2023 թ. էջ 112:

հայտություն, Ֆրոյդը՝ որպես կոնֆլիկտային իրավիճակի լուծում, Լենինը՝ որպես տնտեսության խտացված արտահայտություն, Մուկան և Պարետոն՝ որպես վերնախավի իշխանություն, Խստոնը՝ որպես արժեքների իրամայական բաշխում: Ընդհանրացնելով քաղաքականության՝ իրեն հայտնի բոլոր մեկնաբանություններն ու սահմանումները՝ Պլուտարքոսը առանձնացրել է դրա երեք իմաստաբանական նշանակությունները.

- Առաջինը հասարակության և իրավունքի կապումն է, որի արդյունքում մարդիկ վերածվում են այդ հասարակության անդամների և քաղաքացիների:

- Երկրորդը հասարակության ներսում հարաբերությունների կառավարման և կարգավորման եղանակ է:

- Երրորդը հասարակության (համագործակցության) ձևն ու Սահմանադրությունը, որոնք կարգավորում են նրա բոլոր քաղաքացիների գործողությունները:<sup>1</sup>

Քաղաքականության տարբեր գիտական սահմանումները ընդունված է բաժանել խմբերի, որոնց բաժանումը պայմանավորված է քաղաքականության բնութագրման համար օգտագործվող հիմնական հետևյալ հետազոտական մոտեցումներով.

- **Աստվածաբանական.** Քաղաքականության բնույթի առաջին գաղափարը աստվածաբանականն էր, որը բացատրում էր դրա ծագումը, ինչպես ամբողջ մարդկային լյանքը, աստվածային կամքից:

- **Մարդաբանական.** Մարդաբանական մեկնաբանությունը քաղաքականության անհրաժեշտությունը հիմնավորում է մարդու բնույթով: Այս մոտեցումը քաղաքականությունը կապում է մարդու բնության հետ՝ այլ մարդկանց հետ շփման և փոխգործակցության համապատասխան տեսակը պայմանավորելով՝ մարդու էռլությամբ, որն էլ իր հերթին տարբերում է մարդուն կենդանուց:

- **Կենսաբանական.** Այս մոտեցումը, ի հակառակ նախորդի, պնդում է, որ քաղաքականության բնույթը անհրաժեշտ է հասկանալ մարդու և

<sup>1</sup> Plutarch's Morals. Translated from Greek by several hands. Corrected and revised by William W. Goodwin with an Introduction by Ralph Waldo Emerson. Vol.1. Boston: Liberty Fund, 1878. 616 p. // <https://oll.libertyfund.org/title/emerson-the-morals-vol-1> (date of application: 04.01.2024).

կենդանու համար ընդհանուր սկզբունքների հիման վրա, ինչպիսիք են ագրեսիվությունը, ինքնապահպանման բնագդը, գոյատևման պայքարը և այլն:

▪ **Հոգեբանական.** Ըստ այս մոտեցման՝ մարդկանց միջև քաղաքական փոխգործակցության սկզբնադրյուրը մարդու կարիքներն են, հետաքրքրությունները, հոգեբերը և հոգեվիճակի այլ դրսնորումները:

▪ **Սոցիալական.** Համաձայն այս մոտեցման՝ քաղաքականությունը հասարակության ծնունդ է, որը ձևավորվել է վերջինիս էվոլյուցիայի ընթացքում՝ հասարակության բարդացմանն ու սոցիալական շերտավորմանը զուգահեռ: Նեոլիթյան հեղափոխությունը, որն ազդել է ինչպես կառավարման ձևերի, այնպես էլ ընդհանուր առմամբ մարդկանց ապրելակերպի վրա, համարվում է սոցիալական փոփոխությունների ելակետը:

Հասարակության բնականոն գոյատևման և զարգացման ընթացքում քաղաքականության դերն ու նշանակությունը խորքային պատկերացնելու համար անհրաժեշտ է բացահայտել «քաղաքականություն» հասկացության ծագումնաբանությունն ու էությունը:

### 3. «Քաղաքականության» ծագումնաբանությունն ու գործունեության մակարդակները.

Չնայած մի քանի հազարամյա գոյությանը՝ «քաղաքականություն» հասկացությունը գիտական շրջանառության մեջ է դրվել շատ ավելի ուշ՝ մ.թ.ա. IV դարում, հույն մեծագույն փիլիսոփա Արիստոտելի կողմից, ով քաղաքականությունը սահմանում էր ոչ միայն որպես Պոլիսի (պետության – առանձնացվել է հեղինակի կողմից) կառավարման արվեստ, այլև՝ գիտություն Պոլիսի մասին<sup>1</sup>: Բացի դա, Արիստոտելը մարդուն դիտարկում էր որպես «քաղաքական էակի», իսկ քաղաքականությունը՝ մարդու կենսագործունեության բարձրագույն ձևը, որի օգնությամբ հաստատվում է արդարությունը և ծեռք է բերվում յուրաքանչյուրի բարիքը<sup>2</sup>: Համաձայն արիստոտելյան մոտեցման՝ արդարությունը անմիջականորեն կապված է

<sup>1</sup> Большая российская энциклопедия, Политика // <https://bigenc.ru/c/politika-da7e9b> (дата обращения: 09.01.2024).

<sup>2</sup> Аристотель. Собрание сочинений в 4-х томах. Том 4. - М.: Мысль, 1983. - С. 378, 297. - 830 с.

պետության հետ, քանզի իրավունքը, որը հանդիսանում է արդարության չափորոշիչը, հանդես է գալիս որպես քաղաքական շիման կարգավորող նորմ<sup>1</sup>, իսկ քաղաքական համակեցությունը հիմնված է իրավունքի վրա<sup>2</sup>: Ընդ որում, նույնացնելով իրավունքն ու քաղաքական արդարությունը<sup>3</sup> վերջինը նշում է, որ քաղաքական շիմից դուրս իրավունք գոյություն չունի, քանզի քաղաքական հարաբերությունների մեջ չգտնվող մարդիկ չեն կարող միմյանց նկատմամբ ունենալ քաղաքական արդարություն<sup>4</sup>: Մեկ այլ մեծագույն փիլիսոփա՝ Պլատոնը, ով ի սկզբանե համարում էր, որ արդարությունը կայանում է բացառապես հարկերի մուծման մեջ, ի վերջո եկավ այն եզրահանգման, որ արդարությունը ոչ այնքան անձնական, որքան պետական առաքինություն է, իսկ ահա հոեալական պետության նախագիծը կյանքի կոչելու համար անհրաժեշտ են արդար օրենքներ, որոնք սահմանված են հանուն ողջ պետության բարօրության<sup>5</sup>: Թե՛ արիստոտելյան, թե՛ պլատոնյան մոտեցումներն ուղղակիորեն ընդգծում են իրավունքի և պետության միմյանց փոխլրացնող կապը՝ բացառելով դրանց ինքնավար գոյությունը:

Որպես մարդու կենսագործունեության հատուկ բնագավառ՝ քաղաքականությունը գործում է հետևյալ մակարդակներում.

▪ մեզարաքաղաքական՝ կարգավորում է միջային կամ ինքնիշխան պետությունների և միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, Եվրամիություն, Եվրախորհուրդ, ԵԱՏՄ, ՆԱՏՕ և այլն) հարաբերությունները: Այս մակարդակում որպես քաղաքականության սուբյեկտներ են հանդես գալիս ինքնիշխան պետությունները, տարածաշրջանային եւ միջազգային կազմակերպությունները.

<sup>1</sup> **Аристотель.** Собрание сочинений в 4-х томах. Том 4. - М.: Мысль, 1983. - С. 380. - 830 с.

<sup>2</sup> **Наймушина Л.П.** Правовая трактовка политики // Вестник Пермского университета. Юридические науки. Выпуск 3(9)2010, <http://www.jurvestnik.psu.ru/index.php/ru/-3-9-2010-16/4-2010-12-01-13-31-58/-3-9-2010/19-pravovaya-traktovka-politiki#>: (дата обращения: 05.01.2024).

<sup>3</sup> **Аристотель.** Политика / Переводчик С.А. Жебелёв / Под общей редакцией А.И. Доватура. — Москва: Издательство Юрайт, 2023 - С. 281, (Антология мысли). <https://urait.ru/viewer/politika-515728#page/281> (дата обращения: 04.01.2024).

<sup>4</sup> **Наймушина Л.П.** Правовая трактовка политики // Вестник Пермского университета. Юридические науки. Выпуск 3 (9) 2010, <http://www.jurvestnik.psu.ru/index.php/ru/-3-9-2010-16/4-2010-12-01-13-31-58/-3-9-2010/19-pravovaya-traktovka-politiki#>: (дата обращения: 05.01.2024).

<sup>5</sup> **Платон.** Сочинения. В 4 т. Т. 4. - М., 1994. - С. 316.

- մակրոքաղաքական՝ կարգավորում է տարբեր պետությունների ներսում ծագած կոնֆլիկտային հարաբերությունները.
- մեզոքաղաքական՝ բնութագրում է առանձին տարածաշրջաններում տեղային կառուցյներում եւ ինստիտուտներում ձևավորված խմբային բնույթի կապերն ու հարաբերությունները.
- միկրոքաղաքական՝ անհատների՝ քաղաքական առումով էական հարաբերությունները, որոնց կարգավորումը պահանջում է պետության միջամտությունը<sup>1</sup>:

Ներկայացված մոտեցումները, մեկնաբանություններն ու սահմանումները բացահայտում են քաղաքականության՝ որպես երևոյթի, բազմակողմանիությունը, բազմաշերտությունը և տարածվածությունը: Այս առումով տեղին է առանձնացնել Շմիդտի մեկնաբանությունը, համաձայն որի՝ «քաղաքականը երբեմն ընկալվում է որպես համընդիանուր, տոտալ, քանի որ քաղաքականությունն իսկապես ամենուր է»<sup>2</sup>:

#### **4. «Քաղաքականության» լեզվաբանական և իմաստաբանական ընկալումները**

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ չնայած բազմաշերտությանն ու բազմաբովանդակությանը, թե՛ իմաստաբանական, թե՛ լեզվաբանական տեսանկյունից «քաղաքականություն» հասկացությունը միատեսակ ընկալում ունի գրեթե բոլոր ժողովուրդների մոտ: Ֆրանսերեն, ռուսերեն, գերմաներեն, անգլերեն, իտալերեն, իսպաներեն և մի շարք այլն լեզուներով «քաղաքականությունը» գրվում և արտասանվում է որպես «politic»<sup>3</sup>: Ներկայացված օրինակների շարքում բացառություն է կազմում նաև հայերենը: Մասնավորապես՝ Հրայա Աճառյանը, թեկուզն հավասարության նշան է դնում «քաղաքականություն» և «politique» հասկացությունների միջև, այդուհանդերձ, նշում է, որ այն՝ «քաղաքականություն»-ը, ձևավորվել է քաղաք բարից՝ համեմատ իին հունական պետական

<sup>1</sup> Քաղաքագիտություն: Հանրագիտական բառարան / Վ. Պողոսյան, Կ. Միրումյան, Ա. Բարաջանյան, Ս. Աստվածատուրով. Եր.: Նժար, 2004, էջ 441:

<sup>2</sup> Шмидт К. Политическая теология: Сборник. - М.: Канон-Пресс, Кучково Поле, 2000. – С. 12

<sup>3</sup> Политика на разных языках // <https://www.indifferentlanguages.com/ru/> (дата обращения: 05.01.2024).

դրության, որտեղ ամեն քաղաք առանձին տերություն էր կազմում, իսկ ահա Էդուարդ Աղայանը «քաղաքականություն» եզրույթով բացատրում է պետական իշխանության՝ կուսակցության կամ հասարակական խմբի գործունեությունը ներպետական կառավարման և արտաքին հարաբերությունների բնագավառներում, որ բնորոշվում է այդ պետության դասակարգային շահերով<sup>1</sup>: Չնայած այն հանգամանքին, որ իմաստաբանական տեսանկյունից «քաղաքականություն» եզրույթի ընկալումը միատեսակ է այլ ժողովուրդների լեզուների հետ համեմատությամբ, լեզվաբանական տեսանկյունից այն չի համապատասխանում «քաղաքականության» արիստոտելյան մոդելին և ամբողջական չի արտացոլում «politica»-ի էությունը, քանզի Արիստոտելը «politica» եզրույթը կիրառության մեջ է դրել, «ապոլիս» ոչ թե որպես քաղաք, այլ՝ պետություն դիտարկելու համատեքստում:

Քաղաքականությունը քաղաք բառից ձևավորված բառ դիտարկելու արդյունքում լեզվաբանական տեսանկյունից խեղաթյուրվել է նաև «ապոլիս»-ն ուսումնասիրող գիտությունը, որի արդյունքում, ի տարբերություն այլ լեզուների, այն հայերենում հնչում է որպես քաղաքագիտություն: Այսինքն՝ գիտություն, որն ուսումնասիրում է քաղաքը: Իսկ ահա պոլիսը որպես պետություն դիտարկելու դեպքում պետք է հնչեր որպես պետականագիտություն՝ ամբողջապես տեղավորվելով «politica»-ի արիստոտելյան տրամաբանության մեջ և համապատասխանելով հասկացության փիլիսոփայությանը:

Հարկ է փաստել նաև, որ գիտական շրջանառության մեջ դրվելուց հետո «քաղաքականությունը» մշտապես գտնվել է տարբեր դարաշրջանների մտածողների գիտական հետաքրքրությունների կենտրոնում, որի արդյունքում էապես ընդլայնվել է նաև քաղաքագիտություն առարկան: Պատահական չէ, որ «քաղաքականության» գիտական միատեսակ ընկալման և քաղաքագիտություն առարկայի կոնկրետացման

<sup>1</sup> Հրայա Աճառյան, Հայերէն արմատական բառարան, Երեւանի Համալսարանի Հրատարակութիւն, Երեւան, 1926, էջ 542:

<sup>2</sup> Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976, էջ 1545:

ուղղությամբ 1948 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագետների համատեղ ժողովում, քաղաքական գիտության (պետականգիտության – առանձնացվել է հեղինակի կողմից)<sup>1</sup> որպես գիտության առանձին ճյուղի ինքնավարությունը<sup>2</sup> հաստատելու հետ մեկտեղ, փորձագետներն ընդունեցին հատուկ բանաձև, որը սահմանում էր քաղաքագիտության հետազոտությունների շրջանակները չորս իիմնախնդիրների վերաբերյալ. 1) քաղաքական տեսության և քաղաքական գաղափարների պատմություն, 2) քաղաքական ինստիտուտներ, 3) կուսակցություններ, խմբեր, հասարակական կարծիք, ընտրություններ, տեղեկատվություն, քարոզչություն, 4) միջազգային հարաբերություններ և արտաքին քաղաքականություն: Բացի դա, ժողովի մասնակիցների կողմից ընդունվեց, որ քաղաքագիտության իիմնական առարկան պետությունն ու իշխանությունն է<sup>2</sup>: Այս մոտեցումն, իհարկե, անհերքելի է, սակայն հարկ է նշել նաև, որ քաղաքագիտության առարկան վերջին տասնամյակների ընթացքում էլ ավելի է ընդլայնել սահմանները՝ իր մեջ ներառելով ներպետական, վերպետական, ոչ պետական և անդրազգային գրեթե ողջ հարաբերությունների սպեկտրը: Այս տեսանկյունից քաղաքագիտությունը կարելի է սահմանել որպես «գիտություն՝ ցանկացած տեսակի իշխանության մասին»:

## 5. Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրահանգել, որ իր բազմաշերտությամբ ու բազմակողմանիությամբ հանդերձ՝ քաղաքականությունն իր բնույթով ձգտում է քաղաքական հարաբերությունների նորմատիվ ձևավորմանը, որը, որպես կանոն, արտահայտվում է Սահմանադրության և օրենքների ընդունմամբ: Իրավունքի հետ կապը ոչ միայն ամրապնդում է քաղաքականությունը, այլև ապահովում է սոցիալական հարաբերությունների կայունությունը: Քաղաքականության և իրավունքի փոխգործակցության արդյունքում է հնարավոր դառնում համակեցության համընդհանուր կանոնների սահմանումն ու կիրառումը:

<sup>1</sup> **Եյրացկի Փ.Մ.** О политической науке. Избранные произведения. – Москва: Издательство МГУ, 2013. - С. 103

<sup>2</sup> **Groszyk H.** Francuska koncepcja nauki politycznej. Lublin, 1964. S. 45–46.

## Օգտագործված գրականության ցանկ

1. **Հարությունյան Ա.**, Իրավունքի էությունը՝ իրավունքի հասկացության ծագումնաբանության համատեքստում, ՍԴ Տեղեկագիր, 3 (111), 2023թ. էջ 112:
2. Plutarch's Morals. Translated from Greek by several hands. Corrected and revised by William W. Goodwin with an Introduction by Ralph Waldo Emerson. Vol.1. Boston: Liberty Fund, 1878. 616 p. // <https://oll.libertyfund.org/title/emerson-the-morals-vol-1> (date of application: 04.01.2024).
3. Большая российская энциклопедия, Политика // <https://bigenc.ru/c/politika-da7e9b> (дата обращения: 09.01.2024).
4. **Аристотель.** Собрание сочинений в 4-х томах. Том 4. - М.: Мысль, 1983. - 830 с.
5. **Наймушина Л.П.** Правовая трактовка политики // Вестник Пермского университета. Юридические науки. Выпуск 3(9)2010, <http://www.jurvestnik.psu.ru/index.php/ru/-3-9-2010-16/4-2010-12-01-13-31-58/-3-9-2010/19-pravovaya-traktovka-politiki#>: (дата обращения: 05.01.2024).
6. **Аристотель.** Политика / Переводчик С. А. Жебелёв / Под общей редакцией А.И. Доватура. - Москва: Издательство Юрайт, 2023. - С. 281, (Антология мысли). <https://urait.ru/viewer/politika-515728#page/281> (дата обращения: 04.01.2024).
7. **Платон.** Сочинения. В 4 т. Т. 4. - М., 1994. - С. 316.
8. Քաղաքագիտություն: Հանրագիտական բառարան / Վ. Պողոսյան, Կ. Միրումյան, Ա. Բարաջանյան, Ս. Աստվածատուրով. Եր.: Նժար, 2004, էջ 441:
9. **Шmittt Կ.** Политическая теология: Сборник. - М.: Канон-Пресс, Кучково Поле, 2000. - С. 12.
10. Политика на разных языках // <https://www.indifferentlanguages.com/ru/> (дата обращения: 05.01.2024).
11. **Հրայշ Աճառյան,** Հայերէն արմատական բառարան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, Երեւան, 1926, էջ 542:
12. **Աղայան Է.Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976, էջ. 1545:
13. **Бурлацкий Ф.М.** О политической науке. Избранные произведения. – Москва: Издательство МГУ, 2013. - С. 103.
14. **Groszyk H.** Francuska koncepcja nauki politycznej. Lublin, 1964. S. 45–46.

## ПОНЯТИЕ И СУЩНОСТЬ ПОЛИТИКИ В КОНТЕКСТЕ ВЗАИМОДЕЙСТВИЯ С ПРАВОМ

### Аннотация

Статья посвящена раскрытию сущности понятия политики в контексте взаимодействия с правом. Изучая происхождение понятия политики, отдельное внимание в исследовании было уделено ряду определений концепции политики. Анализируя особенности генеалогии слова “политика”, было доказано, что, за исключением армянского языка, политика на ряде языков, даже с точки зрения словаупотребления, имеет одно и то же значение.

**Ключевые слова:** право, политика, государство, сущность политики, понятие политики, социальный регулятор.

## THE CONCEPT AND ESSENCE OF POLITICS IN THE CONTEXT OF INTERACTION WITH LAW

### Annotation

The article is devoted to the disclosure of the essence of the concept of politics in the context of interaction with law. Analyzing the features of the genealogy of the word politics, it was proved that, with the exception of the Armenian language, politics in a number of languages, even from the point of view of word usage, has the same meaning.

**Keywords:** law, politics, state, essence of politics, concept of politics, social regulator.

*Հոդվածը հանձնված է խմբագրություն 01.12.2023 թ., պրվել է գրախոսության 24.01.2024 թ., ընդունվել է պահպանի 24.01.2024 թ.:*



**ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ**  
 <<ԳԱԱ Փորձաքննությունների  
 ազգային բյուրոյի քրեաբանության  
 կիրառական հիմնախնդիրների  
 գիտահետազոտական կենտրոնի պետ,  
 Եվրասիա միջազգային  
 համալսարանի դասախոս,  
 իրավաբանական գիտությունների  
 թեկնածու, դոցենտ

**ԹՄՐԱՀԱՏԱԳՈՐԾԻ ԱՆՁԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ  
 ԹՄՐԱՀԱՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ  
 ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ**

**Ամփոփագիր**

Հոդվածում ներկայացված են հեղինակի կողմից իրականացված թմրահանցագործի անձի քրեաբանական հետազոտության արդյունքները՝ 2017-2022 թվականների կտրվածքով:

Հեղինակի հետազոտության արդյունքները վկայում են, որ թմրահանցագործություններ կատարող անձանց ընդհանուրացված ձևով բնորոշ է երիտասարդ տարիքի (հատկապես 30-49 տարեկան) քրեական ակտիվությունը, ցածր կրթական մակարդակը, մշտական աշխատանքային գրադաժությունը չունենալը, թմրահանցանքը գերազանցապես շահադիտական դրդապատճառով կատարելը և այլն: Նշված և թմրահանցագործին բնութագրող այլ տվյալները պետք է հաշվի առնվեն թմրահանցագործությունների անհատական կանխարգելման ուղղվածությունը որոշելիս, մեթոդն ընտրելիս և այլ հարցեր կարգավորելիս:

Հեղինակի հետազոտության արդյունքները հավաստում են, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը հնարավորություն չի տալիս անհատական կանխարգելումն իրականացնել ամբողջովին: Ուստի հեղինակն առաջարկում է կատարել օրենսդրական համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

Բացի այդ, հեղինակը նշում է, որ անհատական կանխարգելումը, որպես կանոն, ենթադրում է համապատասխան օբյեկտի նկատմամբ հոգեբանական ներգործություն համոզման մեթոդի կիրառմամբ, որը լիարժեք չի կարող կենսագործվել իրավաբան իրավապահների կողմից: Ուստի անհրաժեշտ է ՆԳՆ ուստիկանության տարածքային մարմիններում նախատեսել հոգեբանի հաստիքներ և ամրագրել անհատական կանխարգելիչ աշխատանքներին հոգեբանների ներգրավման օրենսդրական հիմքեր:

**Հիմնաբառեր.** թմրահանցագործի անձի կառուցվածքային տարրերը, թմրահանցագործությունների անհատական կանխարգելումը:

### Ներածություն

Պետությունն ուշադրության կենտրոնում է պահում թմրահանցագորության դեմ պայքարի հարցերը: Այդ մասին են վկայում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի տարեկան ծրագրերի ընդունումը և դրանցով նախատեսված, այդ թվում՝ օպերատիվ-կանխարգելիչ և հատուկ միջոցառումների իրագործումը, միջազգային մակարդակով համագործակցությունը և այլն:

Այդուհանդերձ, վիճակագրական տվյալները վկայում են քրեաբանական բացասական միտումների մասին: Այսպես, 2019 թվականից արձանագրվում է թմրահանցագորության անընդհատ աճ, ինչը վկայում է կանխարգելիչ ներգործության ակտիվացման, նոր, ներառյալ՝ իրավական մոտեցումների մշակման անհրաժեշտության մասին: Իսկ դրա համար հարկավոր է թմրահանցագորության քրեաբանական բաղադրիչների, այդ թվում՝ թմրահանցագործի անձի հետազոտության իրականացում:

Նշվածից ելնելով՝ սույն հետազոտության նպատակն է 2017-2022 թվականների կտրվածքով թմրահանցագործություններ կատարող անձի քրեաբանական բնութագրի բացահայտումը և թմրահանցագործությունների անհատական կանխարգելման խնդիրների ներկայացումը:

Հետազոտության խնդիրն է թմրահանցագործի անձի նկարագրի և կառուցվածքային տարրերի ներկայացումը, թմրահանցագործությունների անհատական կանխարգելման իրականացմանը խոչընդոտող գործոնների վերացման առաջարկությունների ներկայացումը:

### **Թմրահանցագործություններ կատարողի անձի բնութագիրը և կառուցվածքը**

Թմրահանցագործի անձը բնորոշվում է որպես թմրահանցագործություններ կատարած մարդու՝ սոցիալապես նշանակալի հատկությունների ամբողջություն, որոնք, արտաքին պայմանների հետ զուգակցվելով, ազդում են նրա հանցավոր վարքագծի վրա<sup>1</sup>: Քննարկվող հասկացության համար պարտադիր է այն հանգամանքը, որ հանցագործությունը կատարվում է անձին հատկանշական հակահասարակական հայացքների և բնակչության առողջության, թմրամիջոցների օրինական շրջանառության հանդեպ բացասական վերաբերմունքի արդյունքում:

Թմրահանցագործի անձն ունի որոշակի կառուցվածք, որը ներառում է հետևյալ ենթակառուցվածքները.

#### **1. Սոցիալ-ժողովրդագրական հատկանիշներ**

Հատկանիշների այս խումբն են կազմում անձի սեռը, տարիքը, ընտանեկան և պաշտոնական դրությունը, մասնագիտությունը և այլ հատկանիշները:

Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության ոստիկանության տեղեկատվական կենտրոնի տվյալների համաձայն՝ **2017 թվականին** թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ազօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններով պատասխանատվության է ենթարկվել 557 անձ, որից՝ 551 չափահաս (այդ թվում՝ 74՝ 18-24 տարեկան (13,2 տոկո), 87՝ 25-29

<sup>1</sup> Տե՛ս Կօնեց Պ.Н. Личность рецидивиста и особенности ее формирования //Закон и право. 2001. № 11, էջ 39:

տարեկան (15,6 տոկոս), 285' 30-49 տարեկան (51,1 տոկոս), 105' 49 տարեկան և բարձր (18,2 տոկոս)), և 6 անչափահաս (1,7 տոկոս):

Քրեական պատասխանատվության ենթարկված անձանց կազմում կանանց թիվը կազմել է 20 (3,5 տոկոս), օտարերկրացիներինը՝ 29 (5,2 տոկոս):

**2018 թվականին** թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններով պատասխանատվության է ենթարկվել 485 անձ, որից՝ 482 չափահաս (այդ թվում՝ 50' 18-24 տարեկան (10,3 տոկոս), 84' 25-29 տարեկան (17,3 տոկոս), 280' 30-49 տարեկան (57,7 տոկոս), 60' 49 տարեկան և բարձր (14,02 տոկոս)), և 3 անչափահաս (0,61 տոկոս):

Քրեական պատասխանատվության ենթարկված անձանց կազմում կանանց թիվը կազմել է 19 (3,9 տոկոս), օտարերկրացիներինը՝ 29 (5,9 տոկոս):

**2019 թվականին** թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններով պատասխանատվության է ենթարկվել 510 անձ, որից՝ 500 չափահաս (այդ թվում՝ 45' 18-24 տարեկան (8,8 տոկոս), 65' 25-29 տարեկան (12,7 տոկոս), 240' 30-49 տարեկան (52,7 տոկոս), 141' 49 տարեկան և բարձր (23,7 տոկոս)), և 10 անչափահաս (1,9 տոկոս):

Քրեական պատասխանատվության ենթարկված անձանց կազմում կանանց թիվը կազմել է 30 (5,8 տոկոս), օտարերկրացիներինը՝ 46 (9 տոկոս):

**2020 թվականին** թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններով պատասխանատվության է ենթարկվել 490 անձ, որից՝ 486 չափահաս (այդ թվում՝ 40' 18-24 տարեկան (8,1 տոկոս), 65' 25-29 տարեկան (13,3 տոկոս), 240' 30-49 տարեկան (49 տոկոս), 141' 49 տարեկան և բարձր (28,8 տոկոս)), և 4 անչափահաս (0,8 տոկոս):

Քրեական պատասխանատվության Ենթարկված անձանց կազմում կանանց թիվը կազմել է 21 (4,2 տոկոս), օտարերկրացիներինը՝ 23 (4,7 տոկոս):

**2021 թվականին** թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններով պատասխանատվության է Ենթարկվել 595 անձ, որից՝ 588 չափահաս, (այդ թվում՝ 49՝ 18-24 տարեկան (8,2 տոկոս), 68՝ 25-29 տարեկան (11,4 տոկոս), 294՝ 30-49 տարեկան (49,5 տոկոս), 177՝ 49 տարեկան և բարձր (29,8 տոկոս)), և 7 անչափահաս (1,1 տոկոս):

Քրեական պատասխանատվության Ենթարկված անձանց կազմում կանանց թիվը կազմել է 29 (4,9 տոկոս), իսկ օտարերկրացիների թիվը 21 (3,5 տոկոս):

**2022 թվականին** թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններով պատասխանատվության է Ենթարկվել 754 անձ, որից՝ 748 չափահաս (այդ թվում՝ 88՝ 18-24 տարեկան (11,6 տոկոս), 116՝ 25-29 տարեկան (15,5 տոկոս), 301՝ 30-49 տարեկան (39,9 տոկոս), 243՝ 49 տարեկան և բարձր (32,2 տոկոս)), և 6 անչափահաս (0,8 տոկոս):

Քրեական պատասխանատվության Ենթարկված անձանց շրջանակում կանանց թիվը կազմել է 33 (4,3 տոկոս), իսկ օտարերկրացիների թիվը 32 (4,2 տոկոս):

Այսպիսով, թմրահանցագործություններ կատարողների մեծ մասը՝ շուրջ 50 տոկոսը 30-49 տարեկան տղամարդիկ են: Քրեական պատասխանատվության Ենթարկված անձանց կազմում կանանց միջին թիվը կազմել է 4,3 տոկոս, օտարերկրացիների թիվը՝ 5,4 տոկոս, անչափահասների թիվը՝ 1,2 տոկոս: Կանայք մեծ մասամբ հանդես են գալիս խմբի կազմում: Օտարերկրացիների մեծամասնությունն ազգությամբ պարսիկ է, որոնք քրեական պատասխանատվության են կանչվել, որպես կանոն, թմրամիջոցների մաքսանենգործական և ապօրինի իրացման համար:

Թմրահանցագործների ընտանեկան դրությունն ունի հետևյալ պատկերը. ուսումնասիրված 317 անձից 63,72 տոկոսն ամուսնացած է (որից 0,63 տոկոսը գտնվում են փաստական ամուսնական հարաբերությունների մեջ), 25,55 տոկոսը՝ ամուրի, 10,73 տոկոսը՝ ամուսնալուծված:

Մեր հետազոտության արդյունքները վկայում են, որ թմրահանցագործներն ունեն ցածր կրթական մակարդակ: Այսպես, ուսումնասիրված 317 թմրահանցագործից 67,51 տոկոսն ունի միջնակարգ, 16,09 տոկոսը՝ թերի միջնակարգ, 5,99 տոկոսը՝ միջին մասնագիտական, 9,78 տոկոսը՝ բարձրագույն, 0,63 տոկոսը՝ թերի բարձրագույն կրթություն:

Թմրահանցագործների մեծամասնությունն աշխատանքային գբաղվածություն չունի: Այսպես, ուսումնասիրված 317 անձից 78,55 տոկոսը չի աշխատում:

## 2. Բարոյական որակներ և հոգեբանական առանձնահատկություններ

Բարոյական որակները և հոգեբանական առանձնահատկությունները թույլ են տալիս խորությամբ ճանաչել անձի բովանդակությունը: Հատկանիշների տվյալ խումբը հաճախ բաժանվում է ենթախմբերի, մասնավորապես առանձնացվում են գիտակցության արժեքային-նորմատիվ բնութագրերը (հայացքներ, համոզմունքներ, արժեքային կողմնորոշիչներ), պահանջմունքային-դրդապատճառային ոլորտը (պահանջմունքներ, հետաքրքրություններ, դրդապատճառներ):<sup>1</sup>

Ի տարբերություն թմրամիջոցների գործածման դրդապատճառների (հաճույք ստանալը, ուրախ ժամանցը, հոգսերից կտրվելը), թմրահանցագործությունների դրդապատճառներն առավելապես ուղղված են անձի նյութական հետաքրքրությանը՝ շահին, ժամանցի համար գումար ձեռք բերելուն և այլն<sup>2</sup>: Շահադիտական դրդապատճառը հատկապես

<sup>1</sup>Տե՛ս Կյֆարովսկի Յ.Վ. Կրiminология в вопросах и ответах: Учеб. пособие. – М.: ТК ВЕЛБИ, Изд-во «Проспект», 2006, էջ 38:

<sup>2</sup>Տե՛ս Գոտչина Լ.Վ. Կриминологическая характеристика личности молодого наркокреступника //Вестник Санкт-Петербургского университета МВД России. 1(49),2011 //https://cyberleninka.ru/article/n/kriminologicheskaya-harakteristika-lichnosti-molodogo-narkoprestupnika/viewer (վերջին մուտք՝ 28.10.2023):

բնորոշ է իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը, ապօրինի իրացմանը, մաքսանենգությանը:

Շահադիտական շարժառիթից բացի հանդիպում է նաև ինքնահաստատումը, մոտ շրջապատում սեփական նշանակալիության ճանաչման ձգտումը, որը հատկանշական է թմրամիջոցների իրացման կամ առանց իրացնելու նպատակով ապօրինի շրջանառությանը, ապօրինի իրացմանը, գործածմանը հակելուն կամ ներգրավելուն և այլ հանցանքներին:

Ուշագրավ է, որ թմրահանցագործությունները կարող են կատարվել նաև **կարեկցանքի դրդապատճառով**: Այսպես, մեր կողմից ուսումնասիրված քրեական գործերից մեկով պարզվել է, որ Թ.Կ.-ի մոտ ախտորոշվել է կոնվերսիոն խանգարում, ինչի կապակցությամբ 2020 թվականի օգոստոսի 28-ից (տվյալները փոխված են) նա հաշվառման է վերցվել «Ռ. Հ. բժշկական կենտրոն» ՓԲԸ հոգեբուժական կարինետում, յուրաքանչյուր ամիս բժշկի նշանակմամբ նշված ընկերության պոլիկլինիկայից անվճար ստացել է համապատասխան հոգեմետ դեղորայքային բուժում՝ «Լորագեպամ» 2 միլիգրամ 1 հարից, օրը երկու անգամ: 2021 թվականի հունվարի 27-ին Թ.Կ.-ն հերթական անգամ նշված պոլիկլինիկայի դեղատնից ստացել է իրեն հասանելիք «Լորագեպամ» 60 հատ դեղահար: Հաջորդ օրը իր բնակության վայրում՝ Ա. փողոցի 15-րդ շենքի 38-րդ բնակարանում հյուրընկալված Գ.Կ.-ից տեղեկանալով, որ վերջինս իրեն վատ է զգում և ունի գլխացավեր, Գ.Կ.-ի ցավերը մեղմացնելու նկատառումներից ելնելով, վերջինիս կողմից օգտագործելու համար ապօրինի իրացրել է իր բուժման համար ստացած նշված նյութի զգալի չափերի՝ թվով 9 հաբ:

### **3. Իրավաբանական հատկանիշներ**

Իրավաբանական հատկանիշներն արտացոլում են անձի սոցիալական ձևախեղման աստիճանը: Այս հատկանիշներից են, օրինակ, **հանցավոր անցյալի մասին տեղեկությունները**: Այսպես, 2020 թվականին խնդրո առարկա հանցանք կատարած անձանց կազմում նախկինում դատապարտվածների թիվը կազմել է 6 հոգի (0,8 տոկոս), 2021 թվականին՝ 17 հոգի (2,8 տոկոս), 2022 թվականին՝ 52 հոգի (6,9

տոկոս): Այլ կերպ ասած, հանցավորների ընդհանուր թվում նախկինում դատապարտվածների թիվը միջինով կազմել է 4 տոկոս:

### **Թմրահանցագործությունների անհատական կանխարգելումը**

Թմրահանցագործի անձի ուսումնասիրումը թմրահանցագործությունների անհատական կանխարգելման կազմակերպման հիմնաքարտն է: Դրա արդյունքում ծեռք է բերվում կարևոր տեղեկատվություն: Այսպես.

1. թմրահանցագործների տարիքային բնութագրումը թույլ է տալիս դատել տարբեր տարիքային խմբերի ներկայացուցիչների քրեածին ակտիվության դրսևորման ինտենսիվության աստիճանի և հանցավոր վարքի առանձնահատկությունների մասին,

2. թմրահանցագործների կրթական մակարդակը մեծապես կանխորոշում է հանցագործության բնույթը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ դա էապես ազդում է հետաքրքրությունների և պահանջմունքների շրջանակի, շփման և ժամանցի ուղղվածության և, վերջին հաշվով՝ անձի վարքի ծերի վրա,

3. թմրահանցագործների բարոյական որակները և հոգեբանական առանձնահատկությունները թույլ են տալիս խորությամբ բացահայտել անձի բովանդակությունը, ընտրել հոգեբանական ներգործության արդյունավետ հնարքներ և այլն:

Փաստորեն, ստացված տեղեկատվության հիման վրա պետք է որոշել անհատական կանխարգելման ուղղվածությունը (օրինակ՝ ռեցիդիվի պարագայում դա այլ է, քան առաջին անգամ թմրահանցանք կատարելու դեպքերում), ներգործության մեթոդը (օրինակ՝ դիտավորյալ թմրահանցագործի հանդեպ մոտեցումը պետք է լինի անզգույշ թմրահանցագործի համեմատ այլ), ընտրել ներգործավայրը անձը (օրինակ՝ արդյունավետ կարող է լինել ամուսնու մասնակցությունը կանխարգելիչ միջոցառումներին) և այլն:

Մասնագիտական գրականության մեջ անհատական կանխարգելումը բնորոշվում է որպես կոնկրետ անձի հակարիավական վարքի պատճառների ու պայմանների վրա ներգործության միջոցների (գերազանցապես համոզման բնույթ ունեցող) մշակում և տևական ժամանակահատվածում

իրագործում: Ընդ որում, անհատական կանխարգելման պարագայում հանցագործության կատարման հնարավորությունը կանխվում է ոչ միայն ներքին (սուբյեկտիվ, անձնային), այլև արտաքին (օբյեկտիվ) գործոնների չեզոքացման միջոցով, որոնք պայմանավորում են հանցանքի կատարման մասին որոշման կայացումը<sup>1</sup>:

Վերոգրյալից ելնելով՝ հանցագործությունների անհատական կանխարգելման օբյեկտ պետք է հանդիսանա անձը, որը հնարավոր է հանցանք կատարի, և նրա վրա բացասաբար ազդող միկրոմիջավայրը: Ըստ այդմ, հանցագործությունների, այդ թվում՝ թմրահանցագործությունների անհատական կանխարգելիչ աշխատանքը պետք է կառուցվի երկու խումբ միջոցառումներով.

ա) միջոցառումներ, որոնք ուղղված են հանցանք կատարելու հակում ունեցող անձանց նկատմամբ ներգործությանը,

բ) միջոցառումներ, որոնք ուղղված են հանցանք կատարելու հակում ունեցող անձանց վրա բացասաբար ազդող անբարենպաստ միկրոմիջավայրի նկատմամբ ներգործությանը<sup>2</sup>:

Սակայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը հնարավորություն չի տալիս անհատական կանխարգելումն իրականացնել ամբողջովին: Այսպես, «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1233-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի N 1254-Ն որոշման դրույթների վերլուծությունից հետևում է, որ անհատական կանխարգելիչ աշխատանքներն իրականացվում են միայն համապատասխան հիմքերով հաշվառման վերցված (օրինակ՝ առողջապահական հիմնարկներում հաշվառված՝ թմրամոլությամբ տառապոյ) անձանց հետ: Հետևաբար,

<sup>1</sup>Տե՛ս Սարկիսով Գ.Ս. Индивидуальная профилактика преступлений. – Еր.: Айастан, 1986, էջեր 11-15:

<sup>2</sup>Մանրամասն տե՛ս Խորայելյան Գ., Քրեաքանություն: Ընդհանուր դրույթներ: Ուսումնական ձեռնարկ /Գ.Վ. Խորայելյան. – Եր.: Հեղ. հրատ, Աստղիկ Գրատուն, 2020, էջեր 121-128:

նախկինում իրավապահների տեսադաշտում չհայտնված և հանցանք կատարելու հակում ունեցող անձանց նկատմամբ անհատական կանխարգելիչ աշխատանք կազմակերպել հնարավոր չէ: Բացի այդ, իրավական կանոնակարգերը հնարավորություն չեն տալիս ներգործել նման անձի վրա բացասաբար ազդող անմիջական շրջապատի վրա:

Նշված խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է կատարել օրենսդրական համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ ընդլայնել կանխարգելման օբյեկտների շրջանակը, մանրամասն կանոնակարգել կանխարգելիչ ներգործության մեթոդների և կառուցակարգերի առանձնահատկությունները<sup>1</sup>:

Բացի այդ, անհատական կանխարգելումը ենթադրում է համապատասխան օբյեկտի նկատմամբ մեծ մասամբ համոզման մեթոդի կիրառում՝ հոգեբանական ներգործություն, որը լիարժեք չի կարող կենսագործվել իրավաբան իրավապահների կողմից: Ուստի անհրաժեշտ է Ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային մարմիններում նախատեսել հոգեբանի հաստիքներ և ամրագրել անհատական կանխարգելիչ աշխատանքներին հոգեբանների ներգրավման օրենսդրական հիմքեր:

### Եզրակացություն

Կատարված հետազոտության արդյունքները հանգում են հետևյալին.

1. 2019 թվականից արձանագրվում է թմրահանցավորության անընդհատ աճ, ինչը վկայում է կանխարգելիչ ներգործության ակտիվացման անհրաժեշտության, նոր, ներառյալ՝ իրավական մոտեցումների մշակման անհրաժեշտության մասին: Դրա համար հարկավոր է թմրահանցավորության քրեաբանական բաղադրիչների, այդ թվում՝ թմրահանցագործի անձի քրեաբանական հետազոտության իրականացում:

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս **Խորայեցան Գ.**, Հանցավորության կանխարգելման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործունեության իրավական կարգավորման կատարելագործման որոշ հիմնախնդիրներ // Պետություն և իրավունք հանդես: № 2 (68), 2015, էջեր 5-10, **Խորայեցան Գ.**, Կիրառական քրեաբանության արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Գիտագործնական ձեռնարկ: Երևան, Հեղ. հրատ., Աստղիկ Գրատուն, 2019, էջեր 168-174:

2. Հայաստանի Հանրապետությունում 2017-2022 թվականներին թմրահանցագործություններ կատարող անձանց ընդհանրացված ծևով բնորոշ է երիտասարդ տարիքի (հատկապես 30-49 տարեկան) քրեական ակտիվությունը, ցածր կրթական մակարդակը, մշտական աշխատանքային զբաղվածություն չունենալը, թմրահանցանքը գերազանցապես շահադիտական դրդապատճառով կատարելը և այլն:

3. Թմրահանցագործի անձի քրեաբանական հետազոտությունների արդյունքները պետք է հաշվի առնվեն թմրահանցագործությունների անհատական կանխարգելման ուղղվածությունը որոշելիս, մեթոդը, ներգրավվող անձն ընտրելիս և այլ հարցեր կարգավորելիս:

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը հնարավորություն չի տալիս անհատական կանխարգելումն իրականացնել ամբողջովին: Ուստի անհրաժեշտ է կատարել օրենսդրական համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ ընդլայնել կանխարգելման օբյեկտների շրջանակը, մանրամասն կանոնակարգել կանխարգելիչ ներգործության մեթոդների և կառուցակարգերի առանձնահատկությունները:

5. Անհատական կանխարգելումը, որպես կանոն, ենթադրում է համապատասխան օբյեկտի նկատմամբ հոգեբանական ներգործություն համոզման մեթոդի կիրառմամբ, որը լիարժեք չի կարող կենսագործվել իրավաբան իրավապահների կողմից: Ուստի անհրաժեշտ է Ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային մարմիններում նախատեսել հոգեբանի հաստիքներ և ամրագրել անհատական կանխարգելիչ աշխատանքներին հոգեբանների ներգրավման օրենսդրական հիմքեր:

### **Օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկ**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1233-Ն որոշումն ուժը

կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի N 1254-Ն որոշում: ՀՀՊՏ 2014.11.19/63(1076).1: Հոդ. 1044.7:

**2. Իսրայելյան Գ.**, Հանցավորության կանխարգելման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործունեության իրավական կարգավորման կատարելագործման որոշ հիմնախնդիրներ //Պետություն և իրավունք հանդես: № 2 (68), 2015, էջեր 5-10:

**3. Իսրայելյան Գ.**, Կիրառական քրեաբանության արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Գիտագործնական ձեռնարկ: Երևան, Հեղ. իրատ., Աստղիկ Գրատուն, 2019. – 192 էջ:

**4. Իսրայելյան Գ.**, Քրեաբանություն: Ընդհանուր դրույթներ: Ուսումնական ձեռնարկ /Գ.Վ. Իսրայելյան. – Եր.: Հեղ. իրատ, Աստղիկ Գրատուն, 2020. – 192 էջ:

**5. Готчина Л.В.** Криминологическая характеристика личности молодого наркопреступника //Вестник Санкт-Петербургского университета МВД России. 1(49),2011 //<https://cyberleninka.ru/article/n/kriminologicheskaya-harakteristika-lichnosti-molodogo-narkoprestupnika/viewer>

**6. Кобец П.Н.** Личность рецидивиста и особенности ее формирования //Закон и право. 2001. № 11. - С. 39-42.

**7. Саркисов Г.С.** Индивидуальная профилактика преступлений. – Еր.: Айастан, 1986. – 184 с.

**8. Чуфаровский Ю.В.** Криминология в вопросах и ответах: учеб. пособие. – М.: ТК ВЕЛБИ, Изд.-во «Проспект», 2006. – 144 с.

## ЛИЧНОСТЬ НАРКОПРЕСТУПНИКА И НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИНДИВИДУАЛЬНОГО ПРЕДУПРЕЖДЕНИЯ НАРКОПРЕСТУПЛЕНИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

### **Аннотация**

В статье представлены результаты проведенного автором криминологического исследования личности наркопреступника по данным 2017-2022 гг.

Результаты исследования автора показывают, что в обобщенном виде наркоПреступнику характерны преимущественно молодой возраст (30-49 лет), низкий образовательный уровень, отсутствие постоянной работы, совершение наркоПреступлений из корыстных побуждений и т.д. Указанные и другие данные должны учитываться при определении направления индивидуального предупреждения наркоПреступлений, выборе метода и решении других вопросов.

Автор считает, что законодательство Республики Армения не предоставляет возможности осуществлять индивидуальное предупреждение в полной мере. Поэтому автор предлагает внести соответствующие законодательные изменения и дополнения – расширить круг объектов профилактики, детально регламентировать специфику методов и механизмов предупредительного воздействия.

Кроме того, автор отмечает, что индивидуальное предупреждение, как правило, предполагает психологическое воздействие на соответствующий объект методом убеждения, что не может быть в полной мере реализовано юристами-правоприменителями. Поэтому необходимо предусмотреть должности психологов в территориальных органах полиции Министерства внутренних дел и установить правовые основания для привлечения психологов к индивидуальной предупредительной работе.

**Ключевые слова:** структурные элементы личности наркоПреступника, индивидуальное предупреждение наркоПреступлений.

## THE PERSONALITY OF A DRUG OFFENDER AND SOME ISSUES OF INDIVIDUAL PREVENTION OF DRUG CRIMES IN THE REPUBLIC OF ARMENIA

### Annotation

The article presents the results of the criminological research of the personality of a drug offender conducted by the author according to the data of 2017-2022.

The results of the author's research show that, in a generalized form, personality of a drug offenders are characterized mainly by a young age (30-49 years), a low educational level, lack of permanent work, the commission of drug crimes mainly for selfish motives, etc. Specified and other results should be taken into account when determining the direction of individual prevention of drug crime, when choosing a method and in solving other issues.

The results of the author's research show that the legislation of the Republic of Armenia does not provide an opportunity to carry out individual prevention in full. Therefore, the author proposes to make appropriate legislative changes and additions - expand the range of prevention facilities, regulate in detail the specifics of methods and mechanisms of preventive action.

In addition, the author notes that individual warnings, as a rule, involve psychological impact on the relevant object by the method of escape, which cannot be fully implemented by law enforcement officers. Therefore, it is necessary to provide for the positions of psychologists in the territorial police bodies of the Ministry of Internal Affairs and establish legal grounds for involving psychologists in individual preventive work.

**Keywords:** structural elements of the personality of a drug offender, individual prevention of drug crimes.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 15.11.2023 թ., պրկել է գրախոսության 01.12.2023 թ., ընդունվել է լուսագրության 01.12.2023 թ.:

DOI: 10.59560/18291155-2023.4-63



### ԱՐԴԱ ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
Սահմանադրական դատարանի  
Աշխատակազմի իրավախորհրդադպվական  
վարչության փորձագիրական-վերլուծական  
բաժնի պետ, ի.գ.թ.



### ԼՈՒՄԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
Սահմանադրական դատարանի  
աշխատակազմի իրավախորհրդադպվական  
վարչության փորձագիրական-վերլուծական  
բաժնի առաջադրար մասնագետ,  
Հայ-ռուսական համալսարանի իրավունքի  
դետության և սահմանադրական իրավունքի  
ամբիոնի «Վարչական իրավունք և  
դատավարություն» մագիստրոսական  
ծրագրի 2-րդ կուրսի ուսանողության

**ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՆ ՍՆԱՆԿ ՃԱՆԱՋԵԼՈՒ ՀԻՄՔՈՎ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ  
ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ  
ԱՆՀԱՐԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ՝ ԴԱՏԱԿԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ**

### **Ամփոփագիր**

Սույն հոդվածում քննարկվում է Հայաստանի Հանրապետությունում  
ներկայիս օրենսդրական կարգավորումների պայմաններում պատաս-  
խանողին սնանկ ճանաչելու հիմքով քաղաքացիական գործի վարույթը

կարճելու դեպքում պետական տուրքի վերադարձման անհնարինության խնդիրը՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատարանի մատչելիության և սեփականության իրավունքների լույսի ներքո:

Սույն հետազոտության նպատակն է գործող իրավակարգավորումների համալիր ուսումնասիրության արդյունքում պարզել այն իրավական հիմքերը, որոնք թույլ կտան դատարանին՝ պատասխանողին սնանկ ճանաչելու հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելու դեպքում հայցվորին մասնակի կամ լրիվ վերադարձնել արդեն իսկ վճարված պետական տուրքը, իսկ վճարված չլինելու դեպքում՝ լուծել սույն հարցը:

Ուսումնասիրության արդյունքում հեղինակների կողմից անդրադարձ է կատարվում պետական տուրքի գանձման ինստիտուտի և դատարանի մատչելիության իրավունքի հարաբերակցության հարցին, պետական տուրքի գանձման նպատակներին, պետական տուրքի վերադարձման խնդրին՝ սեփականության իրավունքի, ինչպես նաև դատական ծախսերի բաշխման հարցին՝ սնանկության վարույթի առանձնահատկությունների լույսի ներքո:

**Հիմնաբառեր.** պետական տուրք, սնանկության վարույթ, սեփականության իրավունք, դատարանի մատչելիություն, պետական տուրքի վերադարձ:

## 1. Դատարանի մատչելիության իրավունքի և պետական տուրքի գանձման ինստիտուտի հարաբերակցությունը

**1.1. Ընդհանուր դրույթներ:** Դատարանի մատչելիությունն ինստիտուցիոնալ և վարութային երաշխիքների ամբողջություն է, որոնք կոչված են երաշխավորելու անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ կենսագործումը: Այս իրավունքը կարելի է դիտարկել լայն և նեղ իմաստներով: Դատարանի մատչելիության իրավունքը լայն իմաստով ենթադրում է յուրաքանչյուրի համար դատարան դիմելու հավասարապես երաշխավորվող հնարավորություն: «Այս իմաստով դատարանի մատչելիության իրավունքը կարող է սահմանվել որպես ցանկացած շահագրգիռ անձի հավասար հնարավորություն՝ անարգել դիմելու

դատական և արդարադատություն իրականացնող այլ մեխանիզմներին և մասնակցելու վեճի քննությանը դրա բոլոր փուլերում»<sup>1</sup>:

Նեղ իմաստով՝ դարպարանի մարդելիության իրավունքը վերաբերում է դատական պաշտպանության իրավունքի իրացմանն ուղղված ընթացակարգային երաշխիքներին: Այլ խոսքով՝ դատարանի մատչելիության իրավունքի հությունը հանգում է դատարանում գործի քննության համար պետության կողմից ցանկացած չարդարացված ընթացակարգային խոչընդոտների սահմանման անթույլատրելիությանը:

Դատարանի մատչելիության իրավունքը պետք է դիտարկել որպես արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի երաշխավորման միջոց, որն իրացվում է միջնորդավորված՝ օրենսդրորեն սահմանված ընթացակարգերի առկայությամբ (այդ թվում նաև՝ դատարան դիմելիս պետական տուրքի վճարման պարտականության սահմանմամբ):

Դատարանի մատչելիության իրավունքն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ենթակա է սահմանափակման: Այն կարող է ենթարկվել անուղղակի սահմանափակումների, մասնավորապես՝ բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ<sup>2</sup> (օրինակ՝ դատարան բողոք ներկայացնելիս պարտադիր վճարման ենթակա պետական տուրքի սահմանումը):

Այսպիսով՝ դատարանի մատչելիությունն արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ մաս է՝ կապված դատական պաշտպանության իրավունքի իրացման հետ՝ ինչպես դատարան դիմելիս, այնպես էլ դատավարության ընթացքում: Այս համատեքստում փաստում ենք, որ դարպարական որևէ առանձնահարկություն, այդ թվում նաև՝ պարագաների՝ մեկ այլ վարույթով սնանկ ճանաչվելը չպետք է հիմք հանդիսանա, որպեսզի պետությունը՝ միայն օրենքի «ձևական պահանջները» պահպանելու նպարակով անհամաշափ միջամբություն

<sup>1</sup> Корпен А.С. К вопросу о содержании права на доступ к правосудию // Право. Журнал Высшей школы экономики. 2016. №2. - С. 9. Հղումը ստորև՝ <https://cyberleninka.ru/article/n/k-voprosu-o-soderzhaniu-prava-na-dostup-k-pravosudiyu>

<sup>2</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս՝ Mamikonyan v. Armenia, Application no. 25083/05, 16.03.2010, Scholz AG v. Armenia, Application no. 16528/10, 24.01.2019:

իրականացնի անձի դադարանի մարքելիության իրավունքի նկատմամբ՝ խեղաթյուրելով և՝ դադարանի մարքելիության իրավունքի բուն էությունը, և՝ դադարաններում պետական դուրքի գանձման ինսպիրուուրի սահմանադրախրավական բովանդակությունը:

**1.2. Պետական տուրքի գանձման նպատակները:** Դատարանի մատչելիության իրավունքի հետ սերտ փոխկապակցված է պետական տուրքի ինստիտուտը: Պետական տուրքի գանձման հիմքում ընկած է հանրային իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց (պետության) կողմից որոշակի «ծառայությունների մատուցման» դիմաց համապատասխան «փոխհատուցում» ստանալու գաղափարը: Այլ կերպ ասած՝ պետությունը կրում է պոզիտիվ պարտականություն պետական տուրք վճարած անձի օգտին կատարելու վերջինիս կողմից հայցվող որոշակի գործողություններ: Բացառություն չի կազմում նաև արդարադատության իրականացման գործառույթին ուղղված՝ պետության կողմից իրականացվող գործողությունների (մատուցվող ծառայություններ) դիմաց որոշակի դրամական արտահայտությամբ պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը:

Այսպես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (հետայսու՝ Օրենսգիրք) 122-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայցադիմումին, ի թիվս այլ փաստաթղթերի, կցվում են օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական տուրքի վճարման արտոնություն տրամադրելու վերաբերյալ միջնորդությունը: Հետևապես, որպես ընդհանուր կանոն, պետական տուրք վճարելը քաղաքացիական դատավարության մեկնարկին նախորդող իմպերատիվ նախապայման է, իսկ բոլոր այն դեպքերում, երբ հայցադիմում ներկայացրած անձի կողմից չի ներկայացվում օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական

հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական տուրքի վճարման արտոնություն տրամադրելու վերաբերյալ միջնորդությունը, դատարանն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով վերադարձնում է հայցադիմումը:

Վերոգրյալից հետևում է, որ պետական տուրքը դատարանի լիազորությունների իրականացմամբ պայմանավորված, ինչպես նաև համապատասխան գործողությունների կատարման համար գործին մասնակցող անձանցից գանձվող պարտադիր վճար է: Այլ կերպ ասած՝ պետական դուրքը կոնկրետ գործի շրջանակներում ծագած և գործի քննության հետ կապված ծախս է, որն ընդգրկվում է դատական ծախսերի մեջ:

Այսպիսով՝ պետական տուրքի վճարումն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման նախապայման է, և որպես հետևանք չի հանգեցնում դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի անհամաչափ սահմանափակման: Դատարան դիմելիս պետական տուրքի վճարումը հանդես է գալիս որպես անձի դատավարական պարտականություն, և դրա պարտադիրությունը կապված է լոկ պետության կողմից համապատասխան «ծառայության» դիմաց որոշակի փոխհատուցում տրամադրելու, ինչպես նաև դատարան դիմելու իրավունքի «շահարկումները» կանխելու նպատակների հետ:

### **1.3. Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի դիրքորոշումները:**

(ա) Պետական տուրք վճարելու պարտականության և դատարանի մատչելիության իրավունքի հարաբերակցության հարցին իր մի շարք որոշումներում անդրադարձ է կատարել Սահմանադրական դատարանը: Մասնավորապես, Սահմանադրական դատարանը, 2010 թվականի մայիսի 25-ի ՍԴՌ-890 որոշման<sup>1</sup> շրջանակներում անդրադառնալով

<sup>1</sup> Քաղաքացիներ Արարատ Շովյանի և Սվետլանա Հակոբյանի դիմումի հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

պետական տուրքեր վճարելու պարտականությանը, նշված սահմանադրական պարտականության և դատարանի մատչելիության իրավունքի հարաբերակցությանը, պետական տուրքի բովանդակությանը, դերին ու նշանակությանը, նշել է.

«Դադարաններում պետական դուրք վճարելու պարտականության սահմանումը նպագակ է հետապնդում փոխհավուցել պերության՝ արդարադարության իրականացման հետ կապված ծախսերը, կանխարգելել ակնհայր անհիմն հայցադիմումների հոսքը, դադարան դիմելու իրավունքի չարաշահումը»:

(...)

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դադարաններում պետական դուրք վճարելու սահմանադրական պարտականության կարարումը սերվորեն առնչվում է անձի՝ դադարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ՝ սահմանադրական դադարանը հարկ է համարում ընդգծել, որ դադարաններում պետական դուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դադարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպագակ: Օրենսդիրը կարգավորելով դադարաններում պետական դուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները՝ կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազարտությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դադարանի մարչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդիրի պարտականությունն է երաշխավորել պարշաճ հավասարակշռություն, մի կողմից, դադարաններում պետական դուրք գանձելու՝ պերության օրինավոր շահի, դադարաններում պետական դուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դադարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև: Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրավական նպագակ»:

Մեկ այլ՝ 2018 թվականի հուլիսի 10-ի ՍԴՈ-1423 որոշմամբ<sup>1</sup> Սահմանադրական դատարանը, ելնելով պետական տուրքի՝ օրենքով որոշված իրավական բովանդակությունից և նպատակային նշանակությունից, նշել է.

«(...) պետական դուրք վճարելու պարտականության սահմանումը նպագուկ է հետապնդում, նախ՝ որոշակիորեն փոխհարուցել պետության կողմից հանրային ծառայություններ մարուցելու, այդ թվում՝ արդարադարձության իրականացման հետ կապված ծախսերը, իսկ վերջինիս դեպքում նաև՝ մասսամբ նախականինել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը՝ նպաստելով թե՛ արդարադարձության իրականացման արդյունավելության բարձրացմանը և թե՛ դադարան դիմելու իրավունքի իրացման հնարավոր շահարկման կանխարգելմանը»:

**(b)** Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (հետայսու՝ ՄԻԵԴ) նախադեպային պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ ՄԻԵԴ-ը ևս չի բացառում հնարավորությունն առ այն, որ արդարադատության իրականացման շահերի նպատակով անձի նկատմամբ դատարան «մուտք գործելու» համար ֆինանսական սահմանափակում դնելը կարող է արդարացվել, հետևաբար՝ դատարանը գտել է, որ քաղաքացիական տուրքեր վճարելու պահանջը չի կարող դիտվել որպես դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակում, որն ինքնին անհամատեղելի է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ: Այնուամենայնիվ, դատարանը վերահաստատել է, որ վճարի չափը, որը գնահատվում է կոնկրետ գործի հատուկ հանգամանքների լույսի ներքո, ներառյալ՝ դիմումատուի՝ դրանք վճարելու կարողությունը, և դատավարության փոխը, որով սահմանվել է այդ սահմանափակումը, էական գործուներ են որոշելու, թե արդյո՞ք անձն օգտվում է դատարանի մատչելիության իր իրավունքից, թե՛ ոչ, և արդյո՞ք իր գործը լսվել է դատարանի առջև (դե՛ս Kreuz v. Poland, Application no.

<sup>1</sup> Կարեն Ավագյանի դիմումի հիման վրա՝ «Հարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության՝ «Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով»:

28249/95, 19.06.2001, §59-60, Karahasanoglu v. Turkey, Application no. 21392/08, 16.03.2021, FINAL 16.06.2021, §34, Stankov v. Bulgaria, Application no. 68490/01, 12.07.2007, FINAL 12.10.2007, §52):

Պետական տուրքի գանձման վերաբերյալ Սահմանադրական դատարանի, ինչպես նաև ՄԻԵԴ-ի վերոնշյալ դիրքորոշումները վկայում են առ այն, որ օրենսդրի կողմից հանրային իշխանության մարմինների և դրանց պաշտոնակար անձանց (պետության) մարուցած «ծառայությունների», այդ թվում նաև՝ արդարադապության իրականացման դիմաց, անհավից պարտադիր գանձման ենթակա պետական դրույթի որոշակի դրույթափի սահմանումը՝ այնքանով, որքանով չի խոչընդունվում անձի դարպարանի մավզելիության իրավունքին, թույլավորելի և, նույնիսկ, անհրաժեշտ միջոց է:

## **2. Պետական տուրքի վերադարձը՝ սեփականության իրավունքի լուսի ներքո**

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորվում է անձի սեփականության իրավունքը: Միաժամանակ, Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասից բխում է, որ սահմանադիրն օրենսդրի իրավասությանն է վերապահել իր իսկ հայեցողությամբ սահմանել հարկեր, տուրքեր, պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ կատարելու հիմքերը և կարգը: Ընդ որում՝ հարկեր, տուրքեր, պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումների տեսքով սեփականության իրավունքին միջամտությունն իրականացվում է ոչ թե կամայական՝ այլ բացառապես որոշակի լեգիտիմ նպատակի ապահովման նկատառումներից ելնելով: Այսպիսով՝ անձի սեփականության իրավունքին ցանկացած միջամտություն, այդ թվում նաև՝ անձի վրա պետական տուրքի վճարման պարտականություն դնելը, պետք է կատարվի բացառապես այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով և միջազգային

իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Այս առնչությամբ հարկ է նշել, որ «Մարդու իրավունքների և իմանարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը ևս, հոչակելով սեփականության իրավունքը, միաժամանակ նախատեսում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն ի շահ հանրության, եթե այդ սահմանափակումը նախատեսված է օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով, և ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար<sup>1</sup>:

Սեփականության իրավունքի իրացման իմակերատիվ պայմաններից է անձի հայեցողությունը՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավազորությունների հարցում: Այսինքն, որպես ընդհանուր կանոն, սեփականության տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը պետք է իրականացվի բացառապես սեփականատիրոջ հստակ կամաարտահայտության պայմաններում: Այնուամենայնիվ, այս ընդհանուր կանոնից բացառություն է պերության կողմից հարկեր, գուրքեր, պերական կամ համայնքային բյուջե մուլքագրվող պարտադիր այլ վճարումների սահմանումը, որոնց պարագայում անձի ազատ կամաարտահայտության առկայությունը չի հանդիսանում սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, ուստի սեփականագրիրոջ կամքն առաջնային չէ:

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանափակման հարցին, իր 30.01.2013 թվականի ՍԴՈ-1073 որոշմամբ<sup>2</sup> արձանագրել է հետևյալը.

«Այսպիսով, արձանագրելով, մի դեպքում՝ սեփականության իրավունքի իրացման սահմանադրորեն ամրագրված սկզբունքներն ու դրանց կիրա-

<sup>1</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս՝ Beyeler v. Italy, Application no. 33202/96, 05.01.2000; Sporrong and Lonnroth v. Sweden, Application no. 7151/75; 7152/75, 23.09.1982:

<sup>2</sup> ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

ման օրենսդրական շրջանակները, մյուս դեպքում՝ օրենքով սահմանված հարկեր մուծելով՝ անձի սահմանադրական պարտականության կարարման անխուսափելիությունը, սահմանադրական դատարանը կարևորում է վերջինիս իրավակարգավորման այնպիսի միջոցների ու ձևերի սահմանումն ու կիրառումը, որոնց պարագայում իրավունքը չենթարկվի անիրավաչափ (անհամաչափ) սահմանափակման, իսկ օրենքով նախադրելով սահմանափակումները հետապնդեն սահմանադրորեն արդարացված նպարակ և որևէ կերպ չգերազանցեն Հայաստանի Հանրապետության սղանձնած միջազգային պարտավորությունների շրջանակները»:

Այսպիսով՝ թե՛ Սահմանադրությամբ, թե՛ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայով սեփականության իրավունքի պաշտպանություն նախատեսելու հետ միաժամանակ նախատեսվել է նաև օրենքով սահմանված հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարումների կատարման պարտականությունը՝ որպես նման պարտականության նախատեսման պարտադիր նախապայման դիտարկելով որոշակի լեգիտիմ նպատակի հետապնդումը։ Ուստի՝ սեփականության իրավունքի յուրաքանչյուր սահմանափակում, այդ թվում՝ պետական տուրքի սահմանումը, պետք է տեղի ունենա բացառապես օրենքի հիման վրա, համապատասխանի իրավական որոշակիության սկզբունքին, իսկ այդ սահմանափակումը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ և ունենա արդարացի հիմնավորում։

ՄԻԵԴ-ի ձևավորած պրակտիկայի համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի իմաստով **գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը**<sup>1</sup>։

<sup>1</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս՝ Trgo v. Croatia, Application no. 35298/04, 11.06.2009, Final 11.09.2009, J. A. Pye (Oxford) Ltd and J. A. Pye (Oxford) Land Ltd v. United Kingdom,

Լեզիտիմ ակնկալիքն առաջանում է այն պարագայում, երբ անձն իր սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության հիմքում դնում է ոչ կոնկրետ իրավունքը, այլ այդ իրավունքի իրացման իրական սպասման (ակնկալիքի) համար հիմք հանդիսացած հանգամանքը (փաստը)<sup>1</sup>:

Սույն ուսումնասիրության խնդրո առարկան կոնկրետ քաղաքացիական գործով պատասխանողի՝ սնանկության վարույթի շրջանակներում սնանկ ճանաչվելու դեպքում տվյալ քաղաքացիական գործի վարույթի կարճման պայմաններում վճարված պետական տուրքի վերադարձվելիության խնդիրն է: Տվյալ պարագայում քաղաքացիական գործով հայցվորն իր դատական պաշտպանության և սեփականության իրավունքների իրացման/պաշտպանության պահանջի հիմքում դնում է այն փաստը, որ տվյալ քաղաքացիական գործով պատասխանողը մեկ այլ վարույթով ճանաչվել է սնանկ, ինչի արդյունքում տվյալ քաղաքացիական գործի վարույթը կարճվում է (այսինքն՝ հայցվորը զրկվում է դատական պաշտպանությունից), ուստի՝ վերջինս ձեռք է բերում իր կողմից արդեն իսկ վճարված պետական տուրքի մասնակի կամ լրիվ վերադարձման օրինական ակնկալիք: Այսինքն՝ **Լեզիտիմ ակնկալիքի հիմքը պետության կողմից «չմատուցված ծառայությունն» է:**

*Application no. 44302/02, 30.08.2007, Saghinadze and others v. Georgia, Application no. 18768/05, 27.05.2010, Final 27.08.2010:*

<sup>1</sup> Սահմանադրական դատարանն իր՝ 01.12.2015 թվականի ՍԴՈ-1238 որոշման շրջանակներում նշել է հետևյալը.

«Դիմողը, փաստորեն, ձեռք է բերել ... սեփականության իրավունքի օրինական ակնկալիք, ինչի վրա գործածվում է սեփականության իրավունքին համարժեք պաշտպանության ռեժիմ՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և << սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքի: Մասնավորապես, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (դես՝ մասնավորապես, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով 2009 թ. հոնիսի 11-ի վճիռը, կետ 44) գոյր է համարվում ոչ միայն գոյրուն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեզիտիմ ակնկալիքը»: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված վճիռը վկայակոչված է նաև << սահմանադրական դատարանի 2010 թ. հովիսի 7-ի ՍԴՈ-902 որոշման մեջ: Իսկ << սահմանադրական դատարանի ՍԴՈ-723, ՍԴՈ-741, ՍԴՈ-881 որոշումներում Սահմանադրական դատարանը փաստել է սեփականության իրավունք ձեռք բերելու նկարմամբ լեզիտիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորությունը: Ավելին, ՍԴՈ-741 որոշման 8-րդ կեզրում Սահմանադրական դատարանը նշել է. «Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ << Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանություն գրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն որենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

Սեփականության իրավունքի պաշտպանության իրավունքն անձի մոտ ծագում է երկու դեպքում, երբ՝

(1) անձի սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է,

(2) անձինք օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

Երկրորդ հիմքի համատեքստում հարկ է պարզել, թե ե՞րբ է անձի մոտ առաջանում պեղական դուրքի մասնակի կամ լրիվ վերադարձման օրինական ակնկալիքը:

«Պետական տուրքի մասին» <<օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 38-րդ հոդվածը, ի թիվս այլ հիմքերի, «գ» կետով նախատեսում է պետական տուրքի մասնակի կամ լրիվ վերադարձման իրավական հնարավորություն՝ **տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության, կամ հայցվորը չի պահպանել տվյալ կատեգորիայի գործի համար վեճը լուծելու սահմանված նախնական արտադատարանական կարգը, կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը:**

Փաստացի ստացվում է, որ այն պահից սկսած, երբ կոնկրետ քաղաքացիական գործի վարույթը կարճվում է՝ գործը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով, անձի մոտ առաջանում է պեղական դուրքի՝ որպես սեփականության ձևի վերադարձման օրինական ակնկալիք:

Ողջ վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ այն պարագայում, երբ անձի կողմից արդեն իսկ վճարված պետական տուրքի դիմաց վերջինիս չի մատուցվել այն ծառայությունը, որի համար գանձվել է համապատասխան դրույքաչափի պետական տուրք (ընդ որում՝ **ծառայություն մաղուցված չլինելը կախված չի եղել կողմի կամքից, ավելին՝ վերջինիս կողմից օբյեկտիվորեն չէր էլ կարող կանխափեսվել, որ պարտապերը մեկ այլ գործով դադարանի օրինական ուժի մեջ մտած վճռով կարող է ճանաչվել սնանկ, և այդ հիմքով գործի վարույթը կարող է կարճվել**) պեղական դուրքի պահումը պեղական բյուջեում հանգեցնում է անձի սեփականության իրավունքի, այն է՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի անհամաչափ միջամկության (սահմանափակման):

### 3. Դատական ծախսերի բաշխման հարցը<sup>1</sup> սնանկության վարույթի առանձնահատկությունների լույսի ներքո

(ա) **Պետական տուրքի վճարման պարտականությունը՝ դատական ծախսերի բաշխման համատեքստում:** Օրենսգրքի 110-րդ հոդվածը կարգավորում է դատական ծախսերի բաշխումը՝ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում: Հիշատակված հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, բացառությամբ սույն հոդվածով նախադեսված դեպքերի: Վերոնշյալ հոդվածի 2-4-րդ մասերում նախանշված են վերոգրյալ բացառությունները, որոնք, սակայն, չեն անդրադառնում պատասխանողին սնանկ ճանաչելու հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի բաշխման հարցին:

Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 103-րդ հոդվածը սահմանում է պետական տուրքը վերադարձնելու կարգավորումները՝ նույն հոդվածի 1-ին մասով ամրագրելով, որ վճարված պետական տուրքի վերադարձման հիմքերը և կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» <<օրենքով, իսկ 2-րդ մասով ամրագրում է, որ վճարված պետական տուրքի վերադարձման հիմքերի առկայության դեպքում դատարանը պարտավոր է դատական ակտում նշել պետական տուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու հիմք հանդիսացող հանգամանքները:

Օրենքի համալիր ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ օրենսդրի կողմից փորձ է արվել պահպանել ողջամիտ հավասարակշռություն, մի կողմից՝ դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինական շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ անձի օրինական շահի միջև, սահմանելով որոշակի իրավական երաշխիքներ,

<sup>1</sup> Սույն գիտում դատական ծախսերի բաշխման հարցը քննարկվում է առավելապես պետական տուրքի վճարման պարտականության համատեքստում:

որոնք կապահովեն անձի՝ դատարանի մատչելիության, ինչպես նաև արդյունավետ դատական պաշտպանության իրավունքները:

Մի կողմից՝ դատարանի մատչելիության իրավունքի ապահովմանն է միտված դատարաններում պետական տուրքի գծով արտոնություններ սահմանելը, այն է՝ Օրենքում որոշակիացված դեպքերում անձանց՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատելը (մինչդարձավարական երաշխիք): Մյուս կողմից՝ հաշվի առնելով, որ պետական տուրքի գանձման հիմնական նպատակը պետության կողմից մատուցված «ծառայության» դիմաց որոշակի փոխհատուցումն է՝ օրենսդրի կողմից նախատեսվել է արդեն իսկ վճարված պետական տուրքի մասնակի կամ լրիվ վերադարձման ինստիտուտը, որը կոչված է ապահովելու անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացումը (հեղողավարական երաշխիք): Այսինքն՝ **բոլոր այն դեպքերում, եթե անձը պետությունից հայցում է իր ենթադրյալ խախտված իրավունքի դատական պաշտպանություն և դրա դիմաց վճարում է պարտադիր վճարման ենթակա պետական տուրք, սակայն դրա դիմաց չի ստանում իր ենթադրյալ խախտված իրավունքի արդյունավետ դատական պաշտպանություն (այն է՝ փաստացի վերջինիս արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը չի իրացվում), պետությունը պարտավորվում է վերադարձնել արդեն իսկ վճարված պետական տուրքի գումարը:** Օրենսդրի նման մոտեցումը պայմանավորված է այն պարզ տրամաբանությամբ, որ պետությունը՝ ի դեմս դատարանի, գործն ըստ էության չքննելով, չի կրում արդարադատության իրականացման հետ կապված որևէ էական ծախս, ուստի՝ դրա դիմաց արդեն իսկ վճարված պետական տուրքը չվերադարձնելը չի արդարացնում պետական տուրքի գանձման ինստիտուտի սահմանադրահրավական նպատակները և նշանակությունը:

Սահմանադրական դատարանը, իր՝ 2023 թվականի սեպտեմբերի 5-ի ՍԴԱՌ-99 աշխատակարգային որոշմամբ<sup>1</sup> անդրադառնալով գործի

<sup>1</sup> «ՀՀ Վերաբնիք քաղաքացիական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» օրենքի 38-րդ հոդվածի՝ այնքանով, որքանով չեն նախատեսում գործի քննության ընթացքում

քննության ընթացքում պատասխանողի սնանկ ճանաչվելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքում պետական տուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու օրենսդրական հնարավորության հարցին, արդարացիորեն նշել է.

«(...) Օրենքը, հանդիսանալով պետական փուրքի հետ կապված հարցերի ընդհանուր կանոնակարգումները սահմանող նորմատիվ իրավական ակտ, նախադեսում է պետական փուրքի լրիվ կամ մասնակի վերադարձման ընդհանուր հիմքերը, այդ թվում՝ գործը դադարանում քննության ենթակա չյինելու դեպքում փվալ գործով վարույթի կարձման հիմքը (1-ին մասի «գ» կետ): Օրենքի ընդհանուր դրամաբանությունից բխում է, որ պետական փուրքը ենթակա է լրիվ կամ մասնակի վերադարձման բոլոր այն դեպքերում, եթե գործն օրենքով սահմանված հիմքերի առկայության պայմաններում ենթակա չէ դադարանում քննության: Սահմանադրական դադարանն արձանագրում է, որ Օրենքի սույն նորմով կանոնակարգված են գործի՝ դադարանում քննության ենթակա չյինելու դեպքերը ցանկացած դադարավորության համար: Այսինքն՝ «Պետական փուրքի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետում գործածված «գործը ենթակա չէ դադարանում քննության» ծևակերպումը բովանդակային առումով ենթակա է լայն մեկնաբանման՝ ներառելով գործի քննության անհնարինության դեպքերը համապատասխան դադարանում՝ անկախ դադարավորության դեսակից:

Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են քաղաքացիական դադարավորության շրջանակներում գործի վարույթը կարճելու հիմքերը: Օրենսգրքի հիշյալ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված է, որ առաջին ապյանի դադարանը դադարավորության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դադարավորության կարգով: Միաժամանակ, Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով սահմանված է, որ առաջին

---

պատասխանողի սնանկ ճանաչվելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքում պետական տուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու օրենսդրական հնարավորություն, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին:

ապյանի դադարանը դարպավարության ցանկացած փուլում կարծում է գործի վարույթն օրենքով նախարեսված այլ դեպքերում: Փաստորեն, օրենսդիրը, Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով, ըստ էության, սահմանելով գործի վարույթը կարճելու իմադերապիկ հիմքերի սպառից ցանկ (1-11-րդ կետեր), միաժամանակ նախարեսել/սահմանել է բաց թվարկում (12-րդ կետ), ինչը ենթադրում է, որ օրենսդրի կողմից կարող են ընդունվել հարուկա կարգավորումներ սահմանող այլ օրենքներ, որոնք կնախարեսեն (Օրենսգրքում նշվածներից զարդ) գործի վարույթը կարճելու այլ հիմքեր»:

Վերոնշյալ դիրքորոշման լույսի ներքո հարկ ենք համարում ընդգծել, որ «Մասնկության մասին» << օրենքից զատ, հատուկ կարգավորումներ սահմանում են նաև «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» << օրենքը (18-րդ հոդվածի 2-րդ մաս) և «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» << օրենքը (29-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետ):

Այսպես՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» << օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը, որին հայց է ներկայացված այն վեճի վերաբերյալ, որի վերաբերյալ առկա է ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը, որը չի վիճարկվել սույն օրենքի 16-րդ հոդվածով սահմանված մեկամյա ժամկետում, պարտավոր է մերժել հայցադիմումի ընդունումը, իսկ եթե հայցադիմումն ընդունվել է՝ կարճել գործի վարույթը: Իսկ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» << օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն՝ դատարանի կողմից Կենտրոնական բանկի դիմումը բավարարելու և լուծարային կառավարիչ նշանակելու մասին որոշման կայացման պահից դադարաններում կարճվում են բոլոր այն գործերի վարույթները, որուն բանկը ճանաչվել է պատրասխանող, ինչպես նաև կասեցվում են բանկի գույքի վրա բռնագանձում տարածելու մասին

դատարանների, արքիտրաժային տրիբունալների վճիռների, որոշումների կատարողական վարույթները: Սույն կետով սահմանված՝ կասեցված կամ կարճված վարույթների հետ կապված պահանջները պարտատերերը կարող են ներկայացնել լուծարային կառավարչին՝ սույն օրենքով սահմանված կարգով:

Վերոնշյալ իրավակարգավորումների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ **առանձին՝ այլ (հատուկ) օրենքով նախատեսված** գործի կարճման հիմք, որպես այդպիսին, սահմանվում է միայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» << օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով, մինչդեռ թե □ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» << օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետը, թե «Սնանկության մասին» << օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, թեև նախատեսում են առանձին՝ Օրենսգրքի նկատմամբ հատուկ հանդիսացող օրենքներով նախատեսված հիմքեր (ինչի արդյունքում էլ առաջանում է խնդրո առարկա վեճը), այնուամենայնիվ, բովանդակային առումով վերջիններս անուղղակի կերպով նախատեսում են կոնկրետ դատարանում գործի քննության անհնարինության հիմք:

Այսպիսով, ստացվում է, որ իրավակիրառական պրակտիկայում գոյացած խնդիրն ունի արհեստածին բնույթ, քանի որ վերջինս կարող է լուծվել բացառապես դատական մեկնաբանման միջոցով, այնինչ դատարանները դեռևս չեն դրսնորում բավարար հաստատակամություն և պատրաստակամ չեն օրենքներում օգտագործվող ձևակերպումներին տալ լայն՝ տառացի նշանակության սահմաններից դուրս մեկնաբանում, մինչդեռ, ինչպես արդարացիորեն նշել է Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի ապրիլի 8-ի ՍԴԱՌ-74 աշխատակարգային որոշմամբ<sup>1</sup> «(...) Օրենքի, վերջինիս որևէ դրույթի իրավական բովանդակության բացա-

<sup>1</sup> «<< Վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի Սուածին Հանրապետության անկախության հիշակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» << օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին:

հայրման և միավեսակ կիրառության ապահովման իրավագորությունը սահմանադրորեն վերապահված է եռասլիճան դարական համակարգին»: Ցանկացած նման խնդրի առկայության պարագայում դատարանները, դատական մեկնաբանման լայն գործիքակազմի օգտագործմամբ, պետք է փորձեն համապատասխանեցնել օրենքի տառն օրենքի ոգուն, օրենսդրի կամքին, քանի որ անհնարին է պատկերացնել իրավական նորմի կիրառումն առանց վերջինիս մեկնաբանման՝ իրավունքի իրական բովանդակության բացահայտման: Ավելին՝ դատարանները դատական մեկնաբանումն իրականացնում են ոչ թե կամայական, այլ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մեկնաբանման կանոններին (Եղանակներին) համապատասխան, ընդ որում մեկնաբանման կանոնները (Եղանակները) սպառիչ չեն և չեն բացառում մեկնաբանման այլ՝ կոնկրետ նորմի իմաստը/օրենսդրի կամքը վերհանելուն ուղղված դոկտրինալ Եղանակների օգտագործումը:

**(b) Պետական տուրքի վերադարձման անհնարինությունը՝ սնանկության վարույթի առանձնահատկությունների լույսի ներքո:** «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից կարճվում կամ ավարտվում են պարտապանից գումարի բոնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային դրիբունակի վարույթում գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում՝ սույն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով:

Թե՛ Վճռաբեկ դատարանը, թե՛ Սահմանադրական դատարանն իրենց նախկինում կայացրած որոշումներում բազմիցս նշել են, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի ուժով սնանկության վարույթն ունի առանցքային առանձնահատկություն՝

<sup>1</sup> Սնանկության ինստիտուտի էռոֆյունը բացահայտվում է որա հետապնդած նպատակների միջոցով: Թեև օրենսդրը սնանկության ինստիտուտի նպատակներն ուղղակիորեն չի ամրագրել, սակայն Օրենքի համակարգային վերլուծությունից բխում է, որ սնանկության ինստիտուտի

այն է՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից սառեցվում է պարտատերերի պահանջների բավարարությունը (մորատորիում): Այդ պահից սառեցվում են պարտատերերի բոլոր գործողությունները, որոնք ուղղված են պարտապանի նկատմամբ պահանջների բավարարմանը: Ընդ որում՝ հիշատակված հիմքով կարճման ենթակա են սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ ոչ բոլոր քաղաքացիական գործերի վարույթները, այլ միայն այն քաղաքացիական վեճերով գործերի վարույթները, որոնցում սնանկ ճանաչված պարտապանին ներկայացված է նյութափական պահանջ՝ գումարի բոնագանձման կամ գույք հանձնելու դեսքով, և որոնց լուծումը կարող է հանգեցնել վերջինիս գույքային զանգվածի փոփոխության:

Նման կարգավորման հիմքում օրենսդիրը դրել է այն ողջամիտ տրամաբանությունը, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ պարտավորությունները պետք է մեկտեղվեն սնանկության վարույթում: Օրենսդրի որդեգրած նման մոտեցումը հնարավորություն է ընծեռում երաշխավորելու բոլոր պարտատերերի շահերը՝ օրենքով սահմանված առաջնահերթությամբ վերջիններիս պահանջները բավարարելու նպատակով:

2023 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ ՍԴԱՌ-99 աշխատակարգային որոշմամբ<sup>1</sup> Սահմանադրական դատարանն արձանագրել է.

---

Նպատակը, նախևառաջ, անբարենպաստ ֆինանսական դրություն ունեցող անձի ֆինանսական առողջացումն է, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ընկերության լուծարումը/ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցումը և նրա գույքի հաշվին պարտատերերի պահանջների բավարարությունը (այս մասին ყե՞ն Մարկոսյան Տ.Ա. Սնանկության վարույթը Հայաստանի Հանրապետությունում. Գիտագործնական ձեռնարկ. ք. Երևան, Արդարադատության ակադեմիա, 2022):

<sup>1</sup> «ՀՀ Վերաբնիշ քաղաքացիական դատարանի դիմումի հիման վրա՝ << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» օրենքի 38-րդ հոդվածի՝ այնքանով, որքանով չեն նախատեսում գործի քննության ընթացքում պատասխանողի սնանկ ճանաչվելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքում պետական տուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու օրենսդրական հնարավորություն, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին:

««Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այն սահմանում է դրվագործի՝ դադարանում քննության անհնարինության հիմք, ինչը ենթադրում է նման գործերի քննության անհնարինություն ինչպես քաղաքացիական և վարչական դադարության կարգով, այնպես էլ արբիտրաժային կարգով:

(...)

Վերոգրյալը հիմք է տալիս եզրահանգելու, որ Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետն ինքնին նախադեսում է գործի քննության ընթացքում պետական փուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու օրենսդրական հնարավորություն այն դեպքում, եթե գործի վարույթը կարճվում է, ենթակա չէ քննության համապատասխան դադարանում (դրվագ վարույթի/դադարության շրջանակներում), այն է՝ այն դադարանում, որի վարույթում դրվագ պահին գտնվում է դրվագ գործը, ինչը, սակայն, չի բացառում այդ գործի քննությունն այլ դադարանում (դրվագ պարզաբանում՝ սնանկության վարույթում՝ պահանջի քննության շրջանակներում, այլ ոչ թե սնանկության գործի շրջանակներում որպես առանձին քաղաքացիական գործ), որի ենթակայությանը վերապահված է դրվագ գործի քննությունը»:

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանի կողմից առաջարկվել է «Սնանկության մասին» <<օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ քաղաքացիական գործի վարույթը կարճելու կարգավորումը մեկնաբանել Օրենքի 38-րդ հոդվածի «գ» ենթակետով նախատեսված հիմքի լուսի ներքո, որի պայմաններում դատարանները կխուսափեն պատասխանողին սնանկ ճանաչելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում պետական տուրքի մասնակի կամ լրիվ վերադարձման անհնարինության խնդրից: Հակառակ պարզաբանում՝ դատարանների կողմից ներկայիս օրենսդրական կարգավորումների տառացի մեկնաբանումը կիանգեցնի անծի՝ Սահմանադրությամբ պաշտպանվող արդյունավետ դատական պաշտպանության (դատարանի մատչելիության), ինչպես նաև սեփականության իրավունքների իրացման ռեալ անհնարինության:

Մինչդեռ, իրավակիրառական պրակտիկայում ձևավորված ներկայիս ցավալի իրողությունը, այդ թվում նաև՝ առհասարակ թե՛ դատարանների, թե՛ օրենսդրի կողմից Սահմանադրական դատարանի որոշումների կատարման ցուցանիշները<sup>1</sup> վկայում են այն մասին, որ դատարանները խուսափում են նորմերի լայն մեկնաբանումից, ինչը չի բացառում, որ նույնիսկ սույն գործով Սահմանադրական դատարանի դիրքորոշման առկայության պայմաններում՝ դատարանները վերստին չեն դրսնորի բավարար կամք՝ ուղղված Սահմանադրական դատարանի դիրքորոշմանը համահուն՝ «գործը ենթակա չէ դատարանում քննության» ձևակերպումը լայն մեկնաբանելուն, ինչի հետևանքով պատասխանողին սնանկ ճանաչելու իմբռով քաղաքացիական գործի վարույթը կարճելու դեպքում հայցվորների համար կշարունակվեն ստեղծվել արհեստաձին խնդիրներ՝ վճարված պետական տուրքի մասնակի կամ լրիվ վերադարձման անհնարինության տեսքով, ինչը հանգեցնում է անձանց դատարանի մատչելիության, ինչպես նաև սեփականության իրավունքների անհամաշակ միջամտության (ներկայիս իրավակիրառական պրակտիկայի մասով տե՛ս, օրինակ, թիվ ՍնԴ/0593/04/19 սնանկության և թիվ ԵԴ/0077/04/18 քաղաքացիական գործերը<sup>2</sup>, թիվ ՍնԴ/0155/02/22 քաղաքացիական գործը<sup>3</sup>):

<sup>1</sup> Այս մասին տե՛ս Սահմանադրական դատարանի 2022 թ. ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումը: Հղումը ստորև՝ [https://www.concourt.am/pdf/uploads/63ff2ee1631c6\\_SՄՐԵԿԱՆ%20ՀԱՌՈՐԴՈՒՄ-2022.pdf](https://www.concourt.am/pdf/uploads/63ff2ee1631c6_SՄՐԵԿԱՆ%20ՀԱՌՈՐԴՈՒՄ-2022.pdf)

<sup>2</sup> Սույն գործերով դատարաններն արձանագրել են հետևյալը.

«Համաձայն «Պետական տուրքի մասին» <<օրենքի 38-րդ հոդվածի «գ» կետի՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության, կամ հայցվոր չի պահպանել տվյալ կատեգորիայի գործի համար վեճը լուծելու սահմանված նախնական արտադատարանական կարգը, կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը:»

Տվյալ պարագայում, գործի վարույթը կարճվում է՝ պարտապանին սնանաշելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճի առկայության հիմքով, այսինքն՝ սույն գործով առկա չեն «Պետական տուրքի մասին» <<օրենքի 38-րդ հոդվածի «գ» կետով նախատեսված հիմքերը, ուստի, դատարանը գտնում է, որ դիմողի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը դիմողին վերադարձման կամ պարտապանից բռնագանձման ենթակա չէ, և պետական տուրքի հարցը դրանով իսկ պետք է համարել լուծված»:

<sup>3</sup> Սույն գործով Սնանկության դատարանն արձանագրել է հետևյալը.

«Հետևյալու լուծելով դատական ծախսերը կողմերի միջև բաշխելու հարցը և նկատի ունենալով, որ <<քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում

#### 4. Եզրակացություններ

Ինչպես արդեն իսկ նշվել է, իրավակիրառական պրակտիկայում ծևավորված ներկայիս ցավալի իրողությունը վկայում է այն մասին, որ դատարանները դեռևս պատրաստակամ չեն դրսնորելու բավարար կամք՝ ուղղված օրենքներում կիրառված այս կամ այն ծևակերպումը լայն մեկնաբանելուն, ուստի՝ սույն խնդրի լուծման **այլընդրանքային դարբերակներից** է օրենսդրի կողմից «Պետական գուրքի մասին» <<օրենքի 38-րդ հոդվածում փոփոխություններ և (կամ) լրացումներ կապարելը, որի արդյունքում **Օրենքում ուղղակիորեն կամրագրվի** պատասխանողին սնանկ ճանաչելու հիմքով քաղաքացիական գործի վարույթի կարճման դեպքում պետական տուրքի մասնակի կամ լրիվ վերադարձման օրենսդրական հնարավորությունը: Առաջարկվող լուծումը թույլ կտա խուսափել դատարանների կողմից նորմերի ոչ միատեսակ մեկնաբանումից և կիրառումից, ուստիև՝ հակասական իրավակիրառական պրակտիկա ծևավորելուց:

#### Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. << Սահմանադրություն (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով, <<ՊՏ 2015.12.21/ հասովկ թողարկում, հոդ. 1118):
2. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» <<օրենք (ընդունվել է 2018 թվականի մարտի 21-ին, <<ՊՏ 2018.03.28/23(1381) հոդ. 373):
3. «Պետական տուրքի մասին» <<օրենք (ընդունվել է 1997 թվականի դեկտեմբերի 27-ին, <<ՊՏ 1998.01.11/1):

Դատական ծախսերի փոխատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, իսկ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2020թ. մարտի 04-ի և 2020թ. մայիսի 22-ի որոշումներով հակընդդեմ հայցադիմումների համար նախատեսված պետական տուրքի վճարումը հետաձգվել է մինչև կայացվելիք եզրափակիչ դատական ակտը, դատարանը գտնում է, որ հակընդդեմ հայցվոր «ՍՍԴ» ԲՀ-ի հայաստանյան մասնաճյուղից հօգուտ պետական բյուջեի պետք է բռնագանձել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թ. մարտի 04-ի և 2020 թ. մայիսի 22-ի որոշումներով հետաձգված պետական տուրքի գումարը, որը կազմում է 21 281 720 <<դրամ (579 337 888,80 <<դրամ X 2% = 11 586 757,77 <<դրամ) + (937 526,65 Եվրոյին համարժեք 484 748 154,38 <<դրամ X 2% = 9 694 963,08 <<դրամ)»:

4. «Սնանկության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 12-ին, ՀՀՊՏ 2007.01.31/7(531) հոդ. 139):
5. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2008 թվականի հունիսի 17-ին, ՀՀՊՏ 2008.07.23/47(637) հոդ. 776):
6. «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2001 թվականի նոյեմբերի 6-ին, ՀՀՊՏ 2001.12.15/40(172) հոդ. 958):
7. **Մարկոսյան Տ.Ա.** Սնանկության վարույթը Հայաստանի Հանրապետությունում. Գիտագործական ձեռնարկ / ք. Երևան. Արդարադատության ակադեմիա. 2022. 464 էջ:
8. **Макаров А.А.** Право на судебную защиту // Административное и муниципальное право. 2017. № 1. - С. 69-78.
9. **Корпен А.С.** К вопросу о содержании права на доступ к правосудию // Право. Журнал Высшей школы экономики. 2016. №2. - С. 111-121.
10. **Пластинина Е.В.** Правовые аспекты понятия «Доступ к правосудию» // Марийский юридический вестник. 2013. №10. - С. 182-186.
11. **Groves M., Weeks G.** Legitimate expectations in the Common law world. Oxford and Portland, Oregon. Hart publishing. 2016. Hart studies in comparative public law, V. 12.

## НЕВОЗМОЖНОСТЬ ВОЗВРАТА ГОСУДАРСТВЕННОЙ ПОШЛИНЫ В СЛУЧАЕ ПРЕКРАЩЕНИЯ ПРОИЗВОДСТВА ПО ГРАЖДАНСКОМУ ДЕЛУ НА ОСНОВАНИИ ПРИЗНАНИЯ ОТВЕТЧИКА БАНКРОТОМ

### Аннотация

В настоящей работе рассматривается проблема невозможности возврата государственной пошлины в случае прекращения производства по гражданскому делу на основании признания ответчика банкротом в силу нынешних законодательных регулирований в Республике Армения

в свете права на доступ к правосудию, являющегося элементом права на эффективную судебную защиту, и права собственности.

Целью настоящего исследования является установление в результате комплексного изучения действующих правовых регулирований правовых оснований, которые позволяют суду в случае прекращения производства по гражданскому делу на основании признания ответчика банкротом частично или полностью вернуть истцу уже уплаченную государственную пошлину, а в случае невыплаты - решить настоящий вопрос.

В результате исследования авторы затрагивают такие вопросы, как соотношение права на доступ к правосудию и института взимания государственной пошлины, цели взимания государственной пошлины, вопрос возврата государственной пошлины в свете права собственности, а также вопрос распределения судебных расходов в свете особенностей производства по банкротству.

**Ключевые слова:** государственная пошлина, производство по банкротству, право собственности, доступ к правосудию, возврат государственной пошлины.

## IMPOSSIBILITY OF REFUND OF THE STATE FEE IN CASE OF TERMINATION OF CIVIL PROCEEDINGS ON THE BASIS OF RECOGNITION OF THE DEFENDANT AS BANKRUPT

### Annotation

This article examines the problem of the impossibility of returning the state fee in the event of termination of the proceedings on the basis of the recognition of the defendant as bankrupt due to the current legislative regulations in the Republic of Armenia in the light of the right to access to court, which is an element of the right to effective judicial protection, and right to property (protection of property).

The purpose of this study is to establish, as a result of a comprehensive study of the current legal regulations, the legal grounds that will allow the court, in the event of termination of proceedings in a civil case on the basis of recognition of the defendant as bankrupt, to partially or completely return to

the plaintiff the state fee already paid, and in case of non-payment, to resolve this issue.

As a result of the research, the authors discuss such issues as the ratio of the right to access to court and the institution of state fee collection, the purpose of state fee collection, the issue of refund of state duty in the light of property rights, as well as the issue of distribution of court costs in the light of the specifics of bankruptcy proceedings.

**Keywords:** state fee, bankruptcy proceedings, protection of property, access to court, refund of state fee.

*Հոդվածը հանձնված է խմբագրություն 10.10.2023 թ., պրվել է գրախոսության 11.10.2023 թ., ընդունվել է բազագրության 13.10.2023 թ.։*

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

DOI: 10.59560/18291155-2023.4-88



**РОЗА АМИРОВА**

*Юрист в офисе Примирителя  
финансовой системы РА,  
аспирант 3-го курса кафедры  
гражданского права  
и гражданско-процессуального права  
Российско-Армянского университета*

### **О ПРАВОМЕРНОСТИ ОДНОСТОРОННЕГО ИЗМЕНЕНИЯ ДОГОВОРА БАНКОВСКОГО СЧЕТА ФИНАНСОВОЙ ОРГАНИЗАЦИЕЙ И ПОРЯДОК НАДЛЕЖАЩЕГО УВЕДОМЛЕНИЯ КЛИЕНТОВ О ЕГО ИЗМЕНЕНИИ**

#### **Аннотация**

Банковские услуги стали неотъемлемой частью нашей жизни, предоставляя возможность эффективно управлять собственными финансовыми ресурсами и денежными средствами, получать кредит или воспользоваться такими различными банковскими услугами, как денежные переводы, различного рода платежки, выдача банковских карт и т.д.

Законодательство Республики Армения не содержит запрета на изменение условий банковского обслуживания финансовыми организациями. Любое изменение такого договора должно осуществляться в форме, позволяющей однозначно установить согласие клиента на обслуживание на новых, измененных условиях.

Одним из наиболее распространенных нарушений прав потребителей в сфере предоставления банковских услуг в Республике Армения является практика банков, которые в одностороннем порядке меняют исходные условия договоров со своими клиентами-потребителями без

должного уведомления последних об этом. Это часто сопровождается тем, что измененные условия договора финансовыми организациями размещаются на их официальных веб-сайтах, аргументируя, что клиенты надлежащим образом уведомлены об односторонних изменениях условий банковского договора, поскольку новые изменения находятся в свободном доступе.

С учетом обнаруженных практик одностороннего введения либо увеличения финансовыми организациями комиссионных вознаграждений (которые изначально не были установлены в договоре либо были установлены в меньшем размере) за совершение операций в рамках договоров банковского счета представляется необходимым провести исследование следующих аспектов:

- Правомерность одностороннего изменения договора банковского счета финансовой организацией.* Данное исследование будет направлено на определение соответствия действий финансовой организации законодательству Республики Армения и условиям существующих банковских договоров.

- Порядок надлежащего уведомления клиентов об изменении договора банковского счета.* В рамках данного исследования будет изучен порядок и форма уведомления клиентов о предстоящих изменениях в условиях договора банковского счета, а также определено, насколько эти уведомления соответствуют требованиям законодательства и обеспечивают достаточную ясность и доступность информации клиентам.

**Ключевые слова:** договор банковского счета, изменение договора, надлежащее уведомление, комиссионные вознаграждения, тарифы.

## 1. Введение

Когда в силу закона или договора одна из сторон имеет право на одностороннее изменение условий договора, она должна осуществлять это право разумно и, главное, добросовестно. Особенно это касается права банка на одностороннее изменение банковских договоров. Часто

Թեև փոխնակ մայրությունը գլոբալ մակարդակով համեմատաբար վերջերս բացահայտված ինստիտուտ է, գոյություն ունեն միջազգային իրավունքի մի շարք աղյուրներ, որոնք վերաբերում են փոխնակ մայրությամբ ծնված երեխայի ինքնությանը<sup>2</sup>: 1976 թվականի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 24-րդ հոդվածը սահմանում է երեխայի ծննդյան պահին գրանցված լինելու, անուն և քաղաքացիություն ունենալու իրավունքը: Այս երեք տարրերը ընտանեկան հարաբերությունների հետ մեկտեղ ընդգրկված են «Երեխայի իրավունքների մասին» 1989 թ. կոնվենցիայի 7-8-րդ հոդվածների՝ երեխայի «ինքնության» շրջանակում:

Երեխաների վաճառքի և սեռական շահագործման հարցերով ՄԱԿ-ի հասուն գեկուցում ներկայացվում է երեխայի ինքնության հետ կապված

<sup>1</sup> «Մարդու վերաբետառողական առողջության և վերաբետառողական իրավունքների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 11.12.2002 թ., ուժի մեջ է մտել՝ 07.07.2003 թ.

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=75284>

<sup>2</sup> Bagietto C., Bordier L., Dambach M. and Jeannin C. Preserving “family relations”: an essential feature of the child’s right to identity. Geneva, Switzerland: Child Identity Protection, Child Identity Protection, 2022, P. 41.

ինդիրների համայիր ուսումնասիրությունը, որոնք վտանգի տակ են գտնվում հատկապես լայն տարածում գտնող փոխնակ մայրության համատեքստում: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2019 թվականի գեկուցում կոչ է արվում պետություններին.

1) բոլոր դեպքերում պահպանել գործին առնչվող բոլոր տեղեկությունները, ինչպես նաև ստեղծել և վարել գրանցամատյաններ և ազգային գրառումներ, որոնք պարունակում են տեղեկատվություն փոխնակ մոր կողմից ծնված երեխաների գենետիկական ծագման և հղության ժամկետների մասին: Ինչպես նաև պետք է ձեռնարկվեն համապարփակ նախազգուշական միջոցներ, որպեսզի վերջիններս պահպանվեն, և փոխնակ մոր կողմից ծնված երեխաների համար անհրաժեշտության դեպքում իրենց ծագման վերաբերյալ տեղեկատվությունը լինի հասանելի:

2) ապահովել փոխնակ մոր կողմից ծնված երեխաների՝ իրենց ինքնության և ծագման, այդ թվում՝ մշակութային, էթնիկական, կրոնական և լեզվական ծագման վերաբերյալ տեղեկատվության հասանելիության իրավունքը՝ ըստ նրանց զարգացող կարողությունների և տվյալ երկրի իրավական նորմերի:

Սրա հետ միասին Հաագայի Միջազգային մասնավոր իրավունքի համաժողովն աշխատում է փոխնակ մայրության հարցերում ինքնության խնդրի վրա՝ հաշվի առնելով վերջինիս իրավական ծագումը նաև անդրսահմանային համատեքստում: Զուգահեռաբար, միջազգային սոցիալական ծառայությունը 2021 թվականին գործարկել է փոխնակ մայրությունից ծնված երեխայի իրավունքների պաշտպանության սկզբունքները, որոնք կոչվում են **Վերոնայի սկզբունքներ**, որի, օրինակ, 11-րդ սկզբունքը նվիրված է ինքնության պաշտպանությանը և ծագման հասանելիությանը՝ ընդգծելով երեխայի ինքնության ամբողջական բնույթը և դրա լիարժեք պահպանման կարևորությունը<sup>1</sup>:

Իսկ արդեն 2022 թվականին ՅՈՒՆԻՍԵՖ-ը և Երեխաների անձնական տվյալների պաշտպանության կազմակերպությունը հրապարակեցին Երեխաների իրավունքների և փոխնակ մայրության հիմնական նկատառում-

<sup>1</sup> International Social Service, Surrogacy (International Social Service 2021) Accessed <https://www.issssi.org/index.php/en/what-we-doen/surrogacy> (Վերջին մուտքի ամսաթիվ՝ 25.08.2023):

Ների վերաբերյալ գեկուց: Զեկույցում առաջարկվում է, որ «քաղաքացիական գրանցման և կենսական վիճակագրության համակարգերը ներառեն և պահպանեն ինքնության տեղեկատվությունը փոխնակ մայրության միջոցով ծնված յուրաքանչյուր երեխայի վերաբերյալ: Մասնավորապես, պետք է հայտնի լինի փոխնակ մայրերի և դոնոր(ների) ինքնությունը<sup>1</sup>:

Կան նաև միջազգային այլ նախաձեռնություններ, որոնք ներառված են ՄԱԿ-ի իրավական ինքնության հաստատման ծրագրի (UNLIA) օրակարգում, որը խթանում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման, կենսական վիճակագրության և նույնականացման տվյալների կառավարման համապարփակ մոտեցումը՝ կայուն զարգացման նպատակին հասնելու համար<sup>2</sup>:

Փոխնակ մայրության մեջ երեխայի ինքնության իրավունքը պաշտպանելու առաջին հնարավորությունը տեղի է ունենում փոխնակ մայրության պայմանագրի կնքման պահին: Այս պահը հնարավորություն է տալիս սկսելու տարրեր հավաքել, որոնք ի վերջո կնպաստեն երեխայի ինքնության ստեղծմանը, որը պաշտոնապես սկսվում է երեխային օրինական ինքնության շնորհմամբ՝ ծննդյան գրանցման միջոցով:

Թեև իրավական ինքնությունը պահանջում է նվազագույնը երեխայի անունը, սեռը, ծննդյան վայրը և ամսաթիվը, քննարկվում է, որ ինքնության ավելի լայն սահմանումը ներառում է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված «ընտանեկան կապերի տարրը», որը պետք է համապատասխանի միջազգային չափանիշներին: Որպես այդպիսին, հնարավոր «ընտանեկան կապերի» գրանցումը, որը կարող է առաջանալ փոխնակ մայրության պրակտիկայից, պետք է հավաքվի հնարավորինս շուտ՝ ներառյալ բոլոր համապատասխան կենսարանական, իրավական և սոցիալական տեղեկատվությունը<sup>3</sup>:

Վերոնայի սկզբունքների 11.3 սկզբունքն ասում է, որ փոխնակ մայրության պայմանագրերի կողմ պետք է հանդիսանան միայն այն փոխնակ

<sup>1</sup> Տե՛ս նոյն տեղում:

<sup>2</sup> United Nations Sustainable Development Goals, Goal 16: Peace, justice and strong institutions. (United Nations nd) Accessed <https://www.un.org/sustainabledevelopment/peace-justice/> (Վերջին մուտքի ամսաթիվ՝ 25.08.2023):

<sup>3</sup> Verona Principles at 12.4 (n 8) P. 21.

մայրերը, ովքեր տրամադրում են ստուգված և ճշգրիտ նույնականացման տեղեկատվություն իրենց մասին, և ովքեր համաձայն են, որ իրենց նույնականացման տեղեկատվությունը կարող է փոխանցվել իրենցից ծննդաբերված անձանց: Նման պայմաններն անհրաժեշտ են հղության կենսաբանական ծագման և ժամկետների վերաբերյալ համապարփակ տեղեկատվության առկայությունն ապահովելու համար:

Հետևաբար առաջարկվում է «Վերաբերող կանոնադրության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման մասին» պայմանագրում, որն ըստ էության ապահովում է փոխնակ մայրությամբ ծագող իրավահարաբերությունների պայմանագրային կարգավորում, ընդգրկել նաև Վերոնայի սկզբունքներում տեղ գտած դրույթը, ըստ որի փոխնակ մայրերը պետք է տան իրենց համաձայնությունն առ այն, որ իրենց մասին նույնականացվող տեղեկությունը կարող է փոխանցվել անձանց, ում համար իրենք հանդիսացել են փոխնակ մայր:

Միջազգային պրակտիկայի վերլուծությունը փոխնակ մայրության պայմանագրով ծնված երեխայի ծագման տեղեկատվության իրավական կարգավորման տեսանկյունից իրարամերժ է: Մասնավորապես՝ օրինակ, Մեքսիկայի Տարասկո նահանգում փոխնակ մայրն ի սկզբանե գրանցվում է որպես կենսաբանական մայր, իսկ հայրությունը փոխանցվում է որդեգրման միջոցով: Այլ երկրներում, ներառյալ Վրաստանում և ԱՄՆ-ի որոշ նահանգներում, օրինակ՝ Կալիֆորնիայում, միայն կենսաբանական ծնողներն են գրանցվում ծննդյան վկայականում: Վրաստանում ծննդյան քաղաքացիական ակտի գրառման մեջ դռնորին կամ «փոխնակ մորը» որպես երեխայի ծնող նշելը չի թույլատրվում: Նմանապես Ռիկարդիայում, ապագա ծնողները գրանցվում են որպես օրինական ծնողներ ծննդյան ժամանակ, օրենքը միևնույն ժամանակ արգելում է փոխնակ մորը երբևէ վիճարկել մայրական որևէ ծագում<sup>1</sup>:

Այն երկրներում, որոնք դեռ պետք է կոնկերտ իրավական դիրքորոշում որդեգրեն, կիրավում են գոյություն ունեցող ընդհանուր շրջանակները:

<sup>1</sup> Judgments of Parentage of Children Conceived Through Assisted Reproduction or Pursuant to Surrogacy Agreements Family Court Act (FCT) Ch 686, Art. 5-C <https://www.nysenate.gov/legislation/laws/FCT/581-205> (վերջին մուտքի ամսաթիվ՝ 05.07.2023):

Օրինակ՝ Կամբոջայում, սպասելով փոխնակ մայրության մասին օրենքի նախագծի հաստատմանը՝ Քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է, որ երեխա ծնած կինը երեխայի մայրն է (հոդված 987): Որպես այդպիսին, փոխնակ մայրը և նրա ամուսինը գրանցվում են որպես երեխայի ծնողներ, հետագայում երեխայի կենսաբանական ծնողներին իրավունքները փոխանցվում են որդեգրման միջոցով: Ըստ էության նմանատիպ կարգավորումը հակազդում է երեխայի լավագույն շահին, վերջինիս կարգավիճակն ու ինքնությունն անորոշ է թողնում<sup>1</sup>:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը և Երեխաների անձնական տվյալների պաշտպանության կազմակերպությունը սահմանում է, որ փոխնակ մայրության մեջ Երեխայի օրինական ծագման ամբողջականությունը պետք է պաշտպանված լինի, դրանք ներառում են, օրինակ, փոխնակ մայրության երաշխիքները, լավագույն շահերի սահմանումը, պայմանագրի բոլոր կողմերի համաձայնությունը և Երեխայի՝ ծագումնաբանության հասանելիության իրավունքի պաշտպանությունը<sup>2</sup>:

ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ինքնությունն իմանալու կարևորությունն ընդգծվեց Ռուսական ընդդեմ առողջապահության նախարարի և մարդու բեղմնավորման և սաղմնաբանության գրասենյակի գործով: Այս դեպքում հաստատվել է, որ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը ներառում է կենսաբանական ծնողների մասին տեղեկատվության հասանելիության իրավունքը դրուրական բեղմնավորման համատեքստում, ինչն էլ իր հերթին հանգեցրել է օրենսդրական փոփոխությունների, որոնք վերացնում են դրուրների անանունությունը<sup>3</sup>:

Այս խնդիրները դառնում են ավելի բարդ անդրսահմանային իրավիճակներում, քանի որ քաղաքացիական գրանցման ազգային համակարգերի մեծ մասը կարգավորված չէ միջազգային այլ համակարգերի հետ

<sup>1</sup> Elizabeth Aguiling-Pangalangan. Parents and children: When law and technology unbundle traditional identities. Paper presented at the Foundation for Liberty and Prosperity Professorial Chair, University of the Philippines 2019. [https://libpros.com/wp-content/uploads/2019/06/finalpaper-lp-lecture-adoptionsurrogacy\\_-6.2019.pdf](https://libpros.com/wp-content/uploads/2019/06/finalpaper-lp-lecture-adoptionsurrogacy_-6.2019.pdf). (Վերջին մուտքի ամսաթիվ՝ 05.07.2023):

<sup>2</sup> Commission's initiative on the recognition of parenthood between Member States accessed <https://ec.europa.eu/info/law/betterregulation/have-your-say/initiatives/12878-Cross> (Վերջին մուտքի ամսաթիվ՝ 05.07.2023):

<sup>3</sup> EWHC 1593 (Admin), [2002] 2 FLR 962.

հաղորդակցվելու համար: Սա հատկապես խնդրահարույց է փոխնակ մայրության միջազգային պայմանագրերում, երբ երեխայի ծննդյան գրառումները կարող են չճանաչվել այն երկրի կողմից, որտեղ երեխան, ի վերջո, բնակվելու է: Քննարկվող հիմնախնդրի կարգավորման նպատակով ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Երեխաների ինքնության պաշտպանության ճեպագրուցում ասվում է, որ «Փոխնակ մայրության միջոցով ծնված երեխաները կարող են օգտվել իրենց իրավունքներից ծնված օրվանից: Պետությունները, որոնցում փոխնակ մայրության ինստիտուտն ունի հստակ իրավակարգավորում, օրենսդրական մակարդակով պետք է արգելեն այնպիսի պայմանավորվածությունները քննարկվող ինստիտուտի շրջանակներում, երբ կողմերից մեկը կարող են լինել այն օտարերկրացի կենսաբանական ծնողները, որոնք այնպիսի պետություններից են, որտեղ արգելված կամ սահմանափակված է փոխնակ մայրության կիրառությունը»:

Միե՞Դ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ևս ընդգծում է միջպետական փոխնակ մայրության պարագայում երեխայի իրավունքների պաշտպանության հիմնախնդիրների արդիականությունը: Օրինակ՝ Մեննեսոն վ. Ֆրանս և Լաբաս վ. Ֆրանս (Mennesson v. France և Labasse v. France) գործերով որոշվեց, որ ֆրանսիայի իշխանությունների մերժումն օրենքով ճանաչել ծնող-երեխա հարաբերությունները, որոնք օրինականորեն ստեղծվել են Միացյալ Նահանգներում, իսախտում է երեխաների իրավունքը՝ համաձայն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի: Այս դեպքերում պարզվել է, որ երեխաների ինքնությունը խարիսկվել է, քանի որ նրանք գտնվում էին իրավական անորոշ վիճակում՝ ֆրանսիական քաղաքացիություն ձեռք բերելու անկարողության և ժառանգության առումով իրենց ոչ բարենպաստ դիրքի պատճառով<sup>1</sup>:

Քննարկվող հիմնախնդրի համատեքստում առկա է ներպետական իրավական կարգավորման և միջազգային իրավական չափանիշների անհամապատասխանություն, քանի որ ազգային օրենսդրական կարգավորման շրջանակներից դուրս է մնացել անդրասահմանային փոխնակ մայրությամբ ծագող իրավահարաբերությունների կարգավորումը, մաս-

<sup>1</sup> (Application No 65192/11) 26 June 2014.

նավորապես երեխայի լավագույն շահի ապահովման տեսանկյունից: Կարծում ենք՝ օրենսդրական մակարդակով պետք է կարգավորել օտարերկրացի կենսաբանական ծնողների կողմից փոխնակ մայրությունից օգտվելու հնարավորությունը, հատկապես եթե իրենց պետությունում արգելված կամ սահմանափակված է քննարկվող ինստիտուտը: Նման դրույթի նախատեսումն առավել արդյունավետ կլինի՝ հաշվի առնելով այն, որ <<-ում ևս փոխնակ մայրությունն ընդլայնում է անդրսահմանային կիրառման հնարավորությունը և հայ կանայք շատ հճախ սոցիալ-տնտեսական կարգավիճակով պայմանավորված համաձայնվում են փոխնակ մայրության ծառայություն մատուցել օտարերկրացի զույգերի: Հետևաբար, այս պարագայում օրենսդրական բացի վերհանումը և կարգավորումը՝ հնարավոր վտանգներից և միջամտական իրավական կարգավորումների անհամապատասխանությունից խուսափելու շնորհիվ կապահովի երեխայի լավագույն շահի առաջնային կիրառությունը փոխնակ մայրության համատեքստում<sup>1</sup>:

Երեխայի ինքնության իրավունքը վտանգված է փոխնակ մայրության պայմանավորվածություններում, երբ լիարժեք և թափանցիկ տեղեկատվությունը չի գրանցվում ծննդյան պահին և/կամ երբ այն փոփոխվում է առանց երեխայի լավագույն շահերի առաջնահերթ ուսումնասիրության: Այն կարող է հավասարապես վտանգվել, երբ երեխայի ինքնությունն արատավորվում է ապօրինի գործողություններով, որոնք թույլ են տալիս կեղծել ծննդյան վկայականները (օրինակ՝ ընտանեկան հարաբերությունների խեղաթյուրումը): Հարկ է նշել, որ այն դեպքերում, երբ օրինական ծագումը փոխվում է որդեգրման արդյունքում, ազգային օրենսդրությունը կարող է ուղղակիորեն թույլ տալ երեխայի ինքնության կեղծումը:

Հակառիր իրավակարգավորմամբ մոտեցում ունի ՌԴ օրենսդրությունը, որի համաձայն՝ փոխնակ մոր կողմից երեխայի ծնունդը պատենցիալ ծնողների համար ինքնաբերաբար իրավունքներ և պարտականություններ չի առաջացնում, քանի որ երեխայի մայր է ճանաչվում այն կինը, ով ծնել է երեխային, այսինքն՝ փոխնակ մայրը: Փոխնակ մոր հետ

<sup>1</sup> UNICEF and Child Identity Protection <https://www.child-identity.org/en/> (Վերջին մուտքի ամսաթիվ՝ 25.08.2023):

փոխնակ մայրության պայմանագիր կնքած անձինք պետք է ստանան նրա համաձայնությունը՝ իրենց որպես երեխայի ծնող գրանցելու համար։ Նմանատիպ իրավակարգավորումը քննադատության է ենթարկվում, քանի որ թույլ է տալիս փոխնակ մոր կողմից չարաշահումների հնարավորություն՝ պոտենցիալ ծնողներից լրացուցիչ վարձատրություն պահանջելու տեսանկյունից։ Ռուսաստանի Դաշնությունում պարբերաբար փորձեր են արվում քննարկվող ոլորտում օրենսդրական բարեփոխումներ նախատեսելու համար<sup>1</sup>:

Անդրադառնալով ներաբետական իրավական կարգավորմանը՝ կարող ենք նշել, որ համեմատաիրավական վերլուծությունից ակնհայտ է, որ ազգային իրավական մոտեցումը քննարկվող իրավահարաբերությունների առնչությամբ առավել առաջադեմ է, մասնավորապես «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» <<օրենքի 27-րդ հոդվածը սահմանում է ծննդյան ակտային գրանցման մեջ երեխայի ծնողների մասին տեղեկություններ լրացնելու կարգը, որի 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն. «Այն անձինք, որոնք օգտվել են օրենքով նախատեսված վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից, ծննդի ակտային գրանցման մեջ գրառվում են որպես երեխայի ծնող (ծնողներ)՝ փոխնակ մոր հետ կնքած պայմանագրի և ԴՆՁ-ի (դեզօքսիոդոնուկլեինաթթու) որոշման մեջ նշված տվյալների հիման վրա»<sup>2</sup>:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է մշակել լրացուցիչ երաշխիքներ, որոնք կապահովեն քաղաքացիական կացության ակտերի գրանցման միասնական էլեկտրոնային գրանցամատյանում փոխնակ մայրությամբ ծնված երեխաների ինքնությանն առնչվող տեղեկատվության պաշտպանությունը և անհրաժեշտության դեպքում՝ հասանելիությունը։

Այսպիսով՝ ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է դառնում, որ երեխայի ինքնության իրավունքը կարևոր նշանակություն ունի՝ որպես

<sup>1</sup> Александровна И.Н. Проблемы установления происхождения детей, рожденных при использовании суррогатного материнства // Актуальные проблемы государства и права. 2017. №1. – С. 59.

<sup>2</sup> «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» <<օրենքն ընդունվել է 19.01.2021 թ., ուժի մեջ է մտել 16.05.2021 թ. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149999>

ինքնուրույն իրավունք, հաշվի առնելով լուրջ իրավական, հոգեբանական և բժշկական հետևանքները ողջ կյանքի ընթացքում, երբ հիմնարար տեղեկատվությունը բացակայում է և (կամ) կեղծվում է: Փոխնակ մայրության մեջ իրավունքների խախտման ռիսկը մեծանում է՝ հաշվի առնելով, որ երեխայի անհատականությանը վերաբերող որոշումների ճնշող մեծամասնությունը կայացվում է ծնվելուց առաջ կամ դրանից անմիջապես հետո: Երեխաների լավագույն շահերից է բխում ծնվելուց հետո հնարավորինս շուտ հաստատել օրինական ծագումը, փոխնակ մայրության մեջ երեխայի օրինական ծագման ամբողջականությունը պետք է պաշտպանված լինի նվազագույն չափանիշներով:

Այս նպատակով անհրաժեշտ է, որ քաղաքացիական կացության ակտերի գրանցման միասնական էլեկտրոնային գրանցամատյանի և բնակչության բնական շարժի վիճակագրության համակարգերը ներառեն և պահպանեն ինքնուրույն տեղեկատվությունը, որը վերաբերում է փոխնակ մայրության միջոցով ծնված յուրաքանչյուր երեխայի: Երեխաների ինքնուրույն մասին տեղեկատվության հասանելիությունը պետք է հեշտացվի՝ հաշվի առնելով երեխայի տարիքը և հասունությունը: Սա երեխաներին հնարավորություն կտա օգտվելու իրենց ինքնուրույն և ծագման վերաբերյալ տեղեկություններից և կաջակցի երեխայի այլ իրավունքներից օգտվելուն: Մասնավորապես, պետք է հայտնի լինի փոխնակ մայրերի և դոնոր(ների) ինքնուրույնը:

Ակնհայտ է, որ մեծ աշխատանք է պահանջվում օրենքները և իրավական պրակտիկան միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար: Կարևոր է գնահատել փոխնակ մայրության գործող ներպետական իրավական դաշտը երեխաների իրավունքների միջազգային չափանիշների հետ հարաբերակցության միջոցով: Պետությունից պահանջվում է ներդնել մեխանիզմներ երեխայի ինքնուրույն իրավունքի իրացման պատշաճ երաշխիքներն ապահովելու համար: Մասնավորապես հիմնախնդիր է այն, որ քաղաքացիական գրանցման ազգային համակարգերի մեծ մասը կարգավորված չէ միջազգային այլ համակարգերի հետ լիարժեք հաղորդակցվելու համար: Եվ շատ հավանական է, որ փոխնակ մայրությունը ներառի միջազգային տարրեր (օրինակ՝ երբ պոտենցիալ ծնողները օտարերկրացիներ են) և

միջսահմանային փոխնակ մայրությունը վտանգի երեխայի ինքնության հաստատման և ծագման մասին տեղեկատվության պատշաճ հասանելիությունը՝ պայմանավորված քննարկվող ինստիտուտը կարգավորող ազգային իրավական կարգերի հակասությամբ:

Հետևաբար պետք է ապահովվեն լրացուցիչ երաշխիքներ ազգային և միջազգային գրանցման համակարգերի արդյունավետ հաղորդակցություն և նոյնիսկ միջազգային փոխնակ մայրության պարագայում երեխայի ծագման մասին տեղեկատվության հասանելիության իրավունքի ապահովում՝ միջազգային իրավական չափորոշիչների համապատասխանության պայմաններում:

Ինչպես նաև Վերոնայի սկզբնքները ևս մեկ անգամ ընդգծեցին անձի կենսաբանական ծագման և ժամկետների վերաբերյալ համապարփակ տեղեկատվության առկայության անհրաժեշտության մասին և ներպետական օրենսդրական բարեփոխման նախադրյալ կարող է հանդիսանալ իրավանորմի մշակումը, որը կապահովի փոխնակ մայրերի կողմից իրենց առնչվող նոյնականացման ենթակա ինֆորմացիայի հնարավոր տրամադրման համաձայնությունը փոխնակ մայրության օգնությամբ ծնված երեխաներին:

### ♦      **Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ**

1. «Մարդու վերաբետադրողական առողջության և վերաբետադրողական իրավունքների մասին» << օրենք, ընդունվել է 11.12.2002 թ., ուժի մեջ է մտել 07.07.2003 թ. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=75284>
2. «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» << օրենք, ընդունվել է 19.01.2021 թ., ուժի մեջ է մտել 16.05.2021 թ. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149999>
3. **Александровна И.Н.** Проблемы установления происхождения детей, рожденных при использовании суррогатного материнства // Актуальные проблемы государства и права. 2017. №1. – С. 57-67.
4. Комитет ООН по правам ребенка: Замечание общего порядка № 5 (2003 г.), Общие меры по осуществлению КПР (ст. 2, 42 и 44, п. 6), (CRC/GC/2003/5).

5. (Application No 52176/99) (2002) 11 BHRC 689.
6. (Application No 65192/11) 26 June 2014.
7. **Baglietto, C., Bordier, L., Dambach, M. and Jeannin C.** (2022). Preserving “family relations”: an essential feature of the child’s right to identity. Geneva, Switzerland: Child Identity Protection, Child Identity Protection, 2022, p 92.
8. Commission’s initiative on the recognition of parenthood between Member States accessed <https://ec.europa.eu/info/law/betterregulation/have-your-say/initiatives/12878-Cross> (վերջին մուտքի ամսաթիվ՝ 05.07.2023):
9. **Elizabeth Aguiling-Pangalangan.** Parents and children: When law and technology unbundle traditional identities. Paper presented at the Foundation for Liberty and Prosperity Professorial Chair, University of the Philippines 2019. <https://libpros.com/wp-content/uploads/2019/06/finalpaper-lp-lecture-adoptionsurrogacy.-6.2019.pdf>. (վերջին մուտքի ամսաթիվ՝ 05.07.2023):
10. EWHC 1593 (Admin), [2002] 2 FLR 962.
11. International Social Service, Surrogacy (International Social Service 2021) Accessed <https://www.issssi.org/index.php/en/what-we-do/en/surrogacy> (վերջին մուտքի ամսաթիվ՝ 25.08.2023):
12. Judgments of Parentage of Children Conceived Through Assisted Reproduction or Pursuant to Surrogacy Agreements Family Court Act (FCT) Ch 686, Art. 5-C <https://www.nysenate.gov/legislation/laws/FCT/581-205> (վերջին մուտքի ամսաթիվ՝ 05.07.2023):
13. United Nations Sustainable Development Goals, Goal 16: Peace, justice and strong institutions. (United Nations nd) Accessed <https://www.un.org/sustainabledevelopment/peace-justice/> (վերջին մուտքի ամսաթիվ՝ 25.08.2023):
14. UNICEF and Child Identity Protection <https://www.child-identity.org/en/> (վերջին մուտքի ամսաթիվ՝ 25.08.2023):
15. UN Human Rights Council, Report of the Special Rapporteur on the sale of children, child prostitution and child pornography – Note by the Secretariat A/HRC/34/55 (2016) [https://documents.dds.ny.un.org/doc/UNDOC/GEN/G16/440/24/PDF/G164\\_4024.pdf?OpenElement](https://documents.dds.ny.un.org/doc/UNDOC/GEN/G16/440/24/PDF/G164_4024.pdf?OpenElement) (վերջին մուտքի ամսաթիվ՝ 05.07.2023):
16. Verona Principles [https://bettercarenetwork.org/sites/default/files/2021-03/VeronaPrinciples\\_25February2021.pdf](https://bettercarenetwork.org/sites/default/files/2021-03/VeronaPrinciples_25February2021.pdf) 30 p.

## ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ПОДТВЕРЖДЕНИЯ ЛИЧНОСТИ РЕБЕНКА И РЕГИСТРАЦИИ РОЖДЕНИЯ В ИНСТИТУТЕ СУРРОГАТНОГО МАТЕРИНСТВА

### **Аннотация**

Отсутствие или потеря идентичности человека может серьезно повлиять на его самопознание, благополучие и чувство принадлежности. Особенно большое значение имеет множественность факторов идентичности детей в вопросах суррогатного материнства, и необходимо, чтобы все элементы, связанные с установлением личности последнего и регистрацией рождения, сохранялись до и после рождения. Право ребенка на идентичность является не только самостоятельным правом, но и правом, тесно связанным с реализацией других прав, таких как развитие ребенка, совместное проживание в семье и т. д. Чтобы соответствовать этим стандартам, вся идентификационная информация должна храниться точно и прозрачно, включая соглашения о суррогатном материнстве.

Хотя суррогатное материнство меняет составные элементы идентичности, разрывая связь между генетическим, гестационным и социальным происхождением, фундаментальные права ребенка остаются прежними. С точки зрения ребенка, генетика, беременность и реализация родительской ответственности входят в число составляющих элементов личности последнего.

Таким образом, право на идентичность не зависит от обстоятельств рождения ребенка и любой последующей дискриминационной практики. Все проблемы идентичности, которые могут возникнуть в краткосрочной или долгосрочной перспективе, также должны быть частью оценки и определения наилучших интересов суррогатного материнства.

Учитывая важность вопросов идентичности, которые могут носить юридический, медицинский и/или психосоциальный характер и иметь ключевое влияние на протяжении всей жизни, не менее важно включать это соображение в любую схему суррогатного материнства. Поэтому в статье рассматриваются вопросы права ребенка на подтверждение личности и регистрацию рождения в контексте суррогатного материнства.

**Ключевые слова:** суррогатное материнство, право ребенка на идентичность, ЮНИСЕФ, происхождение ребенка, биологические родители, регистрация рождения, Веронские принципы.

## MAIN PROBLEMS OF CONFIRMING A CHILD'S IDENTITY AND BIRTH REGISTRATION AT THE INSTITUTE OF SURROGATE MATERNITY

### Annotation

A person's lack or loss of identity can seriously impact their sense of self-identity, well-being and sense of belonging. The multiplicity of factors in the identity of children in matters of surrogacy is especially important and it is necessary that all elements associated with establishing the identity of the latter and registering the birth are preserved before and after birth. A child's right to identity is not only a right in its own right, but is also closely linked to the realization of other rights, such as child development, family cohabitation, etc. To meet these standards, all identification information must be stored accurately and transparently, including agreements on surrogacy.

Although surrogacy changes the constituent elements of identity, severing the connection between genetic, gestational and social origins, the fundamental rights of the child remain the same. From the child's point of view, genetics, pregnancy and the exercise of parental responsibility are among the constituent elements of the child's personality.

Thus, the right to identity is independent of the circumstances of the child's birth and any subsequent discriminatory practices. Any identity issues that may arise in the short or long term should also be part of the assessment and determination of the best interests of the surrogacy.

Given the importance of identity issues, which can be legal, medical and/or psychosocial in nature and have a key impact throughout life, it is equally important to include this consideration in any surrogacy arrangement. Therefore, the article discusses the issues of the child's right to identity confirmation and birth registration in the context of surrogacy.

**Keywords:** Surrogacy, child's right to identity, UNICEF, origin of the child, biological parents, birth registration, Verona Principles.

*Հոդվածը հանձնված է իմրագրություն 18.10.2023 թ., պրվել է գրախ-  
սության 14.11.2023 թ., ընդունվել է բարագրության 15.11.2023 թ.:*



## ՀՐԱՆՏ ՍԱՐԿԻՍՈՎ

Հեռուսարադիտության և ռադիոյի  
հանձնաժողովի նախագահի  
օգնական,  
Հայ-ռուսական համալսարանի  
իրավունքի բետության և  
սահմանադրական իրավունքի  
ամբիոնի ասպիրանտ

### **«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒՅԹԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՎԱՔԱՐԱՔԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ (ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ)**

#### **Ամփոփագիր**

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել, քննարկել և համեմատել «ազգային անվտանգություն» եզրույթի բացատրության տեսական և իրավական տարբեր մոտեցումները քննարկվող պետությունների ազգային անվտանգության ռազմավարությունների համատեքստում: Այս հոդվածում օգտագործվում են հետազոտության համեմատական, վերլուծության և սինթեզի մեթոդները: Հետազոտության առարկան «ազգային անվտանգության» եզրույթի ընկալումն ու կիրառումն է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարությունների համատեքստում:

**Հիմնաբառեր.** ազգային անվտանգություն, ազգային անվտանգության ռազմավարություն, պետության գործառույթ, ազգային ինքնություն:

Հաշվի առնելով արդի աշխարհաքաղաքական զարգացումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության շուրջ ահազնացող էքզիւտենցիալ խնդիրները՝ հարկ ենք համարում վեր հանել «ազգային

անվտանգություն» եզրի ընկալման և կիրառման իրավաքաղաքական մոտեցումները՝ Ազգային անվտանգության ռազմավարությունների համատեքստում:

«Ազգային անվտանգություն» եզրի արդի պաշտոնական շրջանառության մեջ է մտել անցյալ դարասկզբին: 1901 թվականին ԱՄՆ նախագահ Թեոդոր Ռուզվելտն ԱՄՆ Կոնգրեսին ուղղված «ԱՄՆ ազգային անվտանգության 27 հիմնարար հիմնախնդիրները» վերտառությամբ հայտնի ելույթում հայտարարել էր, որ Միացյալ Նահանգների ազգային անվտանգության շահերը պահանջում են Պանամայի ջրանցքի անեքսիան: Չնայած վերջինս կառուցվել էր այլ ինքնիշխան պետության տարածքում, սակայն ամերիկյան հարկատուների միջոցներով: Այդ պահից սկսած «ազգային անվտանգություն» եզրույթը մտնում է պարբերական մամուլ և աստիճանաբար սկսում գործածվել թե՛ քաղաքական, թե՛ գիտական բնագավառներում:

«Պետությունը գտնվում է անվտանգության վիճակում, երբ ստիպված չէ պատերազմից խուսափելու նպատակով զոհաբերել իր շահերը, երբ նա ի վիճակի է պատերազմի օգնությամբ պաշտպանել իր շահերը ուսունական դեպքում»<sup>1</sup>: Այս ձևակերպման հեղինակն ամերիկացի քաղաքագետ և լրագոր Լիֆմանն է, որին է պատկանում նաև «սառը պատերազմ» եզրի ձևակերպումը:

Ռուսաստանում «ազգային անվտանգություն» եզրույթը<sup>2</sup> գիտական, իրավական և քաղաքական խոսույթում հայտնվել է համեմատաբար վերջերս՝ պետության նորագոյն պատմության վերջին տասնամյակում: Այսպիսով, Ռուսասրանի Դաշնության ազգային անվտանգության ներքո հասկացվում է Ռուսաստանի Դաշնության բազմազգ ժողովրդի անվտանգությունը՝ որպես ինքնիշխանության կրողի և միակ աղբյուրի<sup>3</sup>:

<sup>1</sup> «Ազգային անվտանգության հիմնախնդիրները»: Դասախոսություններ1/ Վ.Կ. Աթոյան. - Եր.: «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014, 154 էջ, էջ 27:

<sup>2</sup> Концепция национальной безопасности Российской Федерации. Утверждена Указом Президента Российской Федерации № 24 от 10.01.2000 года (в соответствии с Указом Президента Российской Федерации от 12 мая 2009 г. № 537 утратила силу). [Электронный ресурс] Режим доступа: [http://www.mid.ru/foreign\\_policy/official\\_documents/asset\\_publisher/CptICkB6BZ29/content/id/589768](http://www.mid.ru/foreign_policy/official_documents/asset_publisher/CptICkB6BZ29/content/id/589768) 317 (дата обращения 10.11.2019).

<sup>3</sup> Ռուսաստանի Դաշնության Սահմանադրություն» (ընդունվել է ժողովրդական քվեարկությամբ 12.12.1993 թ.):

Խոսելով «ազգային անվտանգություն» եզրույթի մասին՝ պետք է նշել, որ մասնագիտական գրականության մեջ **չկա համընդհանուր ընդունելի մոտեցում:**

«Ազգային անվտանգությունը կենսական շահերի, քաղաքացիների, հասարակության և պետության, ինչպես նաև ազգային արժեքների և ապրելակերպի դարրեր բնույթով (քաղաքական, դնտեսական, ռազմական, բնապահպանական, հոգեբանական և այլն) պաշտպանությունն է արդարին և ներքին սպառնալիքների լայն շրջանակից: Ազգային անվտանգությունն ունի երեք փոխկապակցված մակարդակ՝ անհարի անվտանգություն, հասարակության անվտանգություն և պետության անվտանգություն: Նրանց հարաբերությունները դինամիկ են և պայմանավորված են սոցիալական հարաբերությունների բնույթով, քաղաքական և դնտեսական կառուցվածքով, օրենքի գերակայության և քաղաքացիական հասարակության զարգացման ասդիճանով: Ազգային անվտանգության ամենաամբողջական գիրակցումը ծեռք է բերվում, երբ պետության անվտանգությունն ու հասարակության անվտանգությունը ինքնանպարակ չեն, այլ անհարի անվտանգության ապահովման գործառույթն են».՝<sup>1</sup> այս կերպ են ոուս հեղինակները սահմանում ազգային անվտանգություն եզրույթը:

Իրավաբանական հանրագիտարանային բառարանի համաձայն՝ **անվտանգությունը** սահմանվում է որպես անհատի, հասարակության և պետության կենսական շահերի պաշտպանության վիճակ՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, ռազմական, տեխնածին, բնապահպանական, տեղեկատվական և այլ բնույթի արտաքին և ներքին սպառնալիքներից, որոնք ներառում են պետությունում քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունության հաստատումը, օրենքների անվերապահ կատարումը և օրինականության պահպանումը, ինչպես նաև գործընկերության իիման վրա միջազգային համագործակցության զարգացումը<sup>2</sup>:

Միացյալ Նահանգների Պաշտպանության քարտուղարության «Դազմական և հարուկ դերմինների բառարանը» (*US Department of*

<sup>1</sup> Գեոլոգիկա/ Авторы-сост. **Барышполец В., Барышполец Д., Манилов В.** – Москва: ТЕРРА-Книжный клуб, 2002 թ. - С. 44-45. – 623 с.

<sup>2</sup> Юридический энциклопедический словарь / Под ред. Ю.А. Тихомирова. – Москва: Книжный мир, 2002. - С. 82. - 972 с.

*Defense “Dictionary of Military and Special Terms”)* հետևյալ կերպ է սահմանում **ազգային անվտանգություն** եղը:

«Հավաքական եղը, որն ընդգրկում է ինչպես ազգային պաշտպանությունը, այնպես էլ Միացյալ Նահանգների արտաքին հարաբերությունները՝ նպատակ հետապնդելով ձեռք բերել.

ա. Ռազմական կամ պաշտպանական առավելություն ցանկացած օտար ազգի կամ ազգերի խմբի նկատմամբ:

բ. Արտաքին հարաբերությունների բարենպաստ դիրք:

գ. Պաշտպանական կեցվածք, որը կարող է հաջողությամբ դիմակայել թշնամական կամ կործանարար գործողություններին ներսից կամ դրսից, բացահայտ կամ քողարկված<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, վկայակոչված բառարաններից (ռուսական և ամերիկյան), անգամ բառարանային մակարդակում տարբեր կերպ են բացատրում միևնույն եղի նշանակությունը՝ երբեմն նույնիսկ երևան բերելով իրար հակառակ տրամաբանություն: Սա անհրաժեշտ է հասկանալ այն համատեքստում, որ նրանցից յուրաքանչյուրը փորձում է իր գաղափարներն ու մոտեցումները հանրայնացնել, ասել է թե՝ փափուկ ուժի ներգործությամբ սեփական մոտեցումները իրամցնել, ազդեցության գոտիներ ստեղծել: Սակայն ընդհանուր ելակետ, այնուամենայնիվ, կարող ենք նշել, որ մեծ հաշվով թե՛ ռուսական, և թե՛ ամերիկյան բառարաններն **ազգային անվտանգություն** եղը բացում են որպես պետության պաշտպանունակություն և պետական շահի պաշտպանություն՝ թե՛ ներպետական և թե՛ արտաքին հարաբերությունների համատեքստում:

Ըստ իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ վաստակավոր իրավաբան Վ.Դ. Պերևալովի՝ «*ազգային անվտանգություն*» և «*երկրի պաշտպանություն*» եզրույթները ներկայացվում են որպես նույնական և բացատրվում են որպես ինքնիշխանության, պետական սահմանների անձեռնմխելիության, երկրի արտաքին անվտանգության ապահովում: Երկրի պաշտպանությունն իրականացվում է միջազգային հանրության անհատական և կոլեկտիվ գործողությունների հիման վրա՝ այլ պետու-

<sup>1</sup> US Department of Defense Dictionary of Military and Associated Terms, ‘national security’, 352 էջ, էջ 150 (<https://irp.fas.org/doddir/dod/dictionary.pdf>).

թյունների կամ նրանց միավորումների կողմից սանձագերծված ագրեսիայից պաշտպանվելու համար<sup>1</sup>:

Ուսւ այլ գիտնականներ՝ Մատուցովան, Մոլիոն, պնդում են, որ Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքական գործունեության կարևորագույն ուղղություններից մեզը վերջինիս ռազմական անվտանգության ապահովումն է: Ըստ այս գործառույթի, Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերի նպատակն է հետ մղել Ռուսաստանի Դաշնության դեմ ուղղված ագրեսիան, իրականացնել Ռուսաստանի Դաշնության տարածքային ամբողջականության և անձեռնմխելիության զինված պաշտպանությունը, ինչպես նաև ապահովել միջազգային պայմանագրերին համապատասխան առաջադրանքների կատարումը<sup>2</sup>: Այս ծևակերպման և ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի կողմից ներակայացված բացատրությունը կարելի է դիտարկել միևնույն համատեքստում, քանի որ երկու մոտեցումներում էլ ազգային անվտանգությունը ներկայացվում է որպես արտաքին հարաբերություններում պետության ռազմական ներուժի ամրապնդում:

Ըստ հայկական աղբյուրների՝ պետության ազգային անվտանգության ապահովման գործառույթը պետության այն գործունեությունն է, որն ուղղված է ռազմական ուժի միջոցով պետության գործության պահպան-մանը՝ ներառյալ տնտեսական, քաղաքական և դիվանագիտական բնագավառները:

Քաղաքացիական-ռազմական հարաբերությունների և ազգային անվտանգության ոլորտի մասնագետ Սեմ Սարկեսյանի կարծիքով՝ ազգային անվտանգությունն ունի երկու կողմ՝ ֆիզիկական և հոգեբանական: Ֆիզիկական կողմը կարելի է օբյեկտիվորեն գնահատել՝ հիմք ընդունելով երկրի ֆիզիկական ուժը և թշնամիներին հաջողությամբ դիմակայելու ռազմական կարողությունը, այդ թվում, անհրաժեշտության դեպքում, նրանց հետ պարերազմելը: Հոգեբանական կողմը սուբյեկտիվ է, որն արդացում է երկրի բնակչության մեծ մասի կարծիքն ու վերաբերմունքն

<sup>1</sup> Теория государства и права: Учебник для вузов / Отв. ред. В.Д. Перевалов. - 4-е изд., перераб. и доп. - Москва: Юр. Норма: НИЦ ИНФРА-М, 2018. - С. 78. - 496 с.

<sup>2</sup> Теория государства и права: Курс лекций / Под ред. Н.И. Матузова, А.В. Малько. - 3-е изд., перераб. и доп. - М.: Норма: НИЦ Инфра-М, 2012. - С. 71. - 640 с.

արդաքին աշխարհի հետ հարաբերվելիս՝ երկրի՝ անվտանգ մնալու կարողությունները<sup>1</sup>:

Ըստ Ա. Աղայանի գիտական աշխատության՝ «ազգային անվտանգությունը» սահմանվում է որպես «...ազգի կենսական շահերի պաշտպանություն, որը թույլ է տրամադրել և զարգանալ որպես ազգ»<sup>2</sup>:

Մինչդեռ Ֆրանսիայում, պաշտոնական փաստաթղթերում, ազգային անվտանգության եզրույթի փոխարեն կիրառվում են կամ «ազգային պաշտպանություն», կամ «ազգի պաշտպանություն» եզրերը<sup>3</sup>:

Այսպիսով, ազգային անվտանգությունը դիտարկվում է ոչ միայն պետական անվտանգության հարթությունում, այլև ներառում է հասարակության անվտանգությունը՝ կարևորելով յուրաքանչյուրի անձնական անվտանգությունը, քանզի ազգային անվտանգությունը կարող է առավելագույնս իրականացվել միայն այն դեպքում, եթե այն ապահովում է յուրաքանչյուրի անվտանգությունը:

Ըստ Ռուսաստանի Դաշնության նախագահի 2015 թվականի դեկտեմբերի 31-ի N 683 «Ռուսաստանի Դաշնության ազգային անվտանգության ռազմավարության մասին» հրամանագրի 6-րդ կետի՝ «Ռուսաստանի Դաշնության ազգային անվտանգությունը (այսուհետ՝ 'Ազգային անվտանգություն) անձի, հասարակության և պետության ներքին և արդաքին սպառնալիքներից պաշտպանության վիճակն է, որոնց պարագայում ապահովվում է Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների (այսուհետ՝ 'քաղաքացիներ) սահմանադրական իրավունքների և ազարությունների իրականացումը, նրանց կյանքի արժանի որակն ու մակարդակը, ինքնիշխանությունը, անկախությունը, պետրական և տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության կայուն սոցիալ-քննիւթական զարգացումը: Ազգային անվտանգությունը ներառում է երկրի պաշտպանությունը և

<sup>1</sup> Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ / Հեղ. Խումբ. Գիտ. խմբ՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան.- 3-րդ լրամշակված հրատ. - Եր.: «Լուսաբաց հրատարակչատուն», 2018. - 688 էջ, էջ 93:

<sup>2</sup> Աղայան Ա., Ազգային անվտանգություն. հասկացությունը, էռությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2002, էջ 8-15, էջ 8:

<sup>3</sup> Հարտօն Հ.Ա., Հարտօն Վ.Ի. Գеополитика: Учебник для студентов, обучающихся по специальностям «Государственное и муниципальное управление», «Международные отношения», «Регионоведение» / Под ред. В.И. Староверова. 4-е изд., перераб. и доп. - М.: ЮНИТИ-ДАНА, 2007. - С. 215.

անվտանգության բոլոր դեսակները, որոնք նախադեսված են Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությամբ և օրենսդրությամբ. առաջին հերթին՝ պետական, հանրային, գեղեկադրվական, բնապահպանական, դնդեսական, գրանսպորտային, էներգետիկ անվտանգությունը, անձի անվտանգություն, Ռուսաստանի Դաշնության ազգային շահերը (այսուհետ՝ ազգային շահեր), անհաղի, հասարակության և պետության օրենկրիպտեն կարևոր կարիքները՝ ապահովելու նրանց անվտանգությունը և կայուն զարգացումը, (...):

2020 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարությանը կից ներկայացվում է «Հայաստանի ուղերձը, որում վերջինս բացահայտում է օրվա քաղաքական էսթաբլիշմենթի պատկերացումներն ու ընկալումներն «ազգային անվտանգություն» եզրույթի վերաբերյալ:

Այսպես, հիշյալ ուղերձում Հայաստանի կատարում է հետևյալ ծևակերպումը՝ «Մեր ազգային անվտանգության հարցը քննելիս, կարծում եմ՝ նախ պես է քննենք մեր ազգային ինքնության հարցը, որովհետև ազգային անվտանգությունն ազգային ինքնության պահպանման, ֆիզիկական և բովանդակային սպառնալիքներից դրա պաշտպանության մասին է»<sup>1</sup>: Ի՞նչ է ստացվում. ՀՀ քաղաքական վերնախավն ազգային անվտանգություն եզրույթի ներքո առաջին հերթին և հատկապես ընկալում է ազգային ինքնության ֆիզիկական և բովանդակային պաշտպանությունը: Մինչդեռ, ՀՀ Նախագահի՝ 2007 թվականի փետրվարի 7-ին ընդունած «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մասին» հրամանագրում մենք չենք տեսնում, թե (այդ ժամանակ) ինչպես է ընկալվել «ազգային անվտանգություն» եզրը. հեղինակները որևէ կերպ չեն տվել վերջինիս բացատրությունը:

Ի տարբերություն 2020 թվականին ընդունված Ազգային անվտանգության ռազմավարության՝ 2007 թվականինը բացահայտում է, թե ինչ է հասկացվում «ազգային անվտանգության ռազմավարություն» եզրի տակ: Վերջինից մենք կարող ենք, այսպես կոչված, դուրս բերել, թե տվյալ ժամանակահատվածի ռազմաքաղաքական էսթաբլիշմենթն ինչպես է ընկալել ազգային անվտանգությունը: Այսպես.

<sup>1</sup> [https://www.primeminister.am/u\\_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf](https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf)

«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը պետության, հասարակության և անհավի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայապահպանության պետական քաղաքական համակարգ է: Այն իրականացվում է ժողովրդավարական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական քաղաքականության սրբեղծման և իրականացման միջոցով և դարաձվում է կյանքի բոլոր ոլորտների վրա»<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, ազգային անվտանգության հայրենական երկու ռազմավարությունները, որոնք ընդունվել են տասներեք տարվա տարբերությամբ, ընդհանուր առմամբ այլ կերպ են ընկալում ազգային անվտանգություն եղրը: Ազգային անվտանգության առաջին տարբերակը (ընդունված 2007 թվականին) խիստ որոշակի ձևակերպումներով բացատրում, մեկնաբանում է հիշյալ եղրույթը որպես պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայապահպանության պետական քաղաքականություն: Ավելին, Հանրապետության նախագահի հրամանագրով (ՆՀ-37-Ն) հստակ բնորոշվել է ռազմավարության իրավաբանական արժեքը (բնույթը)<sup>2</sup> նորմատիվ իրավական, և հստակ սահմանվել է վերջինիս տեղը նորմատիվ իրավական ակտերի հիերարխիայում<sup>2</sup>:

Այս ամենին գուգահեռ, սակայն, 2020 թվականին ընդունված Ազգային անվտանգության ռազմավարության համատեքստում մենք չենք չենք կարող ըմբռնել, թե ինչ է հասկացվում «**ազգային անվտանգության ռազմավարություն**» ասելով: Ըստ ռազմավարության, վերջինիս հիմնական խնդիրն է ապահովել երկրի տարածքային ամբողջականությունը, պահպանել ինքնիշխանությունը և հայ ազգային ինքնությունը:

Ուսումնասիրելով հայկական և ոռւսական իրավաբարական փաստաթղթերը, ինչպես նաև ամերիկյան ռազմաքաղաքական փաստաթղթերը՝ անհրաժեշտ է նաև համապատասխան ուշադրության արժանացնել պետությունների կառուցվածքին. Ռուսաստանի Դաշնությունը բարդ, իսկ Հայաստանի Հանրապետությունը պարզ պետություն է: Ի թիվս այնի, հենց այս առանձնահատկությունից էլ բխում է ազգային անվտանգության ռազմավարությունների նկատմամբ տարբեր մոտե-

<sup>1</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189>

<sup>2</sup> «Հայաստանի անվտանգության ռազմավարության և նորմատիվ իրավական ակտերի կողմիաները», ի.գ.դ., պրոֆեսոր Արթուր Ղամբարյան:

ցումներն ու ընկալումները: Զի՞ որ տարաբնույթ կառուցվածք ունեցող պետությունները չեն կարող դավանել «ազգային անվտանգության» միևնույն մոտեցումը: Այս ամենին էլ ավելանում է նաև այն, որ Սահմանադրության մակարդակով ունենք հետևյալ արձանագրումները՝ Ռուսաստանի Դաշնությունը բազմազգ և բազմակրոն պետություն է, որոնք իրենց բնույթով քաղաքական կյանքում երթեմն իրար բացառող են: Մինչդեռ Հայաստանի Հանրապետությանն օտար են հիշյալ կատեգորիաները:

Խորհրդային Միության փլուզման հետևանքով հետխորհրդային տիրութում ի հայտ էին եկել բախումներ և հակամարտություններ, որոնք հիմնված էին ազգային պատկանելության և տարբերությունների վրա: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Ռուսաստանի Դաշնության առաջին նախագահն իր պաշտոնավարման առաջին օրերին նախագահի ազգամիջյան հարցերով խորհրդական է նշանակում Գալինա Ստարավոյտովային<sup>1</sup>:

Ռուսաստանի Դաշնությունում այնքան էին կարևորում (և չէին էլ կարող չկարևորել) պետության ներսում ներազգային հարաբերությունների կարգավորումները, որ Հանրապետության նախագահի առաջին իրամանագրերից մեկը իենց նախագահի ազգամիջյան հարցերով խորհրդականի նշանակումն էր: Փաստացի, ԽՍՀՄ փլուզումից հետո ազգամիջյան բախումները դիտարկվում էին որպես ազգային անվտանգության սպառնալիք, որպիսի պարագային այն հայտնվել էր Հանրապետության նախագահի ուշադրության կենտրոնում: Ի տարբերություն Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի Հանրապետությունը մոնուեթնիկ և, մեծ հաշվով, միադավան պետություն է, որտեղ ազգամիջյան և կրոնական բախումներ պարզապես լինել չեն կարող: Սույն պարագային ունիտար և ազգային առումով միատար պետությունում «բազմազգություն» իր ողջ ներկապնակով չէր կարող հանդես գալ որպես ազգային անվտանգության սպառնալիք:

Հաջորդ կարևոր տարբերությունը, որն անհրաժեշտ է դիտարկել, այն է, որ հայ էթնոսն իր բազմաչարչար պատմության ընթացքում մի քանի անգամ ենթարկվել է ցեղասպանության, որը չէր կարող հանդես գալ որպես ազգային անվտանգության սպառնալիք:

<sup>1</sup><http://starovoitova.ru/?p=15> (Հաշվի առնելով, որ ՌԴ նախագահի պաշտոնական կայքում փաստաթղթերի թվանացումը սկսվում է 2000 թվականից, ստիպված ենք հղում անել Գալինա Ստարավոյտովայի պաշտոնական կայքից):

արտացոլումը չգտնել այնպիսի կարևորագույն փաստաթղթում, որը կոչվում է «ազգային անվտանգության ռազմավարություն»: Սույն համատեքստում անհրաժեշտ էր անդրադառնալ նաև «հայապահպանության» գաղափարին, որն ամբողջ ծավալով արտացոլված էր թե՛ 2007 թվականի, և թե՛ 2020 թվականի ռազմավարություններում: Ավելին, 2007 թվականի ռազմավարությունը հոչակել էր, այսպես կոչված, ազգային անվտանգության հինգ հիմնայուներ, որոնցից մեկը հենց **հայապահպանության** գաղափարն էր:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ ժամանակակից մասնագիտական գրականության մեջ չկա **«ազգային անվտանգություն»** եզրույթի՝ բոլոր մասնագետների և գիտությունների համար ընդունելի բացատրություն: Համարելով տարբեր գիտնականների կարծիքների ուսումնասիրության արդյունքները՝ վստահաբար կարող ենք ասել, որ **«ազգային անվտանգությունը»** պետության կարևորագույն գործառույթներից մեկն է, որը միտված է ապահովելու անհատի, հասարակության, պետության, ազգային արժեքների անվտանգությունը, պաշտպանելու պետությունը ներքին և արտաքին սպառնալիքներից, ինչպես նաև արտաքին ազդեցություններից:

Այսպիսով, վերլուծելով արդի գիտական գրականությունում **«ազգային անվտանգություն»** եզրույթի տարբեր մոտեցումները և հիմք ընդունելով Հանրապետությունների Ազգային անվտանգության ռազմավարությունների դավանած մոտեցումները՝ հանգում ենք հետևյալին.

1. Ժամանակակից իրավաքաղաքական իրականությունում, ինչպես նաև բուն իրավագիտությունում և քաղաքագիտությունում ազգային անվտանգությունը դիտարկվում է ինչպես լայն, այնպես էլ՝ նեղ իմաստներով: Նեղ իմաստով՝ ազգային անվտանգությունը նույնացվում է պետության գինված ուժերի և նրա ռազմական հզորության, կարողության հետ: Լայն իմաստով՝ ազգային անվտանգությունն, ի թիվս այլնի, ներառում է նաև ոչ ռազմական անվտանգության տարրեր՝ երկրի տնտեսական, բնապահպանական, էներգետիկ, տեղեկատվական անվտանգությունը, ազգային արժեքների պահպանումը:

2. Կատարելով ազգային անվտանգության իրավական հիմքերի և մոտեցումների համեմատական վերլուծություն՝ հանգում ենք այն եզրակացության, որ ըստ հայկական և ռուսական մոտեցումների՝ քննարկվող

եզրույթի մեկնաբանման և ընկալման միջև կան էական տարրերություններ, ինչը պայմանավորված է տարբեր գործոններով:

2.1. Հայաստանի Հանրապետությունն ունիտար պետություն է, իսկ Ռուսաստանի Դաշնությունը՝ դաշնային, ինչն ազդում է երկրի ներքին և արտաքին անվտանգության ապահովման քաղաքականության, ինչպես նաև այդ քաղաքականության ռազմավարության ընկալման վրա: Ի տարբերություն Ռուսաստանի Դաշնության՝ Հայաստանի Հանրապետության կառուցվածքում առկա չեն ինքնավարությամբ օժտված սուբյեկտներ: Հաջորդիվ, Հայաստանի Հանրապետությունը մոնուելիկ պետություն է, Հայաստանում իհմնականում ապրում են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդներ, մինչդեռ Ռուսաստանի Դաշնությունը Սահմանադրական մակարդակում իրեն հրակել է «բազմազգ» պետություն, որը ներառում է տարբեր ազգություններ և կրոններ, ինչը բարձրացնում է էթնիկ խմբերի և տարբեր դավանանքների միջև ներքին բախումների հավանականությունը՝ այն ազգային անվտանգության ապահովման լրջագույն խոչընդուstryի վերածելով:

2.2. Հայ ժողովուրդը կրել է պատմության դառնագույն «դասերից» մեկը՝ Հայոց ցեղասպանությունը: Վերապրելով մի քանի ցեղասպանություն՝ ազգային անվտանգությունը, ի թիվս այլին, դիտարկվում է որպես ազգային ինքնության պահպանում: Հատկանշական է, որ թե՛ 2007, և թե՛ 2020 թվականներին ընդունված Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունները հստակ արձանագրում են սույն պարագան. հայապահպանությունն ազգային անվտանգության ռազմավարության կարևորագույն բաղադրիչ է: Ռուսաստանի Դաշնությունը, որպես տարածքով աշխարհի ամենամեծ պետություն և ունենալով միջուկային հարուստ արսենալ ու մեծաթիվ բնակչություն՝ պարզապես չի կարող բախվել նման վտանգի հետ, հետևաբար, ազգային անվտանգության ռուսական դրվագինը չէր էլ կարող անդրադառնալ որևէ ազգի պահպանության: Սակայն, վերջինս բացահայտում է «ռուս բազմազգ ժողովրդի անվտանգություն» կատեգորիան, քանի որ Ռուսաստանի Դաշնությունն իր հոգածության տակ է առնում ռուս բազմազգ ժողովրդին, ուստի պետք է ապահովի հենց այդ բազմազգ ժողովրդի անվտանգությունը: Մինչդեռ հայկական դրվագինը, ազգային

անվտանգության համատեքստում, կենտրոնանում է «հայապահպանություն» կատեգորիայի վրա:

2.3. Հաջորդ տարբերությունը, որն անհրաժեշտ է մատնանշել, հայկական սփյուռքի գոյությունն է, որն իր թվով զգալիորեն գերազանցում է Հայաստանի Հանրապետության բնակչությանը: Հայկական սփյուռքը սփոված է աշխարհով մեկ և մեծամասամբ ցեղասպանության և բռնի վերաբնակեցման պատճառով: Հայկական սփյուռքը և սփյուռքի ներկայացուցիչները նշանակալի դեր ունեն տարբեր պետությունների պետական և հասարակական կյանքում: Հայաստանի կյանքում սփյուռքի մասնակցությունը տնտեսական և մշակութային մեծ նշանակություն ունի, քանի որ այն նպաստում է առևտուրի, զբոսաշրջության զարգացմանը, ազգային մշակութային արժեքների պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը: Սփյուռքի հետ հարաբերությունները առանձնահատուկ դեր ունեն Հայաստանի զարգացման գործում, քանի որ սփյուռքը հանդիսանում է յուրահատուկ կամուրջ՝ Հայաստանի և միջազգային հանրության միջև:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռուսաստանի Դաշնությունը հանդիսանում է աշխարհի ռազմաքաղաքական գերտերություններից մեկը, ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական անդամ, վերջինիս արտաքին քաղաքական ռազմավարությունն իր գլոբալ ազդեցությունն ունի ժամանակակից համաշխարհային քաղաքական գործընթացների և, ընդհանուր առմամբ, աշխարհաքաղաքական իրավիճակի վրա: Այս առումով, համաշխարհային քաղաքական ասպարեզում Ռուսաստանի ակտիվ մասնակցությունը միջազգային անվտանգության ապահովման գործիքի ամենակարևոր քաղադրիչն է: Սա թույլ է տալիս Ռուսաստանի Դաշնությանը համաշխարհային քաղաքական արենայում զբաղեցնել առաջատար տեղերից մեկը: Եթե Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մեջ շեշտը դրվում է հայապահպանության վրա, այնուհետև՝ Հայաստան-Միջուրք երկկողմ հարաբերությունների, ապա Ռուսաստանի Դաշնությունը շեշտը դնում է բազմազգ դաշնային պետության ամբողջականության պահպանման, միջազգային ասպարեզում իր դիրքերի ամրապնդման վրա, ինչպես նաև ընդլայնելով համաշխարհային քաղաքական կյանքում իր քաղաքական ազդեցությունը:

## Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. US Department of Defense Dictionary of Military and Associated Terms, ‘**national security**’, 352 էջ, էջ 150:
2. Геополитика/ Авторы-сост. В. Барышполец, Д. Барышполец, В. Манилов, Москва: ТЕРРА-Книжный клуб, 2002 г. – 623 с.
3. Концепция национальной безопасности Российской Федерации. Утверждена Указом Президента Российской Федерации № 24 от 10.01.2000 года.
4. Нартов Н.А., Нартов В.Н. Геополитика: Учебник для студентов, обучающихся по специальностям «Государственное и муниципальное управление», «Международные отношения», «Регионоведение» / Под ред. В.И. Староверова. 4-е изд., перераб. и доп. - М.: ЮНИТИ-ДАНА, 2007. - С. 215.
5. Теория государства и права: Курс лекций / Под ред. Н.И. Матузова, А.В. Малько. - 3-е изд., перераб. и доп. - М.: Норма: НИЦ ИНФРА-М, 2012. - 640 с.
6. Теория государства и права: Учебник для вузов / Отв. ред. В.Д. Перевалов. 4-е изд., перераб. и доп. - Москва: Юр. Норма: НИЦ ИНФРА-М, 2018. - 496 с.
7. Юридический энциклопедический словарь / Под ред. Ю.А. Тихомирова. – Москва: Книжный мир, 2002. - 972 с.
8. «Ազգային անվտանգության իիմնախնդիրները»: Դասախոսություններ/ Վ.Կ. Վթոյան.- Եր.: «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014, 154 էջ:
9. Ազգային անվտանգության խորհրդի համակարգի նորացման հուշագիր, Նախագահի հրամանագիր (Memorandum on Renewing the National Security Council System; Presidential action), 04.02.2021 թվական:
10. Ազգային անվտանգության օրենք (National Security Act), 26.07.1947 թվական:
11. Աղայան Ա., Ազգային անվտանգություն. հասկացությունը, Էռլեյունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2002, էջ 8-15:
12. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն (2020 թվական):
13. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն (2007 թվական):

- 14.Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 06.12.2015 թվական:
- 15.Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 27.11.2005 թվական:
- 16.Հայաստանի Հանրապետության օրենքը «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին», ուժի մեջ է մտել 09.04.2018 թվականին:
5. **Бахтиарова В.О.** Состояние здоровья детей, родившихся в результате применения ЭКО и искусственного инсеменения, 1993 г.
6. Сборник Законов царя Hammurapi // Источники права. - Тольятти: ИИП “Акцент”, 1996.
7. **Мошкович Ю.И.** Морально-этические вопросы правоприменения суррогатного материнства. 08.08.2013 / Российская академия правосудия.
8. Основы социальной концепции Русской Православной Церкви. Архиерейский Собор 2000 / <http://www.patriarchia.ru>
9. Архиерейский юбилейный Собор Русской Православной Церкви, заседал 13-16 августа 2000 года в зале церковных Соборов храма Христа Спасителя, <http://www.patriarchia.ru/db/text/418767.html>

10. Международный научно-исследовательский журнал. Выпуск 2013 г. Юридические науки. Морально-этические вопросы правоприменения суррогатного материнства / <http://research-journal.org/law/moralno-eticheskie-voprosy-pravoprmeneniya-surrogatnogo-materinstva/>
11. “Отношение к суррогатному материнству в мусульманском мире Ближнего Востока и России: обзор позиций и мнений”. Валерий Суворов, Эльмира Фахрудинова / <https://doi.org/10.22394/2073-7203-2022-40-4-242-254>
12. Чеченкова Е.В., Зарянкина А.И., Моторенко Н.В. Отношение мировых религий к суррогатному материнству// Проблемы здоровья и экологии. 2022, 19(2):5-11 / <https://doi.org/10.51523/2708-6011.2022-19-2-01>
13. The International Committee for Monitoring Assisted Reproductive Technology (ICMART) and the World Health Organization (WHO) Revised Glossary on ART Terminology, 2009 / F. Zegers-Hochschild, G.D. Adamson, J. de Mouzon, O. Ishihara, R. Mansour, K. Nygren, E. Sullivan, S. Vanderpoel on behalf of ICMART and WHO / Human Reproduction, Volume 24, Issue 11, November 2009, Pages 2683–2687, <https://doi.org/10.1093/humrep/dep343>, Published:04 October 2009.
14. Regulating biomedicine in Europe and North America: A qualitative comparative analysis Frédéric Varone, Christine Rothmayr, Eric Montpetit / First published: 06 April 2006 /European journal of political research/ <https://doi.org/10.1111/j.1475-6765.2006.00300.x/>
15. DIRECTORATE GENERAL FOR INTERNAL POLICIES POLICY DEPARTMENT C: CITIZENS' RIGHTS AND CONSTITUTIONAL AFFAIRS LEGAL AFFAIRS A Comparative Study on the Regime of Surrogacy in EU Member States / European Parliament, manuscript completed in May 2013. © European Union, 2013. / 6.1 стр. 200 [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2013/474403/IPOL-JURI\\_ET\(2013\)474403\\_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2013/474403/IPOL-JURI_ET(2013)474403_EN.pdf)
16. Government of India Ministry of Health and Family Welfare (Department of Health Research) Notification New Delhi, the March 2022, Uploaded by Dte. of Printing at Government of India Press, Ring Road, Mayapuri, New Delhi-110064 and Published by the Controller of Publications, Delhi-110054. [https://thc.nic.in/Central%20Governmental%20Rules/Assisted%20Reproductive%20Technology%20\(Regulation\)%20Rules,%202022,%20%20.pdf](https://thc.nic.in/Central%20Governmental%20Rules/Assisted%20Reproductive%20Technology%20(Regulation)%20Rules,%202022,%20%20.pdf)
17. University Reproductive Associates (URA), Artificial Insemination vs IVF: What Do Experts Recommend? / <https://www.uranj.com/blog/artificial-insemination-vs-ivf-what-do-experts-recommend>

18. Steptoe PC, Edwards RG. Birth after the reimplantation of a human embryo. Lancet. 1978;2(8085):366.
19. Johnson, Bonnie And Baby Makes Four: for the First Time a Surrogate Bears a Child Genetically Not Her Own (англ.). People.com (4 мая 1987). / <https://people.com/archive/and-baby-makes-four-for-the-first-time-a-surrogate-bears-a-child-genetically-not-her-own-vol-27-no-18/>
20. "Safe prevention of the primary cesarean delivery" American Congress of Obstetricians and Gynecologists and the Society for Maternal-Fetal Medicine: March 2014 / American College of Obstetricians and Gynecologists (College); Society for Maternal-Fetal Medicine; Aaron B Caughey, Alison G Cahill, Jeanne-Marie Guise, Dwight J Rouse / 2014 Mar; 210(3):179-93. / DOI: 10.1016/j.ajog.2014.01.026
21. The world medical association declaration 1985, Brussels.
22. Masters U., Johnson V., Kolodni R. (). Fundamentals of Sexology. M., 1998. p. 87.
23. CASE OF MENNESSON v. FRANCE (Application no. 65192/11), 26 June 2014, FINAL 26/09/2014, <https://hudoc.echr.coe.int/?i=001-145389>.

## ՓՈԽՆԱԿ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԸ. ԲԱՐՈՅՑԱԿԱՆ և ԿՐՈՆԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

### Ամփոփագիր

Փոխնակ մայրության իրացման ժամանակ իրավական խնդիրների առաջնահարցը առաջին հերթին կապված է տվյալ ոլորտի օրենսդրական անկատարելիության հետ, որը և հաստատում է օրենսդրության վերլուծություն կատարելու նշանակության կարևորությունը, իհմնական իրավական խնդիրների վերհանման անհրաժեշտությունը, որոնք գործնականում առկա են <<-ում փոխնակ մայրության կիրառման ժամանակ, և դրանց լուծման ուղիները գտնելը: Սույն ոլորտի առավել մանրակրկիտ կարգավորումը թույլ կտա ապահովել փոխնակ մայրության պայմանագրի երկու կողմերի իրավունքներն ու օրինական շահերը և կանխատեսել նրանց գործողությունների հնարավոր անբարենպաստ իրավական հետևանքները:

**Հիմնաբառեր.** փոխնակ մայրություն, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներ, դոնորական սաղմ, վերարտադրողականության դոնոր, կենսաբանական ծնող, փոխնակ մայրության պայմանագիր:

## LEGAL REGULATION OF SURROGATE MOTHERHOOD AND SOME PROBLEMS ARISING UPON IMPLEMENTATION OF THE RIGHT: MORAL AND RELIGIOUS ASPECTS

### Annotation

First of all, the emergence of legal problems in the implementation of surrogacy associated with the imperfection of legislation in this area, which confirms the importance of analyzing legislation, the need to identify the main legal problems that occur in practice when using surrogacy in the Republic of Armenia, and find ways to resolve them. The most careful regulation of this area will ensure the rights and legitimate interests of both sides to the surrogacy contract and provide for possible adverse legal consequences of their actions.

**Keywords:** Surrogacy, assisted reproductive technologies, donor embryo, reproductive donor, biological parent, surrogacy agreement.

Հոդվածը հանձնված է իմրագրություն 05.10.2023 թ., դրվել է գրախոսության 10.10.2023 թ., ընդունվել է պահպանական 12.10.2023 թ.:



## ՄԵՐԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Երևանի պետական համալսարանի  
իրավագիրության ֆակուլտետի  
քաղաքացիական դասավարության  
ամբիոնի ասպիրանտ, դասախոս

# **ԱՊՈՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՀԱՅՑ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

### **Ամփոփագիր**

«Հ իրավական համակարգում առանց մեղադրական դատավճոի գույքի բռնագանձման ինստիտուտի ներդրմամբ առաջադրվեց հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարի նոր մոտեցում: Այժմ, գույքի օրինական ծագումը չհաստատվելու դեպքում գույքը կարող է բռնագանձվել հօգուտ պետության մեղադրական դատավճոի, ընդհուպ՝ հարուցված քրեական գործի բացակայության պայմաններում:»

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» «Հ օրենքի կարգավորումներն ինքնին խնդրահարույց են, իսկ «Սահմանադրական դատարանում քննվում է օրենքի սահմանադրականության հարցը: Մյուս կողմից, ոչ վաղ անցյալում մեկնարկել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերի ներկայացումը դատարան: Հաշվի առնելով մինչև հայցադիմումի ներկայացումը անձի գույքի և եկամուտների վերաբերյալ ուսումնասիրության մինչդատական փուլը՝ առավել քան հրատապ է անդրադառնալ հայցի հարուցման փուլում առաջացող խնդիրներին և հայցի ընդունելիության գնահատման տարբերակված չափանիշներին:»

Հոդվածի նպատակն է վեր հանել Օրենքով սահմանված առանձնահատկությունները, առաջարկել ապօրինի ծագում ունեցող գույքի

բռնագանձման հայցադիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող հատուկ պահանջներ և համարժեք դատավարական հետևանքներ: Հոդվածը քննարկում է իրավասու մարմնի՝ հայցի իրավունքի նախադրյալները և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնելու լիազորության ծագման պայմանները: Քննարկվել են նաև հայցի իրավունքից ածանցված հայցի հիմքը և առարկան փոփոխելու իրավունքի իրացման սահմանափակումները՝ պայմանավորված ինստիտուտի առանձնահատկություններով: Հոդվածում կարևորվում է նաև իրավասու մարմնի կողմից հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության մինչդատական փուլում վարույթն ավարտելուն ուղղված գործողություններ կատարելը՝ որպես հայցի իրավունքի նախադրյալ: Հոդվածում հեղինակը ներկայացրել է գիտագրության մի շարք առաջարկություններ, որոնք միտված են իրավակիրառ պրակտիկայի զարգացմանը, ինչպես նաև վարույթում շահագրգիռ անձանց իրավունքների երաշխավորման ապահովմանը:

**Հիմնաբառեր.** ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց, հայցի իրավունքի նախադրյալներ, հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն, իրավասու մարմնն, շահագրգիռ անձ, պետական շահ, գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկած:

Հայց հարուցելու փուլը, հանդիսանալով քաղաքացիական դատավարության հարաբերականորեն ինքնուրույն փուլ, դատարանի կողմից ձեռնարկվող դատավարական գործողությունների համալիր է, որը միտված է դատարան հայց ներկայացնելու իրավունքն իրացնելուն և գործի քննության համար անհրաժեշտ նախապայմանները վեր հանելուն<sup>1</sup>:

Հայցի հարուցման առանցքային նախապայմանը հայցի իրավունքն է, որի առկայության կամ բացակայության հարցը լուծում է դատարանը: Այն հանդիսանում է անձի խախտված կամ վիճարկվող իրավունքի դատական պաշտպանության պահանջ ներկայացնելու, իսկ պահանջը հիմնավորելու դեպքում՝ նաև պահանջի բավարարում ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորություն:

<sup>1</sup> Ст'я **Борисова В.Ф.** Возбуждение гражданского судопроизводства: Автореф. - Саратов, 2009, № 198:

ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ սահմանադրական, օրենսդրական և կոնվենցիոն դրույթների, ինչպես նաև Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ դատարանի մատչելիության իրավունքը (որի բաղկացուցիչ մասն է դատարան դիմելու իրավունքը) ուղղակիորեն հարաբերակցվում է հայց հարուցելու իրավունքի նախադրյալների հետ: Դրանք այն հանգամանքներն են, որոնց առկայության կամ բացակայության հետ օրենսդիրը կապում է կոնկրետ գործով դատարան հայց ներկայացնելու սուբյեկտիվ իրավունքի ծագումը<sup>1</sup>:

Հայցի ընդունելիության գնահատման փուլում դատարանը կատարում է մի շարք դատավարական գործողություններ՝ պարզելու համար հայցի իրավունքի դատավարական կողմը, այսինքն՝ այն պայմանները, որոնց առկայության դեպքում անձը հնարավորություն ունի դիմելու դատարան (գործի ենթակայության, հայցվորի դատավարական իրավունակության և գործունակության, նոյն անձանց միջև նոյն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի առկայության ստուգում և այլն): Իհարկե, հայցի իրավունքը չի սահմանափակվում դատավարական իրավունքի նորմերի պահանջների հիման վրա դատարան դիմելու իրավունքի իրականացմամբ, այլ նաև բովանդակում է նյութահրավական նորմերի հիման վրա ներկայացված պահանջների բավարարում ստանալու օրենքով ամրագրված հնարավորությունը<sup>2</sup>:

Քաղաքացիական դատավարությունում հայցվորի հայցի իրավունքի դատավարական կողմը պարզելը, որպես կանոն, դժվարություն չի առաջացնում, քանի որ այն ենթադրվում է և անխօնիորեն կապված է անձի դատավարական իրավունակության հետ<sup>3</sup>: Սակայն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը չի մեկնարկում ՀՀ

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԴ/3724/02/17 քաղաքացիական գործով 12.05.2020 թվականի որոշումը:

<sup>2</sup> Տե՛ս Վահե Հովհաննիսյան, Սերգեյ Մեղրյան, Վարդուշ Եսայան, Պավել Թաղևոսյան, Աշխեն Ղարսյան, Տիգրան Մարկոսյան, Վահագն Գրիգորյան, Անի Միքայելյան, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն. գիրք առաջին, Երևան, 2022, էջ 370:

<sup>3</sup> Տե՛ս **Трезубов Е.С., Щеглова Н.С.** Фиктивность гражданскоого процесса: конституирующие признаки и механизмы запрета злоупотребления процессуальными правами в Российской Федерации // Вестник Кемеровского гос. ун-та, 2013, № 3 (т. 1), էջ 288:

քաղաքացիական դատավարության օրենսգրքով<sup>1</sup> (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) սահմանված կարգով դատարան հայցադիմում ներկայացնելու միջոցով:

Ըստ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի<sup>2</sup> (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ ենթակետի՝ **ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը** բնորոշվում է որպես ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման նպատակով իրավասու մարմնի նախաձեռնած ընթացակարգ, որն սկսվում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշման կայացմամբ, ներառում է գույքի քաղաքացիական բռնագանձման հայցի հարուցումը և ավարտվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով կամ սույն օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Նշված բնորոշումից, ինչպես նաև Օրենքի ուսումնասիրությունից բխում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնելու պարտադիր նախապայմանն է այդպիսի հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության մինչդատական փուլի՝ Օրենքով սահմանված կարգով իրականացումը, որի հիմնական նպատակը անձի կողմից ծեռք բերված գույքի և օրինական եկամուտների անհամապատասխանությունը հավաստող տվյալների հայտնաբերումն է: Հետևաբար, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի իրավունքի նախադրյաների պարզումը շեղվում է հայցի ընդունելիությունը գնահատելու Օրենսգրքով սահմանված ընդիանուր կանոններից՝ հաշվի առնելով հայց հարուցելու տարբերակված հիմքերի առկայությունը և գույքի ապօրինի ծագումը հավաստող բավարար հիմքերի վերհանման առթիվ իրավասու մարմնի կողմից անհրաժեշտ գործողությունների ձեռնարկումը:

Օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձանց ներկայացրած նյութերի և հավաքված ապացույցների հիմնա վրա իրավասու մարմինը կազմում է ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացություն: Եթե կան բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որի արժեքն ուսումնասիրության տվյալներով գերազանցում է սույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին

<sup>1</sup> Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.05/16(1374), ընդունվել է 09.02.2018 թ.-ին:

<sup>2</sup> Տե՛ս «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 16.04.2020 թ., ՀՀՊՏ 2020.05.13/50(1605):

մասով նախատեսված շեմը, ապա իրավասու մարմինը կազմում է եղրակացություն (...):

Վերոնշյալ նորմի վերլուծությունից հետևում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնելու համար իրավասու մարմնի կողմից վերհանված ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության հիմքերի բավարարությունը հիմնավորվում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության արդյունքներն ամփոփող եղրակացությամբ:

Օրենքի 20-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ իրավասու մարմինն ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եղրակացության հիման վրա Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության անունից կարող է հայցադիմում ներկայացնել առաջին ատյանի դատարան:

Այսինքն՝ իրավասու մարմնի՝ դատարան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնելու հիմքը, ի թիվս այլնի, իրավասու մարմնի կողմից վերջնական եղրակացության կազմումն է, որն ամփոփում է ուսումնասիրության արդյունքները և վեր է հանում անձին ապօրինի ծագում ունեցող գույք պատկանելու բավարար հիմքերը:

Օրենսգրքի ընդհանուր կանոններով ղեկավարվելով՝ դատարանը հայցի հարուցման փուլում հայցադիմումի ընդունելիության հարցը լուծելիս պարզում է հայցի իրավունքի իրացման դատավարական կողմը, առանց գնահատման առարկա դարձնելու պահանջի հիմնավորվածությունը և հայցվող իրավունքի օրինականությունը: Սակայն հաշվի առնելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի կապակցությամբ ծագած իրավահարաբերությունների հանրային նշանակությունը, վարույթի սուբյեկտային կազմը, ինչպես նաև պատասխանողի իրավունքների հնարավոր սահմանափակումները՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի ընդունելիության հարցը որոշելիս Օրենքով սահմանված են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի իրավունքի հատուկ նախադրյալներ, որոնց պարզումը գտնում ենք, որ էական նշանակություն ունի հայցի հարուցման փուլում:

Նշված նախադրյալների շարքին են դասվում թե՛ դրական և թե՛ բացասական հատուկ նախադրյալները, որոնց առկայության կամ բացակայության հետ Օրենքը կապում է պետության անունից ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի ներկայացման հնարավո-

րությունը և իրավասու մարմնի մոտ նման պահանջ ներկայացնելու իրավունքի ծագումը:

### **Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցադիմումի ձևին և կից փաստաթղթերին ներկայացվող տարբերակված պահանջները**

Օրենքը հստակ չի ամրագրում հայցադիմումի ձևին և կից փաստաթղթերին ներկայացվող հատուկ կանոններ, որոնցով դատարանը պարտավոր է առաջնորդվել հայցի ընդունելիության հարցը լուծելիս: Մյուս կողմից, <<քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հայցադիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները կիրառելի են այնքանով, որքանով այլ կանոններ նախատեսված չեն Օրենքով (Օրենքի 2-րդ հոդված): Ուստի նման կանոնների բացակայությամբ պայմանավորված՝ ստացվում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներով հայցի հարուցման փուլը կարգավորվում է Օրենսգրքի ընդհանուր կանոններով, ինչը չի բխում Օրենքով կարգավորվող հարաբերությունների բնույթից և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի իրավունքի՝ Օրենքով սահմանված նախադրյալներից:

Ուստի կարծում ենք, որ չնայած Օրենքով նախատեսված չեն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցադիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող հատուկ պահանջներ և, ըստ այդմ՝ հայցադիմումի ընդունելիության գնահատման շրջանակներում հայցադիմումի վերադարձման կամ մերժման լրացուցիչ հիմքեր, այնուամենայնիվ, Օրենքով կարգավորվող իրավահարաբերությունների բնույթը, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մինչդատական փուլի առկայությունը հիմք է տալիս փաստելու, որ դատարանն իրավասու մարմնի կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը պարզելիս պարտավոր է հաշվի առնել ոչ միայն <<քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր կանոնները, այլ նաև իրավասու մարմնի կողմից հայց ներկայացնելու իրավունքի ծագման նախադրյալների առկայությունը:

Գիտում ենք, որ հայցադիմումին ներկայացվող ընդհանուր պահանջների հետ մեկտեղ դադարանը պետք է սպուզի նաև ուսումնասիրության

Վերջնական ամփոփման հիման վրա իրավասու մարմնի կողմից կազմված եզրակացության առկայությունը, որը պետք է բովանդակի ապօրինի ծագում ունեցող գույքի բոնագանձման հայց ներկայացնելու վերաբերյալ որոշումը, ինչպես նաև այն փաստերը, որոնք հիմք են հանդիսացել այդ որոշման կայացման համար:

Հարկ ենք համարում ընդգծել, որ Օրենքի համակարգային ուսումնասիրությունից հետևում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բոնագանձման հայցի հարուցման համար նախաձեռնված ուսումնասիրության ընթացքում իրավասու մարմինը պարզում է և հայցի հիմքում ներառում է հետևյալ հանգամանքները՝ անձին կամ վերջինիս հետ փոխկապակցված անձին մեկ կամ մի քանի միավոր մեծ արժեքը ունեցող գույքի՝ սեփականության իրավունքով պարկանելը, կամ այդպիսի գույքի անհապույց կամ փաստացի անհապույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով այլ անձի փոխանցելը, հայդնաբերված գույքի արժեքի և անձի օրինական եկամուպների ակնհայտ անհամապատասխանությունը, գույքի շուկայական արժեքը հայց ներկայացնելու դրությամբ 50 մն << դրամը վերազանցելը, հանցավոր գործունեության և ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի ծեռքբերման անուղղակի կապերի մասին վկայող դրվագները:

Հետևաբար, կարևորվում է հայցադիմումին կից եզրակացություն ներկայացնելու հետ մեկտեղ ներկայացնել նաև մինչդատական փուլում՝ հայցի հիմքերի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված փաստաթղթերի և այլ նյութերի ամբողջական փաթեթը, որը ներառում է ուսումնասիրություն սկսելու հիմքերի առկայության վերաբերյալ համապատասխան ապացույցներ, ենթադրյալ ապօրինի գույքը անձին պատկանելու վերաբերյալ ապացույցներ, այդ գույքի շուկայական արժեքի որոշման վերաբերյալ տվյալներ, անձի օրինական եկամուտների վերաբերյալ փաստաթղթեր, շահագրգիռ անձանց ծանուցման, հաշտության քննարկման մասին տվյալներ:

Առաջին հայացքից նշված տեղեկատվությունը բովանդակում է հայցապահանջը հիմնավորող ապացույցներ, որոնց պարտադիր ներկայացման պահանջ հայցադիմումի ընդունելիության փուլում նախատեսված չէ, սակայն հաշվի առնելով նշված վարույթներով մինչդատական փուլի և հայցի իրավունքի ծագման տարբերակված նախադրյալների առկայությունը՝ գտնում ենք, որ մինչդատական փուլում հավաքագրված

բոլոր ապացույցների ներկայացումը՝ հայցադիմումի հետ մեկտեղ, անհրաժեշտ է դատարանին պարզելու համար իրավասու մարմնի կողմից ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջ ներկայացնելու լիազորության առկայությունը։ Վերոգրյալը չի նշանակում, որ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում պարտավոր է ամբողջ ծավալով ուսումնասիրել վարույթի նյութերը, սակայն այդ ապացույցների ներկայացման անհրաժեշտությունը պայմանավորված է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության բավարար հիմքերի մասին հետևողուների առկայությունը պարզելու և այդ գույքի շուկայական արժեքի՝ Օրենքով սահմանված շեմը գերազանցելը պարզելու անհրաժեշտությամբ։

*Հեղևաբար, կարծում ենք, որ Օրենքով անհրաժեշտ է հսկակ սահմանել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցադիմումին և կից փաստաթղթերին ներկայացվող վերը նշված պահանջները, որոնց չպահպանման հեղևանքը պետք է լինի դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու վերաբերյալ որոշում կայացնելը։*

### **Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցադիմումի բովանդակային պահանջները**

*Հաշվի առնելով ուսումնասիրության ընթացքում իրավասու մարմնի կողմից Օրենքով հսկակ կանոնակարգված և հաջորդական գործողությունների իրականացումը՝ գրնում ենք, որ հայցադիմումի ընդունելիության փուլում դատարանը պետք է պարզի, թե արդյոք ուսումնասիրությունն ավարտվել է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության բավարար հիմքերի հայտնաբերմամբ, թե ոչ։*

Այսպես, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցը վարույթ ընդունելու հարցը պարզելու փուլում դատարանը, ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, որը բովանդակում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության վերջնական ամփոփումը, ինչպես նաև ուսումնասիրության ընթացքում անձի օրինական եկամուտների և ձեռքբերված գույքի արժեքի էական անհամապատասխանության վերաբերյալ տվյալներ, պարտավոր է պարզել հետևյալ հանգամանքները. գույքի ապօրինի ծագումը փաստող բավարար հիմքերի մասին հեղևողության առկայությունը և ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող

*գույքի շուկայական արժեքը՝ Օրենքով սահմանված շեմը գերազանցած լինել:*

Հատկանշական է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի առկայությունը փաստող բավարար հիմքերի առկայությունը հանդիսանում է մի դեպքում ուսումնասիրությունը սկսելու, մյուս դեպքում՝ ուսումնասիրության արդյունքները նախնական և վերջնական ամփոփելու, և արդյունքում՝ դատարան հայց ներկայացնելու պարտադիր պայման: Կարծում ենք, որ ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության բավարար հիմքերի կասկածներն ու ենթադրությունները ուսումնասիրության յուրաքանչյուր փուլում հիմնավորվածության տարբեր աստիճան են պահանջում: Իհարկե, հայցի հիմքի և ապացույցների գնահատման համատեքստում պահանջի հիմնավորվածությունը և ձեռք բերված ապացույցների իրենց համակցության մեջ բավարարությունը գնահատում է դատարանը գործի քննության ընթացքում, սակայն հայցադիմումի բովանդակությանը ներկայացվող պարտադիր պահանջ պետք է դիտարկել այդ հիմքերի մասին իրավասու մարմնի կողմից կատարված հետևողունները, որոնց առկայությունը դատարանի կողմից պարզման ենթակա հանգամանքներից է:

Օրենքի ուսումնասիրությունից հետևում է, որ հայցադիմումի ներկայացման փուլում իրավասու մարմինը պետք է ներկայացնի, իսկ դատաքննության փուլում պետք է ապացուի ոչ միայն անձի օրինական եկամուտների էական անհամապատասխանությունը վերջինիս ձեռք բերած ակտիվներին, այլ նաև այդ ակտիվների շուկայական արժեքի՝ Օրենքով սահմանված նվազագույն շեմը գերազանցելը: Նշվածը բխում է Օրենքի այն կարգավորումներից, ըստ որոնց՝ իրավասու մարմինը ապօռինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու ուղղությամբ Օրենքով նախատեսված միջոցներ կարող է ձեռնարկել, այնուհետև հայց ներկայացնել, իսկ դատարանը հայցի քննության արդյունքում կարող է վճիռ կայացնել բռնագանձել ապօրինի ծագում ունեցող գույքը միայն այն պայմանով, եթե այդպիսի գույքի շուկայական արժեքը հայցի ներկայացման պահին գերազանցում է 50 միլիոն << դրամը:

Հետևաբար, ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքի վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը ևս հանդիսանում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնելու պարտադիր պահանջ, որպիսին դատական պրակտիկայում համարվում

Են ապրանքագիտական փորձաքննության արդյունքում կազմված գույքի գնահատման եզրակացությունները կամ այլ պաշտոնական տվյալները, որոնք կարող են համարվել գույքի շուկայական արժեքի վերաբերյալ հավաստի և արժանահավատ տվյալներ պարունակող փաստաթղթեր:

Արժանահիշատակ է նաև այն հանգամանքը, որ գործնականում դատարանները, Օրենքով սահմանված նվազագույն շեմը գերազանցելու հանգամանքը գնահատելիս, իհմք են ընդունում հայցադիմում նշված բոլոր գույքերի շուկայական արժեքի հանրագումարը 50 միլիոն << դրամը գերազանցելու հանգամանքը, այլ ոչ թե առանձին վերցրած յուրաքանչյուր գույքի շուկայական արժեքը Օրենքով սահմանված շեմը գերազանցելու հանգամանքը: Ինչը, գտնում ենք՝ համահունչ է Օրենքին, քանի որ Օրենքի իմաստով ապօրինի ծագում ունեցող գույք է դիտարկվում ինչպես մեկ միավոր գույքը, այնպես էլ մի քանի միավոր գույքը կամ մեկ միավոր գույքի բաժինը, ինչն առանձին վերցրած կարող է չգերազանցել 50 միլիոն << դրամը, սակայն հայտնաբերված այլ գույքերի հետ մեկտեղ գերազանցում է Օրենքով սահմանված նվազագույն շեմը:

Նշված մոտեցումը համադրելի է նաև Օրենքի նպատակին, քանի որ հանցավոր ճանապարհով ստացված ակտիվները տնտեսական շրջանառությունից հանելու գործիքակազմը<sup>1</sup> նախատեսում է որոշակի դրամական շեմը հաղթահարած ակտիվների կամ դրանց արժեքի չափով գումարի բռնագանձում՝ հաշվի առնելով նշված շեմը գերազանցող ապօրինի ձեռք բերված ակտիվներ կուտակելու արգելու: Միաժամանակ նաև հարկ ենք համարում նշել, որ փաստացի Օրենքի իմաստով բռնագանձման ենթակա չէ մինչև 50 միլիոն << դրամ շուկայական արժողությամբ և ապօրինի ճանապարհով ձեռք բերված գույքը՝ դրանով իսկ փաստացի թույլատրելի համարելով այդ չափով ապօրինի գույքի առկայությունը: Զնայած նման հնարավորության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջ դատարան ներկայացնելիս գույքային պահանջը ներառում է հայտնաբերված ապօրինի գույքի ամբողջ ծավալը:

Ամփոփելով վերոգրյալ՝ գտնում ենք, որ հայցադիմումի բովանդակությանը ներկայացվող վերոգրյալ պահանջները առանցքային նշանակություն ունեն հայցադիմում ներկայացնելու և ընդհանուր առմամբ գործը

<sup>1</sup> Տե՛ս «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» << օրենքի ընդունման մասին հիմնավորումներ, կետ 21, մանրամասն տե՛ս հետևյալ հղմամբ՝

[http://www.parliament.am/draft\\_docs7/K-438-438-14\\_Himnavorum.pdf](http://www.parliament.am/draft_docs7/K-438-438-14_Himnavorum.pdf)

քննելու տեսանկյունից: Իհարկե, նշվածը չի ենթադրում, որ հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը պարզելիս դատարանը պետք է իրավական գնահատական տա ուսումնասիրության արդյունքների կամ հայցի հիմքերի հիմնավորվածությանը: Սակայն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի ներկայացման առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կարծում ենք, որ դատարանը, հայցադիմումի ընդունելիության հարցը լուծելիս, չի կարող սահմանափակվել միայն Օրենսգրքով սահմանված հայցադիմումի ներկայացման ընդհանուր պահանջները ստուգելով:

Ինչ վերաբերում է նախքան բռնագանձման հայցով դատարան դիմելը հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության ընթացակարգի իրավաչափությունը վիճարկելուն, ապա նշենք, որ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տաիս, որ դատարաններն այդ հարցին անդրադասնում են մինչդատական փուլն ավարտելուց և հայցադիմումը դատարան ներկայացվելուց հետո՝ գործի ըստ էության քննության ընթացքում<sup>1</sup>: Ըստ դատարանների դիրքորոշման՝ ուսումնասիրության իրականացումը և ուսումնասիրության արդյունքներն ինքնին չեն միջամտում անձի իրավունքներին, ուստիև ուսումնասիրության իրականացումը չի կարող խախտել այդ անձանց իրավունքները: Ըստ որդեգրված մոտեցման՝ դատարանը կարող է գնահատել իրավասու մարմնի ուսումնասիրության ընթացքի և հարուցման հիմքերի իրավաչափությունը բացառապես դատական քննության շրջանակներում, այսինքն՝ քանի դեռ հայց չի ներկայացվել և այն դատարանում չի քննվում, դատարանն իրավասու չէ դատական կարգով քննության առարկա դարձնել ուսումնասիրություն սկսելու և դրա ընթացքին վերաբերող իրավասու մարմնի որոշումները:

Ավելին, սույն տեսակետի կողմնակիցները գտել են, որ ընթացակարգային խախտումների հետևանքները, դրանցից բխող անձի իրավունքների, այդ թվում՝ դատարան դիմելու իրավունքի իրացման գործնթացները պետք է դիտարկել այն հետևանքների ծևաչափով, որոնք նախատեսված են Օրենքով, Օրենսգրքով կամ այլ օրենքներով, որոնք հիմնականում վերաբերում են ապացույցներին և ապացուցման գործնթացին: Ուստի եզրակացվել է, որ ուսումնասիրության ընթացքում թույլ տրված

<sup>1</sup> Տե՛ս օրինակ թիվ ՎԴ/10331/05/21 գործով ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ասյանի դատարանի 19.10.2021 թվականի՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը:

խախտումների հետևանքները պետք է դիտարկել դրանց՝ ապացուցման և ներկայացված ապացույցների բնույթի վրա ազդեցության տեսանկյունից<sup>1</sup>:

Վկայակոչված մոտեցումները դատական պրակտիկայում կիրառվելու դեպքում ստացվում է, որ ուսումնասիրության՝ Օրենքով սահմանված ընթացակարգի իրավաչափության գնահատումը կարող է կատարվել բացառապես հայց հարուցելուց հետո, հայցի քննության փուլում և քննվող գործի շրջանակներում: Նման պայմաններում գործի քննության ընթացքում արձանագրված խախտումների հետևանք կարող է դիտվել իրավասու մարմնի ներկայացրած ապացույցները Օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքով անթույլատրելի ճանաչելու հիմք: Այնինչ կարծում ենք, որ Օրենքով սահմանված ընթացակարգի պահպանումը՝ որպես իրավասու մարմնի համար հայց հարուցելու իրավունքի ծագման նախապայման, հայցադիմումի ընդունելիության փուլում ևս պետք է հանդիսանա դատական քննության առարկա այն ծավալով, որքանով այդ ընթացակարգի չպահպանումը խոչընդոտել է ուսումնասիրության նախաձեռնման նպատակի և վարույթը ուսումնասիրության փուլում ավարտվելու Օրենքով սահմանված հնարավորության իրականացումը:

Մասնավորապես, Օրենքի համակարգային ուսումնասիրությունից հետևում է, որ նախքան դատարան հայցադիմում ներկայացնելու հնարավորության պարզումը հայցի հիմքերի ուսումնասիրության փուլում իրավասու մարմինը ուսումնասիրության նյութերով հայտնի բոլոր շահագրգիռ անձանց ծանուցում է վարույթի մասին և հնարավորություն տալիս ներկայացնել գույքի պաօրինի ծագումը հերքող տեղեկություններ: Բացի այդ, Օրենքը նախատեսում է ուսումնասիրության արդյունքների հիման վրա վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու հնարավորությունը:

Այսպես, ուսումնասիրության անցկացման պարտադիր փուլերից է շահագրգիռ անձանց ծանուցումը, վերջիններիս իրենց առարկությունները ներկայացնելու հնարավորություն ընձեռելը, ինչպես նաև ուսումնասիրությունը հաշտության համաձայնագիր կնքելով ավարտելը (Օրենքի 17-րդ և 19-րդ հոդվածներ): Նշված փուլերի նպատակը հանգում է նախքան

<sup>1</sup> Տե՛ս Թորոսյան Գ., Հովհաննիսյան Վ., Շահնազարյան Հ., Զարգարյան Հ., Կասկո Վ., Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը որպես քաղաքացիական դատավարության տարրերակված ծև, մաս 1, Երևան, 2023, էջ 399:

դատարան դիմելը մի դեպքում շահագրգիռ անձանց կողմից ներկայացված հիմնավոր փաստարկների և գույքի ձեռքբերման օրինականությունը հիմնավորելու արդյունքում գույքի ապօրինի ծագման վերաբերյալ Ենթադրությունները հերքվելուն, իսկ մյուս դեպքում հաշտության համաձայնագրի հիման վրա վիճելի գույքը կամ դրա մի մասը <<-ին փոխանցելուն: Այսինքն՝ գույքի ապօրինի ծագում ունենալու բավարար հիմքերի առկայության ուսումնասիրությունը նախատեսում է ապօրինի ծագում ունեցող գույքի սեփականության իրավունքը պետությանը փոխանցելու հարցի արտադատական կարգով լուծման հնարավորությունը, քանի որ Օրենքով սահմանված վերոնշյալ ընթացակարգի կատարման արդյունքում կարող է վերանալ ապօրինի ծագում ունեցող գույքի բոնագանձման պահանջի ներկայացման անհրաժեշտությունը, ինչը համապատասխան իրավական հետևանքներ է առաջացնում շահագրգիռ անձանց համար:

Ուստի եզրահանգում ենք, որ հայցադիմումի ներկայացման համար անհրաժեշտ նախադրյալ է հանդիսանում նաև իրավասու մարմնի կողմից հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության մինչդատական փուլում վարույթը ավարտելուն ուղղված գործողություններ կատարելը և շահագրգիռ անձանց Օրենքով սահմանված երաշխիքներով ապահովելը, այսինքն՝ վարույթը հաշտության համաձայնություն կնքելով ավարտելու կամ գույքի ապօրինի ծագման Ենթադրությունները հերքվելու հնարավորությունը սպառելով: Նշված գործողությունները իրականացրած չլինելու պայմաններում, գտնում ենք, որ իրավասու մարմնի հայցի իրավունքը բացակայում է այն հիմքով, որ իրավասու մարմինը չի պահպանել Օրենքով նախատեսված՝ վեճի կարգավորման մինչդատական (արտադատական) կարգը, ինչը դիտվում է հայցադիմումը վերադարձնելու Օրենսգրքով սահմանված ինքնուրույն հիմք:

**Հետևաբար, առաջարկում ենք, որ իրավասու մարմնի կողմից մինչև դադարան հայցադիմում ներկայացնելը Օրենքով սահմանված արտադատական կարգի չպահպանման, այն է՝ վարույթը ուսումնասիրության փուլում ավարտվելու Օրենքով սահմանված գործողությունների կադարումը չապահովելու դեպքում դադարանին վերապահել իրավասություն վերադարձնել ներկայացված հայցադիմումն այն հիմքով, որ հայցվորը չի պահպանել մինչև դադարան դիմելը ուսումնասիրության**

## ՎԻԼՈՒՄ ԱՊՈՐԻՒԽԻՆ ԾԱԳՈՒՄ ՊԱՆԵՋՈՂ ԳՈՎՐՔԻ ԲՈՆԱԳԱՆԴՄԱՆ ՎԱՐՈՎՅԹՆ ԱՎԱՐԴԵԼՈՒ ՊԼԵՂՎԱԾ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՎԵՍՎԱԾ ԱՐԴԱՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԸ:

Հարուցված հայցի շրջանակներում, որպես կանոն, սկզբնապես ներկայացված հայցը կարող է փոփոխվել՝ ինչպես դրա տարրերը (առարկան, հիմքը) փոփոխելով, այնպես էլ հայցապահանջների չափը ավելացնելով կամ նվազեցնելով: Որպես կանոն, հայցի առարկան կարող է փոփոխվել հետևյալ եղանակներով՝ պատասխանողին ուղղված նյութահրավական պահանջն այլ պահանջով փոխարինելով, պատասխանողին ուղղված նյութահրավական պահանջը փոփոխելով և պատասխանողին ուղղված նյութահրավական պահանջը լրացնելով<sup>1</sup>: Նշված բոլոր դեպքերում հայցի առարկայի փոփոխությունը չի հանգեցնում սկզբնապես ներկայացված հայցով հայցվող իրավունքի կամ դրա հիմքում դրված օրինական շահի փոփոխությանը:

Իրավաբանական գրականության մեջ հայցի հիմքի և (կամ) առարկայի փոփոխությունը գնահատվում է հայցի որակական փոփոխություն<sup>2</sup> և հանգեցնում է դատական քննության առարկայի փոփոխության:

Այնուամենայնիվ՝ Օրենսգրքի 170-րդ հոդվածի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայցի առարկայի փոփոխություն տեղի է ունենում նաև այն դեպքում, եթե հայցվողը պահանջների չափը ավելացնում կամ նվազեցնում է: Ստացվում է, որ հայցապահանջների չափի ավելացումը կամ նվազեցումը օրենսդիրը դիտարկել է որպես հայցի առարկայի որակական փոփոխություն, չնայած այն հանգամանքին, որ դատավարագիտության մեջ հայցապահանջների չափերի փոփոխությունը դիտարկվում է հայցի առարկայի քանակական փոփոխություն<sup>3</sup>:

Ապօրինի ծագում ունեցող գովրքի բռնագանձման վարույթում հայցի հիմքի և (կամ) առարկայի փոփոխությունը ևս առանձնահատուկ դրսևություն ունի և կարծում ենք, որ այդպիսի փոփոխությունը սահմանափակվում է ոչ միայն այն իրավունքի կամ օրենքով պահպանվող շահի փոփո-

<sup>1</sup>Տե՛ս Թորոսյան Գ., Զարգարյան Հ., Շահնազարյան Հ., Քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակիրառ պրակտիկան, ընդհանուր մաս, Երևան, 2021, Էջեր 652-655:

<sup>2</sup>Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Երևան, 2012, «Ուկան Երևանցի» հրատ., Էջ 259:

<sup>3</sup>Տե՛ս Степанова Е.В. Процессуальные действия сторон в гражданском процессе: Учебник для вузов. – Москва: Статут, 2018, Էջ 78-79.

խության արգելքով, որի պաշտպանության նպատակով սկզբնապես հայց է ներկայացվել կամ երբ քննվող գործը դուրս է գալիս առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից, այլ նաև այն դեպքում, երբ իրավասու մարմինը պատասխանողին ուղղված նյութահրավական պահանջը լրացնում է այնպիսի պահանջներով կամ հիմքերով, որոնք ուսումնասիրության ընթացքում չեն պարզվել և ուսումնասիրությունը եզրափակող եղրակացությամբ վեր չեն հանվել:

Այսպես, Օրենքի տրամաբանությունից հետևում է, որ իրավասու մարմինը լիազորված է գույքի բռնագանձման հայց ներկայացնելու դատարան հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության ընթացքում պարզված հանգամանքների և հայտնաբերված գույքի շրջանակներում: Ավելին, ուսումնասիրության արդյունքները վերջնական ամփոփող եզրակացության հիման վրա իրավասու մարմինը որոշում է կայացնում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնել դատարան, որը պարտադիր պայման է դատարան հայց ներկայացնելու համար: Այսինքն՝ ուսումնասիրության ընթացքում պարզված հիմքերն են թույլ տվել իրավասու մարմնին համապատասխան հայց ներկայացնել դատարան, որոնք և կաշկանդում են իրավասու մարմնին այդ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված փաստական հանգամանքների շրջանակում «կառուցել» ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հիմքերը և առարկան:

Հայցի փոփոխության ինստիտուտի հիմքում դրված է կոնկրետ շահի դատական պաշտպանության և այդ շահի անփոփոխ լինելու գաղափար<sup>1</sup>, ուստի նշվածի համատեքստում գտնում ենք, որ չնայած պետության շահը հանգում է ապօրինի ծագում ունեցող գույքը շրջանառությունից հանելուն և հօգուտ պետության բռնագանձելուն, սակայն այդ գույքը հայտնաբերելու և դատարան համապատասխան պահանջ ներկայացնելու համար Օրենքով սահմանվել են հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն կատարելու և ըստ այդմ ապօրինի ծագում ունեցող գույքը հայտնաբերելու կարգ, որի կապակցությամբ իրավասու մարմինը լիազորված է պետության անոնից հայց ներկայացնել դատարան:

<sup>1</sup>Տե՛ս Շակարյան Մ.С., Բալինա Մ. Гражданское процессуальное право России. - Москва, 1999, էջ 165:

Հակառակ դեպքում ինքնանպատակ է դառնում Օրենքով հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության հստակ կանոնակարգումը, ինչպես նաև ուսումնասիրության հստակ ժամկետները և այդ ժամկետները չպահպանելու դեպքում համապատասխան իրավական հետևանքները։ Որպես օրինակ, Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ ուսումնասիրությունը կարող է լրացնել առավելագույնը երեք դարի։ Սույն հոդվածով նախադրելով ժամկետների խախտմամբ ներկայացված հայցը համարվում է ներկայացված հայցային վաղեմության ժամկետի բացթողումով։

Ստացվում է, որ Օրենքով սահմանված ուսումնասիրության ժամկետները կաշկանդում են իրավասու մարմնին տվյալներ հավաքագրել անձի կողմից ձեռք բերված գույքի և օրինական եկամուտների վերաբերյալ այն ժամանակահատվածում, որի ընթացքում ուսումնասիրությունն իրականացվում է։ Իսկ նշված ժամկետներում նախաձեռնված և ավարտված ուսումնասիրությունը եզրափակվում է համապատասխան եզրակացություն կազմելով, որը բովանդակում է հայց հարուցելու հիմք կազմող փաստերի ընդգրկուն և սպառիչ շրջանակը։ Հակառակ պարագայում, իրավասու մարմինը կարող է հայց ներկայացնել դատարան և շարունակել համապատասխան ուսումնասիրությունների կատարումը՝ հնարավորություն ունենալով հայցի հիմքը և առարկան լրացնել մինչև դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը, ինչը, կարծում ենք, անթույլատրելի է և հակասում է Օրենքով իրավասու մարմնին վերապահված լիազորություններին։

«Հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բոնագանձման մասին» Վրաստանի օրենքի<sup>1</sup> 9-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությանը իրավասություն է վերապահված դատարան հայց ներկայացնելու միջոցով լրացնիչ գույքի բոնագանձման պահանջ ներկայացնել դատարան այն դեպքում, եթե կան բավարար հիմքեր ենթադրելու, որ հանցավոր գործունեության արդյունքում անձը նոր ակտիվներ է ձեռք բերել։ Նշված պահանջը կարող է ներկայացվել պայմանով, որ պահանջին կից ներկայացվեն գույքի ձեռքբերման և հանցավոր գործունեության միջև կապը հավաստող տվյալներ։ Իհարկե նոր պահանջը կարող է միացվել սկզբնապես հարուցված գործի քննությանը, եթե դատարանը գտնի, որ

<sup>1</sup> Տե՛ս «Հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բոնագանձման մասին» Վրաստանի օրենք, ընդունվել է 11.04.2008 թվականին։

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://matsne.gov.ge/ka/document/view/30608?publication=0>

դրանք փոխկապակցված են և համատեղ քննությունը կնպաստի գործի արդյունավետ լուծմանը: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում ընդգծել, որ Վրաստանում գործող ինստիտուտը թույլ է տալիս բռնագանձել ապօրինի ծագում ունեցող գույքը միայն այն դեպքում, երբ հաստատվում է հանցավոր գործունեության արդյունքում այդպիսի գույքի ձեռքբերումը (5-րդ հոդված), ինչը <<-ում գործող Օրենքով չի պահանջվում: Հետևաբար, հանցավոր գործունեության հետ ուղղակի կապի հաստատումը ներպետական օրենսդրությամբ պարտադիր չինելու պայմաններում ուսումնասիրության արդյունքներից դուրս հայտնաբերված գույքը բռնագանձելու պահանջը չի բխում իրավասու մարմնի՝ Օրենքով սահմանված լիազորությունից:

Հնարավոր են նաև իրավիճակներ, երբ իրավասու մարմինը հայցի հիմքը և (կամ) առարկան փոփոխելու միջոցով այն գույքը դիտարկի ապօրինի ծագում ունեցող, որը ըստ եզրակացության՝ դիտարկվել էր օրինական և ի սկզբանե չէր ներառվել հայցի առարկայում: Նշված դեպքերը հավանական են այն պարագայում, երբ պատասխանողի կողմից ներկայացված ապացույցների կամ հիմնավորումների արդյունքում փոփոխվում է վերջինիս օրինական եկամուտների և ձեռք բերված գույքի արժեքի հարաբերակցությունը: Այնուամենայնիվ, գտնում ենք, որ իրավասու մարմնի՝ հայցի առարկայի փոփոխման իրավունքը ածանցվում է վերջինիս հայցի իրավունքից, իսկ ինչպես նշեցինք, Օրենքով հայցի իրավունքի իրացման պարտադիր նախապայմանների առկայության դեպքում այդ պահանջները վերագրվում են նաև հայցի առարկայի փոփոխությանը: Այսինքն՝ իրավասու մարմնի կազմած եզրակացությունն ինքնին ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հիմքն է, իսկ նոր պահանջների քանակական ավելացումը դուրս է մնում իրավասու մարմնի կողմից կազմած եզրակացությամբ հայտնաբերված ապօրինի ծագում ունեցող գույքի ցանկից:

Ինչ վերաբերում է հայցապահանջների նվազեցմանը, ապա կարծում ենք, որ պատասխանողի կողմից ներկայացված հիմնավորումների համատեքստում որոշ ակտիվների մասով կարող է հաղթահարվել գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, և այն դիտարկվել օրինական ծագում ունեցող, ինչը կնշանակի, որ իրավասու մարմինը

կարող է միջնորդել դատարանին հայցապահանջից նվազեցնել օրինական եկամուտներով ձեռք բերված գույքը:

Հեղևաբար, գտնում ենք, որ հայցի հիմքի և (կամ) առարկայի փոփոխությունը, որը դրսնորդվում է հայցը իրավասու մարմնի կողմից նոր փաստական հիմքերով լրացնելով, ինչպես նաև նոր գույքի բռնագանձման պահանջով ավելացնելով այն դեպքում, երբ ուսումնասիրության ընթացքում այդ հիմքերը իրավասու մարմնի կողմից չեն նշվել և եղակացությամբ ապօրինի ծագում ունեցող գույք չեն դիրքարկվել, չպետք է թույլադրելի համարել: Ուստի կարծում ենք, որ ուսումնասիրության սահմաններում չհայդնաբերված և, ըստ այդմ, Օրենքով սահմանված կարգով չուսումնասիրված գույքի առնչությամբ հայցվորը չի կարող փոփոխել հայցի հիմքը և (կամ) առարկան և ներառել այդ գույքի բռնագանձման պահանջը:

Հարկ ենք համարում նշել, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի հետ կապված պահանջներ ներկայացնելու անհրաժեշտության դեպքում Օրենքով թույլատրվում է հայցի առարկայի և (կամ) հիմքի փոփոխություն կատարել, որը սակայն չի ենթադրում գույքի բռնագանձման պահանջի ավելացում կամ նվազեցում, այլ առավելապես միտված է այդպիսի գույքի ձեռքբերման կամ օտարման պայմանագրերը վիճարկելուն, որոնց քննությամբ կարող է պարզվել անձի եկամուտների օրինականությունը և գույքի իրական շահառու հանդիսանալու հանգամանքը:

Այսպես, Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցվորի կողմից հայցադիմումով կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով հայցի առարկան և (կամ) հիմքը փոփոխելու միջոցով կարող է ներկայացվել նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի հետ կապված ցանկացած այլ պահանջ, այդ թվում՝ առ ոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման, վիճահարուց գործարքի անվավեր ճանաչման, դրա անվավերության հետևանքների կիրառման պահանջ, կամ վիճարկվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի համար նշանակություն ունեցող ցանկացած պայմանագրի կնքված լինելու հանգամանքը:

Ստացվում է, որ տվյալ դեպքում հայցի առարկայի և (կամ) հիմքի փոփոխությամբ ոչ թե լրացվում կամ փոփոխվում է սկզբնական

հայցապահանջը, որն ուղղված էր դատարանին՝ որոշելու գույքի իրավական վիճակը, այլ ներկայացվում է նոր պահանջ, որը, չնայած պետք է կապ ունենա ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի հետ՝ վերջինիս հետ համատեղ քննվելու համար, սակայն այն կարող է անմիջականորեն չբխել տվյալ վիճելի իրավահարաբերությունից:

Օրենքը չի սահմանում նման պահանջները ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի հետ փոխկապակցվածության չափանիշներ՝ բավական լայն սահմանելով ներկայացվելիք պահանջների շրջանակը: Կարծում ենք, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի հետ կապված պահանջների համատեղ քննության մասին կարելի է խոսել այն դեպքում, եթե այդ պահանջների հանգուցալուծումը կարող է էական նշանակություն ունենալ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու համար: Ուստի յուրաքանչյուր դեպքում նման պահանջներ ներկայացնելիս հայցվորը պետք է դատարանին հիմնավորի դրանց համատեղ քննության նշանակությունը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննության համար էական նշանակություն ունենալու տեսանկյունից և, ըստ այդմ, դատարանը պետք է գնահատի պահանջների փոխկապակցվածությունը և որոշի հայցի առարկան և (կամ) հիմքը փոփոխելու թույլատրելիության հարցը:

Հետևաբար, կարծում ենք, որ տվյալ վարույթում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հետ կապված պահանջների ներկայացմամբ պայմանավորված՝ հայցի առարկայի և (կամ) հիմքի փոփոխությունը դասական իմաստով չի համարվում հայցի փոփոխություն, քանի որ ներկայացված պահանջը չի լրացվում, չի փոխարինվում այլ պահանջով կամ չի փոփոխվում: Նշված պահանջները, որպես կանոն, չեն կարող դիտարկվել նաև ածանցյալ պահանջներ, քանի որ ոչ թե ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հիմնական պահանջի լուծումն է կանխորշում այդ պահանջների լուծումը, այլ ընդհակառակը՝ քննվող գործի հետ կապված պահանջների ներկայացումը, և լուծումը էական է համարվում գույքի՝ ապօրինի ծագում ունենալու փաստը, կամ պահանջի հիմքում ընկած այլ փաստերը հիմնավորելու համար:

## Եզրակացություն

Ամփոփելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով հայցի հարուցման առանձնահատկությունները՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները:

**1.** Օրենքով նախատեսված չեն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցադիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող հատուկ պահանջներ և հայցադիմումի ընդունելիության գնահատման շրջանակներում հայցադիմումի վերադարձման կամ մերժման լրացուցիչ հիմքեր: Այնուամենայնիվ, հաշվի առնելով վիճելի իրավահարաբերությունների հանրային նշանակությունը և վարույթի սուբյեկտային կազմը՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման փուլում դատարանը պարտավոր է հաշվի առնել իրավասու մարմնի հայցի իրավունքի հատուկ նախադրյալները, որոնց առկայության կամ բացակայության հետ Օրենքը կապում է պետության անոնից իրավասու մարմնի կողմից ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջ ներկայացնելու լիազորության ծագումը:

**2.** Ուսումնասիրության արդյունքները վերջնական ամփոփող եզրակացությունը և ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված բոլոր նյութերը հայցադիմումին կից ներկայացնելը անհրաժեշտ է դիտարկել հայցադիմումի ներկայացման պարտադիր պահանջ, քանի որ հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը դատարանը կարող է պարզել ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության բավարար հիմքերի առկայության մասին հետևողունները և այդ գույքի շուկայական արժեքի՝ Օրենքով սահմանված շեմի գերազանցումը ստուգելու դեպքում: Նշված պահանջների չպահպանումը պետք է հանգեցնել դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու վերաբերյալ որոշման կայացմանը:

**3.** Հայցի իրավունքի դրական նախադրյալ է դիտարկվել վարույթն հաշտության համաձայնության կնքմամբ ավարտելու կամ գույքի ապօրինի ծագման ենթադրությունները հերքվելու հնարավորության բացառումը, որը պետք է հանդիսանա դատական քննության առարկա այն ծավալով, որքանով այդ ընթացակարգի չպահպանումը խոչընդոտել է ուսումնասիրության նախաձեռնման նպատակի և վարույթը ուսումնասիրության փուլում ավարտվելու Օրենքով սահմանված հնարավորության իրականացմանը, ինչի բացակայությունը պետք է հանգեցնի արտադատական

կարգի չպահպանմանը և, որպես հետևանք, դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման կայացմանը:

**4. Հաշվի առնելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մինչդատական փուլում իրավասու մարմնին Օրենքով վերապահված լիազորությունների ծավալը՝ հայցի հիմքի և (կամ) առարկայի փոփոխությունը ևս որոշակի սահմանափակումների է ենթարկվում: Մասնավորապես, հայցի հիմքի և (կամ) առարկայի փոփոխություն չի կարող թույլատրվել, եթե հայցը իրավասու մարմնի կողմից նոր փաստական հիմքերով լրացվում է կամ ավելացվում է նոր գույքի բռնագանձման պահանջանքը, դեպքում, եթե ուսումնասիրության ընթացքում այդ հիմքերն իրավասու մարմնի կողմից չեն բացահայտվել, և եզրակացությունում գույքի ապօրինի ծագման վերաբերյալ հետևողություն չի կատարվել:**

**5. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հետ կապված պահանջների ներկայացմամբ պայմանավորված՝ հայցի առարկայի և (կամ) հիմքի փոփոխությունը դասական իմաստով չի համարվում հայցի փոփոխություն, քանի որ ներկայացված պահանջը չի լրացվում, չի փոխարինվում այլ պահանջով կամ չի փոփոխվում: Այնուամենայնիվ, գտնում ենք, որ փոխապահակցված պահանջների ներկայացման դեպքում հայցվորը պետք է դատարանին հիմնավորի դրանց համատեղ քննությունն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննության համար էական նշանակություն ունենալու տեսանկյունից:**

### **Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ**

- «Հաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 09.02.2018 թ.-ին, ուժի մեջ է մտել 09.04.2018 թ.-ին, ՀՀՊՏ 2018.03.05/16(1374), Հոդ. 208:
- «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 16.04.2020 թ.-ին, ուժի մեջ է մտել 23.05.2020թ.-ին, ՀՀՊՏ 2020.05.13/50(1605), Հոդ. 580:
- «Հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնգանաձման մասին» Վրաստանի օրենք, ընդունվել է 11.04.2008 թվականին,

<https://matsne.gov.ge/ka/document/view/30608?publication=0>

4. «Համարեկ դատարանի՝ թիվ ԵԱԳԴ/3724/02/17 քաղաքացիական գործով 12.05.2020 թվականի որոշում:

5. «Հերևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ թիվ ՎԴ/10331/05/21 գործով 19.10.2021 թվականի՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում:

6. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» «Հօրենքի ընդունման մասին հիմնավորումներ,

[http://www.parliament.am/draft\\_docs7/K-438-438-14\\_Himnavorum.pdf](http://www.parliament.am/draft_docs7/K-438-438-14_Himnavorum.pdf)

7. **Թորոյան Գ., Զարգարյան Հ., Շահնազարյան Հ., Քաղաքացիական դատավարության օրենսգործի իրավակիրառ պրակտիկան, ընդհանուր մաս, Երևան, 2021, 752 էջ:**

8. **Թորոյան Գ., Հովհաննիսյան Վ., Շահնազարյան Հ., Զարգարյան Հ., Կասկո Վ.**, Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև, մաս 1, Երևան, 2023, 411 էջ:

9. **Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, 4-րդ իրատ., «Ուկան Երևանցի» իրատ., Երևան, 2012:**

10. **Վահե Հովհաննիսյան, Սերգեյ Մեղրյան, Վարդուշ Եսայան, Պավել Թադևոսյան, Աշխեն Ղարսյան, Տիգրան Մարկոսյան, Վահագն Գրիգորյան, Անի Միքայելյան, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն. գիրք առաջին, Երևան, 2022, 608 էջ:**

11. **Борисова В.Ф.** Возбуждение гражданского судопроизводства: Автoref. - Саратов, 2009, 27 էջ,

[https://static.freereferats.ru/\\_avtoreferats/01004341599.pdf?ver=8](https://static.freereferats.ru/_avtoreferats/01004341599.pdf?ver=8)

12. **Степанова Е. В.** Процессуальные действия сторон в гражданском процессе: Учебник для вузов. – Москва: Статут, 2018.

13. **Трезубов Е.С., Щеглова Н.С.** Фиктивность гражданского процесса: конституирующие признаки и механизмы запрета злоупотребления процессуальными правами в Российской Федерации // Вестник Кемеровского гос. ун-та, 2013, № 3 (т. 1), 287-291 էջեր:

14. **Шакарян М.С., Былина М.** Гражданское процессуальное право России. - М., 1999.

## ОСОБЕННОСТИ ПОДАЧИ ИСКА О КОНФИСКАЦИИ ИМУЩЕСТВА НЕЗАКОННОГО ПРОИСХОЖДЕНИЯ В ГРАЖДАНСКОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

### Аннотация

Введением института конфискации имущества без обвинительного приговора в правовую систему Республики Армения был предложен новый подход к борьбе с преступностью и коррупцией. В соответствии с этим подходом, если законное происхождение имущества не установлено, оно может быть конфисковано в пользу государства без обвинительного приговора и даже без возбуждения уголовного дела.

Положения закона вызывают определенные опасения, и вопрос о его конституционности находится на рассмотрении в Конституционном Суде Республики Армения. Кроме того, в последнее время в суд были поданы иски о конфискации незаконно приобретенного имущества. Учитывая предварительную стадию изучения имущества и доходов лица перед подачей иска, важно решить возникающие проблемы на этапе подачи иска и установить дифференцированные критерии для оценки приемлемости таких исков.

Целью данной статьи является выделение установленных законом конкретных критериев и предложение соответствующих процедурных последствий в отношении формы и содержания иска о конфискации незаконно приобретенного имущества. В статье также исследуются предпосылки права компетентного органа на предъявление иска, обсуждаются вытекающие из права на иск ограничения изменения основания и предмета иска вследствие особого характера данного института. В статье также акцентируются принимаемые уполномоченным органом меры по завершению производства на досудебной стадии расследования оснований предъявления иска, признавая их как необходимое условие для осуществления права на предъявление иска. В статье представлены некоторые научно-практические идеи, направленные на улучшение правоприменительной практики и обеспечение защиты прав участников в процессе лиц.

**Ключевые слова:** иск о конфискации имущества незаконного происхождения, предпосылки возникновения права на иск, исследование

оснований возбуждения иска, уполномоченный орган, заинтересованное лицо, интерес государства, презумпция незаконного происхождения имущества.

## THE PECULIARITIES OF FILING THE CLAIM FOR CONFISCATION OF PROPERTY OF ILLICIT ORIGIN IN THE CIVIL PROCEEDINGS OF THE REPUBLIC OF ARMENIA

### **Annotation**

With the introduction of the institution of non-conviction-based forfeiture in the legal system of the RA, a new approach to combatting crime and corruption has been proposed. Under this approach, if the legal origin of property cannot be established, it can be confiscated in favor of the state without a criminal litigation.

The provisions of the law raise concerns, and the constitutionality of the law is currently under examination by the Constitutional Court of the RA. Furthermore, lawsuits for the confiscation of illegally obtained property have been filed in court. During the pre-trial phase of examining a person's property and income before filing the lawsuit, it is crucial to address challenges. Differentiated criteria for assessing the admissibility of such claims must be established.

The purpose of this article is to highlight the specific requirements defined by the Law concerning the form and content of applications for the confiscation of illegally obtained property and propose corresponding procedural consequences. The article explores the prerequisites for the authorized body's right to make a claim and the conditions under which such a claim can be filed. It also discusses the limitations on modifying the basis and object of the claim, derived from the right to claim, due to the unique nature of this institution. The article also emphasizes the measures undertaken by the authorized body to finalize proceedings during the pre-trial stage of investigation, establishing it as a prerequisite for the right to file a claim. The article provides scientific and practical insights that aim to enhance the

development of law enforcement practice and ensure the protection of the rights of interested persons.

**Keywords:** claim for confiscation of property of illicit origin, prerequisites of the right of claim, investigation of grounds for initiating a claim, authorized body, interested person, state interest, presumption of illegal origin of property.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 15.12.2023 թ., պրվել է գրախոսության 17.12.2023 թ., ընդունվել է դադագրության 18.12.2023 թ.:

DOI:10.59560/18291155-2023.4-193



**KARLOS ADAMYAN**

*4<sup>th</sup>-year student of the  
Russian-Armenian University  
Faculty of Jurisprudence*

## **THE CONSTITUENT ASSEMBLY OF AGHVEN AND THE CONSTITUTION CANONICAL AS THE EXPRESSION OF THE ARMENIAN CONSTITUTIONAL THOUGHT**

### **Annotation**

In this work, the author, from a historical, political and legal point of view, represents the Constituent Assembly of Aghven and the Constitution canonical as a result of this assembly. The article presents and reveals the constitutional and legal processes carried out in Armenian society in the 4<sup>th</sup>-6<sup>th</sup> centuries, in particular, the procedure of the Constituent Assembly and the act adopted as a result of this - under the Armenian King Vachagan II. The latter are surprisingly progressive phenomena for their time.

The author's goal is to show the Armenian and international community that in ancient times (4-6 centuries) Armenian society was one of the first to express its constitutional thought by the Constituent Assembly and Constitution.

**Keywords:** the Constitution canonical, rule, Constitution, assembly, Aghven.

### **Introduction**

There are many provisions on constitutions and procedures for their adoption in the modern theory of constitutional law. The current picture has been formed for centuries, but reliable historical sources indicate the presence of such processes in ancient times.

◆ ՍԵՂԵԿԱԳԻՐ 4(112)2023 ◆ ԱՐՀԱՍԱՋՐԱԿԱՆ ՊԱՏՐԱԺ ◆

Before revealing the constitutional and legal content of the Constituent Assembly of Aghveran Constitutional Assembly and the Constitution canonical adopted as a result of this assembly, first of all, it is necessary to briefly address the current constitutional and legal reality.

1. In light of the diversity of the processes of adoption of the Constitution, the basic principles of its adoption can be distinguished: it is adopted by a referendum or a Constituent Assembly, adopted by voting. The publicity of the adoption of the Constitution and the presence of historical and political prerequisites are noteworthy.

The above principles and qualities are also endowed with the Constituent Assembly of Aghven (more on this below).

2. Currently, the Constitution is understood as the basic law of the state, expressing the will and interests of the people or its individual social groups, fixing the most important principles of public order and organization of this state<sup>1</sup>. The Constitution is always a legal act that has many functions such as constituent, organizational, extrapolitical, ideological, legal, etc. Each Constitution has its own figure, which, as a rule, is endowed with a preamble. The main features of the Constitution emphasize its connection as a political and legal document with social development. The role of the Constitution in the real processes (historical and political) of the country's life is extremely important.

The Constitution regulates the most important social relations and is endowed with a number of characteristics, the presence of which is clearly visible in the Constitution canonical (more on this below).

## 1. The Constituent Assembly of Aghven from the historical, political and legal points of view

### ◆ 1.1. Historical overview

According to Armenian historian M. Kagankatvatsi:

*"During the years of the Aghven king Vachagan, there were many contradictions between laymen and bishops, priests and chorepiscopuses, nobles and the common people"<sup>2</sup>.*

<sup>1</sup> See: **Avakian S.A.** The Constitution of Russia: nature, evolution, modernity: 2nd ed. - M.: RYUID, "Sashko", 2000.

<sup>2</sup> See: **Kagankatvatsi M.** The History of the Aghvanian World. Translation, preface and notes by Varag Arakelyan. "Hayastan" production, Yerevan 1969, 321 pages.

That's why he decided to join a large assembly. Following the results of the meeting, 21 rules were adopted by voting, which, by their nature, predetermined and regulated the most important relations and issues of society of that time. The crown of King Vachagan's activity can be considered the canonical Constitution, which has been completely preserved and has reached our days<sup>1</sup>. Whether King Vachagan is considered to be the initiator of the assembly in Armenian historiography, is definitely not clear, since some sources point to Vachagan III the Pious<sup>2</sup>, and other scientific analyses point to Vachagan II<sup>3</sup>. Having studied these works, we believe that the most reliable is the statement according to which the Constituent Assembly was convened by Vachagan II during the reign of Shuphagisho in 372-387 on the first day of June<sup>4</sup>. Based on historical features, in order not to be mistaken, it can be argued that the Constitution canonical was adopted at the turn of 4-6 centuries, in the village of Aghven in the Utik province of the Great Armenia, which indicates that Armenian society had constitutional thought back in those days. According to K. Khahramanyan and V. Hovhannisyam:

*"About 1500 years ago, a remarkable document came into the arena in Armenian reality, which was called the "Constitution canonical".*

It was adopted and approved at a meeting held in the village of Aghven in the Utik province of Great Armenia ...". According to scientists, there is an ancient Armenian manuscript in which the expression "Constitution" was used for the first time in the history of legal thought and that this reality has not become the subject of serious legal research<sup>5</sup>.

<sup>1</sup> See: **Khahramanyan K.** "The Constitution of King Vachagan: The origins of law and order in the NKR". Er., "De facto" IVG, 2010, 48 pages.

A number of other scientists and historians also testify about these events, for example. **A. Sukiasyan, K. Gandzakeci, Strabon, V. Araqelyan, K. Khahramanyan, V. Hovhannisyam, R. Avagyan, Sh. Smbatyan** and others.

<sup>2</sup> See: History of the 10<sup>th</sup> grade. General and natural-scientific-mathematical flows // **A. Melkonyan, H. Avetisyan, A. Movsisyan, P. Hovhannisyam, E. Danielyan, V. Barkhudaryan, G. Harutyunyan, P. Chobanyan**. - Er.: "Zangak". 2014. 240 pages.

<sup>3</sup> See: **Oganesyan S.** The Rules of the Constituent Assembly of Aghven and their plea to the rules of Ashtishat: The Fundamental Scientific Library of the National Academy of Sciences of the Republic of Armenia. Historical and Philological Journal. 1967. 4. pp 265-274.

<sup>4</sup> See: from same source, p. 274.

<sup>5</sup> See: **Avagyan R.** The treasury of Armenian legal thought. Book 1 (B. C. 9 c. - A. C. 19 c.). - Er.: MNII EM-21st century, 2001, 672 pages, 67 NL. 5 cards.

## 1.2. Political review

Touching upon the political foundations, M. Kagankatvatsi explains that after the abolition of the unified Armenian kingdom, Persia and Byzantium took all steps to make the restoration of this kingdom and the establishment of Armenia's independence impossible<sup>1</sup>. This destructive policy in the middle of the 5<sup>th</sup> century raised the Armenian people to their feet. A nationwide liberation movement was born throughout the country, which resulted in the holding of the Constituent Assembly of Aghven and the adoption of the Constitution canonical.

According to historian S. Hovhannisyan:

*"The decisions of the Constituent Assembly of Aghven were based on the rules of the Ashtishat Assembly and the events of Nerses, taking into account the new balance of forces of the secular and spiritual classes of Aghvank and local peculiarities"<sup>2</sup>.*

It should also be noted that the Constituent Assembly of Aghven was held in the kings country house, which, combined with other historical and political circumstances of that time, indicates the relationship of secular and spiritual forces where, before the meeting, secular forces played a dominant role. This is how G. Harutyunyan describes this circumstance:

*"At the end of the fifth century, an extremely important event takes place in Armenian reality from the point of view of the issue under consideration. If in the past the initiator of the convocation of national church assemblies was the church for the purpose of "repairing" all spheres of public life, then in the V century, King Vachagan shows such an initiative"<sup>3</sup>.*

It was for this reason that the clergy were interested in creating a Constituent Assembly. as a result of the latter, more "favorable conditions" were created for the clergy. As V. Arakelyan notes:

*"These rules of the Aghven Assembly are valuable from the point of view that they reveal the rights of the owners of churches and monasteries existing in Armenia in the 5<sup>th</sup> century, the types and amount of tribute to the church, the*

<sup>1</sup> See: **Khahramanyan K.** "The Constitution of King Vachagan: The origins of law and order in the NKR". Er., "De facto" IVG, 2010, 48 pages.

<sup>2</sup> See: **Hovhannisyan S.** The Rules of the Constituent Assembly of Aghven and their plea to the rules of Ashtishat: The Fundamental Scientific Library of the National Academy of Sciences of the Republic of Armenia. Historical and Philological Journal. 1967. 4. pp 265-274.

<sup>3</sup> See: Constitutional Culture: History lessons and challenges of the time. (ed. **G. Danielyan, R. Avagyan, K. Mirumyan**). - Reissue (with modifications) - Er.: 2016, 672 pages.

*amount of punishment for crimes committed, the boundaries of the rights of the people and clergy, and other issues<sup>1</sup>.*

### 1.3. Legal review

As G. Harutyunyan points out:

*"Having studied the nature of national church assemblies, we were convinced that they are essentially constituent assemblies and adopted rules of conduct that are the result of public consent, having universally recognized and priority legal force<sup>2</sup>.*

According to G. Harutyunyan, we note that from a legal point of view, the convocation of the Constituent Assembly of Aghven, the specifics of its holding, the adoption of a decision by voting, the involvement of secular and spiritual strata of society, the content of the adopted rules and the final rule **IB** (see below) resemble modern Constitutions with their specific content, forms of adoption and/or procedures. The announcement by the king and the catholicos about the upcoming assembly and the public summing up of the assembly, naming the meeting by historians and participants in the concept of "constitutional", which is used as such for the first time in comparison with the law-making activity, preceding the meeting, make it possible to establish and fix the existence of constitutional thought and its priority (since there was no such precedent in history). The adoption of a decision by voting, as many types of legal acts are currently being adopted, indicates the existence of manifestations of democracy in Armenian society back in those days and the application of procedures inherent in current constitutions. As K. Khahramanyan notes:

*"With all its characteristics, it (the Constitution canonical. adding by author) can be said, that this is the embodiment of democracy, even by today's standards, it is understandable, bearing in mind historical conditions<sup>3</sup>.*

The presence of these values strengthens the presence of broad secular and spiritual strata at the Constituent Assembly with the opportunity to represent their interests and participate in voting.

<sup>1</sup> See: **Avagyan R.** The treasury of Armenian legal thought. Book 1 (B. C. 9 c. - A. C. 19 c.). - Er.: MNII EM-21st century, 2001, 672 pages, 67 NL. 5 cards.

<sup>2</sup> See: Constitutional Culture. History lessons and challenges of the time. (ed. **G. Danielyan, R. Avagyan, K. Mirumyan**). - Reissue (with modifications) - Er.: 2016, 672 pages.

<sup>3</sup> See: **Khahramanyan K.** "The Constitution of King Vachagan: The origins of law and order in the NKR". Er., "De facto" IVG, 2010, 48 pages.

*"The initiative of King Vachagan was carried out in two stages. The first stage was the development of laws (rules), we can say, the project. The second stage was the discussion and adoption of this project. The first one is appreciated because it summarizes the legal thought and historical traditions not only of this region, but also of the entire Armenia, makes all prominent Armenian thinkers of that time participants in solving the problem. The second stage is appreciated by the fact that it was adopted not by order of the king, but with the participation of representatives of all social strata. (...). That is, in today's presentation, formation of the highest legislative body of the country by the king,"* Khahramanyan K. notes.

In addition to the legal procedures for holding the Constituent Assembly of Aghven, the document adopted at the end of the meeting is of rather great constitutional value and interest (which we will discuss below).

## 2. The Constitution canonical

### 2.1. Preface

*"Every Constitution, law or set of rules is the birth of its era. Mainly in ancient times, they expressed the material and spiritual interests of the ruling secular and spiritual classes, the relationship of forces, their will. They bear the stamp of the legal consciousness of the epoch<sup>2</sup>".*

As already noted, as a result of the Constituent Assembly of Aghven, favorable conditions were created for spiritual forces. For this reason, most of the rules adopted as a result of the Constituent Assembly are explicitly (pronounced) of a spiritual nature, and the rest of the rules, although clearly not of a spiritual nature, however, follow from spiritual (Christian) ideas or are accepted for their implementation, although they regulate secular relations.

- ◆ The Constitution canonical establishes clear rules of conduct, sanctions, incentive norms (see about this below), which are not only norms, but also endowed with the Armenian and high moral value of their era.

*"They played an important role in spiritual and secular life, stemming from the basic principles of the ideological value system of that time<sup>3</sup>. "The*

<sup>1</sup> See: From same source.

<sup>2</sup> See: **Oganesyan S.** The Rules of the Constituent Assembly of Aghven and their plea to the rules of Ashishat: The Fundamental Scientific Library of the National Academy of Sciences of the Republic of Armenia. Historical and Philological Journal. 1967. 4. pp 265-274.

<sup>3</sup> See: Constitutional Culture: History lessons and challenges of the time. (ed. **G. Danielyan, R. Avagyan, K. Mirumyan**). - Reissue (with modifications) - Er.: 2016, 672 pages.

*mentioned legal document, not only by name, but also by the method and content of its adoption, has common facets with the Constitution as a legal document<sup>1</sup>.*

All the rules adopted at the end of the meeting can be found in the work of M. Kagankatvatsi "History of the Aghvanian World"<sup>2</sup>, and below we will consider their most attention-grabbing passages.

## 2.2. Canons analysis

*"When a priest and a deacon are ordained, the priest should be given four coins, and the deacon two"<sup>3</sup>.*

The mentioned Constitution is rule **B** of the canon, which, in fact, establishes social guarantees for the spiritual class. A similar social guarantee, but with a different form of payment (natural), also establishes rule **A**. This logic continues in rules **G**, **D** and **E**. They establish requirements for the secular class, to transfer some material mores to the clergy.

The latter also testifies to the systematic and logical arrangement of the Constitution canonical.

Rule **Y** defines:

*"If a Christian fights and sheds blood, they represent the bishop and punish according to the laws".*

Despite the fact that there was no hierarchy of legal norms at the time of the adoption of the rules, nevertheless, there was such a perception in the constitutional thought of the Armenian people (it is clear from the wording that the constitutional rule is above the law). In addition to establishing a sanction, this rule differs in that it used the concept of "law". This indirectly suggests that the Constitution canonical have a higher legal force than the laws (since the law is left to more careful regulation of these relations), and this once again confirms the rules, in the modern sense, are constitutional. As you can see, the subjects carrying out the punishment are spiritual forces, which follows from the political foundations of the Constituent Assembly. And also from these foundations come the rules **JE**, **JZ**, **JE** and others aimed at protecting spiritual representatives.

<sup>1</sup> See: **Khahramanyan K., Hovhannisyam V.** The 1500-year-old Armenian Constitution. Circumstances and significance of acceptance; Yerevan, 1999, p. 17.

<sup>2</sup> See: **Kagankatvatsi M.** History of the Aghvanian World. Translation, preface and notes by Varag Arakelyan. "Hayastan" production, Yerevan 1969, 321 pages.

<sup>3</sup> See: from same source, p. 66.

*"No man should get a wife, a relative of the third navel" and should not marry the wife of a brother", "The one who eats ugly, and the one who eats meat while keeping post, works on sunday and does not go to church, the priest, united with the people, punishes".*

Accordingly, the rules of J and JG establish rules of conduct in the spheres of personal and family life, making the Constitution canonical act, regulating multifaceted and multilevel relations.

Of particular interest is JA rule with the following content:

*"He who lets a woman alone without a reason and marries without a crown, who is a criminal and a murderer or is engaged in witchcraft, must attracted to king (underline by author) by binding him in order to approach and kill maliciously".*

Having studied the rule in a systematic way with the rest of the rules, one can come to the conclusion that when the question arises of depriving a person of life, the "presence" of the king is necessary. That is, despite the existence of the death penalty and the historical era, the Constitution canonical established a high figure and guarantees of the protection of the right to life at the level of the first person of the country.

Rule IB is also noteworthy, which by its nature resembles the preamble of the Constitution, despite the fact that it is placed in the end of the Constitution canonical. This fact in no way detracts from the preamble to rule IB. It is endowed with the following content:

*"These conditions were written by bishops, priests, nobles in the presence of the king. May our bishops, priests and the church bless the king with the queen, his son and the whole earth. May those who participate in this meeting also be blessed. This order was sealed with rings by the commander of the king, Muzik, the overseer of the palace, Mirkhorik, and the heads of the family, Marut, Tiradom (...) all the nobles of Aghvanks, and for greater authenticity of the inscription was also sealed with the ring of the king of Aghvanks Vachagan".*

In addition to the fact that this is, in fact, a preface to the Constitution, the above-mentioned rule directly indicates and fixes its own legitimacy, communicating the rules inherent in the Constitution, the highest legal force.

G. Harutyunyan addressed to rule IB as follows:

*"The procedure for guaranteeing the validity of the adopted document is also worthy of attention, when the Constitution canonical ends with the following article: (...) The expression "the order was sealed with rings" simply indicates*

*confirmation of the fact that the accepted norms are mandatory. It is also important that special attention was paid to the issue of the validity of rules that are the result of broad public consent and have a priority character"<sup>1</sup>.*

*"The legal norms of the Constitution canonical seem to be different in their legal nature and content compared to modern constitutional norms, nevertheless, in a specific historical period and in the conditions of specific social realities, they had an equally and perhaps more important role and law enforcement significance to guarantee the orderly development of public life"<sup>2</sup>.*

## Conclusion

1. In the 4th-6th centuries, the Armenian society carried out constitutional processes in the form of the Constituent Assembly of Aghven and the adoption of the Constitution canonical.
2. These processes were endowed with historical, political and legal prerequisites, and are adopted by the national agreement.
3. The process of the Constituent Assembly of Aghven is endowed with the features of the current constitutional and legal processes.
4. The Constitution canonical, with its adoption procedure and content (rules and preamble), is unequivocally considered, ahead of its time, the Constitution.
5. The adopted rules by their legal force prevailed over other acts and are characterized as constitutional.
6. In fact, it can be argued that the constitutional and legal processes studied in the work, express the Armenian constitutional thought, are among the first and should find a place in the doctrine of the current constitutional law.

## List of sources used

1. **M. Kagankatvatsi.** The History of the Aghvanian World. Translation, preface and notes by Varag Arakelyan. "Hayastan" production, Yerevan 1969, 321 pages.

Original version: **Ա. Կագանկատվածի.** Պատմություն Արվանից Աշխարհի. Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները

<sup>1</sup> See: Constitutional Culture: History lessons and challenges of the time. (ed. G. Danielyan, R. Avagyan, K. Mirumyan). - Reissue (with modifications) - Er.: 2016, 672 pages.

<sup>2</sup> See: From same source, p. 96.

Վարագ Առաքելյանի. «Հայաստան» հրատարակություն, Երևան 1969, 321 էջ:

2. History of the 10th grade. General and natural-scientific-mathematical flows // A. Melkonyan, H. Avetisyan, A. Movsisyan, P. Hovhannisyan, E. Danielyan, V. Barkhudaryan, G. Harutyunyan, P. Chobanyan. - Er.: "Zangak". 2014. 240 pages.

Original version: Հայոց պատմություն 10-րդ դաս. Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր // Ա. Մելքոնյան, Հ. Ավետիսյան, Ա. Մովսիսյան, Վ. Բարխուդարյան, Գ. Հարությունյան, Է. Դանիելյան, Գ. Չօբանյան. - Եր.: «Զանգակ». 2014. 240 էջ:

3. S. **Hovhannisyan**. The Rules of the Constituent Assembly of Aghven and their plea to the rules of Ashtishat: The Fundamental Scientific Library of the National Academy of Sciences of the Republic of Armenia. Historical and Philological Journal. 1967. 4. pages 265-274.

Original version: Տե՛ս. Ս. Հովհաննիսյան. Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները և նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ. ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան. Պատմա-բանասիրական հանդես. 1967. Էջեր՝ 265-274:

4. **Avagyan R.** The treasury of Armenian legal thought. Book 1 (B. C. 9 c. - A. C. 19 c.). - Er.: MNII EM-21st century, 2001, 672 pages, 67 NL. 5 cards.

Original version: Ավագյան Ռ. Հայ իրավական մտքի գանձարան: Գիրք 1 (մ.թ.ա. 9դ. – մ.թ. 19դ.). – Եր.: ՄՆԻԻ ԵՍ-21 Դար, 2001. – 672 էջ, 67 նլ., 5 քարտեզ:

5. **Khahramanyan K.** "The Constitution of King Vachagan: The origins of law and order in the NKR". Er., "De facto" IVG, 2010, 48 pages.

Original version: Ղահրամանյան Կ. «Վաշագան թագավորի սահմանադրությունը: Իրավակարգի ակունքները ԼՂՀ-ում». Եր., «Դեմքուն» ԻՎԳ, 2010 – 48 էջ:

6. The Constitution of King Vachagan. From Artsakh to Artsakh / compiled by Armen Davtyan. - Er. 2017. - 248 pages.

Original version: Վաշագան Բարեպաշտ թագավորի սահմանադրությունը. Արցախից Արցախ / կազմող՝ Արմեն Դավթյան. – Եր: Կետ, 2017. – 248 էջ:

7. **Khahramanyan K., Hovhannisyan V.**, The 1500-year-old Armenian Constitution: Circumstances and Significance of Adoption; Yerevan, 1999, p. 17.

Original version: Ղահրամանյան Կ., Հովհաննիսյան Վ., 1500-ամյա հայկական Սահմանադրությունը. Ընդունման հանգամանքները և նշանակությունը. Երևան, 1999, էջ 17:

8. **Avakian S.A.** The Constitution of Russia: nature, evolution, modernity: 2nd ed. - M.: RYUID, "Sashko", 2000.

Original version: **Ավակյան Ս.Ա.** Конституция России: природа, эволюция, современность: 2-е изд. - М.: РЮИД, "Сашко", 2000.

9. Constitutional Culture: History lessons and challenges of the time. (ed. G. Danielyan, R. Avagyan, K. Mirumyan). - Reissue (with modifications) - Er.: 2016, 672 pages.

## **ԱՂՎԵՆԻ ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ**

### **Ամփոփագիր**

Սույն աշխատանքում հեղինակը պատմական, քաղաքական և իրավական տեսանկյունից ներկայացնում է Աղվենի սահմանադիր ժողովը և դրա արդյունքում ընդունված Սահմանադրություն կանոնականը: Ներկայացվում և բացահայտվում են 4-6-րդ դարերում իրականացված սահմանադրահիրավական գործընթանցները հայ հասարակությունում, մասնավորապես, սահմանադիր ժողովի ընթացակարգը և դրա արդյունքում ընդունված ակտը՝ հայոց արքա Վաչագան 2-րդի օրոք: Վերջիններս իր ժամանակի համար զարմանալիորեն առաջադիմական երևույթներ են:

Հեղինակի նպատակն է ցույց տալ հայ և միջազգային հանրությանը, որ դեռևս հին ժամանակներում (4-6-րդ դարեր) հայ հասարակությունը ունեցել և առաջիններից մեկն է արտահայտել իր սահմանադրական միտքը՝ սահմանադրական ժողովի և սահմանադրության տեսքով:

**Հիմնաբառեր.** սահմանադրություն կանոնական, կանոն, սահմանադրություն, ժողով, Աղվեն:

## УЧРЕДИТЕЛЬНОЕ СОБРАНИЕ В АГВЕНЕ И КАНОНИЧЕСКАЯ КОНСТИТУЦИЯ КАК ВЫРАЖЕНИЕ АРМЯНСКОЙ КОНСТИТУЦИОННОЙ МЫСЛИ

### Аннотация

В данной работе автор с исторической, политической и правовой точки зрения представляет Учредительное собрание в Агвене и принятую в результате этого Каноническую конституцию. Представляются и раскрываются конституционно-правовые процессы, осуществленные в IV-VI веках в армянском обществе, в частности, процедура Учредительного собрания и принятая в результате этого по инициативе армянского царя Вачагана II Каноническая конституция. Последние являются удивительно прогрессивными для своего времени явлениями.

Цель автора - показать армянскому и международному сообществу, что еще в древние времена (4-6 вв.) армянское общество одним из первых выразило свою конституционную мысль в виде конституционного совета и конституции.

**Ключевые слова:** Каноническая конституция, правило, Конституция, собрание, Агвен.

Հոդվածը հանձնված է իմրագրություն 29.10.2023 թ., պրել է գրախոսության 06.12.2023 թ., ընդունվել է պահագրության 06.12.2023 թ.:



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄ**

**ՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ԳՈՀԱՐ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՑԻԿԱՆ ՕՐԵՆՍԳՐքԻ 344-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

7 նոյեմբերի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահոյ), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում՝ դիմողների՝ Ռուբեն Գրիգորյանի և Գոհար Գալստյանի ներկայացուցիչ Ա. Զեյնալյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ռուբեն Գրիգորյանի և Գոհար Գալստյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Քաղաքացիական օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել 1998 թվականի հունիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին:

Քաղաքացիական օրենսգրքի «Պահանջներ, որոնց վրա հայցային վաղեմությունը չի տարածվում» վերտառությամբ 344-րդ հոդվածը սահմանում է.

«Հայցային վաղեմությունը չի տարածվում»

1) անձնական ոչ գույքային իրավունքների և այլ ոչ նյութական բարիքների պաշտպանությանն ուղղված պահանջների վրա, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

2) ավանդները վերադարձնելու վերաբերյալ ավանդատուների կողմից բանկին ներկայացվող պահանջների վրա.

3) քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու պահանջների վրա: Սակայն նման վնասի հատուցման իրավունքի ծագման պահից երեք տարի անցնելուց հետո ներկայացված պահանջներն անցյալ ժամանակի համար բավարարվում են ոչ ավելի, քան հայցի ներկայացմանը նախորդած երեք տարիների համար.

4) սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ամեն մի խախտման վերացման պահանջների վրա, թեկուց այդ խախտումները կապված չեն եղել տիրապետումից գրկելու հետ (հոդված 277).

5) սեփականատիրոջ՝ պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձանց ակտը, որով խախտվել են սեփականատիրոջ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքները, անվավեր ճանաչելու մասին պահանջների վրա.

6) օրենքով սահմանված այլ պահանջների վրա»:

Ընդունումից ի վեր Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածը փոփոխությունների չի ենթարկվել:

Գործի քննության առիթը Ռուբեն Գրիգորյանի և Գոհար Գալստյանի (այսուհետ նաև՝ Դիմողներ)՝ 2023 թվականի հունիսի 22-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև Սահմանադրական դատարանի կողմից պահանջված և ստացված թիվ ԵԴ/34667/02/19 քաղաքացիական գործը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

### **1. Սահմանադրական վեճի նախապատմությունը**

Դիմող Գոհար Գալստյանը 1964 թվականից, իսկ դիմող Ռուբեն Գրիգորյանը 1986 թվականից հաշվառվել և բնակվել են ք. Երևան, Փավստոս Բուզանդի 11, բնակարան 12 հասցեում գտնվող բնակարանում:

1998 թվականի փետրվարի 25-ին Կառավարությունն ընդունել է թիվ 114 որոշումը, որով Դիմողները կարող էին գրանցել ք. Երևան, Փավստոս Բուզանդի 11, բնակարան 12 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրենց սեփականության իրավունքը:

Դիմող Գոհար Գալստյանը, նշալ որոշման համաձայն, 1998 թվականի մայիսի 25-ին դիմել է Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով, սակայն պատասխան չի ստացել:

Կառավարության 2002 թվականի օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն որոշմամբ Դիմողների նշալ բնակարանը հայտնվել է հասարակության և պետության կարիքների համար իրացման գոտում, որի ուժով դրա նկատմամբ Դիմողների սեփականության իրավունքի գրանցումը սահմանափակվել է:

Կառավարության 2003 թվականի մայիսի 15-ի թիվ 1748-Ն որոշմանը (3-րդ կետ) համապատասխան՝ Դիմողների բնակարանի նկատմամբ իրենց սեփականության իրավունքը ենթակա չի եղել օրինականացման:

Դիմող Ռուբեն Գրիգորյանը 2004 թվականի հոկտեմբերի 29-ին դիմել է Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ բնակարանն օրինականացնելու խնդրանքով, սակայն 2004 թվականի նոյեմբերի 1-ին ստացել է մերժում այն պատճառաբանությամբ, որ ինքնակամ կառուցը գտնվում է պետության կարիքների համար վերցվող իրացման գոտում:

Դիմող Ռուբեն Գրիգորյանը դիմել է Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ պետական մարմնի անգործությունը, գործողությունն օրենքին հակասող և անվավեր ակտ ճանաչելու, Երևանի Փավստոս Բուզանդի փողոց 11, թիվ 12 բնակարանի նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, և դատարանի 2005 թվականի մարտի 16-ի որոշմամբ Դիմողի պահանջը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Կառավարության 2002 թվականի օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն որոշմամբ նրանց բնակարանը ներառվել է հասարակության և պետության կարիքների համար գույքի իրացման գոտում:

Դիմոդները 2005 թվականի հունիսի 15-ին արագացված կարգի կիրառմամբ վտարվել են վերը նշված հասցեում գտնվող իրենց բնակարանից այն պատճառաբանությամբ, որ Կառավարության թիվ 950 որոշմամբ սահմանվել է Երևան քաղաքի Հյուսիսային պողոտայի գոտում գտնվող հողամասերն ու անշարժ գույք գնելու, վերցնելու, գնային ծնավորման իրացման կարգ, իսկ Կառավարության 2002 թվականի օգոստոսի 1-ին թիվ 1151-Ն որոշմամբ հաստատվել է Երևանի քաղաքային համայնքի վարչական սահմանում պետության կարիքների համար անշարժ գույքի (հողամասեր, շենքեր և շինություններ) օտարման գոտի, որում ներառված է նաև Երևան քաղաքի Փավստոս Բուզանդի 11, 12 բնակարան հասցեում գտնվող գույքը:

Դիմողներն օտարված բնակարանի դիմաց պետությունից փոխհատուցում չեն ստացել այն պատճառաբանությամբ, որ բնակարանն օրինականացված չէ, և Դիմողները չունեին դրա նկատմամբ սեփականության իրավունք:

2006 թվականի ապրիլի 18-ին Սահմանադրական դատարանի ՍՊՌ-630 որոշմամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր են ճանաչվել Դիմողների բնակարանի օտարման հիմքում ընկած օտարման իրավահարաբերությունների պահին գործող Քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածը, Հողային օրենսգրքի 104-րդ, 106-րդ, 108-րդ հոդվածները և Կառավարության 2002 թվականի օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն որոշումը:

2019 թվականի հոկտեմբերի 15-ին Դիմողները հայցադիմում են ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության ի դեմս Ֆինանսների նախարարության՝ պետության կարիքների համար օտարված գույքի դիմաց նախնական և համարժեք փոխհատուցում տրամադրելու պահանջի մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (քաղաքացիական գործ թիվ ԵԴ/34667/02/19), բավարարելով Կառավարության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը, 2022 թվականի մարտի 3-ին կայացրել է վճիռ, որով Դիմողների հայցը մերժվել է՝ Քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա՝ հայցային վաղեմությունը լրացած լինելու հիմքով:

Դիմողները 2022 թվականի հունիսի 11-ին ներկայացրել են վերաքննիչ բողոք, որը վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ մերժվել է նոյն պատճառաբանությամբ, իսկ Դիմողների՝ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 5-ի որոշման դեմ ներկայացված վճուարեկ բողոքը Վճուարեկ դատարանը վարույթ ընդունել մերժել է 2023 թվականի մարտի 22-ի որոշմամբ:

## 2. Դիմողների դիրքորոշումները

Դիմողները նշում են, որ իրենց համար բացասական իրավական հետևանքներ է առաջացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից իրենց նկատմամբ կիրառված և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 3-ի վճիռ, վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 5-ի որոշման մեջ անմիջականորեն վկայակոչված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածը:

Դիմողները գտնում են, որ Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածը չի նախատեսում «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքով նախատեսված դեպքերում սեփականության դիմաց նախնական և համարժեք փոխհատուցում ստանալու հայցա-

պահանջների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու բացառություն, որպիսի պարագայում դատարանները, մասնավորապես՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի մարտի 3-ի վճռով և վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ հնարավորություն չեն ունեցել ապահովելու իրենց՝ դատարանի մատչելիության իրավունքը և սեփականության դիմաց նախնական և համարժեք փոխհատուցում ստանալու շուրջ վեճի՝ ըստ էության քննությունը դատարանում:

Այն դեպքերում, եթե առկա են իրավունքի շարունակական խախտում ենթադրող հայցապահանջի նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի կիրառում և հայցի ըստ էության քննության առնելուց դատարանների հրաժարում, ապա դա հանգեցնում է դատարանի մատչելիության իրավունքի խախտման: Հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի զարգացրած իրավունքին՝ Դիմողները նշում են, որ իրավունքի շարունակական խախտման իրավիճակ է ոչ միայն Քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածում նկարագրված իրավիճակը, այլև՝ հանրային գերակա շահի հիմքով սեփականություն օտարելու դիմաց, պետության կարիքների համար օտարված գույքի դիմաց՝ նախնական համարժեք փոխհատուցում վճարելուց կամ տրամադրելուց հրաժարվելու իրավիճակը:

Դիմողները գտնում են նաև, որ Քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածում նկարագրված իրավիճակի առարկայով հայցապահանջների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելուց բացառությունը սահմանված է Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածում, սակայն այդ հոդվածը չի սահմանել նոյնախի բացառություն շարունակական իրավունքի այնպիսի խախտման դեպքի համար, ինչպիսին է հանրության գերակա շահերի հիմքով պետության կարիքների համար սեփականության օտարման դիմաց նախնական համարժեք փոխհատուցում տրամադրելուց հրաժարվելը:

Ըստ Դիմողների՝ խախտվել է Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրենց սեփականության դիմաց նախնական և համարժեք փոխհատուցում ստանալու իրավունքը, քանի որ այս իրավունքը նախատեսում է ոչ միայն արդեն իսկ պետության կողմից ճանաչված սեփականության, այլ նաև դրա նկատմամբ Դիմողների ունեցած իրավաչափ ակնկալիքը:

Դիմողների պնդմամբ՝ իրենց կողմից ներկայացված հայցադիմումի նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի կիրառումը հանգեցրել է իրենց հայցապահանջի ըստ էության՝ բովանդակային քննության մերժման՝ դատարանի մատչելիության իրավունքի խախտման:

Դիմողները գտնում են, որ օրինականության սկզբունքը խախտվել է այն պատճառով, որ Քաղաքացիական օրենսգրքի հայցային վաղեմության մասին դրույթները չեն կարող կիրառվել Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ

մասով նախատեսված իրավահարաբերությունների նկատմամբ, քանի որ դրանք կրել են տևական և շարունակական բնույթ:

Դիմողների պնդմամբ՝ իրավական բացի պատճռով դատարանները չեն կարողացել ապահովել Դիմողների սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված հայցապահնջի բովանդակային՝ ըստ էության քննությունը: Դիմողները գտնում են, որ հայցային վաղեմության ինստիտուտի նախատակն իրավական պետությունում իրավական որոշակիությունը, կանխատեսելիությունը և անվտանգությունն է, իսկ տևական և շարունակական խախտման դեպքում իրավական որոշակիության մասին խոսք լինել չի կարող, քանի որ սույն դեպքում առաջնահերթությունն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքն է:

### **3. Պատասխանողի դիրքորոշումները**

Ազգային ժողովը (այսուհետ նաև՝ «Պատասխանող»), հղում կատարելով Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան որոշումներին, գտնում է, որ Դիմոդների կողմից վիճարկվող՝ Քաղաքացիական օրենսգործի իրավադրույթում բացակայում են իրավական անորոշությունն ու օրենսդրական բացը:

Պատասխանողը նշում է, որ «հայցային վաղեմության չտարածումը սեփականատիրոց կամ այլ տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքի խախտումների վերացման պահանջների վրա (նեգատոր հայց) պայմանավորված է այդ խախտումների տևական և շարունակական լինելու պայմաններով, իսկ սեփականատիրոց կամ այլ տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ կապված իրավունքի խախտումների վերացման պահանջների (վինդիկացիոն հայցերի) նկատմամբ հայցային վաղեմության տարածումը բացատրվում է հետևյալ պայմաններով:

- իրավական որոշակիության և վերջնականության ապահովումը,
- հնարավոր պատասխանողներին հնացած և հետևաբար դժվարությամբ վիճարկելի պահանջներից պաշտպանությունը,
- անարդար որոշումների նախականիում այն դեպքերում, երբ դատարանից պահանջվի լուծել պահանջը վաղ անցյալում տեղի ունեցած փաստերի հաստատման միջոցով և այնպիսի ապացույցներով, որոնք զգայի ժամանակ անցնելու պատճառով այլևս անարժանահավատ կամ ոչ ամբողջական են դարձել,
- կանոնակարգել քաղաքացիական շրջանառությունը,
- ստեղծել իրավական կապերի որոշակիություն և կայունություն,
- ապահովել իրավահարաբերության մասնակիցների կարգապահությունը,
- ապահովել քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտների իրավունքների և շահերի ժամանակին պաշտպանությունը,
- ապահովել քաղաքացիական իրավահարաբերության որոշակիությունը և կայունությունը»:

Անդրադառնալով օրենսդրական բացին՝ Պատասխանողը նշում է, որ ըստ էության, Դիմողների պնդումները միտքած են հայցային վաղեմության կիրառման նոր կարգավորումներ սահմանելուն, այլ ոչ թե արդեն իսկ առկա կարգավորումների շրջանակում օրենսդրական բացին:

Ամփոփելով՝ Պատասխանողը գտնում է, որ Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:

#### **4. Սահմանադրական վեճի քննության շրջանակը և պարզման ենթակա հանգամանքները**

Սույն գործը Սահմանադրական դատարանը քննում է Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիմքով՝ Դիմողների կողմից ներկայացված անհատական դիմումի հիման վրա: Հետևաբար՝ սույն գործով սահմանադրական վեճի շրջանակը որոշելու նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում հստակեցնել իրավահարաբերությունների տեսակը՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասից բխող՝ գույքի օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման պահանջը, որով սահմանափակվում է սույն գործով քաղաքացիական իրավունքում նման պահանջների նկատմամբ հայցային վաղեմության սահմանադրականության սուուղումը, և, հաջորդաբար՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասից բխող՝ սեփականության դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման պահանջի ծագման համար հիմք ծառայած իրավակարգական այն հատվածը, որը ներառում է Դիմողների բնակարանի օտարման իրավահարաբերությունները: Մասնավորապես:

**4.1.** Սույն սահմանադրական վեճը ծագել է Դիմողների բնակարանի՝ սույն որոշման 1-ին կետում նկարագրված օտարման գործընթացում տեղ գտած իրավահարաբերություններից, որոնք հստակորեն տարբերակվում են քաղաքացիական իրավունքով կարգավորվող գույքային իրավահարաբերությունների մյուս խմբերից՝ հաշվի առնելով (1) սույն իրավահարաբերության սուրբեկալին կազմը, որը Դիմողների գույքի օտարման պահին գործող օրենսդրությամբ սահմանափակվում էր ֆիզիկական կամ իրավաբանական անձ և պետություն շրջանակով, երբ գույքի օտարման պահանջ կարող էր ներկայացնել բացառապես Հայաստանի Հանրապետությունը, և (2) սույն իրավահարաբերության բնույթը, որը կարգավորող քաղաքացիական օրենսդրության դրույթները բացառություն էին քաղաքացիական օրենսդրության հիմքում ընկած՝ կարգավորվող հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության (Քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մաս) ընդհանուր սկզբունքներից:

Հետևաբար՝ վերը նշված իրավահարաբերությունների առանձնահատուկ բնույթը պայմանավորում է սույն սահմանադրական վեճի բովանդակային շրջանակը, որն է՝ բացառապես Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ

մասից բխող հանրության գերակա շահի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության կամ դրա օրինական ակնկալիքի օտարման հարաբերություններում օտարված գույքի դիմաց փոխառուցման պահանջի նկատմամբ հայցային վաղեմության սահմանադրականության ստուգումը:

Հետայսու սույն որոշմամբ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասից բխող հանրության գերակա շահի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության կամ դրա օրինական ակնկալիքի օտարման համատեքստում Սահմանադրական դատարանը կիրառելու է «սեփականություն» ընդհանրական տերմինը՝ խմբագրական նկատառումներով՝ դրա ներքո նկատի ունենալով՝ ինչպես Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված «սեփականությունը», այնպես է՝ սեփականության իրավունքի օրինական ակնկալիքի ներքո գույքը՝ համաձայն 2008 թվականի մարտի 18-ի ՍԴՈ-741 (կետ 8), 2015 թվականի դեկտեմբերի 1-ի ՍԴՈ-1238 (կետ 7), 2016 թվականի դեկտեմբերի 6-ի ՍԴՈ-1326 (կետ 6), 2018 թվականի հուլիսի 10-ի ՍԴՈ-1424 (կետ 4.2), 2019 թվականի մարտի 19-ի ՍԴՈ-1448 (կետ 4.4), 2021 թվականի մարտի 9-ի ՍԴՈ-1583 (կետ 4.2), 2021 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-1609 (կետ 4.2), 2021 թվականի սեպտեմբերի 27-ի ՍԴՈ-1611 (կետ 6.2), 2021 թվականի նոյեմբերի 9-ի ՍԴՈ-1617 (կետ 3) և 2021 թվականի նոյեմբերի 30-ի ՍԴՈ-1618 (կետ 4.5) որոշումների:

**4.2.** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն սահմանադրական վեճը ծագել է սույն որոշման 1-ին կետում նկարագրված՝ Դիմողների բնակարանի օտարման գործընթացում տեղ գտած՝ հասարակության և պետության կարիքների համար գույքի օտարման իրավահարաբերություններից: Առհասարակ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման իրավահարաբերությունների կարգավորման պատմությունն ունի ժամանակագրական երեք՝ տարբեր օրենսդրական ոեժմներ նախատեսող ժամանակահատված:

Վերոհիշյալ կարգավորումների առաջին ժամանակահատվածը ներառում է 1999 թվականի հունվարի 1-ից (Քաղաքացիական օրենսգրքի ուժի մեջ մտնելու պահից) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը, երբ Սահմանադրական դատարանի 2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշմամբ ուժը կորցրին հասարակության և պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունները կարգավորող առանցքային իրավական հետևյալ դրույթները .

ա) Քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածը՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների կանոնակարգման առումով Սահմանադրության

(2005 թվականի փոփոխություններով) 3-րդ, 8-րդ (1-ին մաս), 31-րդ (3-րդ մաս) և 43-րդ հոդվածների պահանջներին չհամապատասխանելու հիմքով.

բ) Հողային օրենսգրքի 104-րդ հոդվածը՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների կանոնակարգման առումով Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 8-րդ (1-ին մաս), 31-րդ (3-րդ մաս) և 43-րդ հոդվածների պահանջներին չհամապատասխանելու հիմքով.

գ) Հողային օրենսգրքի 106-րդ հոդվածը՝ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 31-րդ (3-րդ մաս), 43 և 83.5-րդ (1-ին և 2-րդ կետեր) հոդվածների պահանջներին չհամապատասխանելու հիմքով.

դ) Հողային օրենսգրքի 108-րդ հոդվածը՝ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 3-րդ, 31-րդ (3-րդ մաս) և 43-րդ հոդվածների պահանջներին չհամապատասխանելու հիմքով.

ե) Կառավարության 2002 թվականի օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն որոշումը՝ «Երևանի կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին», հիմքում ունենալով Քաղաքացիական օրենսգրքի 218-րդ և Հողային օրենսգրքի 104-րդ հոդվածների դրույթները, հասարակության և պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների ենթաօրենսդրական կարգավորման առումով Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 3-րդ, 8-րդ (1-ին մաս), 31-րդ (3-րդ մաս), 43-րդ, 83.5-րդ (1-ին և 2-րդ կետեր) և 85-րդ (2-րդ մաս) հոդվածների պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման իրավահարաբերությունների հաջորդ՝ երկրորդ ժամանակահատվածը ներառում է Սահմանադրական դատարանի 2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման եզրափակիչ մասի 4-րդ կետով նախատեսված՝ Քաղաքացիական և Հողային օրենսգրքերի վերոհիշյալ դրույթների և Կառավարության 2002 թվականի օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն որոշման ուժը կորցնելու վերջնաժամկետից՝ 2006 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2006 թվականի դեկտեմբերի 29-ը (մինչև «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի (<Օ-185-Ն> ուժի մեջ մտնելու պահը), եթե հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման իրավահարաբերությունները չեն ունեցել որևէ օրենսդրական կարգավորում):

Վերջապես, հասարակության և պետության կարիքների կամ հանրային գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման իրավահարաբերությունների կարգավորման հաջորդ՝ երրորդ ժամանակահատվածը ներառում է 2006 թվականի դեկտեմբերի 30-ից մինչ օրս ժամանակահատվածը, որը ներառում է «Հասարակության և պետության կարիք-

ների համար սեփականության օտարման մասին» օրենքի (<Օ-185-Ն>) ուժի մեջ լինելու ժամանակահատվածը:

Հաշվի առնելով սույն գործի՝ անհատական դիմումի հիման վրա իրավադրույթների սահմանադրականության կոնկրետ ստուգման սահմանադրական վեճի բնույթը և դրանով քննվող վեճի շրջանակի համար այն որոշիչ հանգամանքը, որ Դիմողների բնակարանի՝ սույն որոշման 1-ին կետում նկարագրված օտարումը տեղի է ունեցել հասարակության և պետության կարիքների համար գույքի օտարման իրավահարաբերությունների վերը նկարագրված ժամանակահատվածներից 1999 թվականի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը, Սահմանադրական դատարանը սույն սահմանադրական վեճի շրջանակը սահմանափակում է՝ դրանում ներառելով միայն Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասից բխող հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման այն իրավահարաբերություններում օտարված սեփականության դիմաց փոխհատուցման պահանջի նկատմամբ հայցային վաղեմության սահմանադրականության ստուգման շրջանակը, որոնք կարգավորվել են վերը նկարագրված առաջին ժամանակահատվածում գործող իրավակարգավորումներով, ինչը ժամանակագրորեն ներառում է 1999 թվականի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը:

**4.3.** Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Դիմողների առաջադրած սահմանադրական վեճի բովանդակությունը՝ հանրային գերակա շահերի (հասարակության և պետության կարիքների) ապահովման նպատակով գույքի օտարման դիմաց փոխհատուցման պահանջի նկատմամբ հայցային վաղեմության սահմանադրականությունը, առնչվում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ընթացակարգային երաշխիքների պաշտպանության տիրույթին: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանի կողմից սույն սահմանադրական վեճի շրջանակներում քննվող վիճելի իրավադրույթի սահմանադրականությունը ենթակա է ստուգման՝ վերջինիս՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված երաշխիքներին համապատասխանության տեսանկյունից:

**4.4.** Միաժամանակ, Դիմողների առաջադրած սահմանադրական վեճի բովանդակությունը՝ հանրային գերակա շահի (հասարակության և պետության կարիքների) ապահովման նպատակով գույքի օտարման դիմաց փոխհատուցման պահանջի նկատմամբ հայցային վաղեմության սահմանադրականությունը, լինելով Սահմանադրությամբ նախատեսված սեփականության իրավունքի պաշտպանության վերաբերյալ դրույթների ենթակայության իրավական խնդիր, հայցային վաղեմության հետևանքային ազդեցությամբ հանգեցնում է նաև Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արդար դատաքննության իրավունքի սահմանափակման՝

դատարան դիմելու իրավունքի կամ արդարադատության մատչելիության սահմանափակման ձևով: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանի կողմից սույն սահմանադրական վեճի շրջանակում քննվող վիճարկող իրավադրույթի սահմանադրականությունը ենթակա է ստուգման նաև վերջինիս՝ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին՝ սույն գործի շրջանակում սեփականության իրավունքի ընթացակարգային պաշտպանությանը խաչվող կառուցակարգին համապատասխանության նպատակով:

**4.5. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը սույն սահմանադրական վեճի շրջանակը սահմանում է հետևյալ հարցադրումներով.**

- արդյո՞ք Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով (1995 թվականի Սահմանադրության 28-րդ հոդվածի 4-րդ նախադասության իմաստով՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման) 1999 թվականի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը գործող իրավադրույթներով կարգավորվող իրավահարաբերություններից բխող վեճերում օտարված սեփականության դիմաց նախնական համարժեք փոխհատուցման սահմանադրական երաշխիքը ենթակա է սահմանափակումների հանրային իշխանության կողմից, և

- եթե նախորդ հարցի պատասխանը դրական է, ապա արդյո՞ք Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածով նախատեսված հայցային վաղեմության բացառման ցանկում Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով (1995 թվականի Սահմանադրության 28-րդ հոդվածի 4-րդ նախադասության իմաստով՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման) 1999 թվականի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը գործող իրավադրույթներով կարգավորվող իրավահարաբերություններից բխող վեճերում օտարված սեփականության դիմաց նախնական համարժեք փոխհատուցման պահանջը չնախատեսելը համապատասխանում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասին՝ օտարվող գույքի դիմաց «նախնական և համարժեք փոխհարուցման» պահանջի սահմանափակման համաչափության տեսանկյունից, և

- եթե առաջին հարցի պատասխանը դրական է, ապա արդյո՞ք Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածով նախատեսված հայցային վաղեմության բացառման ցանկում Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով (1995 թվականի Սահմանադրության 28-րդ հոդվածի 4-րդ նախադասության իմաստով՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման) 1999 թվականի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը գործող իրավադրույթներով կարգավորվող իրավահարաբերություններից բխող վեճերում օտարված սեփականության դիմաց նախնական համարժեք փոխհատուցման պահանջը չնախատեսելը համապատասխանում է Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին՝



թյունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Սեփականության հիմնական իրավունքի պաշտպանության նպատակով սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքներն ամրագրվել են նաև Սահմանադրության 60-րդ հոդվածով:

Վերը նշվածից բացի, Սահմանադրական դատարանը կարևոր է համարում արձանագրել, որ սեփականության հիմնական իրավունքը, թեպետ որոշ բովանդակային փոփոխություններով, սակայն որպես հիմնական իրավունքի իրավական ամրագրում 1995 թվականից մինչ այժմ կայուն հետևողականությամբ տեղ է գտել Սահմանադրության մեջ և դրանում կատարված բոլոր փոփոխություններում:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ սեփականության իրավունքի պաշտպանության հանրային իշխանության պարտականությունը Հայաստանի Հանրապետության իրավակարգի կարևոր բաղադրիչ է նաև մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով, մասնավորապես, սակայն չսահմանափակվելով՝ միայն՝ Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրով (հոդված 17, ընդունված և հոչակագրված ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևով), 1950 թվականի նոյեմբերի 4-ի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի արձանագրության 1-ին հոդվածով:

Ենելով սեփականության իրավունքի պաշտպանության՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի բաղադրիչ լինելու հիմնարար սահմանադրական արժեքից՝ Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսվել են սեփականության իրավունքին միջամտությունների՝ (1) սեփականության իրավունքի ընդհանուր սահմանափակումների, (2) սեփականությունից գրկման և (3) հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման նպատակները, իրավական հիմքը և պայմանները:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը վերահաստատում է նաև սեփականության իրավունքի պաշտպանության հարցում Հայաստանի Հանրապետության հանրային իշխանության պողիստիվ պարտականությունը, ի թիվս այլ ջանքերի՝ երաշխավորել հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականությունը օտարելու և նախնական ու համարժեք փոխհատուցում ապահովելու վերաբերյալ սահմանադրական պահանջների կատարումը (Սահմանադրական դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 30-ի ՍԴՈ-1432 որոշում, կետ 4.1):

Արձանագրելով սեփականության իրավունքի պաշտպանության կարևորությունը Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի համար՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ սեփականության իրավունքը բացարձակ չէ և ենթակա է սահմանադրաչափ սահմանափակումների, այսինքն՝ որ սեփականության իրավունքի սահմանափակման ձևով որևէ միջամտություն պետք է բավարարի Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հետևյալ ընդհանուր պայմանները.

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն Սահմանադրության 79-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող օրենքով,

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների կամ ազատությունների պաշտպանության նպատակով,

- սեփականության իրավունքի սահմանափակումը պետք է համապատասխանի Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաշխատության սահմանադրական սկզբունքին,

- սեփականության իրավունքի սահմանափակումը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

**5.3.** Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված նորմը գործում է որպես սեփականության իրավունքին հանրային իշխանության կողմից միջամտության ընդհանուր կանոն (*lex generalis*):

Միաժամանակ, սեփականության իրավունքի առավել խիստ միջամտության երկու հատուկ ձևերի՝ սեփականությունից գրկելու և հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականությունը օտարելու իրավահարաբերությունների կարգավորման նպատակով Սահմանադրության, համապատասխանաբար, 60-րդ հոդվածի 4-րդ մասով և 60-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվել են հատուկ նորմեր, որոնք Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի նկատմամբ հանդես են գալիս որպես հատուկ նորմեր (*lex specialis*), որոնք, դրանցով նախատեսված միջամտության խստության աստիճանով և իրավահարաբերությունների բնույթով պայմանավորված, նախատեսել են սեփականության իրավունքին միջամտության սահմանադրաչափության հատուկ և պարտադիր այլ պայմաններ:

Մասնավորապես՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ընդհանուր պայմանների հետ մեկտեղ սեփականությունից գրկվելու ձևով միջամտության սահմանադրաչափության անհրաժեշտ պայման է նաև Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված «դատական կարգի» ապահովումը, ինչպես նաև սեփականությունից գրկվելու դեպքի «օրենքով սահմանված» լինելը:

Միաժամանակ, հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման ձևով սեփականության իրավունքին միջամտության՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ընդհանուր պայմանները Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով խստացվել են հետևյալ որակական պահանջներով.

- Ի տարբերություն Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ սեփականության իրավունքին միջամտության «հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազարությունների պաշտպանության» սահմանադրաչափ նպատակի՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված սեփականության իրավունքի միջամտության (սեփականության օտարման) սահմանադրաչափ նպատակը (1) չի ներառում նման միջամտությունը «այլոց հիմնական իրավունքների և ազարությունների պաշտպանության» համար, (2) իսկ «հանրության շահերի պաշտպանության» ընդհանուր նպատակների շրջանակից վերաբերում է միայն այն հատվածին, որը դասվում է «հանրության գերակա շահերին», որով սահմանափակվում է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով միջամտության սահմանադրաչափ նպատակների միջակայքը.

- Ի տարբերություն Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ սեփականության իրավունքին սահմանադրաչափ միջամտության իրավական հիմքի՝ «օրենքի» և Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված դրա անխուսափելի որակական պահանջների՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված սեփականության իրավունքի միջամտության (սեփականության օտարման) սահմանադրաչափ իրավական հիմքը, Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված «օրենքին» առաջադրվող պահանջներից բացի, (1) պետք է անհրաժեշտաբար սահմանի նաև միջամտության «բացադիկ դեպքերը», ինչպես նաև՝ (2) սեփականության օտարման «կարգը».

- Ի տարբերություն 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ սեփականության իրավունքին միջամտության Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաշափության ընդհանուր սկզբունքով նախատեսված և նման համաշափության ապահովման հանրային իշխանության հայեցողությանը վերապահված միջոցների ընտրության դեպքի՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով սեփականությանը միջամտության (սեփականության օտարման) դեպքում համաշափությունը կշռված է Սահմանադրի կողմից, ինչը ապահովելու նպատակով ընտրված միջոցը «փոխհարուցումն» է, որի նկատմամբ առաջադրված որակական պահանջներն են «նախնական» և «համարժեք» սահմանադրական չափանիշները:

Սեփականության իրավունքին միջամտության սահմանադրաչափության ընդհանուր նորմի՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի և դրա

նկատմամբ գերակա հանրային շահերի (հասարակության և պետության կարիքների) ապահովման նպատակով սեփականության օտարման ձևով միջամտության սահմանադրաչափության հատուկ՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասի վերը նշված դիտարկումներն արձանագրելով՝ Սահմանադրական դատարանը նկատում է, որ սույն սահմանադրական վեճի շրջանակներում Դիմողների կողմից բարձրացված հարցադրումը, վերաբերելով հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման իրավահարաբերություններին, չի պարունակում սեփականության իրավունքի միջամտության սահմանադրաչափ նպատակի և նման միջամտության համար իհմք ծառայած օրենքի և դրա որակների վերաբերյալ սահմանադրական վեճ:

Փոխարենը, ինչպես արդեն նշվել է սույն որոշման 4.2-րդ կետում, այն վերաբերում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված օտարված սեփականության դիմաց փոխհատուցման իրավունքին, ինչը հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականությանը միջամտության համաչափությանը վերաբերող հարց է:

Հետևաբար՝ վիճարկվող իրավադրույթի սահմանադրականության ստուգման քննությունը Սահմանադրական դատարանը շարունակելու է վիճարկվող իրավադրույթով նախատեսվող միջամտության համաչափության ստուգման ուղղությամբ:

**5.4.** Սույն սահմանադրական վեճի լուծումը, ինչպես արդեն նշվել է սույն որոշման 4.2-րդ կետում, ժամանակագրորեն առնչվում է 1995 թվականին ընդունված Սահմանադրության և դրա 2005 ու 2015 թվականների փոփոխությունների գործողության ժամանակահատվածներին, եթե՝

ա) դիմողների բնակարանի՝ սույն որոշման 1-ին կետում նկարագրված օտարման գործընթացում տեղ գտած իրավահարաբերությունները տեղի են ունեցել 1995 թվականի Սահմանադրության գործողության ժամանակահատվածում, որի՝ սույն իրավահարաբերություններին վերաբերելի 28-րդ հոդվածի համաձայն՝ «... Սեփականության օպարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կարարվել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխհարուցմամբ».

բ) 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սեփականության օպարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կարարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհարուցմամբ».

գ) 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օդարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհաղողական»:

1995 թվականի Սահմանադրության ընդունման պահից հասարակության և պետության կարիքների համար, իսկ 2015 թվականի Սահմանադրության փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով՝ սեփականության օտարման վերաբերյալ Սահմանադրությամբ նախատեսված հիշյալ հատուկ կանոնն ունեցել է բովանդակային փոփոխություններ, որոնք վերաբերել են (1) սեփականության իրավունքին միջամտության սահմանադրական նպատակի բովանդակությանը (1995 թվականից մինչև 2005 թվականի Սահմանադրության փոփոխությունները՝ «հասարակության և պետության կարիքների համար կարող է կարարվել միայն բացառիկ գերակա հանրային շահերի դեպքերում», իսկ գործող Սահմանադրությամբ՝ «հանրության գերակա շահերի ապահովման նպատակով»), և (2) միջամտության իրավական հիմքին (1995 թվականից մինչև 2005 թվականի Սահմանադրության փոփոխությունները՝ «օրենքի հիման վրա», 2005 թվականի Սահմանադրության փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո՝ «օրենքով սահմանված կարգով», իսկ գործող Սահմանադրությամբ՝ «օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով»):

Մինչդեռ հանրության գերակա շահի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման դեպքում սեփականության իրավունքին միջամտության համաչափության պատվիրանը կայուն հետևողականությամբ շարունակել է մնալ անփոփոխ՝ երաշխավորելով նման միջամտության դեպքում համաչափության պահպանման իրամայական պայմանը՝ «փոխհաղողականությունը», և վերջինիս առաջադրվող պահանջները՝ որպես միջամտության դեպքում սահմանադրական երաշխիքներ՝ «նախնական» և «համարժեք»:

**5.5.** Արձանագրելով հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (մինչ 2015 թվականի Սահմանադրության փոփոխությունները՝ հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման դեպքում սեփականության իրավունքին միջամտության համաչափության վերաբերյալ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված սահմանադրական պահանջի՝ համաչափության սահմանադրական ընդհանուր սկզբունքի նկատմամբ հատուկ նորմի կարգավիճակը՝ Սահմանադրական դատարանը սույն սահմանադրական վեճի լուծման նպատակով անհրաժեշտ է համարում բացահայտել համաչափության

ընդհանուր սկզբունքի և դրա վերաբերյալ սահմանադրական հատուկ նորմի սահմանման նշանակությունը:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը վերահստատում է հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակման համաշափության սահմանադրական սկզբունքի վերլուծությամբ արտահայտված իր դիրքորոշումը, որով սահմանել էր, որ.

«(...) որևէ հիմնական իրավունքի սահմանափակում հնարավոր է միայն օրենքով, իսկ համաշափության սկզբունքով պայմանավորված՝ օրենքով հիմնական իրավունքի սահմանափակումներին վերաբերող պահանջները հետևյալն են.

1) սահմանափակման նպատակի լեգիտիմությունը, այն Է՝ Սահմանադրությամբ սահմանված լինելը.

2) սահմանափակման համար ընտրված միջոցների՝

ա) պիտանիությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

բ) անհրաժեշտությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

գ) համարժեքությունը՝ սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում անդրադարձել է համաշափության սկզբունքին:

(...)

Հաջուկ առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանի գնահատմամբ համաշափության սկզբունքը Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչներից մեկն է: 2015 թվականի փոփոխություններով (գործող) Սահմանադրության մեջ այն ամրագրվել է ամբողջ ծավալով՝ հստակորեն (*expressis verbis*):

Համաշափության սկզբունքի էությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումների սահմանափակումն է մասնավոր և հանրային շահերի միջև ողամիտ հավասարակշռության ապահովման միջոցով, և հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին ներկայացվող սահմանադրական պահանջների շարքում այն ունի առանձնահատող կարևորություն» (Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշում):

Վերը նկարագրված համաշափության սկզբունքը նախատեսված է որպես հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակման համաշափության սահմանադրական բովանդակություն և անհրաժեշտաբար կիրառելի է անհատական իրավունքին կամ ազատությանը թույլատրելի բոլոր միջամտությունների իրավաչափության գնահատման համար:

Սահմանափակումների կամ այլ միջամտությունների ենթակա (ոչ բացարձակ) իրավունքին կամ ազատությանը միջամտության սահմանադրաչափության ստուգումը ներառում է նման (1) միջամտության նպատակի, (2) միջամտության համար հիմք ծառայած իրավական ակտի առկայության և դրա որակի, և (3) միջամտության համաշափության ստուգման ընդհանուր ստուգացուցակը, որտեղ միջամտության համաշափության ստուգումը սահմանադրաչափության չափանիշների ստուգման հերթականությունը միջամտության սահմանադրականության ստուգման չափանիշների կարևորության աստիճանակարգություն չէ, այլ արտացոլում է ամեն հաջորդ չափանիշի բաղադրության համար անհրաժեշտ նախորդ չափանիշի ստուգման առաջնահերթությունը:

Հակառակը, որպես Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված Հայաստանի Հանրապետության իրավական պետության որակական բնորոշիչ և Սահմանադրության 3-րդ հոդվածով նախատեսված՝ մարդու հիմնական իրավունքի կամ ազատության երաշխիք, հիմնական իրավունքին կամ ազատությանը միջամտության համաշափության սահմանադրական սկզբունքը հանդես է գալիս որպես հիմնական իրավունքի սահմանափակման պայման, միաժամանակ նաև՝ որպես (1) հանրային իշխանության՝ նման միջամտության համար ընտրած նպատակի և (2) Սահմանադրությամբ պահանջվող որակի իրավական նորմով կիրառելի սահմանափակումների ընտրության՝ հանրային իշխանության հայեցողության սահմանափակման գործիք՝ երաշխավորելով Սահմանադրության 80-րդ հոդվածով նախատեսված՝ հիմնական իրավունքի կամ ազատության սահմանադրական դրույթների էռության անխախտելիությունը:

Այսպիսով, հիմնական իրավունք՝ Սահմանադրությամբ թույլատրելի սահմանափակումների կամ այլ միջամտությունների սահմանադրաչափության ստուգման նպատակով մեթոդաբանական հաջորդականությամբ վերջին չափանիշը լինելով՝ համաշափության սահմանադրական սկզբունքը հիմնական իրավունքի կամ ազատության սահմանադրական դրույթների էռության անխախտելիությունը երաշխավորող առաջնային երաշխիքն է, քանի որ հիմնական իրավունքի թույլատրելի սահմանափակման կամ այլ միջամտության սահմանադրաչափության պայման լինելով հանդերձ, միաժամանակ ունի նաև մյուս երկու պայմանների սահմանման հարցում հանրային իշխանության հայեցողության՝ անհատի իրավունքների և հանրության շահերի

միջև արդարացի հավասարակշռության հաստատման միջոցով սահմանափակող (հակակշռող) նպատակ:

Հիմնական իրավունքի կամ ազատության վերաբերյալ սահմանադրական նորմերն ունեն ընդհանրականության և վերացականության բարձր աստիճան: Սա առավել ևս վերաբերում է սահմանադրական սկզբունքներին վերաբերող սահմանադրական դրույթներին: Սահմանադրական դատարանը, անդրադառնալով առհասարակ իրավական նորմերի ընդհանրականության և վերացականության որակին, նշել է. «Որոշակիության սկզբունքի համատեքստում հարցը քննարկելիս պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ իրավական նորմերը, որպես ընդհանուր-վերացական կարգավորումներ, միշտ որոշակի մեկնաբանությունների կարիք ունեն, և գրեթե անհնար է իրավական միարժեք նորմերով հստակ կարգավորել հասարակական լյանքի բոլոր բազմաբնույթ հարաբերությունները» (Սահմանադրական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 23-ի ՍԴՌ-1610 որոշում):

Օրենքի նորմին ներհատով վերացականության հատկությունն առավել բարձր աստիճանով հատուկ է սահմանադրական սկզբունքներ կամ կանոններ նախատեսող նորմերին, որոնք մանրամասնելու, դրանց՝ ողջամտորեն հնարավոր առավելագույն հստակությունը և կանխատեսելիությունն ապահովելու պարտականությունը հանրային իշխանության մարմինների՝ հիմնական իրավունքների և ազատությունների հարգման և պաշտպանության ուղղությամբ հիմնական պարտականություններից է: Սա իրականացվում է առաջնահերթությամբ՝ օրենսդիր իշխանության կողմից՝ օրինաստեղծ, գործադիր իշխանության կողմից՝ իրավաստեղծ, իսկ իրավակիրառ և դատական իշխանության կողմից՝ դատական մեկնաբանության և իրավակիրառ ոլորտներում վերջիններիս վերապահված սահմանադրական լիազորությունների շրջանակում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաշափության սկզբունքով նախատեսված անհատական իրավունքի կամ ազատության և հանրության շահերի միջև արդարացի հավասարակշռություն ապահովելու նպատակով հանրային իշխանությունն օժտված է նման հավասարակշռությունն ապահովող անհրաժեշտ միջոցների ընտրության և դրանց կիրառման հայեցողական իրավասությամբ:

Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրությունը պարունակում է հիմնական իրավունքների սպառից ցանկ, որոնց միջամտության սահմանադրաչափության համար անհրաժեշտ համաշափության ապահովման միջոցի ընտրությունն ունի սահմանադրական ամրագրում, հետևաբար՝ դուրս է հանրային իշխանության հայեցողական իրավասության տիրույթից և ունի սահմանադրական իրամայականի բարձրագույն իրավաբանական ուժով օժտված հատկություն:

Մասնավորապես, բայց չսահմանափակվելով միայն սույն դիտարկմամբ՝ հատուցումը՝ որպես հիմնական իրավունքին միջամտության դեպքում համաշխափության ապահովման միջոց, Սահմանադրի կողմից անմիջականորեն ընտրվել և սահմանադրական ամրագրում է ստացել սահմանադրական երեք նորմերում.

(1) Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է հատուցում՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման դիմաց.

(2) Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հատուցում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի համար, որի պայմանները և կարգը սահմանվում են օրենքով.

(3) Սահմանադրության 62-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է օրենքին համապատասխան հատուցում այն դեպքերում, երբ հանցանք կատարելու համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձն արդարացվել է այն հիմքով, որ նոր կամ նոր երևան եկած որևէ հանգամանք ապացուցում է նրա դատապարտման ոչ իրավաչափ լինելը, եթե չի ապացուցվում, որ այդ հանգամանքի ժամանակին բացահայտումը լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից:

Վերը նշված երեք դեպքերի համեմատական վերլուծությունից բխում է, որ ի տարբերություն Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված համաշխափության սահմանման նպատակով անհրաժեշտ միջոցի անմիջական սահմանման դեպքերի, երբ Սահմանադրը նման միջոցի՝ մի դեպքում հատուցման պայմանների, դեպքերի և կարգի որոշման (ինչպես Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի), իսկ մյուսի դեպքում՝ առհասարակ հատուցման համապատասխանության հարցը (ինչպես՝ 62-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի) վերապահել է օրենսդրի հայեցողությանը, Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված միջամտության համաշխափության միջոցը (փոխհատուցման) և դրան առաջադրվող որակական չափանիշները (նախնական և համարժեք) սահմանել է Սահմանադրության մեջ դրանց ամրագրմամբ:

**5.6.** Սույն որոշման 5.5-րդ կետում Սահմանադրական դատարանը, վերլուծելով Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաշխափության սահմանադրական սկզբունքը, արձանագրում է, որ այն իր բովանդակային նշանակությամբ նպատակառուղղված է սահմանադրական միջամտելի իրավունքների «սահմանափակումների (միջամկությունների) սահմանափակմանը», որի իրավակիրառական նպատակը հանրային իշխանության՝

հիմնական իրավունքի սահմանափակմանը կամ այլ միջամտությանն ուղղված հայեցողության սահմանափակումն է՝ որպես անհատի իրավունքի պաշտպանության առաջնային երաշխիք:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված միջամտության (օտարման) համար Սահմանադրի կողմից ամրագրվել է նման միջամտությունը «միայն նախնական և համարժեք փոխհաղողական» իրականացնելու պայման-երաշխիքը, որի ազդեցությամբ օտարվող գույքի սեփականատերը, ունենալով դրա դիմաց «նախնական և համարժեք փոխհաղողական» պահանջի իրավունքը, պաշտպանվում է նման միջամտության դեպքում անհամաչափ ծանրության բեռ կրելու հնարավոր հետևանքից:

Այս իմաստով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված Սահմանադրի կողմից համաչափության միջոցի (փոխհատուցում) ընտրության և դրա որակների սահմանադրական ամրագրման նպատակին:

Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման հարաբերություններում «նախնական և համարժեք փոխհաղողական» սահմանադրական երաշխիքը կոչված է հակակշռելու հանրային իշխանության այն լայն հայեցողությունը, որի առջև անհրաժեշտ և բավարար երաշխիքների բացակայությունը հանրային իշխանություն-անհատ իրավահարաբերություններում վերջինիս խոցելիությունը նվազեցնելուն և հանրային իշխանության հնարավոր կամայականությունը կանխելուն ուղղված սեփականատիրոջը հասանելի արդյունավետ միջոցն է:

Այդուամենայնիվ, հաշվի առնելով հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման գործընթացում նյութական շահերի համարման այնպիսի դրվագքը, երբ՝

ա) հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման նպատակի (հանրության գերակա շահերի) որոշման հարցը վերապահված է բացառապես հանրային իշխանության մարմինների հայեցողությանը, և

բ) հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման շահառուն պետությունն է, և

գ) հանրության գերակա շահերի (հասարակության և պետության կարիքների) ծանրակշիռ ազդեցությամբ անհատի սեփականության իրավունքի պաշտպանության անհատական շահը ստորադասվում է հանրության գերակա շահի (հասարակության և պետության կարիքների) ապահովման անհրաժեշտությանը, և

դ) հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման դեպքում սեփականության իրավունքի վերականգնումն օտարված գույքի նկատմամբ անդառնալի հետևանք է այդ գույքի նկատմամբ իրավունքների վերականգնման իմաստով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հակառակը հանրության գերակա շահի վտանգման դիսկ է պարունակում,

հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման իրավահարաբերությունների սուբյեկտային կազմի բերումով, երբ պետությունանիատ հարաբերություններում սեփականության իրավունքին միջամտության համաչափությունը՝ անհատին հասանելի մասնակցային հնարավորություն ընձեռող միակ հնարավոր հարցն է, Սահմանադիրը հանրության գերակա շահերի (հասարակության և պետության կարիքների) ապահովման և անհատի սեփականության իրավունքի պաշտպանության միջև արդարացի հավասարակշռության հաստատման միջոցի (փոխհատուցման) և դրա որակական չափանիշների (նախնական և համարժեք) սահմանման նպատակով ամրագրել է համաչափության սահմանադրական սկզբունքի առանցքային տարրերը Սահմանադրությամբ՝ բացառություն կատարելով Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումների սահմանադրաչափության չափանիշների հստակեցումն օրենսդրին վերապահելու ընդհանուր կանոնից:

Այսպիսով, սույն որոշման 5.5-րդ կետում նկարագրված համաչափության, այսինքն՝ հիմնական իրավունքի «սահմանափակումների կամ այլ միջամտությունների սահմանափակման» միջոցի և դրա որակների ընտրությունը Սահմանադիրն ամրագրել է Սահմանադրությամբ՝ դրա շրջանակի սահմանումը դուրս բերելով հանրային իշխանության իրավասության շրջանակից՝ որպես հիմնական իրավունքի միջամտության համար շահերի վերը նկարագրված համադրությունից բխող կամայականությունների հնարավոր լայն հնարավորությունների դիմաց անհատի իրավունքի պաշտպանության երաշխիք, և ի տարրերություն հիմնական մյուս իրավունքների միջամտության համաչափության սկզբունքի բաղադրիչների ընտրության հարցում դրանց և դրանց որակների ընտրության հայեցողությունն օրենսդրին պատվիրակելուն՝ Սահմանադիրն ինքն է հաստատել այս իրավահարաբերությունում համաչափության բանաձևը սահմանադրական նորմի կայունության և դրա իրավաբանական բարձրագույն ուժի պաշտպանության ներքո՝ բացառելով հանրային իշխանության միջամտությունը դրա վերջնարդյունքի՝ «նախնական և համարժեք փոխհարստուցման» միջոցի նկատմամբ:

Այսպիսով, հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման դիմաց «նախնական և համարժեք փոխհարստուցման» նկատմամբ

պահանջի իրավունքը՝ որպես չափելի տնտեսական արժեքի նկատմամբ գոյքային իրավունք, արդեն դուրս է Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով՝ նախատեսված սեփականության իրավունքի սահմանափակման ընդհանուր կանոնի գործողությունից, քանի որ այն ունի նաև սեփականությանը միջամտության՝ հանրային իշխանության կամայականության կանխման նպատակով համաշխափությունը հաստատող՝ իրավունքի «սահմանափակումը սահմանափակող» Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված երաշխիքի բովանդակություն:

Այսպիսով, հանրային իշխանության կողմից սեփականությանը միջամտության կամայականությունը բացառելու նպատակն է կանխորոշել «նախնական և համարժեք փոխհատուցման» արձանագրումը Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասում՝ դրանով իսկ բացառելով այդ միջոցին և դրա որակներին միջամտելու հանրային իշխանության իրավասությունը:

**5.7. Համաշխափության սահմանադրական ընդհանրական սկզբունքի ամրագրման պայմաններում դրա հաստատման միջոցի և վերջինիս առաջադրվող որակական պահանջների սահմանադրական հստակ և բառացի (*expressis verbis*) ամրագրումը Սահմանադրությամբ՝ որպես Սահմանադրության 2-րդ գլուխ նախատեսված բոլոր այլ իրավունքների միջամտության սահմանադրաչափ պայմանների ընդհանրականության կանոնից բացառություն, հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) օտարված սեփականության դիմաց փոխհատուցումն այսպիսով վերածվում է Սահմանադրության ուժի հրամայականի, որի կատարման նկատմամբ ո՞չ օրենսդիր, ո՞չ գործադիր և ո՞չ էլ դատական իշխանությունը չունի միջամտության, ներառյալ նաև՝ այն սահմանափակելու հայեցողություն:**

Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով՝ նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման հնարավորությունը՝ «միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ» իրականացնելով՝ Սահմանադրությամբ ամրագրված երաշխիքի արժեքանական բովանդակությունը Սահմանադրի կողմից՝ օտարված գոյքի դիմաց **տրված բառացի**, դրա նկատմամբ կիրառելի պայմանականություններից գերծ, անվերապահ խոստումն է՝ ապահովելու «նախնական և համարժեք փոխհատուցում»։ Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասով՝ նախատեսված Սահմանադրության բարձրագույն ուժով և 3-րդ հոդվածի 3-րդ մասով՝ նախատեսված անմիջականորեն գործող իրավունքով պայմանավորված՝ այս խոստման իրավական բովանդակությունը, համապատասխանաբար, հանրային իշխանության համար այն ի կատար ածելու **անվերապահ հանձնառությունն** է։ Սահմանադրի այս խոստումը, միաժամանակ, հայելային անդրադարձով հանդես է գալիս, որպես հանրության գերակա շահերի

ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) օտարված սեփականության տիրոջ՝ օտարված գույքի դիմաց «նախնական և համարժեք փոխհարուցման» պահանջի բացարձակ իրավունք:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ իրավունքի «բացարձակ», այսինքն՝ հանրային իշխանության կողմից սահմանափակման կամ այլ միջամտություններից պաշտպանված լինելու որակը չի վերաբերում Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսված սեփականության իրավունքին որպես ընդհանուր կանոն, որը, ինչպես Սահմանադրական դատարանը նշել է սույն որոշման 5.4-5.6-րդ կետերում, սահմանափակումների և այլ միջամտությունների (ընդհուպ մինչև սեփականության իրավունքի դադարեցման) ենթակա իրավունք է (*mutatis mutandis* Սահմանադրական դատարանի 2010 թվականի հունիսի 13-ի ՍԴՈ-903 որոշման 8-րդ կետը և 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշման 4.4-րդ կետը)<sup>4</sup> պայմանով, որ սեփականության իրավունքին այդ սահմանափակումները և այլ միջամտությունները բավարարում են նման միջամտությունների սահմանադրաչափության պայմանները:

**Բացարձակ իրավունքի որակը**, որի նկատմամբ Սահմանադրությունը բացառել է հանրային իշխանության միջամտության հնարավորությունը, այլ ընդհակառակը՝ հանրային իշխանությանը ծանրաբեռնում է այդ իրավունքի իրականացման նպատակով ծեռնարկելու դրա արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, վերաբերում է միայն հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) օտարված սեփականության դիմաց օտարված գույքի սեփականատիրոջ՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով «նախնական և համարժեք փոխհարուցման» պահանջի իրավունքին:

Այս իրավունքի սահմանափակումը կամ այլ ձևով միջամտությունը հետևանքային ազդեցությամբ հանգեցնում է սույն որոշման 5.4-5.6-րդ կետերում նկարագրված համաչափության հաստատման վերջնարդյունքին միջամտության, այսինքն՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված սեփականությանը միջամտության հարցում հանրային իշխանության «միջամկության սահմանափակումների սահմանափակման», ինչպիսի իրավասությամբ Սահմանադրի կողմից հանրային իշխանության որևէ մարմին օժտված չէ:

**5.8.** Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման սահմանադրական ինստիտուտին առնչվող իր նախկին երկու որոշումներում (ՍԴՈ-92 և ՍԴՈ-630) հետևողականորեն անդրադարձել է սեփականության օտարման դիմաց սահմանադրական «նախնական և

համարժեք փոխիատուցման» սահմանադրական երաշխիքի անխախտելիության և անձեռնմխելիության որակներին:

Մասնավորապես՝ Հանրապետության Նախագահի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կողմից 1995 թվականի դեկտեմբերի 27-ին ընդունված «Անշարժ գույքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերրորդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածին և 28-րդ հոդվածի երկրորդ մասին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով կայացրած ՍԴՈ-92 որոշմամբ բացահայտելով հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման ինստիտուտի սահմանադրական բովանդակությունը՝ Սահմանադրական դատարանը նշել է. «Սահմանադրությունն ամրագրում է, որ սեփականության օդարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կարարվել միայն բացադիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ **նախնական համարժեք փոխիագրուցմամբ**: Այսպիսով, որպես սեփականության օդարուման հիմք է ճանաչվում «պետության և հասարակության կարիքները», իսկ օդարուղ գույքի սեփականագիրոց իրավունքների պաշտպանության երաշխիքներ են համարփում օդարումը՝ «միայն բացադիկ դեպքերում», օդարումը՝ «օրենքի հիման վրա», օդարումը՝ «օդարվող գույքի նախնական համարժեք փոխիագրուցմամբ»» (Սահմանադրական դատարանի 1998 թվականի փետրվարի 27-ի ՍԴՈ-92 որոշում, կետ 6):

Այնուհետև, 2002 թվականի օգոստոսի 1-ին Կառավարության կողմից ընդունված թիվ 1151-Ն որոշման հիման վրա՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման զանգվածային գործընթացի հետևանքով մարդու իրավունքների պաշտպանի կողմից Սահմանադրական դատարան ներկայացված դիմումով բարձրացված խնդիրների առնչությամբ՝ Քաղաքացիական և Հողային օրենսգործերի սույն որոշման 4.2-րդ կետում թվարկված դրույթների՝ Սահմանադրությանը հակասության մասին եզրակացությանը հանգեցրած վերլուծություններում Սահմանադրական դատարանը հետևողականորեն շեշտադրել է խնդրո առարկա իրավահարաբերությունների կարգավորմանը կոչված սահմանադրական նորմում ամրագրված սահմանադրական երաշխիքների պահպանման իրամայականը, մասնավորապես նշելով. «8. (...) Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի սահմանադրահիրավական բովանդակությունից հետևում է, որ. (...) **սեփականության օդարման դեպքում պետք է երաշխավորված լինի նախնական փոխիագրուցումը**, (...) այդ փոխիագրուցումը պետք է լինի համարժեք: (...) 9. (...) Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի դրույթներից բխում է, որ Սահմանադրությունը դվյալ իրավահարաբերությունների համագենացում որպես սեփականության հարկադիր օդարման հիմք է ճանաչում «հասարակության և պետության կարիքները», իսկ օդարվող գույքի

**սեփականագրիոց սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքներ** է համարում օդարումը՝ «միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում», օդարումը՝ «օրենքով սահմանված կարգով», **օդարումը՝ «օդարվող գոյրի նախնական համարժեք փոխհարուցմամբ:** (.) 11. (...) «Սեփականության օդարում» հասկացությունը, իր հերթին, սահմանադրական դրվագ դրույթի համապետակից ենելով, ենթադրում է Սահմանադրությամբ նախադրեսված այդ նոյն իրավաչափի նպագրակի համար կոնկրետ օրենքի նկարմամբ սեփականության իրավունքի սահմանափակում կամ դադարում պայմանով, որ այդ օրենքի դիմաց անձին նախապես դրվում է համարժեք այլ գոյր կամ փոխհարուցում, որն էլ երաշխավորում է սեփականության իրավունքի ապահովման շարունակականությունը» (Սահմանադրական դատարանի 2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշում):

Չնայած Սահմանադրական դատարանի ՍԴՈ-92 և հետագայում՝ ՍԴՈ-630 որոշումներով հասարակության և պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերություններում «նախնական և համարժեք փոխհարուցման» երաշխիքի սահմանադրական ամրագրման և դրա ուժով հանրային իշխանության միջամտություններից պաշտպանված լինելու հանգամանքի մասին հիշեցումներին և վերահաստատմանը՝ իրավակիրառ պրակտիկան, ինչպես սույն գործով Դիմողների ներկայացրած և Սահմանադրական դատարանի կողմից պահանջված նրանց քաղաքացիական գործից է բխում՝ 25 տարի անփոփոխ շարունակվել է այն ուղղությամբ, որ Քաղաքացիական օրենսգրքով օրենսդրի սահմանած իրավունքի պաշտպանության սահմանափակումները, որպես իրավունքի սահմանափակման ընդհանուր կանոն, կիրառվում են հանրության գերակա շահերի (հասարակության և պետության կարիքների) ապահովման նպատակով սեփականության օտարման դեպքում «նախնական և համարժեք փոխհարուցման» պահանջների նկատմամբ՝ սեփականության իրավունքի սահմանափակումների ընդհանուր կանոնի (60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված) տրամաբանությամբ, այլ ոչ՝ որպես 60-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով՝ որպես սեփականությանը միջամտության սահմանափակման՝ անհատի իրավունքի պաշտպանության սահմանադրական նորմի կայունությամբ և բարձրագույն ուժով պաշտպանվող անմիջամտելի, անձեռնմխելի և սահմանափակումներից պաշտպանված երաշխիք:

**5.9.** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ մարդու և քաղաքացու իմաստական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններ սահմանելու նպատակային նշանակությունը հանրային իշխանությանը պարտավորեցնելն է՝ յուրաքանչյուր ամրագրված իրավունքի ոչ միայն պաշտպանությունը, այլև դրա խախտման դեպքում պատճառված վնասների հատուցում ապահովելը

(Սահմանադրական դատարանի 2017 թվականի նոյեմբերի 7-ի ՍԴՈ-1383 որոշում):

Հիմնական իրավունքի արդյունավետ իրականացումը հանրային իշխանությունից պահանջում է ոչ միայն ձեռնպահ մնալ այդ իրավունքի իրականացմանը միջամտությունից, այլև դրա արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ թելադրում է նաև որոշ պողիտիվ պարտականություններ:

Նշվածի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ սեփականության օտարման դիմաց «նախնական և համարժեք փոխհաղողուցման» պահանջի իրավունքի արդյունավետ իրականացման ընթացակարգային առաջնային երաշխիքն է դրա՝ արդար դատաքննության իրավունքի համապատասխան կառուցակարգերի միջոցով պաշտպանության ապահովումը:

Քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

Քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին օրենքով սահմանված կարգով դիմում է վիճող կողմը, իհմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին օրենքով սահմանված կարգով վճիռ կայացնելու համար:

Այսպիսով, հայցային վաղեմությունը խախտված իրավունքի դատական կարգով պաշտպանություն հայցելու համար օրենսդրի կողմից նախատեսված ժամկետն է: Օրենսդիրն այս ժամկետի ավարտով պայմանավորում է իրավական հետևանքներ, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքում խախտված իրավունքների դատական պաշտպանությանը չդիմելը կարող է հանգեցնել հայցի մերժմանը՝ վեճի մյուս կողմի հայցային վաղեմություն կիրառելու խնդրանքի հիման վրա, որը դատարանին պարտավորեցնում է (պայմանով, որ հայցային վաղեմության ժամկետը լրացել է) մերժել հայցը՝ դադարեցնելով ենթադրաբար խախտված իրավունքի դատական պաշտպանությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հայցային վաղեմության կիրառումը և այդ հիմքով իրավունքը խախտված անձի կողմից ներկայացված հայցի մերժման արդյունքում խնդրությունը առարկա իրավունքը կորցնում է իրացվելիության և պետական հարկադրանքի միջոցով պաշտպանվածության իր հատկանիշները:

Ինչպես վերը ներկայացվեց՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհաղողուցում տրամադրելու սահմանադրական երաշխիքը ենթակա չէ հանրային իշխանության

հայեցողությամբ սահմանվող պայմանականություններին: Հետևաբար՝ անձի՝ իր օտարված սեփականության դիմաց նախնական և համարժեք փոխհատուցում ստանալու պահանջի իրավունքը սահմանափակման ենթակա չէ՝ անկախ նման ենթադրյալ սահմանափակման նպատակից՝ «բացարձակ իրավունքը ենթակա է բացարձակ պաշտպանության» սկզբունքով:

Սահմանադրական սույն վեճի նախապատմությունից հետևում է, որ Դիմողների գործով դատարանները հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու բերումով վեճի մյուս կողմից՝ Կառավարության դիմումի հիման վրա մերժել են գոյքի օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցում վճարելու պահանջի հայցը՝ առանց այն ըստ էության քննելու:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցում վճարելու պահանջի նկատմամբ հայցային վաղեմության կիրառումը հանգեցնում է այս իրավունքի իրականացման անհնարինության, քանի որ այն կորցնում է իրավունքի պահպանական հարկադրանքով պաշտպանվածության իր հատկանիշները:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման պահանջի նկատմամբ հայցային վաղեմության կիրառումը Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ գերակա հանրային շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցում ստանալու իրավունքին միջամտություն է, ինչպիսի իրավասությամբ, սույն որոշման 5.3-5.8-րդ կետերում շարադրված հիմնավորումների համաձայն, Սահմանադրությամբ հանրային իշխանությունն օժտված չէ:

**5.10.** Սույն սահմանադրական վեճի քննության շրջանակում Սահմանադրական դատարանն արդեն իսկ հաստատել է դրա ժամանակագրական միջակայքը: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով այդ ժամանակագրական շրջանակի սկզբնապահից 24 տարի անցած լինելու իրողությունը, անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ հասարակության և պետության կարիքների համար գոյքի օտարման գործընթացի վերաբերյալ Սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրապարակված պաշտոնական դիրքորոշումներին՝ որպես Սահմանադրությամբ ամրագրված «նախնական և համարժեք փոխհատուցում» տրամադրելու՝ սույն որոշման 5.3-5.8-րդ կետերում շարադրված սահմանա-

դրական երաշխիքների շարունակական անտեսման հետևանքային համատեքստ:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում հիշեցնել, որ Սահմանադրությամբ ամրագրված՝ գերակա հանրային շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցում ստանալու իրավունքի՝ իրավական իմաստով հստակ երաշխիքների՝ Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժով օժտված նորմերում նախատեսված լինելու պայմաններում Սահմանադրական դատարանն առնվազն երկու հիմնարար քննություն է կատարել՝ առաջինը՝ Հանրապետության Նախագահի (ՍԴՈ-92 որոշում) և երկրորդը՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացված մտահոգությունների (ՍԴՈ-630) կապակցությամբ:

Բացի դրանից, նոյն հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված դիմումներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը շարունակաբար արձանագրել է Հայաստանում հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման գործընթացներում տեղ գտած համակարգային բացթողումները, որոնք հանգեցրել են դիմունների հիմնական իրավունքների խախտման: Ներքուի հիշյալ գործերով Հայաստանի Հանրապետության կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի արձանագրության 1-ին հոդվածով (Սեփականության պաշտպանություն) նախատեսված իրավունքի խախտումների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մասնավորապես՝

(1) «**Մինայանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի»** գործով ՄիԵԴՊալատի վճռով, հղում կատարելով և հիմնվելով նաև Սահմանադրական դատարանի 1998 թվականի փետրվարի 27-ի ՍԴՈ-92 որոշման վրա, ճանաչել է սեփականության իրավունքի խախտումներ այն հիմքով, որ դիմունների սեփականության օտարումը տեղի է ունեցել կամայական և անօրինական, տեղի չի ունեցել «օրենքի հիման վրա», քանի որ «սեփականության օպարման ողջ գործընթացը, ներառյալ գույքի դիմաց փոխհարուցման որոշման կարգը, դեղի է ունեցել Կառավարության որոշումներով»<sup>1</sup>:

(2) «**Հովհաննիսյանը և Շիրոյանն ընդդեմ Հայաստանի»** գործով ՄիԵԴՊալատի վճռով ճանաչել է սեփականության պաշտպանության իրավունքի խախտումներ այն հիմքով, որ դիմունների գույքային իրավունքի դադարեցումը տեղի է ունեցել կամայական և անօրինական՝ այնպիսի նորմերի հիման վրա, որոնք կիրառելի չեն նրանց օգտագործման իրավունքի դադարեցման

<sup>1</sup> [Մինայանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի](#) վճիռ, թիվ 27651/05, 70-77 կետեր, 2009 թվականի հունիսի 23 (հայերեն [թարգմանությամբ](#)):

իրավահարաբերությունների նկատմամբ, հանգեցրել է նրանց համար անկանխատեսելի կամ կամայական ելքի, ինչպես նաև զրկել դիմողներին իրենց իրավունքների արդյունավետ պաշտպանությունից<sup>2</sup>:

(3) «**Դանիելյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի» գործով ՄիԵԴ-ը ճանաչել է սեփականության պաշտպանության իրավունքի խախտում՝ նշելով, որ միանման գանգատների և առարկությունների մասին «Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի» գործով եզրակացրել է, որ գույքի օտարումը և գույքի օգտագործման իրավունքի դադարեցումը տեղի չեն ունեցել «օրենքի հիման վրա», և քննվող գործով չի տեսնում որևէ պատճառ այդ եզրակացությունից շեղվելու համար<sup>3</sup>:**

(4) «**Թունյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի» գործով ՄիԵԴ-ը ճանաչել է սեփականության պաշտպանության իրավունքի խախտում՝ նշելով, որ միանման գանգատների և առարկությունների մասին «Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի» գործով եզրակացրել է, որ գույքի օտարումը և գույքի օգտագործման իրավունքի դադարեցումը տեղի չեն ունեցել «օրենքի հիման վրա», և քննվող գործով չի տեսնում որևէ պատճառ այդ եզրակացությունից շեղվելու համար<sup>4</sup>:**

(5) «**Բաղդասարյանը և Զարիկյանցն ընդդեմ Հայաստանի» գործով ՄիԵԴ-ը ճանաչել է սեփականության պաշտպանության իրավունքի խախտում՝ նշելով, որ միանման գանգատների և առարկությունների մասին Հայաստանի դեմ մի շարք գործերով (վկայակոչվել են «Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի», «Թունյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի» ու «Դանիելյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի» գործերը) եզրակացրել է, որ գույքի օտարումը տեղի չի ունեցել «օրենքի հիման վրա», և քննվող գործով չի տեսնում որևէ պատճառ այդ եզրակացությունից շեղվելու համար<sup>5</sup>:**

(6) «**Ղասարյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի» գործով ՄիԵԴ-ը ճանաչել է սեփականության պաշտպանության իրավունքի խախտում՝ նշելով, որ միանման գանգատների և առարկությունների մասին Հայաստանի դեմ մի շարք գործերով (վկայակոչվել են «Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի», «Հովհաննիսյանը և Շիրոյանն ընդդեմ Հայաստանի», «Թունյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի» ու «Դանիելյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի» գործերը)**

<sup>2</sup> [Հովհաննիսյանը և Շիրոյանն ընդդեմ Հայաստանի](#) (վճիռ), թիվ 5065/06, 40-47 կետեր, 2010 թվականի հունիսի 20 (հայերեն [թարգմանությամբ](#)):

<sup>3</sup> [Դանիելյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի](#) (վճիռ), թիվ 25825/05, 35-39 կետեր, 2012 թվականի հոկտեմբերի 9 (հայերեն [թարգմանությամբ](#)):

<sup>4</sup> [Թունյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի](#) (վճիռ), թիվ 22812/05, 35-39 կետեր, 2012 թվականի հոկտեմբերի 9 (հայերեն [թարգմանությամբ](#)):

<sup>5</sup> [Բաղդասարյանը և Զարիկյանցն ընդդեմ Հայաստանի](#) (վճիռ), թիվ 43242/05, 22-26, 2014 թվականի նոյեմբերի 13 (հայերեն [թարգմանությամբ](#)):

Հայաստանի» գործերը) եզրակացրել է, որ գույքի օտարումը և գույքի օգտագործման իրավունքի դադարեցումը տեղի չեն ունեցել «օրենքի հիման վրա», և քննվող գործով չի տեսնում որևէ պատճառ այդ եզրակացությունից շեղվելու համար<sup>6</sup>.

(7) «Դարիբյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի» գործով ՄիԵԴ-ը ճանաչել է սեփականության պաշտպանության իրավունքի խախտում՝ նշելով, որ միանման գանգատների և առարկությունների մասին Հայաստանի դեմ մի շարք գործերով (վկայակոչվել են «Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի», «Թունյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի» ու «Դանիելյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի» գործերը) եզրակացրել է, որ գույքի օտարումը տեղի չի ունեցել «օրենքի հիման վրա», և քննվող գործով չի տեսնում որևէ պատճառ այդ եզրակացությունից շեղվելու համար<sup>7</sup>:

(8) «Վարդանյանը և Նանուշյանն ընդդեմ Հայաստանի» գործով ՄիԵԴ-ը ճանաչել է սեփականության պաշտպանության իրավունքի խախտում (տան մասով՝ մասնավորապես նշելով, որ միանման գանգատների և առարկությունների մասին Հայաստանի դեմ մի շարք գործերով (վկայակոչվել են «Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի», «Թունյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի» գործերը) եզրակացրել է, որ դիտարկվող ժամանակահատվածում գույքի օտարումը տեղի չի ունեցել «օրենքի հիման վրա», և քննվող գործով չի տեսնում որևէ պատճառ այդ եզրակացությունից շեղվելու համար<sup>8</sup>:

(9) «Հակոբյանը և Ամիրիսանյանն ընդդեմ Հայաստանի» գործով ՄիԵԴ-ը ճանաչել է սեփականության պաշտպանության իրավունքի խախտում՝ նշելով, որ միանման գանգատների և առարկությունների մասին Հայաստանի դեմ մի շարք գործերով (վկայակոչվել են «Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի», «Թունյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի» գործերը) եզրակացրել է, որ դիտարկվող ժամանակահատվածում գույքի օտարումը տեղի չի ունեցել «օրենքի հիման վրա», և քննվող գործով չի տեսնում որևէ պատճառ այդ եզրակացությունից շեղվելու համար<sup>9</sup>:

Վերոհիշյալ գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի բոլոր եզրահանգումները վերաբերել են սույն սահմանադրական վեճի

<sup>6</sup> [Դատարանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի](#) (վճիռ), թիվ 23566/05, 22-26, 2014 թվականի նոյեմբերի 13 (հայերեն՝ [Թարգմանվածամբ](#)):

<sup>7</sup> [Դարիբյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի](#) (վճիռ), թիվ 19940/05, 22-26, 2014 թվականի նոյեմբերի 13 (հայերեն՝ [Թարգմանվածամբ](#)):

<sup>8</sup> [Վարդանյանը և Նանուշյանը ընդդեմ Հայաստանի](#) (վճիռ), թիվ 8001/07, կետեր 97-100, 2016 թվականի հոկտեմբերի 27 (հայերեն՝ [Թարգմանվածամբ](#)):

<sup>9</sup> [Հակոբյանը և Ամիրիսանյանն ընդդեմ Հայաստանի](#) (վճիռ), թիվ 14156/07, կետեր 50-54, 2019 թվականի հոկտեմբերի 17 (հայերեն՝ [Թարգմանվածամբ](#)):

քննության շրջանակում Սահմանադրական դատարանի արդեն իսկ հաստատած ժամանակագրական միջակայքում տեղ գտած սեփականության իրավունքի, ներառյալ նաև «նախնական և համարժեք փոխհաղուցման» պահանջի իրավունքի խախտումներին, որոնք իրենց բնույթով եղել են համակարգային և, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գնահատմամբ՝ վերը հիշատակված գործերի կոնկրետ հանգամանքներում հանգեցրել են կամայական և անօրինական միջամտության:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև արձանագրել, որ վերը շարադրված շարքը չի սահմանափակվում միայն հիշատակված գործերով, և լրացվում է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա՝ գործը քննվող գործերի ցուցակից հանելու մասին որոշումներով, որոնցով Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրական դատարանի արդեն իսկ հաստատած ժամանակագրական միջակայքում տեղ գտած՝ սեփականության օտարման գործերով միակողմանիորեն ճանաչել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի արձանագրության 1-ին հոդվածի խախտումները, մասնավորապես այն, որ դիմողների գույքի օտարումը «գեղի չի ունեցել 1-ին արձանագրության 1-ին հոդվածով նախադրեսված պահանջներին համապատասխան»։ Տե՛ս, օրինակ՝

- (1) «Պողոսյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի» գործով<sup>10</sup>,
- (2) «Երանոյանն ընդդեմ Հայաստանի» գործով<sup>11</sup>,
- (3) «Եղիգարյանն ընդդեմ Հայաստանի» գործով<sup>12</sup>,
- (4) «Վահանյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի» գործով<sup>13</sup>,
- (5) «Գրիգորյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի» գործով<sup>14</sup>,

Բացի դրանից, հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման ոլորտում սեփականատերերի իրավունքների շարունակական խախտումների խնդիրներին իր տարեկան հաղորդումներում անդրադարձել են նաև Մարդու իրավունքների պաշտպանները։ Վերջիններիս կողմից մատնանշված շարունակական և համակարգային բնույթ ունեցող խնդիրների շարքում տեղ են գտել նաև նախնական համարժեք

<sup>10</sup> Պողոսյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի (գործերի ցուցակից հանելու մասին), թիվ 3310/06, 2011 թվականի նոյեմբերի 15-ի որոշում։

<sup>11</sup> Երանոյանն ընդդեմ Հայաստանի (գործերի ցուցակից հանելու մասին), թիվ 3309/06, 2011 թվականի նոյեմբերի 15-ի որոշում։

<sup>12</sup> Եղիգարյանն ընդդեմ Հայաստանի (գործերի ցուցակից հանելու մասին), թիվ 10446/05, 2011 թվականի նոյեմբերի 15-ի որոշում։

<sup>13</sup> Վահանյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի (գործերի ցուցակից հանելու մասին), թիվ 220/06 և 32289/06, 2012 թվականի նոյեմբերի 6-ի որոշում։

<sup>14</sup> Գրիգորյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի (գործերի ցուցակից հանելու մասին), թիվ 40864/06, 2018 թվականի հոկտեմբերի 16-ի որոշում։

փոխհատուցման վերաբերյալ բանակցությունների ընթացակարգի չգործելը<sup>15</sup>, օտարված գոյքի սեփականատերերին անգամ գոյքի օտարումից հետո շարունակաբար փոխհատուցում չվճարելու պրակտիկան<sup>16</sup>:

Վերը նշված համատեքստը չի կարող նախորոշել Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատության իրականացման նպատակով իրավական նորմերի ստուգման ելքը, սակայն հիշատակման արժանի հանգամանք է՝ բացահայտելու համար Սահմանադրությամբ ամրագրված երաշխիքների անտեսման և Սահմանադրական դատարանի կողմից կայացրած որոշումներին անբավարար ուշադրության հետևանքները՝ առաջին հերթին՝ իրավունքների խախտումներից տուժած քաղաքացիների համար, ապա և՝ Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքի պաշտպանության ընդհանրական գնահատականի իմաստով:

<sup>15</sup> Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին 2009 թվականի տարեկան գելուց, ենթակետ 2.2.3, <https://www.ombuds.am/images/files/37e25ee596e697fd1c3b2cbdaacc0a4a.pdf>

<sup>16</sup> Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին 2009 թվականի տարեկան գելուց, ենթակետ 2.2.3, <https://www.ombuds.am/images/files/37e25ee596e697fd1c3b2cbdaacc0a4a.pdf>, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին 2010 թվականի տարեկան գելուց, ենթակետ 2.2.3, <https://www.ombuds.am/images/files/7b273bc7061ea770062b252de866a3f8.pdf>,

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2016 թվականի տարեկան հաղորդում, էջ 49, <https://www.ombuds.am/images/files/28731eccde752a30c70feae24a4a7de7.pdf> Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2017 թվականի տարեկան հաղորդում, գլուխ 2, մաս 3, <https://www.ombuds.am/images/files/b5220dd0b83b420a5ab8bb037a1e02ca.pdf>,

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2018 թվականի տարեկան հաղորդում, գլուխ 2, մաս 1, <https://www.ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fcfa443f8f269.pdf>, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2019 թվականի տարեկան հաղորդում, գլուխ 2, մաս 1, <https://www.ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf>,

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2020 թվականի տարեկան հաղորդում, գլուխ 2, մաս 1, <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf>,

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2021 թվականի տարեկան հաղորդում, գլուխ 2, մաս 1, <https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf>

## **6. Սահմանադրական դատարանի դիրքորոշումն արդար դատաքնության իրավունքի մասով**

Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված «նախնական և համարժեք փոխհաղողացման» պահանջի սեփականատիրոց իրավունքի բնույթի և դրա սահմանափակման նկատմամբ հանրային իշխանության իրավասության Սահմանադրի կողմից բացառման եզրահանգման բերումով սույն սահմանադրական վեճի լուծման նպատակով այլևս անհրաժեշտ չէ հայցային վաղեմության՝ սույն վեճի շրջանակում քննության անհրաժեշտությունը Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արդար դատաքնության իրավունքի շրջանակներում:

7. Սույն դիմումով Դիմողների մատնանշած խնդիրն այն է, որ վիճարկվող դրույթով Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով (գոյքի օտարման պահին գործող Սահմանադրության 28-րդ հոդվածի 4-րդ նախադասության իմաստով՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման) 1999 թվականի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը գործող իրավադրույթներով կարգավորվող իրավահարաբերություններից բխող վեճերում սեփականության օրինական ակնկալիքի դիմաց նախնական և համարժեք փոխհաղողացման պահանջը չնախատեսելը հանգեցրել է դրա նկատմամբ Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված՝ հայցային վաղեմության ընդհանուր կանոնի կիրառման և, արդյունքում՝ սահմանափակվել են Դիմողների հնարավոր սեփականության և արդար դատաքնության իրավունքները՝ Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հայցային վաղեմության ընդհանուր կանոնով նախատեսված եռամյա ժամկետը լրանալու պատճառաբանությամբ:

Սահմանադրական դատարանը նկատում է նաև, որ Դիմողների՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված նախնական և համարժեք փոխհաղողացման պահանջի նկատմամբ հայցային վաղեմությունը կիրառվել է՝ Դիմողների ունեցած պահանջի իրավունքը դիտարկելով որպես Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սեփականության իրավունքի սահմանափակումների ընդհանուր կանոնի ենթակա իրավունք, և հետևաբար՝ օրենսդրի կողմից սահմանադրաչափ սահմանափակումների ենթակա իրավունք: Նման մոտեցման պայմաններում Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածով նախատեսված՝ հայցային վաղեմության ընդհանուր կանոնից բացառությունների ցանկում Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված նախնական և համարժեք փոխհաղողացման պահանջ չնախատեսելը իրավակիրառ պրակտիկայում կիրառվել է այն մեկնաբանությամբ, որ այս խումբ պահանջների նկատմամբ տարածվում են հայցային վաղեմության՝ օրենսդրի կողմից սահմանված դրույթները:

Սահմանադրական դատարանը սույն որոշման 5.3-5.8-րդ կետերում արդեն իսկ անդրադարձել է Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված նախնական և համարժեք փոխհատուցման պահանջի նկատմամբ սահմանափակում կիրառելու կամ այլ կերպ միջամտելու հանրային իշխանության (ներառյալ նաև՝ օրենսդրի) իրավասության բացակայությանը։ Սահմանադրական դատարանի այս եզրահանգումն անհնար է դարձնում Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածով նախատեսված՝ հայցային վաղեմության ընդհանուր կանոնից բացառությունների ցանկում Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված նախնական և համարժեք փոխհատուցման պահանջը չներառելը որպես օրենքի բաց դիտարկելը։

Սահմանադրական դատարանը իշխեցնում է, որ «(...) օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դարպարանի քննության առարկա միայն այն դեպքում, եթե օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ, կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառ պրակտիկա, կամ եթե առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը։ Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դարպարանի քննությանը» (Սահմանադրական դատարանի 2010 թվականի 14 սեպտեմբերի ՍԴՌ-914 որոշում, կետ 7):

Հաշվի առնելով, որ հանրային իշխանության որևէ մարմնի, ներառյալ օրենսդրին վերապահեված չէ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված «նախնական և համարժեք փոխհապուցում» տրամադրելու Սահմանադրի խոստման սահմանափակման իրավասություն, որի իրականացմամբ Սահմանադրի խոստումը գրկվում է իրացվելիության և պետական հարկադրանքով պաշտպանված լինելու հատկություններից, ապա Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված «նախնական և համարժեք փոխհապուցման» պահանջի իրավունքի նկատմամբ Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հայցային վաղեմության բացառման ցանկում 1999 թվականի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը ժամանակահատվածում սեփականատիրոջ համաձայնության բացակայությամբ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման իրավահարաբերություններից բխող վեճերում նախնական և համարժեք փոխհատուցման պահանջը չնախատեսելը չի կարող մեկնաբանվել որպես հայցային վաղեմության կիրառման հիմք, քանի որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասի (սեփականության օտարման պահին գործող՝ 1995 թվականի Սահմանադրության 28-րդ հոդվածի 4-րդ նախադասության) հիման վրա՝ սեփականատիրոջ համաձայնության բացակայությամբ օտարված գույքի դիմաց նախնական և համարժեք

փոխհատուցման պահանջների նկատմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով՝ նախատեսված հայցային վաղեմության ժամկետների վերաբերյալ դրույթները առհասարակ չեն կարող տարածվել:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասով, 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը

### **ՈՐՈՇԵՑ.**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածը՝ համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ հայցային վաղեմության բացառման ցանկում 1999 թվականի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը ժամանակահատվածում սեփականատիրոջ համաձայնության բացակայությամբ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման իրավահարաբերություններից բխող վեճերում նախնական և համարժեք փոխհատուցման պահանջը չնախատեսելը չի հանդիսանում հայցային վաղեմության կիրառման հիմք, քանի որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասի (սեփականության օտարման պահին գործող՝ 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 28-րդ հոդվածի 4-րդ նախադասության) հիման վրա՝ սեփականատիրոջ համաձայնության բացակայությամբ օտարված գովքի դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման պահանջների նկատմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով՝ նախատեսված հայցային վաղեմության ժամկետների վերաբերյալ դրույթները չեն տարածվում:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է օրենքով սահմանված կարգով վերանայման:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### **ՆԱԽԱԳԱՀՈՂ**

7 նոյեմբերի 2023 թվականի  
ՄԴՈ-1699

### **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՌՈՒԲԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ԳՈՀԱՐ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 344-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1699 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դրուց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Ռուբեն Գրիգորյանի և Գոհար Գալստյանի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի նոյեմբերի 7-ի ՍԴՈ-1699 որոշմամբ (հրապարակվել է 2023 թվականի նոյեմբերի 10-ին) որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնարանությամբ, համաձայն որի՝ հայցային վաղեմության բացառման ցանկում 1999 թվականի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը ժամանակահարվածում սեփականագիրոց համաձայնության բացակայությամբ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օպարման իրավահարաբերություններից բխող վեճերում նախնական և համարժեք փոխհարդիզման պահանջը չնախարեսելը չի հանդիսանում հայցային վաղեմության կիրառման հիմք, քանի որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասի (սեփականության օպարման պահին գործող՝ 1995 թվականի իմբագրությամբ Սահմանադրության 28-րդ հոդվածի 4-րդ նախադասության) հիման վրա՝ սեփականագիրոց համաձայնության բացակայությամբ օպարված գույքի դիմաց նախնական և համարժեք փոխհարդիզման պահանջների նկալմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախարեսված հայցային վաղեմության ժամկետների վերաբերյալ դրույթները չեն դարաձվում (...):»:

Համաձայն չինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի նոյեմբերի 7-ի ՍԴՈ-1699 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր ե. Խոնդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը՝ որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը։ Նոյն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում։

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է։

Հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը։ Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիրեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը։

1. Սահմանադրական դատարանի որոշման առանցքում հանրության գերակա շահի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության կամ դրա օրինական ակնկալիքի

օտարման հարաբերություններում օտարված գույքի դիմաց փոխհատուցման պահանջի նկատմամբ հայցային վաղեմության կիրառման սահմանադրականության ստուգման հարցն է, և Սահմանադրական դատարանը, Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածով նախատեսված՝ հայցային վաղեմության ընդհանուր կանոնից բացառությունների ցանկում Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված նախնական և համարժեք փոխհատուցման պահանջը չներառելը դիտարկելով որպես օրենքի բաց, որոշմամբ ներկայացված պատճառաբանությունների հիման վրա որոշման եզրափակիչ մասում Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածին տվել է այնպիսի մեկնաբանություն, համաձայն որի՝ «(...) հայցային վաղեմության բացառման ցանկում 1999 թվականի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը ժամանակահատվածում սեփականատիրոջ համաձայնության բացակայությամբ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման իրավահարաբերություններից բխող վեճերում նախնական և համարժեք փոխհատուցման պահանջը չնախատեսելը չի հանդիսանում հայցային վաղեմության կիրառման հիմք, քանի որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասի (սեփականության օտարման պահին գործող՝ 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 28-րդ հոդվածի 4-րդ նախադասության) հիման վրա՝ սեփականատիրոջ համաձայնության բացակայությամբ օտարված գույքի դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման պահանջների նկատմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հայցային վաղեմության ժամկետների վերաբերյալ որոյթները չեն տարածվել:

Անդրադարձով Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի վերաբերյալ Սահմանադրական դատարանի պատճառաբանություններին, մասնավորապես՝ դրանում օրենսդրական բացի առկայությունն արձանագրելուն, և քննարկվող իրավանորմին որոշման եզրափակիչ մասում տրված մեկնաբանությանը, հարկ եմ համարում նշել հետևյալը.

Սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՌ-914 որոշմամբ օրենքի բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասության վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ Սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն պարագայում, եթե օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ եթե առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը։ Հակառակ պարագայում,

իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը:

Բացի այդ, Սահմանադրական դատարանը, 2019 թվականի սեպտեմբերի 4-ի ՍԴՌ-1476 որոշմամբ զարգացնելով օրենսդրական բացի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումները, գտել է, որ.

1) օրենսդրական բացը Սահմանադրական դատարանի քննության առարկա կարող է դառնալ այն ժամանակ, երբ այն իրավակարգավորման թերությունն է, այլ ոչ թե իրավաստեղծ մարմնի, տվյալ դեպքում՝ օրենսդրի կամքը՝ ձեռնպահ մնալու որպես օրենսդրական բաց ընկալվող իրավական կարգավորումից.

2) ցանկացած թերի օրենսդրական կարգավորում չէ, որը որպես օրենսդրական բաց կարող է Սահմանադրական դատարանի քննության առարկա դառնալ, այլ միայն այնպիսի օրենսդրական բացը, որը հնարավոր չէ հաղթահարել այլ վերաբերելի իրավակարգավորումները մեկնաբանելու և կիրառելու միջոցով.

3) օրենսդրական բացը պետք է հանգեցրած լինի հակասական իրավակիրառ պրակտիկայի, որը հնարավոր չէ հաղթահարել կամ որը փաստացի չի հաղթահարվել սովորական դատարանների կողմից.

4) օրենսդրական բաց առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը.

5) այն դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդրի մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք:

Այսպիսով, Սահմանադրական դատարանի վերը նշված դիրքորոշումներով հստակեցվել են Սահմանադրական դատարանի կողմից օրենքի բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասության շրջանակը՝ սահմանելով նման հարցերի առնչությամբ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումների թույլատրելիության որոշ չափանիշներ: Ուստի Սահմանադրական դատարանը յուրաքանչյուր դեպքում օրենքի բացի սահմանադրականության հարցի վերաբերյալ ներկայացված դիմումը նախ-

քան քննության առնելը, պետք է պարզի, թե դիմողի կողմից ներկայացված օրենքի բացը Ենթադրում է որպես օրենսդրական կարգավորման թերություն, թե՝ տվյալ օրենսդրական կարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ իրավական նորմի բացակայությունն օրենսդրի մարմնի ուղղակի և հստակ կամքի արդյունք է: Հետևաբար սահմանադրական վերահսկողության Ենթակա օրենքի բացը, հանդիսանալով որպես օրենսդրական ոչ լիարժեք կարգավորում, չի կարող նույնացվել օրենսդրական կարգավորմամբ կոնկրետ իրավական նորմի բացակայության հետ, ուստի Սահմանադրական դատարանի կողմից դիմումի ընդունելիության փոփով պետք է քննարկման առարկա դառնա, ի թիվս այնի, նաև սահմանադրական վերահսկողության Ենթակա օրենքի բացի և օրենսդրական կարգավորման բացակայության հարաբերակցությունը, քանի որ օրենսդրական կարգավորման բացակայության հետ կապված փոփոխությունները գտնվում են բացառապես օրենսդրի մարմնի լիազորությունների և հայեցնողության տիրուպյում:

Տվյալ դեպքում քննության առարկա դիմումով դիմողները Սահմանադրական դատարանի առջև բարձրացրել են այն հարցը, որ Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածում առկա է օրենքի բաց, մասնավորապես՝ վիճարկվող նորմը չի նախատեսում «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքով նախատեսված դեպքերում սեփականության դիմաց նախնական և համարժեք փոփոխատուցում ստանալու հայցապահանցների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու բացառություն, որպիսի պարագայում դատարանները հնարավորություն չեն ունեցել ապահովելու իրենց՝ դատարանի մատչելիության իրավունքը և սեփականության դիմաց նախնական և համարժեք փոփոխատուցում ստանալու շուրջ վեճի՝ ըստ էության քննությունը դատարանում:

Անդրադառնալով քննության առարկա դիմումին և դրանով բարձրացված հարցին՝ գտնում եմ, որ դիմողների կողմից բարձրացված՝ վիճարկվող հոդվածում Ենթադրյալ օրենսդրական բացի առկայությանն առնչվող հարցը չի բավարարում վերը հիշատակված՝ Սահմանադրական դատարանի որոշումներով հստակ սահմանված չափորոշիչներով ներկայացված այն պահանջները, որոնք հնարավորություն կտային տվյալ հարցը դիտարկել որպես Սահմանադրական դատարանի քննությանը Ենթակա հարց հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝ վիճարկվող դրույթը՝ Քաղաքացիական օրենսգրքի «Պահանջներ, որոնց վրա հայցային վաղեմությունը չի տարածվում» վերտառությամբ 344-րդ հոդվածը սահմանում է.

«Հայցային վաղեմությունը չի տարածվում՝

1) անձնական ոչ գույքային իրավունքների և այլ ոչ նյութական բարիքների պաշտպանությանն ուղղված պահանջների վրա, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

2) ավանդները վերադարձնելու վերաբերյալ ավանդատուների կողմից բանկին ներկայացվող պահանջների վրա.

3) քաղաքացու լյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու պահանջների վրա: Սակայն նման վնասի հատուցման իրավունքի ծագման պահից երեք տարի անցնելուց հետո ներկայացված պահանջներն անցյալ ժամանակի համար բավարարվում են ոչ ավելի, քան հայցի ներկայացմանը նախորդած երեք տարիների համար.

4) սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ամեն մի խախտման վերացման պահանջների վրա, թեկուզ այդ խախտումները կապված չեն եղել տիրապետումից գրկելու հետ (հոդված 277).

5) սեփականատիրոջ՝ պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձանց ակտով, որով խախտվել են սեփականատիրոջ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքները, անվավեր ճանաչելու մասին պահանջների վրա.

6) օրենքով սահմանված այլ պահանջների վրա»:

Փաստորեն օրենսդիրը, հստակորեն արտահայտելով իր կամքը, վիճարկվող դրույթով սպասիչ կերպով ներկայացրել է այն պահանջները, որոնց վրա հայցային վաղեմություն չի տարածվում: Ավելին՝ նշված պահանջների մեջ ներառված չէ դիմողների կողմից բարձրացված՝ սեփականատիրոջ համաձայնության բացակայությամբ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման իրավահարաբերություններից բխող վեճերում նախնական և համարժեք փոխհատուցման պահանջը:

Իր հերթին Սահմանադրական դատարանը, քննության առարկա դարձնելով դիմողների կողմից բարձրացված հարցը, եկել է այն եղրահանգման, որ Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածով նախատեսված՝ հայցային վաղեմության ընդհանուր կանոնից բացառությունների ցանկում սեփականատիրոջ համաձայնության բացակայությամբ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման իրավահարաբերություններից բխող վեճերում նախնական և համարժեք փոխհատուցման պահանջը չներառելը պետք է դիտարկել որպես օրենքի բաց: Միաժամանակ նշել է, որ վիճարկվող դրույթն իրավակիրառ պրակտիկայում կիրառվել է այն մեկնարանությամբ, որ վերոնշյալ խումբ պահանջների նկատմամբ տարածվում են հայցային վաղեմության՝ օրենսդրի կողմից սահմանված դրույթները:

Մինչդեռ կարծում եմ, որ Սահմանադրական դատարանը, քննության առնելով սույն գործով ներկայացված դիմումը, դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից հետևյալ պատճառաբանությամբ.

Նախ, ենելով վիճարկվող դրույթի բովանդակությունից՝ գտնում եմ, որ օրենսդրի կողմից վիճարկվող դրույթով հայցային վաղեմություն չտարածվելու բացառությունների հստակ ամրագրումը չի կարող հանգեցնել իրավական անորոշության: Ավելին՝ իրավական անորոշության մասին կարող է խոսք լինել իրավակարգավորման ոչ լիարժեք կամ թերի լինելու դեպքում, ինչն էլ կարող է ձևավորել տվյալ նորմի մեկնաբանության ու կիրառման առնչությամբ հակասական իրավակիրառ պրակտիկա:

Հետևաբար վիճարկվող իրավադրույթի առնչությամբ օրենքի բացը Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական վերահսկողության առարկա կարող էր դառնալ այն դեպքում, եթե տվյալ իրավանորմը հայցային վաղեմության ընդհանուր կանոնից բացառությունների ցանկում կպարունակեր թերի և ոչ ամբողջական կարգավորում՝ սեփականատիրոջ համաձայնության բացակայությամբ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման իրավահարաբերություններից բխող վեճերում նախնական և համարժեք փոխհատուցման պահանջի վերաբերյալ: Ըստ այդմ, վիճարկվող իրավադրույթում վերոնշյալ հարցի առնչությամբ որևէ կարգավորում նախատեսված չլինելու պարագայում Սահմանադրական դատարանի կողմից գոյություն չունեցող կարգավորմանը մեկնաբանություն տալը չի կարող բխել Սահմանադրական դատարանի լիազորություններից, քանի որ կոնկրետ իրավադրույթում որևէ կարգավորում նախատեսելու իրավասությունը գտնվում է օրենսդիր մարմնի լիազորությունների տիրույթում:

Իմ գնահատմամբ՝ դիմողների կողմից բարձրացված հարցը պայմանավորված է ոչ թե վիճարկվող դրույթի իրավական անորոշությամբ կամ իրավակիրառ պրակտիկայում նշված հարցի տարակերպ մեկնաբանություններով, այլ այն իրենից ենթադրում է օրենսդրի կողմից կոնկրետ իրավադրույթում նման պահանջի չնախատեսման հստակ և ուղղակի վարքագիր դրսերում: Հետևաբար դիմողի կողմից բարձրացված օրենքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ իրավակարգավորման բացակայությամբ, ուստի նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Ուստի դիմողների կողմից բարձրացված օրենքի բացը տվյալ դեպքում չի կարող լինել կոնկրետ սահմանադրական վերահսկողության առարկա:

Փաստորեն, Սահմանադրական դատարանն իր մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել օբյեկտիվ իրականության մեջ ընդհանրապես գոյություն չունեցող դրույթ: Այլ կերպ ասած՝ Սահմանադրական դատարանը, դուրս գալով իր լիազորությունների տիրույթից, սահմանել է գոյություն չունեցող կարգավորում, դրանով իսկ ստանձնելով օրենսդիր իշխանության գործառույթները, և այդ գոյություն չունեցող կարգավորմանն էլ տվել է իր մեկնաբանությունը: Այդուհանդերձ, եթե անգամ

հիմնավորվեր սույն դիմումով բարձրացված օրենքի բացի առկայությունը (որը սույն որոշմամբ որևէ կերպ չի հիմնավորվել), ապա նման պայմաններում Սահմանադրական դատարանը կարող էր բացառապես հակասահմանադրական ճանաչել օրենքի նման բացը: Մինչդեռ սույն դեպքում Սահմանադրական դատարանը կիրառել է մի լիազորություն, որի պարագայում ոչ միայն սահմանադրական է ճանաչել գոյություն չունեցող դրույթը, այլ նաև նման գոյություն չունեցող նորմին Սահմանադրական դատարանի կողմից տրվել է մեկնաբանություն: Նշվածը ևս վկայությունն է այն իրողության, որ Սահմանադրական դատարանն ըստ էության դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից:

Միաժամանակ անդրադառնալով Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի սահմանադրականության վերաբերյալ Սահմանադրական դատարանի պատճառաբանություններին հարկ եմ համարում նշել հետևյալը.

Սահմանադրական արդարադատության բնագավառում, ի թիվս այլնի, գործում է նաև կոնկրետ անձի իրավունքների պաշտպանության նպատակով տվյալ անձի կողմից սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, որն իրացվում է << Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին համապատասխան: Նշված սահմանադրական դրույթն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածում, որը կանոնակարգելով կոնկրետ սահմանադրական վերահսկողությանն առնչվող իրավահարաբերությունները, սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները:

Կոնկրետ վերահսկողության պարագայում, ի թիվս այլնի, անհրաժեշտ պայման է, որ անձի կողմից դատական պաշտպանության միջոցները սպառելու արդյունքում կայացված վերջնական դատական ակտով վիճարկվող դրույթը կիրառված լինի իր նկատմամբ, և կիրառման արդյունքում համապատասխան պատճառահետևանքային կապի առկայության համատեքստում խախտված լինի իր սահմանադրական կոնկրետ իրավունքը («Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 69-րդ հոդված):

Սահմանադրականը դատարանը, 2008 թվականի ապրիլի 15-ի ՍԴՈ-751 որոշմամբ անդրադառնալով կոնկրետ սահմանադրական վերահսկողության ինստիտուտին, նշել է, որ անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության դրույթների անմիջական գործողության երաշխավորումն է, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը: Սահմանադրական դատարանի կողմից իրականացվող կոնկրետ վերահսկողությանը մասնավորապես բնորոշ է իրավական ակտի սահմանադրականության մասին որոշման տարածումը տվյալ գործին առնչվող

իրավահարաբերությունների վրա: Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաև անհատական շահերի պաշտպանության խնդիրը:

Սահմանադրական դատարանի դատական կազմն իր հերթին 2021 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴԴԿՈ-58 որոշմամբ արձանագրել է, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիման վրա իրականացվում է կոնկրետ վերահսկողություն, ինչը ենթադրում է, որ նորմատիվ ակտի սահմանադրականությունն առնչվում է դատաքննության առարկա դարձած այս կամ այն կոնկրետ գործին: Ի վերջո Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության ինստիտուտի՝ դիմողի համար վերջնական և հիմնական հետևանքը դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի՝ նոր հանգամանք ի հայտ գալու հիմքով վերանայումն է:

Այսպիսով, Սահմանադրական դատարանում կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակում անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն իր նկատմամբ կիրառված նորմի սահմանադրականության գնահատման միջոցով կարող է տեղի ունենալ բացառապես կոնկրետ փաստական հանգամանքների հիման վրա հարուցված կոնկրետ գործի շրջանակում: Այսինքն՝ Սահմանադրական դատարանում քննության առարկա կարող են դառնալ ենթադրյալ սահմանադրականության վերաբերյալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են կոնկրետ փաստական հանգամանքների հիման վրա հարուցված կոնկրետ գործով դատարանի կողմից կիրառված նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարց: Ավելին՝ Սահմանադրական դատարանն իր հերթին կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակում վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատելիս իր մեկնաբանություններն ու դիրքորոշումները կարող է կառուցել կոնկրետ գործով փաստական հանգամանքների հիման վրա: Փաստորեն, կոնկրետ սահմանադրական վերահսկողություն իրականացնելու Սահմանադրական դատարանի լիազորությունը կարող է իրացվել Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված՝ տվյալ վերահսկողության շրջանակում ներկայացված դիմումների քննության և լուծման առանձնահատկությունների պահպանմամբ: Հետևաբար Սահմանադրական դատարանը, լինելով համապատասխան իրավակարգավորումներով կաշկանդված, կոնկրետ գործի պարագայում չի կարող հայեցողաբար կիրառել և մեկնաբանել տվյալ վերահսկողությանը բնորոշ առանձնահատկությունները:

Ի տարբերություն կոնկրետ սահմանադրական վերահսկողության՝ վերացական վերահսկողության պարագայում սահմանադրական արդարադատու-

թյունն իրականացվում է անորոշ հանգամանքներով պայմանավորված իրավահարաբերությունների նկատմամբ, որպիսի դեպքում ստուգվում է դիմողի կողմից վիճարկվող նորմերի համապատասխանությունը Սահմանադրությանը՝ անկախ կոնկրետ դեպքում տվյալ նորմերի կիրառման հանգամանքի:

Տվյալ դեպքում Սահմանադրական դատարանը, ստուգելով Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածով նախատեսված՝ հայցային վաղեմության ընդհանուր կանոնից բացառությունների ցանկում սեփականատիրոջ համաձայնության բացակայությամբ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման իրավահարաբերություններից բխող վեճերում նախնական և համարժեք փոխհատուցման պահանջը չներառելու սահմանադրականությունը, իր որոշման պատճառարանությունները կառուցել է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման իրավահարաբերություններին վերաբերող իրավակարգավորումների վրա:

Մինչդեռ սույն գործով Սահմանադրական դատարան դիմելու առիթ հանդիսացած թիվ ԵԴ/34667/02/19 քաղաքացիական գործի, ինչպես նաև սույն գործով գեկուցող դատավոր Ս. Սաֆարյանի կողմից Դատական դեպարտամենտի ղեկավարից պահանջված և Սահմանադրական դատարանում ստացված թիվ հ.2-699-2005թ. գործի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

- թիվ հ.2-699-2005թ. գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 16.03.2005 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով Ռուբեն Գրիգորյանի դիմումն ընդդեմ << կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ պետական մարմնի անգործությունը, գործողությունն օրենքին հակասող և անվավեր ակտ ճանաչելու, Երևանի Փ. Բյուզանդի փող. 11 բակի թիվ 12 բնակարանի նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, մերժվել է:

- Թիվ 2-412-2005թ. գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 17.05.2005 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ Ռուբեն Գրիգորյանի և Գոհար Գալստյանի՝ օգտագործման իրավունքի դիմաց 2000-ական ԱՄՆ դոլարին համարժեք աջակցության գումար վճարելուց հետո՝ ք. Երևան, Բյուզանդի 11 հասցեից վտարելու պահանջի մասին բավարարվել է:

Փաստորեն, վերոնշյալ դատական գործերից հետևում է, որ առկա են օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր, որոնց համաձայն՝ վեճի առարկա հանդիսացող բնակարանի նկատմամբ դիմունների սեփականության իրավունքը ճանաչելու պահանջը մերժվել է, և վերջիններս վտարվել են վերոնշյալ հասցեի բնակարանից: Նշվածից հետևում է, որ վերոնշյալ դատա-

կան ակտերի ուժով դիմողները վեճի առարկա հանդիսացող բնակարանի նկատմամբ չունեն ինչպես սեփականության իրավունք, այնպես էլ սեփականության իրավունք ծեռք բերելու օրինական ակնկալիք:

Սահմանադրական դատարանը, 2016 թվականի դեկտեմբերի 6-ի ՍԴՈ-1326 որոշմամբ անդրադառնալով անձի սեփականության իրավունքի պաշտպանության իրավունքին, արձանագրել է, որ այն անձի մոտ ծագում է երկու պարագայում, երբ՝

- անձի սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է,

- անձինք օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ծեռք բերելու օրինական ակնկալիք:

Սույն գործով դիմողների կողմից վիճարկվող՝ Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածում առկա Ենթադրյալ օրենսդրական բացի սահմանադրականության գնահատման համար առանցքային նշանակություն ունի դիմողների՝ Սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքի (այս համատեքստում նաև՝ լեզվականացնելու ակնկալիքի) առկայությունը։ Ուստի Ենթով վերոնշյալ դիրքորոշումների և սույն գործի փաստական հանգամանքների համադրությունից՝ գտնում եմ, որ սույն գործի շրջանակում դիմողները չեն կարող Սահմանադրական դատարանից ակնկալիք սեփականության իրավունքի պաշտպանություն, իսկ Սահմանադրական դատարանն իր հերթին չեր կարող վիճարկվող նորմի սահմանադրականությունը դիտարկել սեփականության իրավունքի պաշտպանության համատեքստում՝ հաշվի առնելով, որ արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատվել է վերջիններիս կողմից վեճի առարկա հանդիսացող բնակարանի նկատմամբ ինչպես սեփականության իրավունք, այնպես էլ սեփականության իրավունք ծեռք բերելու օրինական ակնկալիք չունենալու հանգամանքը։

Վերոնշյալի հաշվառմամբ՝ գտնում եմ, որ վիճարկվող դրույթում առկա Ենթադրյալ օրենսդրական բացին վերաբերող հարցը սույն անհատական դիմումի շրջանակներում ուղղակիորեն չի առնչվում դիմողների՝ Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված համապատասխան հիմնական իրավունքներին և (կամ) ազատություններին։ Ուստի Սահմանադրական դատարանը, սույն որոշման պատճառաբանությունները կառուցելով հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման իրավահարաբերությունների վրա, դուրս է եկել Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով իրեն վերապահված՝ կոնկրետ սահմանադրական վերահսկողության սահմաններից։ Ավելին՝ Սահմանադրական դատարանը, շեղվելով սույն դիմումի հարուցման հիմք հանդիսացող գործի փաստական հանգամանքներից և որոշման առանցքում դնելով դիմողների սեփականության իրավունքի


պաշտպանության իրավունքը, փաստացի իրականացրել է վերացական սահմանադրական վերահսկողություն, ինչի իրավասությունը չէր կարող ունենալ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» <<օրենքի 69-րդ հոդվածի հիմքով՝ Սահմանադրական դատարան դիմելու դեպքում, ուստի գտնում եմ, որ Սահմանադրական դատարանի որոշումը չի բխում կոնկրետ սահմանադրական վերահսկողության էությունից:

Ամփոփելով վերոգրյալ՝ կարծում եմ, որ ներկայացված անհատական դիմումով չի հիմնավորվել դիմողների կողմից վիճարկվող՝ Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածում առկա ենթադրյալ օրենսդրական բացի հակասությունը՝ Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված համապատասխան հիմնական իրավունքներին և (կամ) ազատություններին, տվյալ հիմնական իրավունքների և (կամ) ազատությունների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող հոդվածում առկա ենթադրյալ օրենքի բացի միջև պատճառահետևանքային կապի անմիջական առկայությունը, որպիսի պայմաններում հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ սույն գործի վարույթը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա էր կարճման:

## ԴԱՏԱՎՈՐ՝

## Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«16» նոյեմբերի 2023թ.



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄ

2023 թվականի Հունիսի 8-ին սուբիկտ ստորագրված  
«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՏՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԱՍԻՒԾԱՆՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓԱՍՏԱՁՂԹԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՃԱՆԱՋՄԱՆ  
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

◆ 4(112)2023  
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղ. Երևան

21 նոյեմբերի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),  
Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովհաննիսի, Է.  
Շաթրյանի, Ս. Սաֆարյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում՝)

Կառավարության ներկայացուցիչ՝ Կրթության, գիտության, մշակույթի և  
սպորտի նախարարի տեղակալ Ա. Մարտիրոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդ-  
վածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»  
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի հունի-  
սի 8-ին Սոչիում ստորագրված «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԱՍԻՒԾԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻԱՍՏԱԹԵՐԵՐԻ  
ՎԻԴԱՎԱԴՐԱԾ ճանաչման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավո-

դությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N 1491-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի հունիսի 8-ին Սոչիում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում գիտական աստիճանների վերաբերյալ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի սեպտեմբերի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1.** «Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում գիտական աստիճանների վերաբերյալ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ «Համաձայնագիր») ստորագրվել է 2023 թվականի հունիսի 8-ին Սոչի քաղաքում ԵԱՏՄ անդամ պետությունների քաղաքացիների աշխատանքային գործունեության իրականացման համար բարենպաստ պայմաններ ապահովելու, աշխատանքային միգրացիայի ոլորտում առկա բացառումները և սահմանափակումները վերացնելու նպատակով:

**2.** «Համաձայնագիրն ստորագրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության, Բելառուսի Հանրապետության կառավարության, Ղազախստանի Հանրապետության կառավարության, Ղրղզական Հանրապետության նախարարների կարինետի և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև (այսուհետ՝ «անդամ պետություններ»):

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիմանագիտական ուղիներով ստանալու օրվանից, բայց ոչ շուտ, քան ««Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի մարտի 31-ին ստորագրված արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրը:

**3.** «Համաձայնագրով կարգավիրվում են աշխատանքային միգրացիայի շրջանակներում գիտական աստիճանների վերաբերյալ փաստաթղթերի՝

աշխատանքի տեղավորման պետությունում դրանք ունեցողների կողմից իրենց շնորհված գիտական աստիճանին համապատասխան մասնագիտական գործունեություն իրականացնելու համար փոխադարձ ճանաչման հետ կապված հարցերը:

Համաձայնագրի դրույթները կիրավում են նաև մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը տրված՝ գիտական աստիճանների վերաբերյալ փաստաթղթերի նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքի, երբ գիտական աստիճանի վերաբերյալ փաստաթղթի ճանաչման ընթացակարգի իրականացման ժամանակ աշխատանքի տեղավորման պետությունում ընդունվել է բացասական որոշում՝ ատենախոսության փորձաքննության արդյունքներով:

**4.** Անդամ պետություններն անհրաժեշտ են համարում գիտական աստիճանների վերաբերյալ փաստաթղթերի արդարացի ճանաչումը և համապատասխանությունը (համադրելիությունը) ապահովող՝ Համաձայնագրի 3-րդ հոդվածով սահմանված հիմնական սկզբունքների պահպանումը:

**5.** Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

- գիտական աստիճանների վերաբերյալ փաստաթղթերի ճանաչման ընթացակարգի իրականացման ժամանակ ընդունված բացասական որոշումները հաշվի առնելու նպատակով՝ որպես անդամ պետություն իրագործել համապատասխան տեղեկատվության հասանելիությունն ապահովող միջոցներ,

- ապահովել ատենախոսությունների պաշտպանության ընթացակարգի բաց լինելը (իրապարակայնությունը)<sup>1</sup> բացառությամբ պետական գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող ատենախոսությունների,

- ապահովել գիտական համայնքի կողմից ատենախոսությունների փորձաքննության անցկացման օբյեկտիվությունը, համակողմանիությունն ու ամբողջականությունը,

- ապահովել ըստ ատենախոսությանը համապատասխանող գիտական ուղղվածության՝ գիտական որակավորման բարձր մակարդակ ունեցող գիտնականներին որպես փորձագետներ ներգրավելը,

- ապահովել ատենախոսության վրա աշխատելու ժամանակ հայցորդի կողմից նոր գիտական արդյունքներ ստանալու ինքնուրույնությունը, ինչպես նաև ատենախոսության մեջ գիտական արդյունքների կեղծմանը և ոչ իրավաչափ փոխառություններին հակազդելը,

- երաշխավորել բարձրագույն որակավորման գիտական աշխատողների ատեսավորման ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ ատենախոսություններին և գիտական աստիճանների հայցորդներին ներկայացվող պահանջների մակարդակի պահպանումը,

- Երաշխավորել գիտական աստիճանների շնորհման հարցերով, ինչպես նաև գիտական աշխատողների մասնագիտությունների ազգային անվանացանկերի (պատրաստման ուղղությունների դասակարգիչների) մշակման ժամանակ համագործակցությունը և տեղեկատվական փոխագործակցությունը,

- ապահովել, որ Համաձայնագրի իրագործման նպատակով իրավասում մարմինների կողմից որոշվեն այն լիազորված կազմակերպությունները, որոնք կիրականացնեն գիտական աստիճանների վերաբերյալ փաստաթղթերի ճանաչման հարցերի առնչությամբ տեղեկատվության փոխանակումը:

Ենելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**:

1. 2023 թվականի հունիսի 8-ին Սոչիում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում գիտական աստիճանների վերաբերյալ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

## ՆԱԽԱԳԱՀՈՂ

21 նոյեմբերի 2023 թվականի  
ՍԴՈ-1700

## Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆԻՍԻ 8-ԻՆ ՍՈՉԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻճԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓԱՍՏԱՁՂԹԵՐԻ  
ՓՈԽԱԴՐՁ ՃԱՆԱՋՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023  
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ  
ՍԴՈ-1700 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի հունիսի 8-ին Սոչիում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում գիտական աստիճանների վերաբերյալ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելով վերաբերյալ» գործը, 2023 թվականի նոյեմբերի 21-ի ՍԴՈ-1700 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի հունիսի 8-ին Սոչիում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում գիտական աստիճանների վերաբերյալ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի նոյեմբերի 21-ի ՍԴՈ-1700 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդիկարյանն շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը։ Նոյն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի

դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ արակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» Վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1700 որոշմամբ 2023 թվականի հունիսի 8-ին Սոչիում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում գիտական աստիճանների վերաբերյալ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր արիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտոն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև

<sup>1</sup>Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված:** Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով:** Ըստ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:**

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, եթե Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքը ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտոց պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. Նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպես է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալ ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմոդ անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմոդ անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերթվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմոդ անձանց նախքան էլեկտրոնային

եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարրերակով դիմում, որի վրա առկա չէ դիմուի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հիդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները:

**Էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային

ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**Էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթուղթի տեղեկատվական կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթուղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

**Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ՝) ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ՝) պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության հսկությունը հաստատելու համար.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝** ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավիրություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

**Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նոյն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նոյն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, եթե այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթուղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նոյն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նոյն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում:

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նոյնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացուցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերօքրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության արիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:


Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նոյն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանայի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլավրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ դրվագը դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարծելու հիմքեր: Կարծում եմ, որ դրվագը դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող գրկել սահմանադրական արդարադարձություն սպանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պեսքը է դրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շրկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

## ԴԱՏԱՎՈՐ՝

## Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«21» նոյեմբերի 2023 թ.



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄ

«ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՐԿԱԴԻՐ ՎՏԱՐՄԱՆ  
ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ՝ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ  
ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ  
ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

21 նոյեմբերի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),  
Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է.  
Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ներքին գործերի նախարարի տեղակալ  
Ա. Սարգսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ  
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»  
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Անկախ Պետու-  
թյունների Համագործակցության մասնակից պետությունների՝ հարկադիր

Վտարման ենթակա անձանց՝ վերադարձի վկայականներով փաստաթղթավորման հարցերով փոխգործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի սեպտեմբերի 22-ի N 1605-Ա որոշմամբ հավանություն է տվել 2023 թվականի հունիսի 8-ին ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ հարկադիր վտարման ենթակա անձանց՝ վերադարձի վկայականներով փաստաթղթավորման հարցերով փոխգործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը՝ Կառավարության՝ 2023 թվականի սեպտեմբերի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1.** «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ հարկադիր վտարման ենթակա անձանց՝ վերադարձի վկայականներով փաստաթղթավորման հարցերով փոխգործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ «Համաձայնագիր») ստորագրվել է 2023 թվականի հունիսի 8-ին Սոչիում՝ հարկադիր վտարման ենթակա անձանց փաստաթղթավորման համար համագործակցության արդյունավետ մեխանիզմներ ստեղծելու նպատակով:

Համաձայնագիրն ստորագրվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության (Վերապահումով), Բելառուսի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից:

**2.** Համաձայնագրով սահմանվում է Կողմերի փոխգործակցության կարգը՝ անձը հաստատող և պետական սահմանը հատելու համար անհրաժեշտ վավերական փաստաթղթեր չունեցող հարկադիր վտարման ենթակա անձանց՝ վերադարձի վկայականներով փաստաթղթավորման (այդ անձանց վերադարձի վկայականների ծևակերպման և տրամադրման) հարցերով:

Համաձայնագրի վավերացումը հնարավորություն կտա համատեղ և համակարգված քայլեր իրականացնել ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներում անկանոն կարգավիճակում գտնվող անձանց նույնականացնելու և քաղաքացիությունը պարզելու ուղղությամբ, ինչպես նաև փոխգործակցություն հաստատել կողմերի միջև հարկադիր վերադարձի ենթակա անձանց վերադարձի վկայականների ձևակերպման հարցերում և գարգացնել արդյունավետ համագործակցություն միգրացիայի ոլորտում:

**3.** Համաձայնագրի 10-րդ հոդվածը սահմանում է, որ Համաձայնագիրը ժամանակավորապես կիրառվում է դրա ստորագրման օրվանից 30 օրը լրանալուց հետո: Վերոհիշյալ դրույթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը կատարել է վերապահում՝ նշելով, որ Հայաստանի Հանրապետության համար Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի և կկիրառվի Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությանը համապատասխան, որը չի նախատեսում միջազգային պայմանագրերի ժամանակավոր կիրառում:

Վերապահմամբ սահմանվում է նաև, որ Հայաստանի Հանրապետությունը ստորագրում է Համաձայնագիրը՝ պայմանով, որ իրեն իրավունք է վերապահում առանձին որոշում կայացնելու «ԱՊՀ մասնակից պետությունների՝ հարկադիր վտարման ենթակա անձանց՝ վերադարձի վկայականներով փաստաթղթավորման հարցերով փոխգործակցության մասին» համաձայնագրի դրույթների տարածման վերաբերյալ այն պետությունների նկատմամբ, որոնք կմիանան Համաձայնագրին այն ստորագրելուց հետո:

**4.** Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

**4.1.** այն դեպքում, երբ հարկադիր վտարման ենթակա անձը չունի անձը հաստատող և պետական սահմանը հատելու համար անհրաժեշտ վավերական փաստաթուղթ, ապա որպես գտնվելու վայրի պետություն՝ ապահովել, որ «ՀՀ միգրացիոն մարմինը հարցում ուղարկի ծագման պետության ներկայացուցչություն՝ ծագման պետությունում նրա անձը և իրավական կարգավիճակը պարզելու նպատակով (հոդված 3, մաս 1),

**4.2.** հարկադիր վտարման ենթակա անձանց անձնական տվյալները Համաձայնագրի դրույթների իրականացման շրջանակներում փոխանցել առանց այդ անձանց համաձայնության, օգտագործել միայն Համաձայնագրի նպատակների համար և պաշտպանել և մշակել Հայաստանի Հանրապետությունում՝ անձնական տվյալների պաշտպանության ոլորտում օրենսդրու-

թյանը և այն միջազգային պայմանագրերին համապատասխան, որոնց մասնակից է Հայաստանի Հանրապետությունը (հոդված 4),

**4.3.** որպես ծագման պետություն հանդես գալու պարագայում՝ ապահովել, որ << ներկայացնուցությունը պատասխանն ուղարկի գտնվելու վայրի պետության՝ հարցումը նախաձեռնող միգրացիոն մարմին՝ հարցումն ստանալու օրվանից 30 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում (հոդված 5, մաս 1),

**4.4.** այն դեպքում, եթե որպես ծագման պետություն հանդես գալու պարագայում՝ հարցման ուսումնասիրման ընթացքում հաստատվում է Հայաստանի Հանրապետությունում՝ հարկադիր վտարման ենթակա անձի՝ Համաձայնագրի 2-րդ հոդվածի «ա» կետով սահմանված իրավական կարգավիճակը, ապա ապահովել, որ << ներկայացնուցությունն այդ անձի համար ձևակերպի վերադարձի վկայական՝ նրա իրավական կարգավիճակի հաստատման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում (հոդված 5, մաս 3),

**4.5.** որպես ծագման պետություն հանդես գալու պարագայում՝ ապահովել, որ վերադարձի վկայականը << ներկայացնուցության կողմից փոստային կապի միջոցով ստացված հարցման պատասխանի հետ միասին ուղարկվի գտնվելու վայրի պետության՝ հարցումը նախաձեռնող միգրացիոն մարմին՝ դրա ձևակերպման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում (հոդված 5, մաս 4),

**4.6.** ապահովել, որ Համաձայնագրի շրջանակներում ուղարկվող փաստաթղթերը կազմվեն ոռուերենով կամ ուղեկցվեն ոռուերեն թարգմանությամբ (հոդված 6),

**4.7.** ինքնուրույն կրել Համաձայնագրի իրականացման ընթացքում առաջացող ծախսերը, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այլ կարգ չի համաձայնեցվում, իսկ որպես ծագման պետություն հանդես գալու պարագայում, ապահովել, որ հարկադիր վտարման ենթակա անձանց վերադարձի վկայականի ձևակերպումը և տրամադրումը << ներկայացնուցության կողմից իրականացվի առանց հյուպատոսական և այլ վճարների գանձման (հոդված 7):

**5.** Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ հարկադիր վտարման ենթակա անձանց՝ վերադարձի վկայականներով փաստաթղթավորման հարցերով փոխգործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

## ՆԱԽԱԳԱՀՈՂ

21 նոյեմբերի 2023 թվականի  
ՄԴՈ-1701

## Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ԱՆԿԱԽ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՐԿԱԴԻՐ ՎՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ԱՆՁԱՆՑ՝ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ  
ՓԱՍՏԱՁՆԹԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ  
ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023  
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ  
ՍԴՈ-1701 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դոնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ հարկադիր վտարման ենթակա անձանց՝ վերադարձի վկայականներով փաստաթղթավորման հարցերով փոխգործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի նոյեմբերի 21-ի ՍԴՈ-1701 որոշմամբ որոշել է, որ «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ հարկադիր վտարման ենթակա անձանց՝ վերադարձի վկայականներով փաստաթղթավորման հարցերով փոխգործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի նոյեմբերի 21-ի ՍԴՈ-1701 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նոյն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու

օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ իրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև իրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական իրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը։ Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը։

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում։ Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ։

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՌ-1701 որոշմամբ «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ հարկադիր վտարման ենթակա անձանց՝ վերադարձի վկայականներով փաստաթղթավորման հարցերով փոխգործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքու:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր արիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի դեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի դեկավարը, ինչպես նաև

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված:** Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով:** Ըստ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված էլեկտրոնային եղանակով դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:**

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, եթե Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող

դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական իհմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպես է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալ ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմու անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝

իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**Էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**Էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթուղթի միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթուղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

**Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝** ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

**Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը. ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթուղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային

## **ստորագրությամբ պաշտպանված Էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, եթե այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմորի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմորի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմորը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմորը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմա-

նադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլավրելի ներկայացված, «Սահմանադրական դադարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դադարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ դրվագը դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ դրվագը դեպքում սահմանադրական դադարանի մասին կողմը չի կարող գրկել սահմանադրական արդարադարձություն սպանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դադարանի աշխատակազմի կողմից նրան պետք է պրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շրկելու և դիմումը «Սահմանադրական դադարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

## ԴԱՏԱՎՈՐ՝

## Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«21» նոյեմբերի 2023թ.



**ՀԱՆՈՒՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄ**

**2016 թվականի Հունվարի 27-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
«ԸՆՏ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՓՈԽԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՇՄԱԿՈՂՄ  
ՀԱՄԱՁՅԱՎՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 նոյեմբերի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթրյանի, Ս. Սաֆարյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում՝)

Կառավարության ներկայացուցիչ՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մուրադյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դուքքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի հունվարի 27-ին ստորագրված «Ըստ երկրների զեկույցների փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի հոկտեմբերի 5-ի N 1693-Ա որոշմամբ հավանություն է տվել 2016 թվականի հունվարի 27-ին ստորագրված «Ըստ երկրների գեկույցների փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության աղիթը՝ Կառավարության՝ 2023 թվականի հոկտեմբերի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուստամնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1.** «Ըստ երկրների գեկույցների փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագիրը (այսուհետ՝ «Համաձայնագիր») ստորագրվել է 2016 թվականի հունվարի 27-ին՝ միջազգային հարկային թափանցիկության բարձրացման, ինչպես նաև կողմ հանդիսացող պետությունների համապատասխան հարկային մարմինների եկամտի գլոբալ բաշխման, վճարված հարկերի և հարկային իրավազորությունների շարքում տնտեսական գործունեության տեղակայման որոշակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության բարելավման նպատակով:

**2.** «Համաձայնագրի 5-րդ բաժնի 1-ին պարբերությամբ սահմանվում է, որ փոխանակված բոլոր տեղեկությունների վրա տարածվում են գաղտնիության կանոնները և «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիայի կամ «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիայի արձանագրությամբ փոփոխված կոնվենցիայով (այսուհետ՝ «Կոնվենցիա») նախատեսված այլ երաշխիքներ, այդ թվում՝ փոխանակված տեղեկությունների օգտագործումը սահմանափակող դրույթները:

Համաձայնագրի 8-րդ բաժնի 6-րդ պարբերությամբ սահմանված կարգով իրավասու մարմնի կողմից իր մասնակցությունը Համաձայնագրին դադարեցնելու պարագայում Համաձայնագրի շրջանակներում նախկինում ստացված բոլոր տեղեկությունները շարունակում են լինել գաղտնի, և դրանց նկատմամբ գործում են Կոնվենցիայի պայմանները:

**3.** «Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

**3.1.** ապահովել, որ Կոնվենցիայի 6-րդ, 21-րդ և 22-րդ հոդվածների դրույթների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինն ամեն տարի ավտոմատ հիմունքներով փոխանակի Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող յուրաքանչյուր հաշվետվություն ներկայացնող սուբյեկտից ստացված ըստ երկրների (ԸԵ) գեկույցը, որը Հայաստանի Հանրապետության տարածքում հարկային նպատակներով ռեզիդենտ է Հայաստանի Հանրապետության բոլոր այլ այդպիսի իրավասու մարմինների հետ, որոնց համար Համաձայնագիրը գործում է, և որտեղ ԸԵ գեկույցում նշված տեղեկությունների հիման վրա հաշվետվություն ներկայացնող սուբյեկտի բազմազգ ձեռնարկությունների (ԲԱՁ) խմբի մեկ կամ մեկից ավելի բաղկացուիչ սուբյեկտները կամ ռեզիդենտ են հարկային նպատակներով, կամ ենթակա են հարկման մշտական հաստատության միջոցով իրականացվող ձեռնարկատիրական գործունեության մասով (բաժին 2, պարբերություն 1),

**3.2.** ապահովել, որ Համաձայնագրի 2-րդ բաժնում նշված տեղեկությունների փոխանակման նպատակներով՝ նշվի ԸԵ գեկույցում ներառված գումարների արժույթը (բաժին 3, պարբերություն 1),

**3.3.** ինչ վերաբերում է Համաձայնագրի 2-րդ բաժնի 1-ին պարբերությանը, ապա ապահովել, որ ԸԵ գեկույցը նախ փոխանակվի ԲԱՁ խմբի հարկաբյուջետային տարվա մասով, որն սկսվում է իրավասու մարմնի կողմից Համաձայնագրի 8-րդ բաժնի 1-ին պարբերության «ա» ենթապարբերության համաձայն ներկայացված ծանուցման մեջ նշված օրվանից կամ դրանից հետո, հնարավորինս շուտ և ոչ ուշ, քան այդ հարկաբյուջետային տարվա վերջին օրվանից 18 ամիս հետո: Չնայած վերոնշյալին՝ ԸԵ գեկույցը պահանջվում է փոխանակել, եթե միայն Համաձայնագրի գործում է երկու իրավասու մարմինների համար էլ, և նրանց համապատասխան պետություններն ունեն գործող օրենսդրություն, որով պահանջվում է ԸԵ գեկույցները ներկայացնել այն հարկաբյուջետային տարվա մասով, որին վերաբերում է ԸԵ գեկույցը, և որը համապատասխանում է Համաձայնագրի 2-րդ բաժնում նախատեսված փոխանակման շրջանակին (բաժին 3, պարբերություն 2),

**3.4.** ապահովել, որ Համաձայնագրի 3-րդ բաժնի 2-րդ պարբերության համաձայն՝ ԸԵ գեկույցը փոխանակվի հնարավորինս շուտ և ոչ ուշ, քան ԲԱՁ խմբի այն հարկաբյուջետային տարվա վերջին օրվանից 15 ամիս անց, որին վերաբերում է ԸԵ գեկույցը (բաժին 3, պարբերություն 3),

**3.5.** ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններն ԸԵ գեկույցներով ավտոմատ փոխանակվեն Գծանշումների ընդլայնվող լեզվով միասնական սխեմայի միջոցով (բաժին 3, պարբերություն 4),

**3.6.** ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններն աշխատեն և համաձայնեցնեն տվյալների էլեկտրոնային փոխանցման մեկ կամ մի քանի մեթոդ, այդ թվում՝ գաղտնագրման չափանիշները՝

ստանդարտացումն առավելագույնի հասցնելու և բարդություններն ու ծախսները նվազագույնի հասցնելու համար, և համակարգող մարմնի քարտուղարությանը ծանուցեն այդ ստանդարտացված փոխանցման և գաղտնագրման մեթոդների մասին (բաժին 3, պարբերություն 5),

**3.7.** ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը ծանուցի մյուս իրավասու մարմնին, եթե Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը հաշվետվություն ներկայացնող այն սուբյեկտի առնչությամբ, որը հարկադրում, հիմքեր ունենա կարծելու, որ սխալ կարող է հանգեցրած լինել տեղեկությունների սխալ կամ թերի հաղորդման կամ, որ առկա է հաշվետվություն ներկայացնող սուբյեկտի կողմից Ըե զեկույց ներկայացնելու իր պարտավորության չկատարում, իսկ որպես վերոհիշյալ ծանուցում ստացած կողմ հանդես գալու պարագայում՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը ծեռնարկի Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ հասանելի համապատասխան միջոցները՝ ծանուցման մեջ նկարագրված սխալները կամ չկատարումները վերացնելու համար (բաժին 4),

**3.8.** փոխանակված բոլոր տեղեկությունների վրա տարածել գաղտնիության կանոնները և Կոնվենցիայով նախատեսված այլ երաշխիքներ, այդ թվում՝ փոխանակված տեղեկությունների օգտագործումը սահմանափակող դրույթները (բաժին 5, պարբերություն 1),

**3.9.** երաշխավորել, որ Ըե զեկույցի միջոցով ստացված տեղեկություններն օգտագործվեն բարձր տրանսֆերային գնագոյացման, բազայի քայլայման և շահույթի տեղափոխման հետ կապված ոիսկերը գնահատելու համար և անհրաժեշտության դեպքում, տնտեսական և վիճակագրական վերլուծության համար, ինչպես նաև երաշխավորել, որ տեղեկությունները չեն օգտագործվի որպես գործառության ամբողջական վերլուծության և համադրելիության ամբողջական վերլուծության հիման վրա առանձին գործարքների տրանսֆերային գնագոյացման և գների մանրամասն վերլուծությանը փոխարինող (բաժին 5, պարբերություն 2),

**3.10.** ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինն այնքանով, որքանով թույլատրվում է կիրառելի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, անհապաղ ծանուցի համակարգող մարմնի քարտուղարությանը Համաձայնագրի 5-րդ բաժնի 1-ին և 2-րդ պարբերությունների պահանջները չկատարելու ցանկացած դեպքի, այդ թվում՝ ցանկացած պաշտպանության միջոցի, ինչպես նաև վերոնշյալ պարբերությունների պահանջները չկատարելու մասով ծեռնարկված ցանկացած միջոցի մասին (բաժին 5, պարբերություն 3):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2016 թվականի հունվարի 27-ին ստորագրված «Ըստ Երկրների գեկույցների փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:
2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

## **ՆԱԽԱԳԱՀՈՂ**

## **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

21 նոյեմբերի 2023 թվականի  
ՍԴՈ-1702

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2016 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆՎԱՐԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ  
ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ԻՐԱՎԱՍՈՒ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱՅՆՍԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023  
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ  
ՄԴՈ-1702 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2016 թվականի հունվարի 27-ին ստորագրված «Ըստ երկրների զեկույցների փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի նոյեմբերի 21-ի ՄԴՈ-1702 որոշմամբ որոշել է, որ 2016 թվականի հունվարի 27-ին ստորագրված «Ըստ երկրների զեկույցների փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի նոյեմբերի 21-ի ՄԴՈ-1702 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը։ Նոյն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի

վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերօքրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիրեն թիսում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» Վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1702 որոշմամբ 2016 թվականի հունվարի 27-ին ստորագրված «Ըստ երկրների գեկույցների փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ

համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի դեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի դեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

**Ներկայացվում գրավոր՝ իրավասու անձի կողմից ստորագրված:** Դիմումը ներկայացվում է թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված էլեկտրոնային եղանակով դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, եթե Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք

Էլեկտրոնային եղանակով դիմումները ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումները ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտու:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալ ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմոդ անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ծնով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ Էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

**Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:**

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթյութեան համար ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթյութերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «Էլեկտրոնային փաստաթյութերի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հիդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**Էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**Էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոփոխաբությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

**Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝** ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝** պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝** ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավիրություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

**Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նոյն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված **էլեկտրոնային փաստաթուղթն ունի նոյն իրավական նշանակությունը**. ինչ որ անձի ծեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, եթե այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նոյն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյուն-

քում կարելի է արձանագրել, որ Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, Էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է Էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ Էլեկտրոնային փաստաթողթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ Էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում Էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է ենօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված Էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը,

ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթը այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթը, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության արիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլարրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ դպյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարծելու հիմքեր: Կարծում եմ, որ դպյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադարձություն սրանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պեղը է դրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շրկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

## ԴԱՏԱՎՈՐ

«21» նոյեմբերի 2023 թ.

## Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄ**

2023 թվականի Հուլիսի 18-ին ՎԻԵՆՆԱՅՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎԱՏՐԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ԱՌԱՋ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՑ  
ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ»  
ՀԱՄԱՁՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

21 նոյեմբերի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),  
Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է.  
Շաթրյանի, Ս. Սաֆարյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ներքին գործերի նախարարի տեղակալ  
Ա. Սարգսյանի,

ՏԵՂԵԿԱԳՐԻ ◆ 4(112)2023

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դրույթ նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի հունիսի 18-ին Վիեննայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ավստրիայի դաշնային կառավարության միջև՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ուսադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման վերաբերյալ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի սեպտեմբերի 22-ի N 1598-Ա որոշմամբ հավանություն է տվել 2023 թվականի հունիսի 18-ին Վիեննայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ավստրիայի դաշնային կառավարության միջև՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ուսադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման վերաբերյալ արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության աղիթը՝ Կառավարության՝ 2023 թվականի հոկտեմբերի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուստամնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ավստրիայի դաշնային կառավարության միջև՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ուսադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման վերաբերյալ արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2023 թվականի հունիսի 18-ին Վիեննայում՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ուսադմիսիայի) մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Հետընդունման համաձայնագիր) կիրարկումն ապահովելու նպատակով:

**2.** Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության և Ավստրիայի դաշնային կառավարության (այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Պայմանավորվող կողմ, Կողմ կամ միասին՝ Պայմանավորվող կողմեր) կողմից անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտի մասին ծանուցումը հետընդունման հարցերով համատեղ կոմիտեի ստանալու օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:

2023 թվականի հունիսի 24-ին ավստրիական կողմից ստացվել է ծանուցում՝ Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ընթացակարգերի կատարման մասին:

**3.** Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության՝ Արձանագրության վավերացման նպատակահարմարության մասին տեղեկանքի համաձայն՝ Համաձայնագրի միջոցով Պայմանավորվող կողմերը նախատեսում են փոխադարձության հիման վրա ստեղծել արագ և արդյունավետ իրավական ընթացակարգեր այն անձանց հայտնաբերման և անվտանգ ու կանոնակարգված վերադարձի համար, որոնք չեն բավարարում կամ այլև չեն բավարարում Հայաստանի կամ Եվրոպական միության անդամ պետություններից մեկի տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու համար պահանջները, և դյուրացնելու այդպիսի անձանց տարանցումը՝ համագործակցության ոգով։ Համաձայնագրը հնարավորություն է տալիս ԵՄ անդամ բոլոր պետությունների հետ սահմանել և իրականացնել միասնական ընթացակարգեր՝ Կողմերի տարածքներում առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման հարցերում։

**4.** Հայաստանի Հանրապետությունում հետընդունումն ու տարանցումն իրականացվում են պետական սահմանի անցման կետ հանդիսացող «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում։ Առանձին դեպքերում անձանց հետընդունման և տարանցման համար կարող են օգտագործվել նաև միջազգային երկաթուղային, օդային կամ ավտոմոբիլային փոխադրման համար հաստատված պետական սահմանի անցման կետերը։

**5.** Հայաստանի Հանրապետությունն Արձանագրությամբ ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները։

- ապահովել, որ հետընդունման դիմումները, դրանց ստացման հաստատումը, դրանց պատասխանները և այլ հարակից հաղորդագրությունները ներկայացվեն Ռեադմիսիոն հայերի կառավարման Էլեկտրոնային համակարգի (այսուհետև՝ ՌՀԿՀՀ) կամ, անհրաժեշտության դեպքում, հաղորդակցման այլ անվտանգ միջոցներով՝ ներառյալ Էլեկտրոնային միջոցները, որոնցից է, օրինակ, Էլեկտրոնային փոստը (հոդված 2, կետ 3),

- երաշխավորել, որ հետընդունման դիմումներ ներկայացնելիս և դրանց պատասխանելիս, պահպանվեն Հետընդունման համաձայնագրի 11-րդ հոդվածում նշված ժամկետները (հոդված 2, կետ 4),

- եթե, որպես Հայցվող Կողմ, հնարավոր չէ ներկայացնել Հետընդունման համաձայնագրի 1-ին և 2-րդ հավելվածներով սահմանված՝ անձը հաստատող փաստաթղթերը, ապահովել, որ << իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունն անցկացնի հարցազրույց, համաձայն Հետընդունման համաձայնագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետի՝ հնարավորինս շուտ դա համաձայնեցնելով հայցող մարմնի հետ (հոդված 3, կետ 1),

- Հայցվող Կողմի իրավասու մարմնի կողմից հետընդունման համար տրված համաձայնությունն ստանալուց հետո կամ Հետընդունման համաձայնագրի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ որպես Հայցվող Կողմ, ապահովել, որ << իրավասու մարմինը Հայցվող Կողմի իրավասու մարմնին ուղարկի գրավոր ծանուցում, որը պարունակում է Արձանագրության 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված տեղեկությունները (հոդված 5, կետ 1),

- որպես Հայցող Կողմ ապահովել, որ տարանցման դիմումը Հայցվող Կողմի իրավասու մարմնին ներկայացվի համաձայն Հետընդունման համաձայնագրին որպես 6-րդ հավելված կցված ձևի, ՈՀԿԷՀ-ի կամ, անհրաժեշտության դեպքում, հարորդակցման այլ անվտանգ միջոցներով, ներառյալ էլեկտրոնային միջոցները, որոնցից է, օրինակ, էլեկտրոնային փոստը, նախատեսվող տարանցումից առնվազն 10 (տասը) օր առաջ (հոդված 6, կետ 1),

- այն դեպքում, եթե ավստրիական կողմը կրել է ծախսեր, որոնք վերջինս պարտավոր չէր կրել Հետընդունման համաձայնագրի 16-րդ հոդվածի համաձայն, և եթե հայկական կողմը պարտավոր էր կրել այդ ծախսերը, փոխհատուցել այդ ծախսերը հաշիվ-պարանքագիրն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում՝ եվրոյով բանկային փոխանցում կատարելով (հոդված 8, կետ 1),

- ապահովել, որ << իրավասու մարմիններն ավստրիական կողմի իրավասու մարմինների հետ համագործակցեն Հետընդունման համաձայնագրի և Արձանագրության իրականացման, ինչպես նաև հարակից հարցերի շուրջ (հոդված 10, կետ 1),

- ավստրիական կողմին անգլերենով տրամադրել այն բոլոր փաստաթղթերն ու գրառումները, որոնք Հետընդունման համաձայնագրի և Արձանագրության կիրարկման շրջանակներում պահանջվում է իրավասու մարմիններից միմյանց փոխանցել, ինչպես, օրինակ, Հետընդունման համաձայնագրին կցված ձևերը (հոդված 11, կետ 2):

Ենելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով,

ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը  
**ՈՐՈՇԵՑ.**

1. 2023 թվականի հուլիսի 18-ին Վիեննայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ազստիայի դաշնային կառավարության միջև՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման վերաբերյալ արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:
2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

## ՆԱԽԱԳԱՀՈՂ

21 նոյեմբերի 2023 թվականի  
ՍԴՈ-1703

## Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ  
ՇՈՒԼԻՍԻ 18-ԻՆ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՎԱՏՐԻԱՅԻ ԴԱՇԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ՝  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՈՂ  
ԱՆՁԱՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՈԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ»  
ՀԱՄԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԱՐՁԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ  
21-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1703 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի հուլիսի 18-ին Վիեննայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ավստրիայի դաշնային կառավարության միջև՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ուժադրման) մասին» համաձայնագրի կիրարկման վերաբերյալ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի նոյեմբերի 21-ի ՍԴՈ-1703 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի հուլիսի 18-ին Վիեննայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ավստրիայի դաշնային կառավարության միջև՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ուժադրման) մասին» համաձայնագրի կիրարկման վերաբերյալ արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի նոյեմբերի 21-ի ՍԴՈ-1703 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիրեն թիսում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի

համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1703 որոշմամբ 2023 թվականի հուլիսի 18-ին Վիեննայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ավստրիայի դաշնային կառավարության միջև»՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման վերաբերյալ արձանագրությունում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնան անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չեր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի դեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի դեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված:** Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով:** Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նոյն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:**

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, եթե Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմուղ հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև

տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական իմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. Նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիմնա վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպես է Սահմանադրական դատարան դիմուղ անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերօդրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմուղ անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմուղ անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների

կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարրերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**Էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**Էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթուղթի միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ծևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթուղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

**Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունը տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության հսկությունը հաստատելու համար.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝** ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

**Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված Էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ծեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխոսափելի են այդ էլեկտրոնային փաստաթուղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային

## **ստորագրությամբ պաշտպանված Էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում։

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին։

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար։

Վերոգրյայի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից։ Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմումը նաև կկարողանար օգտվել դիմումը

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթը այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլավրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դադարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դադարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ դրվագը դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարծելու հիմքեր: Կարծում եմ, որ դրվագը պահանջներում Սահմանադրական դադարանի մասին պահանջները պահպանված չեն կատարված պահանջներում սահմանադրական դադարանի աշխատակազմի կողմից նրան պետք է պրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շրկելու և դիմումը «Սահմանադրական դադարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

## ԴԱՏԱՎՈՐ

«21» նոյեմբերի 2023 թ.

## Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄ

ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 26-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ  
ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ ՆՈՒՅՆ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ  
(ՄԻՆՉԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ  
ՀՕ-131-Ն ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՏԵԼԸ ԳՈՐԾՈՂ  
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

21 նոյեմբերի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),  
Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովհաննիսի, Է.  
Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում՝  
նիմողի՝ Լևոն Հարությունյանի ներկայացուցիչ՝ փաստաբան Գ.  
Թորոսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի  
ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման  
և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդ-  
վածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի  
մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դոնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Լևոն Հարությունյանի դիմումի հիման վրա՝ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և նույն հոդվածի 3-րդ մասի (մինչև 2021 թվականի մարտի 25-ին ընդունված <Օ-131-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ» Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

**«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքը** (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003 թվականի ապրիլի 11-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է 2003 թվականի մայիսի 7-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի հունիսի 1-ից:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ Օրենքի՝ **«Ազգային անվտանգության մարմինների ծառայողին կադրերի տրամադրության տակ թողնելը»** վերտառությամբ 26-րդ հոդվածի՝

**1)** 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողը թողնվում է կադրերի տրամադրության տակ «(...) ծառայողի նկատմամբ քրեական գործ հարուցվելիս՝ մինչև տվյալ գործով վերջնական որոշում կայացնելը».

**2)** 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի «(...) առաջին մասի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում կադրերի տրամադրության տակ գտնվելիս ծառայողի վարձատրությունն իրականացվում է նշված խոչընդոտները վերանալուց հետո, եթե պարզվում է, որ ծառայողի գործողություններում հանցակազմ չկա: Այդ դեպքում վարձատրությունն իրականացվում է կադրերի տրամադրության տակ գտնվելու ամբողջ ժամանակահատվածի համար՝ զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույթաչափի չափով»:

**«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի (<Օ-131-Ն, ընդունվել է 2021 թվականի մարտի 25-ին) 1-ին հոդվածի՝**

**1)** 1-ին կետի համաձայն՝ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն ուժը կորցրած է ճանաչվել,

**2)** 2-րդ կետի համաձայն՝ Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասից հանվել է «2-րդ»՝ բառը:

Գործի քննության առիթը Լևոն Հարությունյանի (այսուհետ՝ Դիմող) 2023 թվականի հունիսի 26-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, սույն գործով պատասխանողի գրավոր բացատրությունը, սույն դիմումի շրջանակներում պահանջված դատական գործը, ինչպես նաև վերլուծելով Օրենքի վերաբերելի դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

## 1. Գործի դատավարական նախապատմությունը

**1.1.** Դիմողի ներկայացուցիչը 2020 թվականի փետրվարի 3-ին հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ 'Շառայություն')՝ 2015 թվականի նոյեմբեր ամսից Դիմողին չվճարված աշխատավարձը (ներայալ՝ օրենքով հասանելիք պարզատրումները, լրացուցիչ աշխատավարձը) ամբողջությամբ վճարել պարտավորեցնելու պահանջի մասին: Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը 2021 թվականի օգոստոսի 11-ի վճռով հայցը բավարել է մասնակիորեն՝ պարտավորեցնելով Շառայությանը 2015 թվականի դեկտեմբերի 15-ից սկսած Դիմողին օրենսդրությամբ սահմանված կարգով վճարել չվճարված աշխատավարձը, իսկ մնացած մասով հայցը մերժել է:

**1.2.** Շառայությունը 2021 թվականի սեպտեմբերի 7-ին և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը (որպես երրորդ անձ) 2021 թվականի սեպտեմբերի 17-ին վերոնշյալ վճռի դեմ ներկայացրել են վերաբնիշ բողոքներ: Հայաստանի Հանրապետության վերաբնիշ վարչական դատարանն իր՝ 2022 թվականի հոկտեմբերի 5-ի որոշմամբ վերաբնիշ բողոքները բավարարել է մասնակի, Շառայությանը սահմանված կարգով Դիմողի՝ 2015 թվականի նոյեմբեր ամսից չվճարված աշխատավարձն ամբողջությամբ վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասով հայցը մերժել է:

**1.3.** Վերոնշյալ որոշման դեմ Դիմողի կողմից 2023 թվականի նոյեմբերի 7-ին ներկայացվել է վճռաբեկ բողոք: Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը 2023 թվականի հունվարի 25-ի որոշմամբ Դիմողի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել է:

**1.4.** 2023 թվականի նոյեմբերի 8-ին Սահմանադրական դատարան մուտքագրված՝ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վ. Դոլմագյանի թիվ ԴԴԱ-7-Ե-24690 գրության համաձայն՝

**1)** 2015 թվականի դեկտեմբերի 15-ին Դիմողը ձերբակալվել է, և նոյն թվականի դեկտեմբերի 17-ին վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը,

**2)** 2018 թվականի դեկտեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետության վերաբնիշ քրեական դատարանի որոշմամբ Դիմողի նկատմամբ կիրառված կալանքը փոխվել է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցով,

**3)** 2023 թվականի ապրիլի 12-ին Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն դատարանի որոշմամբ Դիմողի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Նոյն որոշմամբ վերացվել է նաև ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը,

**4)** Դիմողի նկատմամբ որպես կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունների կասեցում դատավարական հարկադրանքի միջոց չի կիրառվել:

## 2. Դիմողի դիրքորոշումները

**2.1.** Դիմողը փաստում է, որ «(...) իրավահարաբերության ծագման պահին գործող Օրենքով սահմանված էր, որ քրեական գործ հարուցվելու հետևանքով ազգային անվտանգության մարմինների կադրերի տրամադրության տակ թողնված ծառայողը համարվում է ազգային անվտանգության մարմինների ծառայող, ով ունի վարձատրության իրավունք, ընդ որում քրեական գործ հարուցվելու հետևանքով ազգային անվտանգության մարմինների ծառայողը թողնվում էր կադրերի տրամադրության տակ՝ մինչև տվյալ գործով վերջնական որոշում կայացնելը, իսկ վերջինիս վարձատրությունն իրականացվում էր համապատասխան խոչընդոտները վերացվելուց հետո, ընդ որում կադրերի տրամադրության տակ թողնվելիս վերջինս համարվում է ազգային անվտանգության մարմինների ծառայող, ով իրավունք չունի կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից»:

**2.2.** Վկայակոչելով Սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 25-ի ՍԴՌ-1507 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Դիմողը գտնում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, ազգային անվտանգության մարմինների ծառայողի նկատմամբ բացառապես քրեական գործ հարուցված լինելու փաստով պայմանավորված, մինչև տվյալ գործով վերջնական որոշում կայացնելը կադրերի տրամադրության տակ թողնելու մասով, ինչպես նաև Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասն այնքանով, որքանով նախատեսում է ազգային անվտանգության մարմինների ծառայողի աշխատավարձի վճարման ժամկետային սահմանափակում, մասնավորապես՝ աշխատավարձի վճարումը պայմանավորելով «խոչընդոտները վերանայու» հանգամանքով (ծառայողի գործողություններում հանցակազմի բացակայության պարզմամբ), հակասում են Սահմանադրությանը, բանի որ նախատեսում են բացառապես քրեական գործ հարուցելու փաստի հիմքով հանրային ծառայության պաշտոն գրադեցնող անձի՝ այդ պաշտոնից ածանցվող իրավունքի սահմանափակումներ:

**2.3.** Դիմողի պնդմամբ՝ «(...) անձը, մի կողմից հանդիսանալով ազգային անվտանգության ծառայող և գտնվելով կադրերի տրամադրության տակ և հնարավորություն չունենալով այլ տեղում անցնել աշխատանքի, նախ զրկվում է հանրային ծառայության անցնելու և աշխատանքի ազատ ընտրության իրավունքից, իսկ մյուս կողմից կրկին հանդիսանալով ազգային անվտանգության ծառայողով և գտնվելով կադրերի տրամադրության տակ չի ստանում

աշխատավարձ և գրկված է իր և իր ընտանիքի գոյության ապահովման նվազագույն միջոցներից»:

**2.4.** Դիմողը գտնում է, որ իր նկատմամբ կիրառված՝ իրավահարաբերության ծագման պահին գործող Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում սահմանված է խտրական հիմքերով հանրային ծառայողի պաշտոնավարման իրավունքի միջամտություն՝ նման խտրականությունը պայմանավորելով ծառայողի նկատմամբ հարուցված քրեական գործի փաստով, որը, Սահմանադրական դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումների համաձայն, անթույլատրելի է: Հավելելով՝ Դիմողը նշում է, որ տվյալ դեպքում ազգային անվտանգության մարմինների ծառայողի նկատմամբ քրեական գործ հարուցելու փաստով պայմանավորված՝ վերջինս, մինչև նշված գործով վերջնական դատական ակտի կայացումը, թողնվում էր կադրերի տրամադրության տակ, այսինքն՝ հանդիսանում էր ազգային անվտանգության մարմինների ծառայող՝ իրավունք չունենալով կատարել այլ վճարովի աշխատանք: Հետևաբար՝ ըստ Դիմողի՝ խտրականորեն սահմանափակվում էին ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ հանրային ծառայության անցնելու, աշխատանքի ընտրության ազատության իրավունքները, անմեղության կանխավարկածի, համաշափության և իրավական որոշակիության սկզբունքները: Դիմողը գտնում է նաև, որ նշված սահմանափակումը չի կարող հետապնդել Սահմանադրության տեսանկյունից արդարացված որևէ նպատակ, ուստի չի կարող արդարացվել ո՞չ հանրային ծառայության ընդհանուր համակարգի տրամաբանությամբ, ո՞չ էլ հանրային ծառայության որևէ կրնկեատ տեսակի առանձնահատկություններով:

**2.5.** Ըստ Դիմողի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող և իր նկատմամբ կիրառված՝ Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը «(...) այնքանով, որքանով մինչև մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը սահմանափակում է անձի վարձատրություն ստանալու իրավունքը, այսինքն՝ աշխատավարձի վճարման ժամկետային սահմանափակում է նախատեսում, ուղղակի կամ անուղղակի կանխորոշում է անձի մեղավորությունը Ենթադրյալ հանցագործության կատարման համար»: Դիմոցը գտնում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը խնդրահարույց է նաև Սահմանադրության 60-րդ հոդվածի տեսանկյունից:

**2.6.** Դիմոն արձանագրում է, որ «(...) առկա չէ որևէ հիմնավորում, բացառապես քրեական գործ հարուցված լինելու փաստի հիմքով հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձի՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ այդ պաշտոնից ածանցվող որևէ իրավունքի սահմանափակման համար: Բացի այդ, ազգային անվտանգության մարմինների ծառայողին կադրերի տրամադրության տակ թողնելը, նրա աշխատավարձի վճարման ժամկետային սահմանափակում սահմանելը չեն կարող հետապնդել

Սահմանադրությամբ սահմանված որևէ նպատակ, այսինքն նշվածները հակասում են Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներին»:

**2.7.** Ըստ Դիմողի՝ «(...) անհրաժեշտ է որոշել իրավահարաբերության ծագման պահին գործող «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ մասի՝ << Սահմանադրության 3-րդ, 29-րդ, 49-րդ, 57-րդ, 60-րդ, 66-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

### **3. Պատասխանողի դիրքորոշումները**

**3.1.** Ազգային ժողովը (այսուհետ՝ Պատասխանող), վերլուծելով Դիմողի կողմից վիճարկվող Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, գտնում է, որ քրեական գործի հարուցված լինելու պայմաններում ազգային անվտանգության մարմինների ծառայողը թողնվում է կադրերի տրամադրության տակ այնքան ժամանակ, մինչև որ տվյալ գործով կկայացվի վերջնական որոշում։ Այսինքն՝ վերջինիս՝ կադրերի տրամադրության տակ թողնելու պայմանը մինչև տվյալ գործով վերջնական որոշում կայացնելն է, ոչ թե քրեական գործի հարուցման կամ քրեական հետապնդման հարուցման սույն փաստը։ Հետևաբար՝ Պատասխանողն արձանագրում է. «(...) Դիմողի այն պնդումը, որ վիճարկվող հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով իրականացվող գործողությունը իրականացվում է սույն քրեական գործի հարուցման փաստով՝ առարկայագործ է և անհիմն, քանի որ այն իրականացվում է՝ ենելով բացառապես օրինական անհրաժեշտությունից»։

**3.2.** Պատասխանողն ընդգծում է, որ հանրային ծառայության մեջ գտնվող անձի աշխատանքային լիազորությունների ժամանակավոր դադարեցման՝ որպես դատավարական հարկադրանքի միջոցի առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ պաշտոնավարության ժամանակավոր դադարեցում դատավարական հարկադրանքի միջոցը կիրառելի է ինչպես հանրային ծառայության մեջ գտնվող, այնպես էլ առհասարակ պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ՝ առանց սահմանազատելու՝ անձը ներգրավված է հանրային ծառայության մեջ, թե՛ ոչ։

**3.3.** Պատասխանողը նշում է, որ ըստ Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողի վարձատրությունն իրականացվում է նրա նկատմամբ հարուցված քրեական գործով պայմանավորված խոչընդոտները վերանալուց հետո, եթե պարզվում է, որ ծառայողի գործողություններում հանցակազմ չկա: Այսինքն՝ հատուցում ստանալու իրավունքը վերապահվում է արդարացվածի կարգավիճակ ունեցող անձին։ Ընդ որում՝ տվյալ դեպքում վարձատրությունն իրականացվում է կադրերի տրամադրության տակ գտնվելու ամբողջ ժամանակահատվածի համար՝ ազգային անվտանգության մարմիններում ծառայողի զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի չափով։

**3.4.** Պատասխանողը գտնում է, որ սույն դիմումով վիճարկվող դրույթներն իրենց իրավակարգավորիչ դերով սահմանադրականության խնդիր չեն առաջացնում, բավարար չափով որոշակի են և հանդիսանում են ոչ միայն սահմանադրական իրավունքների իրացման երաշխիքներ, այլև ապահովում են արդարացի հավասարակշռություն՝ հանրային և մասնավոր օրինական շահերի միջև:

**3.5.** Պատասխանողը խնդրում է. «Լևոն Հարությունյանի դիմումի հիման վրա՝ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և նոյն հոդվածի 3-րդ մասի (մինչև 2021 թվականի մարտի 25-ն ընդունված <Օ-131-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ)՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ընդունել որոշում վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին»:

#### **4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն դիմումով վիճարկվող օրինադրույթների սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրումներին.

- քրեական գործի հարուցման փաստի ուժով Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողին կադրերի տրամադրության տակ թողնելը՝ փաստացի ազգային անվտանգության մարմինների ծառայողի պաշտոնավարման կամ նրա լիազորությունների կասեցումը, արդյո՞ք համապատասխանում է Սահմանադրության 49-րդ հոդվածին.

- ազգային անվտանգության մարմինների ծառայողին բացառապես քրեական գործ (փաստացի քրեական հետապնդում) հարուցված լինելու փաստի ուժով կադրերի տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում վարձատրություն ստանալու արգելքն արդյո՞ք համահունչ է Սահմանադրության 49 և 75-րդ հոդվածներին:

#### **5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**5.1.** Սահմանադրության՝ «Հանրային ծառայության անցնելու իրավունքը» վերտառությամբ 49-րդ հոդվածի համաձայն.

«Յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով»:

Հանրային ծառայության անցնելու իրավունքը՝ որպես ժողովրդավարական իշխանության իրացման յուրօրինակ դրսևորում, **մի կողմից՝** իրավական և ժողովրդավարական պետության քաղաքացու՝ պետական կառավարման ոլորտում հանրային ծառայության՝ օրենքով նախատեսված կարգով և պայմաններով անցնելու հնարավորության ապահովման երաշխիք է: **Մյուս**

**կողմից՝** հանրային ծառայության անցնելու իրավունքի իրացմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացին ոչ միայն մասնակցում է օրենքով նախանշված կարգով և պայմաններով հանրային իշխանության մարմինների քաղաքականության իրականացմանը, այլև հնարավորություն է ունենում հանրային ծառայության ոլորտում ծավալել աշխատանքային գործունեություն՝ իր մասնագիտական գիտելիքներին և կարողություններին համապատասխան:

Սահմանադրական դատարանը, 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշմամբ արտահայտած՝ ընդիհանուր իմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունքի վերաբերյալ դիրքորոշումները զարգացնելով 2020 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1507 որոշմամբ, գտել է, որ՝

«1) հանրային ծառայողի պաշտոնավարման իրավունքին որևէ միջամտություն պետք է իրականացվի ոչ խորական հիմքերով՝ անկախ այն հանգամանքից, թե այդ ծառայողի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, թե ոչ, և անկախ որևէ այլ հանգամանքից, որը օրինակ հիմքով և իրավաչափ նպատակով չի հանգեցնում նրա պաշտոնավարման իրավունքին իրավաչափ միջամտության».

2) հանրային ծառայողի պաշտոնավարման իրավունքին այնպիսի միջամտությունը, որն ունի առավելագույն կամ բարձր ինտենսիվություն, այն է՝ հանգեցնում է նրա պաշտոնավարման հարկադիր դադարեցման կամ կասեցման, պետք է հիմքով ունենա հստակ, կանխատեսելի և մատչելի կարգավորումներ օրենքի մակարդակում, բացի դրանից, լինի համաչափ։

3) հանրային ծառայությունը կարգավորող օրենքներում չպետք է ամրագրվեն սոսկ քրեական հետապնդման հարուցման փաստով պայմանավորված այնպիսի հավելյալ սահմանափակումներ, որոնք, մի կողմից՝ դուրս են հանրային ծառայության ընդհանուր համակարգի տրամաբանությունից, մյուս կողմից՝ չունեն առարկայական արդարացում հատուկ օրենքում։

4) հաշվի առնելով հանրային ծառայողների առավել մեծ մասի և, ընդհանրապես, որևէ այլ՝ մասնավոր անձի նկատմամբ ինքնին քրեական վարույթ հարուցելու համար իրավական խոշընդուների նվազ լինելը՝ հանրային ծառայողի պաշտոնավարման նկատմամբ քրեական դատավարության օրենքով չնախատեսված այլ՝ հավելյալ սահմանափակումները պետք է կիրառվեն բացառապես սուբյեկտի արդարության կանոնի համաձայն, այն է՝ եթե քրեադատավարական միջոցների կիրառմամբ հնարավոր չէ հասնել Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված համապատասխան իրավաչափ նպատակի կենսագործմանը (...):»։

**5.2. Անդրադառնալով սույն սահմանադրաիրավական վեճին՝** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ըստ թիվ ՎԴ/0676/05/20 վարչական գործի նյութերում առկա Ծառայության տնօրենի կողմից 2015 թվականի դեկտեմբերի 24-ին տրված համապատասխան իրավաչափ նպատակի կենսագործմանը (...):»։

քաղվածքի՝ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Լևոն Պավլովիչ Հարությունյանը 2015 թվականի դեկտեմբերի 15-ից համարվել է Ծառայության կադրերի վարչության տրամադրության տակ՝ առանց դրամական բավարարման՝ ազատվելով սահմանապահ գործերի ուսումնական կենտրոնի պետի պաշտոնից (հիմք՝ Ծառայության քննչական վարչության պետ գնդապետ Մ. Մարուքյանի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 8/5798 գրություն):

Վերոհիշյալ գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ Ծառայության քննչական վարչության վարույթում քննվող թիվ 58217215 քրեական գործով 2015 թվականի դեկտեմբերի 15-ին ձերբակալվել է Ծառայության սահմանապահ գործերի համապատասխան գորամասի իրամանատար՝ փոխգնդապետ Լևոն Պավլովիչ Հարությունյանը: 2015 թվականի դեկտեմբերի 17-ին Դիմողին մեղադրանք է առաջադրվել, և նույն օրը նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը: 2018 թվականի դեկտեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետության վերաբնիշ քրեական դատարանի որոշմամբ Դիմողի նկատմամբ կիրառված կալանքը փոխվել է ստորագրություն չիեռանալու մասին խափանման միջոցով:

**5.3.** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հանրային ծառայության անցնելով՝ քաղաքացու իրավունքի իրականացման ոլորտը՝ հանրային ծառայության ընդհանուր համակարգը, դրա տարրեր բաղադրիչների առանձնահատկություններով պայմանավորված տարաբնույթ կարգավորումների ենթակա իրավահարաբերությունների համախումք է, որտեղ, հանրային ծառայության հարաբերությունները կարգավորող ընդհանուր կանոններից բացի, օրենսդրին վերապահված է նաև հատուկ ոլորտային առանձնահատկությունների առումով հատուկ կարգավորումներ նախատեսելու իրավասությունը:

Սույն գործով վիճարկվող նորմերը նախատեսված են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների ծառայողների իրավական կարգավիճակը կանոնակարգող հատուկ ոլորտային իրավական ակտով՝ Օրենքով, որի ընդունմամբ օրենսդրի նպատակները նախորոշված են ազգային անվտանգության մարմինների հատուկ գործառույթների և դրանց ծառայողների կողմից իրականացվող հանրային իշխանական լիազորությունների բնույթով:

Մասնավորապես՝ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դրույթի ուժով ազգային անվտանգության մարմինների ծառայողն ինքնաշխատ կերպով անցնում է Ծառայության կադրերի տրամադրության տակ՝ փաստացի իր պաշտոնավարման կասեցման հետևանքային ազդեցությամբ:

Մինչև Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված իրավադրույթի սահմանադրաչափության պայմանների ստուգումը Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ, պայմանավորված

ազգային անվտանգության մարմինների գործառույթներով, նրանց կողմից լուծման ենթակա խնդիրների առանձնահատկություններով, այդ մարմինների գործունեության ոլորտներում համապատասխան ծառայողներից պահանջվող՝ Հայաստանի Հանրապետության նկատմամբ հատուկ և անվերապահ հավատարմությամբ, ինչպես նաև նրանց վերապահված իրավասությունների հատուկ բնույթով, Հայաստանի Հանրապետության և ազգային անվտանգության մարմինների ծառայողի փոխհարաբերությունները որակվում են որպես «հապուկ վսրահությամբ և հավաքարմությամբ փոխկապակցված» հարաբերություններ: Այս իրավահարաբերությունները ազգային անվտանգության մարմինների ծառայողին պետության կողմից ցուցաբերված հատուկ վսրահության և, փոխադարձաբար պահանջվող, ազգային անվտանգության մարմինների ծառայողից Հայաստանի Հանրապետության նկատմամբ հատուկ հավատարմության հարաբերություններ են:

Քննարկվող իրավահարաբերությունների վերը նշված հատուկ բնույթը հաշվի առնելով՝ Սահմանադրական դատարանը նկատում է, որ, ի տարբերություն հանրային ծառայության այլ ոլորտների կարգավորմանն ուղղված նորմների, ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված հանրային ծառայության անցնելու սահմանադրական իրավունքի սահմանափակումների և այդ իրավունքին սահմանադրաչափ միջամտության դեպքում օրենսդրի հայեցողական իրավասությանը վերապահված միջակայքն ավելի ընդարձակ է: Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված խիստ սահմանափակում նախատեսվող օրենսդրի իրավասության տիրույթում է այն սահմանադրաչափ նպատակներով, որոնցից են (չսահմանափակվելով միայն թվարկածով՝) (1) ազգային անվտանգության մարմինների ծառայողի կողմից իր պաշտոնեական լիազորությունները քրեական գործով իրեն պաշտպանելու նպատակով գործադրելու հնարավորությունը բացառելը, (2) ազգային անվտանգության մարմինների հեղինակությունը պաշտպանելը՝ դրանց՝ քրեական հետապնդման ենթակա ծառայողին պաշտոնեական լիազորությունների կատարումից հեռու պահելով, (3) ազգային անվտանգության մարմինների ծառայողի նկատմամբ քրեական գործ հարուցված լինելու փաստի բերումով նրա նկատմամբ նրա պաշտոնեական լիազորությունների իրականացման հարցում Ծառայության համակարգից դուրս ազդեցությունը բացառելը: Հետևաբար՝ Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված՝ հանրային ծառայության անցնելու ազգային անվտանգության մարմինների ծառայողի իրավունք՝ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանափակման նպատակները, հանրային ծառայության անցնելու իրավունքի սահմանափակման ընդհանուր նպատակներից իրենց տարբերությամբ հանդերձ, համահունչ են Սահմանադրությանը:

Անդրադառնալով ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված՝ հանրային ծառայության անցնելու իրավունքի՝ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված սահմանափակման՝ Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաշխատության սկզբունքին համապատասխանության հարցին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող նորմով փաստացի կասեցվում են ազգային անվտանգության մարմինների ծառայողի լիազորությունները, ինչը նրա՝ հանրային ծառայության պաշտոնում պաշտոնավարման սահմանափակման առումով օրենսդրի՝ վերը նշված սահմանադրաչափ նպատակների բավարարման համար չի կարող համարվել ոչ համաշափ միջամտություն, քանի որ այդ նպատակների բավարարման հնարավոր միջոցը հենց ազգային անվտանգության մարմինների ծառայողի լիազորությունների փաստացի կասեցումն է:

Այդուհանդերձ, ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված՝ հանրային ծառայության անցնելու իրավունքի՝ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված սահմանափակման՝ Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաշխատության սկզբունքին համապատասխանությունը բովանդակում է նաև տվյալ ծառայողի համար կիրառված սահմանափակմամբ նրա վրա դրվող անհատական բերի և հետապնդվող հանրային շահի հավասարակշռության ապահովման պահանջ: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «հակոռված վստահությամբ և հավադարմությամբ փոխկապակցված» իրավահարաբերություններում ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ հանրային ծառայության անցնելու սահմանադրական իրավունքի սահմանափակման կամ դրան այլ միջամտությունների համար հանրային իշխանության ունեցած ընդարձակ հայեցողական միջակայքը Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաշխատությամբ հակակշռելու առաջնային միջոցը այս բնույթի իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող անհատների սոցիալական գործուն, կայուն և պետության կողմից նրանց նկատմամբ ունեցած «հակոռված վստահությանը» համահունչ երաշխիք է, որին առնչվում է սույն գործով՝ Դիմողին վերաբերելի մասով՝ Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ առկա չէ սույն սահմանադրական վեճի շրջանակում Դիմողի նկատմամբ քրեական գործի հարուցման փաստի հիմքով նրան կադրերի տրամադրության տակ թողնելու միջոցով նրա պաշտոնեական լիազորությունների փաստացի կասեցման նպատակի և Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով դրամական բավարարում տրամադրելու պահանջի բացակայության առումով նույն իրավական դրույթի՝ Սահմանադրության 79-րդ հոդվածին համապատասխանության վեճ:

Նման պայմաններում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, նախևառաջ, անդրադառնալ քրեական գործ հարուցված լինելու հիմքով ազգային անվտանգության մարմինների ծառայողի լիազորությունները կասեցնելու սահմանադրականության հարցին՝ հանրային ծառայության անցնելու իրավունքի երաշխավորման համատեքստում՝ Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման կազմակերպական կառուցակարգերին և ընթացակարգերին համապատասխանության լոյսի ներքո:

**5.4.** Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրական դատարանի դիտարկմամբ՝ մարդու հիմնական իրավունքները և ազատությունները երևութական բնույթ կկրեին, եթե ապահոված չլինեին դրանց արդյունավետ իրականացման համար կազմակերպական կառուցակարգերով և ընթացակարգերով:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով անդրադարձել է վերոնշյալ կարգավորման բովանդակության բացահայտմանը՝ արտահայտելով, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

**1)** «Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջն է, որ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանեն այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Հետևաբար, այս տեսանկյունից Սահմանադրական դատարանը կարևորում է ոչ միայն իրավունքի իրացման կարգի օրենքով նախատեսման փաստը սոսկ, այլև նման կարգի արդյունավետությունը, այսինքն՝ օրենքի նորմերում բովանդակվող իրավակարգավորիչ այնպիսի միջոցների, ծների առկայությունը և դրանց գործադրման հնարավորությունը, որոնք կերաշխավորեն սահմանադրութեն կանխորոշված նպատակի լիարժեք իրացումը՝ կոնկրետ դեպքում հաշվի առնելով նաև Սահմանադրության 78, 79, 80 և 81-րդ հոդվածների պահանջները» (ՍԴՈ-1420),

**2)** «Ընդ որում՝ Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությունից անմիջականորեն բխում է պետության պողիտիվ պարտականությունը՝ օրենքով սահմանելու իրավունքի պաշտպանությանը միտված իրավական այնպիսի միջոցներ, որոնք կապահովեն անկախ, անաշառ և մատչելի արդարադատության միջոցով անձանց հիմնական իրավունքների ու ազատությունների արդյունավետ, արդար պաշտպանություն՝ ինչպես գործի ըստ էության քննության, այնպես էլ դատական ակտերի հետագա բողոքարկման շրջանակներում» (ՍԴՈ-1420),

**3)** «(...) ցանկացած օրենսդրական կարգավորում, այլ ոչ թե միայն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակում, պետք է նպատակ ունենա և ապահովի բոլոր հիմնական իրավունքների (1) արդյունավետ իրականացման համար (2) անհրաժեշտ (3) կազմակերպական (4) կառուցակարգեր և (5) ընթացակարգեր: Միայն բոլոր այս պայմանների միաժամանակյա առկայությունը ցան- կացած օրենսդրական կարգավորման մեջ, առավել ևս որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակող օրենսդրական կարգավորման մեջ, կարող է ապահովել դրա համապատասխանությունը Սահմանադրությանը» (ՍԴՈ-1546),

**4)** «Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այևս ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները» (ՍԴՈ-1571),

**5)** «(...) Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրության վերոնշյալ պահանջն ուղղված է Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ և իրական կենսագործմանը, քանի որ իրավունքի կամ ազատության միայն ամրագրումը բավարար չէ տրված իրավական հնարավորության լիարժեք իրացման համար, ուստի համապատասխան կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական ամրագրումն անհրաժեշտ երաշխիք է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացումն ապահովելու հարցում» (ՍԴՈ-1618):

Սահմանադրության 49-րդ հոդվածով երաշխավորված՝ հանրային ծառայության անցնելու իրավունքի հետ կապված մանրամասների սահմանումը վերապահելով օրենսդրին՝ Սահմանադրիր վերջինիս պարտավորեցրել է Սահմանադրության 75-րդ հոդվածում բովանդակված պահանջով, այն է՝ սահմանել սույն սահմանադրական իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող իրավակարգավորումների ուժով ազգային անվտանգության մարմինների ծառայողը, **քրեական գործ (փաստացի քրեական հետապնդում) հարուցված լինելու ուժով փաստացի գոտվելով ծառայության կադրերի տրամադրության տակ** (օրենքի իմաստով

շարունակելով համարվել ազգային անվտանգության մարմինների ծառայող), գրկում է՝

1) ծառայության համար համարժեք վարձատրությունից,

2) վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, կատարելու հնարավորությունից, որպիսի պայմաններում ազգային անվտանգության մարմինների ծառայողն օրենսդրական կարգավորումների արդյունքում հնարավորություն չի ունենում հոգալու նյութական և սոցիալական նվազագույն պահանջմունքները՝ ապահովելով իր և իր ընտանիքի կենսապահովման նվազագույն կարիքների բավարարումը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով օրենսդրին ազգային անվտանգության մարմինների ծառայողին կադրերի տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում որպես վարձատրության տրամադրման արգելվ դիտում է սույն ծառայողի նկատմամբ քրեական գործ (փաստացի քրեական հետապնդում) հարուցված լինելու փաստը:

Արդյունքում, կրելով ազգային անվտանգության մարմինների ծառայողի համար նախատեսված իրավական սահմանափակումների ողջ բեռը՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողը վիճարկվող դրույթի ուժով չի կարող ստանալ որևէ տեսակի դրամական բավարարում կամ այլ եկամուտ (բացառությամբ օրենքով թույլատրելի վճարովի աշխատանքի): Միաժամանակ, նման սահմանափակման տևողությունն այնքանով, որքանով պայմանավորված է համապատասխան քրեական գործի տևողությամբ, չունի ազգային անվտանգության մարմինների ծառայողի համար իր իրավական վիճակի «տևողության» հարցում որոշակիություն, ինչը, համադրվելով նրա ապրուստի միջոցի սահմանափակման հանգամանքի հետ, չի կարող համարվել ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված՝ հանրային ծառայության անցնելու իրավունքին միջամտություն՝ համաշափության սկզբունքին համապատասխան:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ազգային անվտանգության մարմինների ծառայողին կադրերի տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում վերջինիս վարձատրության (դրամական ապահովման) իրավունքի երաշխավորումը հանրային իշխանության մարմինների պարտականությունն է:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ կադրերի տրամադրության տակ հայտնված ազգային անվտանգության մարմինների ծառայողի համապատասխան դրամական բավարարման չափի և վճարման կարգի պայմանների որոշման հարցը վերապահված է օրենսդրի հայեցողությանը՝

պայմանով, որ օրենսդրի հայեցողությունը չի կարող հանգեցնել ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ կադրերի տակ գտնվելու ժամանակահատվածում ապրուստի համար անհրաժեշտ եկամտի բացակայության կամ դրամական բավարարման այնպիսի պայմաններով կամ կարգով վճարման, որը կարող է հանգեցնել հանրային ծառայողի համար նախատեսված սոցիալական երաշխիքների՝ տվյալ ժամանակահատվածում առարկայական ազդեցության բացակայության (օրինակ՝ նախատեսված դրամական բավարարման գումարի վճարումն այնպիսի կարգով, որ ազգային անվտանգության մարմինների ծառայողին պարբերական վճարումների փոխարեն համապատասխան բավարարումը վճարվի կադրերի տրամադրության տակ գտնվելու ողջ ընթացքի համար հետագայում՝ միանվագ, սակայն ոչ՝ ապրուստի միջոցի համար բնականորեն նախատեսված պարբերականությամբ):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հանրային իշխանության մարմինները պետք է առաջնորդվեն սահմանադրախրավական կարգավորումներին համահունչ այն տրամաբանությամբ, որ հանրային ծառայության անցնելու իրավունքին որևէ միջամտություն չի կարող փաստացի հանգեցնել հանրային ծառայության դիմաց վարձատրություն կամ ողջամիտ դրամական ապահովում ստանալու անհնարինության:

Ուսումնասիրելով սույն գործի նյութերը և դրանք համադրելով վիճարկվող կարգավորումների հետ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ազգային անվտանգության մարմինների ծառայողին՝ բացառապես քրեական գործ (փաստացի քրեական հետապնդում) հարուցված լինելու փաստի ուժով կադրերի տրամադրության տակ թողնելը՝ **առանց որևէ դրամական ապահովման**, մինչև տվյալ գործով վերջնական որոշումը, համահունչ չէ Սահմանադրության 49-րդ հոդվածով երաշխավորված՝ հանրային ծառայության անցնելու իրավունքին, քանի օրենսդրական կարգավորումները չեն բավարարում Սահմանադրության 75-րդ հոդվածով երաշխավորված՝ հիմնական իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու՝ Սահմանադրի պահանջը՝ հանգեցնելով ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ հանրային ծառայության անցնելու իրավունքին անհամաշափ միջամտության:

Ենելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 4-5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը (մինչև 2021 թվականի մարտի 25-ին ընդունված <Օ-131-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) համապատասխանում է Սահմանադրությանը:

2. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը (մինչև 2021 թվականի մարտի 25-ին ընդունված <Օ-131-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) այնքանով, որքանով ազգային անվտանգության մարմինների ծառայողի նկատմամբ քրեական գործ հարուցված լինելու փաստի հիմքով կադրերի տրամադրության տակ թողնվելու արդյունքում տվյալ ժամանակահատվածում ծառայողը զրկվում է դրամական ապահովում ստանալու հնարավորությունից, ճանաչել Սահմանադրության 49-րդ և 75-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

## ՆԱԽԱԳԱՀՈՂ

## Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

21 նոյեմբերի 2023 թվականի  
ՍԴՈ -1704



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄ

2023 թվականի Հոկտեմբերի 3-ին եւ Հոկտեմբերի 23-ին  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՕՊԵԿ-Ի ՄԻՋԱՀԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ՄԻՋԵՎ «ԿԱՆԱԶ, ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

28 նոյեմբերի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),  
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի,  
Է. Շաթրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,  
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ֆինանսների նախարարի տեղակալ Է.  
Հակոբյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի  
3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»  
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դուրբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի  
հոկտեմբերի 3-ին և հոկտեմբերի 23-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման ծրագիր» վարկային

համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունը իր՝ 2023 թվականի նոյեմբերի 17-ի N 1963-Ա որոշմամբ հավանություն է տվել 2023 թվականի հոկտեմբերի 3-ին և հոկտեմբերի 23-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի նոյեմբերի 17-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման ծրագիր» (այսուհետ՝ Ծրագիր) վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի հոկտեմբերի 3-ին և հոկտեմբերի 23-ին:

Ծրագրի նպատակն է խթանել Հայաստանում կանաչ, դիմակայուն և ներառական զարգացումը՝ նպաստելով կիմայի փոփոխության հետևանքների մեղմացմանն ու հարմարվողականությանը, բարելավելով շրջակա միջավայրի կառավարումը և էներգաարդյունավետությունը, ամրանդելով հավասարություն և խթանելով մարդկային կապիտալի զարգացումը, ինչպես նաև ամրապնդելով կառավարումը:

Վարկը տրամադրվում է ի աջակցություն Ծրագրի, մասնավորապես՝ այն նախնական միջոցառումների, որոնք Հայաստանի Հանրապետությունը ձեռնարկել է բարեփոխումների օրակարգի երեք (3) ուղղություններով (Հավելված 1-ի 2.01 կետ): Վերոհիշյալ երեք ուղղություններն են՝ Ուղղություն 1. «Կիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության խթանում և շրջակա միջավայրի կառավարման համար կարգավորող շրջանակի բարելավում», որը բաղկացած է հետևյալ նախնական միջոցառումներից. i) Նախնական միջոցառում 1. «Հանրային ներդրումների կառավարում՝ հաշվի առնելով կիմայի վերաբերյալ տեղեկությունները», ii) Նախնական միջոցառում 2. «Էներգաարդյունավետության խթանում», iii) Նախնական միջոցառում 3. «Մթնոլորտային օդի պահպանություն», iv) Նախնական միջոցառում 4. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում», Ուղղություն 2. «Հավասարության ամրապնդում և մարդկային կապիտալի զարգացման խթանում», որը բաղկացած է հետևյալ նախնական միջոցառումներից. i) Նախնական միջոցառում 5. «Առ-

ցիալական աջակցության համակարգի հասցեականության բարելավում», ii) Նախնական միջոցառում 6. «Դեպի ուսումնառության վերջնարդյունքներ ուղղվող՝ կարողությունների վրա հիմնված նոր կրթական ծրագրի ներդրում», Ուղղություն 3. «Հակակոռուպշիոն շրջանակի և արդարադատության ոլորտի արդյունավետության հզորացում», որը բաղկացած է հետևյալ նախնական միջոցառումներից. i) Նախնական միջոցառում 7. «Պետական օժանդակության գնահատում», ii) Նախնական միջոցառում 8. «Արդարադատություն և կոռուպշիայի դեմ պայքար»:

Համաձայնագրին ունի երեք (3) հավելված. Հավելված 1. «Ծրագրի նկարագրություն», Հավելված 2. «Վարկի տրամադրումը», Հավելված 3. «Աստիճանական մարումը»:

Համաձայնագրին կցված «2019 թվականի հունիսի դրությամբ պետական հատվածի վարկային համաձայնագրերի նկատմամբ կիրառելի ՄԶՕՀ-ի (Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամ) ընդհանուր պայմանները» (այսուհետ՝ Ընդհանուր պայմաններ) համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Ընդհանուր պայմանները կիրառվում են պետական հատվածի ցանկացած վարկային համաձայնագրի նկատմամբ այն ծավալով և ենթակա են այնպիսի փոփոխությունների, որոնք կարող են սահմանվել համապատասխան Վարկային համաձայնագրով:

**2.** Համաձայնագրով ՕՊԵԿ հիմնադրամը՝ Համաձայնագրում սահմանված պայմաններով, Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է հիսուն միլիոն եվրոյի չափով վարկ (€50,000,000) (այսուհետ՝ Վարկ): Վարկն ունի արտոնյալ ժամկետ, որը մեկնարկում է Համաձայնագրի կնքման ամսաթվից և ավարտվում է այդ ամսաթվից հինգ (5) տարի անց: Վարկի մարումն սկսվում է 2028 թվականի հոկտեմբերի 15-ից և ավարտվում 2043 թվականի ապրիլի 15-ին: Վարկի փակման ամսաթիվը 2024 թվականի դեկտեմբերի 31-ն է կամ այդպիսի այլ ամսաթիվը, որը ՕՊԵԿ հիմնադրամը հաստատում է իր հայեցողությամբ: Վարկն ունի Համաձայնագրի կնքման ամսաթվից սկսած հինգ (5) տարի արտոնյալ ժամկետ:

**3.** Հաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

**3.1.** յուրաքանչյուր կիսամյակ՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 15-ին և հոկտեմբերի 15-ին, վճարել Տոկոս, որի տոկոսադրույթը հաշվարկման ցանկացած ժամանակահատվածի համար համարվում է այն դրույքաչափը, որը կազմում է վեցամյա (6) ԵՎՀԲՌ-ի գումարը՝ գումարած մեկ ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական տոկոս (1.61%)՝ տարեկան, որը հաշվեգրվում է առհանված և չվճարված գումարների նկատմամբ (հոդված 2, կետեր 2.02 պարբերություն «ա», 2.05),

**3.2.** բացառությամբ առաջին վճարման, որի հաշվեգրումը կսկսվի Համաձայնագրի կնքման ամսաթվից վաթուն (60) օր հետո և ենթակա է վճարման սկզբնապես՝ Գործողության մեջ մտնելու ամսաթվից հետո իննսուն (90) օրվա ընթացքում, յուրաքանչյուր կիսամյակ՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 15-ին և հոկտեմբերի 15-ին վճարել պարտավորության վճար՝ Վարկի չափանված գումարի նկատմամբ տարեկան հաշվեգրվող մեկ քառորդ (0.25%) տոկոսի չափով (հոդված 2, կետեր 2.03 և 2.05),

**3.3.** Գործողության մեջ մտնելու ամսաթվից հետո իննսուն (90) օրվա ընթացքում վճարել միանվագ կոմիսիոն վճար՝ Վարկի մեկ քառորդ (0.25%) տոկոսի չափով (հոդված 2, կետ 2.04),

**3.4.** Արտոնյալ ժամկետի (ժամանակահատված, որը մեկնարկում է Համաձայնագրի կնքման ամսաթվից և ավարտվում է այդ ամսաթվից հինգ (5) տարի անց) ավարտից հետո՝ երեսուն (30) կիսամյակային վճարումներով, սկսած 2028 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև 2042 թվականի հոկտեմբերի 15-ը՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 15-ին և հոկտեմբերի 15-ին՝ եվլոյով կամ ՕՊԵԿ հիմնադրամի համար ընդունելի ազատ փոխարկելի ցանկացած այլ արժույթով՝ եվլոյով արտահայտված գումարին համարժեք գումարի չափով, որը վճարվում է մարման պահին և վայրում գործող շուկայական փոխարժեքով, մարել Վարկի մայր գումարը ՕՊԵԿ հիմնադրամի կողմից սահմանված 3.33% չափով, իսկ 2043 թվականի ապրիլի 15-ին՝ 3.43% (հոդված 2, կետ 2.06 և հավելված 3, կետ 1.01),

**3.5.** Եթե առաջին Մարման ամսաթվի (Համաձայնագրի 3-րդ հավելվածում սահմանված՝ Վարկի յուրաքանչյուր կիսամյակային մարման ամսաթիվ) դրությամբ Վարկային միջոցներն ամբողջությամբ չեն առհանվել, ապա Վերադարձնել Վարկի առաջին Մարման ամսաթվի դրությամբ Վարկային միջոցների առհանման չափով առաջին Մարման ամսաթվի դրությամբ առհանված և չճնարված Վարկի գումարը՝ Համաձայնագրի 3-րդ հավելվածի 1.01 կետին համապատասխան (հավելված 3, կետ 2.01, պարբերություն «ա»),

**3.6.** Եթե առաջին Մարման ամսաթվի դրությամբ Վարկային միջոցներն ամբողջությամբ չեն առհանվել, ապա Վերադարձնել առաջին Մարման ամսաթվից հետո կատարված ցանկացած առհանում՝ այդ առհանման օրվան հաջորդող յուրաքանչյուր Մարման ամսաթվին՝ այն գումարի չափով, որը սահմանվում է ՕՊԵԿ հիմնադրամի կողմից հետևյալ ձևով՝ առհանման գումարը բազմապատկած կոտորակով, որի համարիչը Մարման այդ ամսաթվի համար 3-րդ հավելվածի 1.01 կետում ներկայացված աղյուսակում նշված տոկոսն է, իսկ հայտարարը այդ ամսաթվի հետ համընկնող կամ դրան հաջորդող Մարման ամսաթվերի համար սահմանված մնացած բոլոր տոկոսների ընդհանուր գումարն է (հավելված 3, կետ 2.01, պարբերություն «բ»),

**3.7.** հայտարարել Ծրագրի և դրա իրականացման մասով Հայաստանի Հանրապետության հանձնառությունը այս և Ընդհանուր պայմանների 7.06

կետի նպատակներով ՕՊԵԿ հիմնադրամի հետ ժամանակ առ ժամանակ, ՕՊԵԿ հիմնադրամի խնդրանքով կարծիքներ փոխանակել Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի և Ծրագրի իրականացման գործընթացում արձանագրված առաջընթացի վերաբերյալ, իսկ մինչև կարծիքների յուրաքանչյուր փոխանակումը՝ ՕՊԵԿ հիմնադրամի դիտարկմանը և մեկնաբանությանը ներկայացնել Ծրագրի իրականացման գործընթացում արձանագրված առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն այնքան մանրամասն, որքան ողջամտորեն պահանջում է ՕՊԵԿ հիմնադրամը, և, չսահմանափակելով Համաձայնագրի 4.01 կետի «ա» պարբերությունը՝ անհապաղ տեղեկացնել ՕՊԵԿ հիմնադրամին ցանկացած իրավիճակի մասին, որի հետևանքով էապես փոփոխվում են Ծրագրի կամ Ծրագրի շրջանակներում ձեռնարկված ցանկացած գործողության, այդ թվում՝ Համաձայնագրի 1-ին հավելվածում ամրագրված գործողությունների նպատակները (հոդված 4, կետ 4.01),

**3.8.** Վարկային միջոցներն օգտագործել Համաձայնագրի 1-ին հավելվածում ամրագրված և ՕՊԵԿ հիմնադրամի համար ընդունելի նպատակներով (հոդված 5, կետ 5.01),

**3.9.** Երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության լիազորված ներկայացուցիչը կամ Հայաստանի Հանրապետության կողմից նշանակված և ՕՊԵԿ հիմնադրամ ներկայացված այդպիսի այլ անձ (անձինք) լիազորված լինեն կատարելու Վարկի հաշվից առհանումներ (հոդված 5, կետ 5.05),

**3.10.** Վարկի հաշվից Վարկը առհանելուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում ՕՊԵԿ հիմնադրամին տրամադրել ա) արձանագրություն, որ համարժեք գումար է հաշվառվել Հայաստանի Հանրապետության բյուջեի կառավարման համակարգում և բ) հաշվետվություն Վարկի հաշվին ստացված մուտքերի և հատկացման մասին՝ կապված Վարկի միջոցների հետ, այնուհետև ՕՊԵԿ հիմնադրամի պահանջով տրամադրել Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի եռամսյակային կատարման նկատմամբ իրականացվող առողջական հաշվետվությունը (հոդված 5, կետ 5.06),

**3.11.** ապահովել, որ որևէ Արտաքին պարտք առաջնահերթ չինի Վարկի նկատմամբ՝ Հայաստանի Հանրապետության հսկողության ներքո գտնվող կամ նրա համար օգտագործվող արտաքույթի տրամադրման, իրացման կամ տեղաբաշխման առումով (Ընդհանուր պայմաններ, հոդված 4, կետ 4.01),

**3.12.** ՄԶՕՀ-ի նկատմամբ անվերապահորեն և բացարձակապես ապահովել, որ Ծրագրի իրականացումը (այդ թվում՝ Ապրանքների գնումը և ցանկացած Պայմանագրի իրականացում) չներառի Կոռուպցիոն գործելակերպ, Հարկադիր գործելակերպ, Դավադիր գործելակերպ կամ Խարդախ գործելակերպ, և գործադրել բոլոր միջոցները՝ այդպիսի գործելակերպերը կանխելու համար (Ընդհանուր պայմաններ, հոդված 4, կետ 4.05),

**3.13.** որպես Ծրագրի իրականացման երկիր՝ կրել Հայաստանի Հանրապետությունում սահմանված բոլոր հարկերը, անկախ այն հանգամանքից՝ դրանք կապված են Վարկային համաձայնագրի կամ կողմերի միջև կնքված ցանկացած լրացուցիչ համաձայնագրի ծևակերպման, հանձնման կամ գրանցման հետ, իսկ Վարկի մայր գումարը, դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսը, Սպասարկման վճարը և ցանկացած այլ վճար վճարել առանց այդպիսի Հարկերի պահումների և առանց այդպիսի Հարկերի (Ընդհանուր պայմաններ, հոդված 4, կետ 4.06),

**3.14.** Մ20Հ-ի բոլոր փաստաթղթերը, գրառումները, նամակագրությունը և համանման նյութերը համարել գաղտնի, և դրանք՝ որպես Ծրագրի իրականացման երկիր, որևէ ձևով չհրապարակել Հայաստանի Հանրապետությունում, եթե Մ20Հ-ի հետ ձեռք չի բերվել այլ համաձայնություն (Ընդհանուր պայմաններ, հոդված 4, կետ 4.07),

**3.15.** որպես Ծրագրի իրականացման երկիր՝ երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետությունում Մ20Հ-ի ակտիվները որևէ ձևով օտարման կամ ազգայնացման, բռնագանձման, արգելանքի կամ առգրավման ենթակա չեն, ինչպես նաև համանման ձևով երաշխավորել, որ Վարկի մայր գումարի և դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսների, Սպասարկման վճարի և ցանկացած այլ վճարի մարումը չի արգելափակվի, կամ դա չի խոչընդոտվի սահմանափակումներով, կարգավորումներով, վերահսկողության միջոցներով կամ մորատորիումով, որոնք սահմանվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենքի կամ որոշման ուժով (Ընդհանուր պայմաններ, հոդված 4, կետ 4.08),

**3.16.** Մ20Հ-ին տրամադրել այն բոլոր տերեկությունները, որոնք Մ20Հ-ը ողջամտորեն պահանջում է ցանկացած ժամանակ, քանի դեռ լիովին չի մարվել Վարկը, և վերաբերում են Հայաստանի Հանրապետության տարածքում տիրող ֆինանսական և տնտեսական պայմաններին, այդ թվում՝ Վճարումների և Արտաքին պարտքի՝ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև նրա քաղաքական կամ վարչական ստորաբաժանումների ու ցանկացած սուբյեկտի, որոնք պատկանում են կամ կառավարվում են Հայաստանի Հանրապետության կողմից կամ գործում են Հայաստանի Հանրապետության անունից և Հայաստանի Հանրապետության համար, կամ ցանկացած այնպիսի ստորաբաժանման կամ ցանկացած այնպիսի հաստատության մնացորդը, որոնք Հայաստանի Հանրապետության համար կատարում են Կենտրոնական բանկի կամ արտարժույթի կայունացման հիմնադրամի գործառույթ կամ համանման գործառույթներ (Ընդհանուր պայմաններ, հոդված 5, կետ 5.04),

**3.17.** Մ20Հ-ի պահանջով առհանված և ոչ թույլատրելի համարվող ծախսները (Ծրագրի իրականացումը ապահովելու նպատակով Վարկային միջոցների՝ ցանկացած ձևով օգտագործումը, որն ընդունելի է ՕՊԵԿ հիմնադրամի համար) ֆինանսավորելու համար օգտագործված գումարի

ցանկացած մաս ՄԶՕՀ-ի հաշվին վերադարձնել այդ պահանջը ներկայացվելուց հետո վարչուն (60) օրվա ընթացքում (Ընդհանուր պայմաններ, հոդված 6, կետ 6.06),

**3.18.** Ծրագրի ավարտից անմիջապես հետո, սակայն ցանկացած պարագայում ոչ ուշ, քան Ավարտի ամսաթվից վեց (6) ամիս հետո, կամ այդպիսի ավելի ուշ ամսաթիվ, որին ՄԶՕՀ-ն իր իսկ հայեցողությամբ կարող է համաձայնել, ՄԶՕՀ-ի հաշվին վերադարձնել առհանված, սակայն չօգտագործված Վարկային միջոցների մնացորդը (Ընդհանուր պայմաններ, հոդված 7, կետ 7.09),

**3.19.** Ընդհանուր պայմանների 10-րդ հոդվածով նախատեսված որևէ վարույթի շրջանակներում չներկայացնել պահանջ առ այն, որ Վարկային համաձայնագրի կամ դրա լրացուցիչ փաստաթղթերի որևէ դրույթ որևէ պատճառով անվավեր է կամ ենթակա չէ կատարման (Ընդհանուր պայմաններ, հոդված 10, կետ 10.02):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. 2023 թվականի հոկտեմբերի 3-ին և հոկտեմբերի 23-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և ՕՊԵԿ-ի միջազգային գարգացման հիմնադրամի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական գարգացման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

## ՆԱԽԱԳԱՀՈՂ

28 նոյեմբերի 2023 թվականի  
ՍԴՈ -1705

## Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ»

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 28-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻН՝

«2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

23-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ ՕՊԵԿԻ ՄԻՋԱՀԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՄԻՋԵՎ «ԿԱՆԱԶ, ԴԻՄԱԿԱՅՈՒՆ և ՆԵՐԱՌԱԿԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԳՅԱՆԱԳՐՈՒՄ

ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023

ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ

ՍԴՈ-1705 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի՝ «2023 թվականի հոկտեմբերի 3-ին և հոկտեմբերի 23-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-1705 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի հոկտեմբերի 3-ին և հոկտեմբերի 23-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-1705 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդիկարյանն շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի

համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ իրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքին, ինչպես նաև իրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական իրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիրեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա

Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1705 որոշմամբ 2023 թվականի հոկտեմբերի 3-ին և հոկտեմբերի 23-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի դեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի դեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված:** Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով:** Ըստ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նոյն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:**

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, եթե Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմուղ հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև

տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եղրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. Նման եղրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպես է Սահմանադրական դատարան դիմու անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալ ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության հսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմու անձանց համար հստակ և կանխատեսելի կինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմու անձանց համար պետք է

պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

**Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարրերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:**

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**Էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**Էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

**Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավատագիրը.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ՝) պայմանանշանների ուղղության հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝** ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավիրություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

**Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը. ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք,

**կազմակերպությունները պարտավոր չեն ընդունել Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթղթը համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ծեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ծեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմուի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին»

սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթողի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմոդի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլավրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դադարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դադարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ դրվագը դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարծելու հիմքեր: Կարծում եմ, որ դրվագը սահմանադրական դադարանություն կողմը չի կարող գրկել սահմանադրական արդարադարպություն սպանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դադարանի աշխատակազմի կողմից նրան պետք է պրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շրկելու և դիմումը «Սահմանադրական դադարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

## ԴԱՏԱՎՈՐ

«28» նոյեմբերի 2023 թ.

## Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄ

2023 թվականի սեպտեմբերի 7-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2009 թվականի ՀՈՒՆԻՍԻ 21-Ի՝  
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ  
ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՀԱՆՁԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ ՓՈԽԸՆԹՈՒՄԱՆ ՀՈՒՃԱԳՐՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

5 դեկտեմբերի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),  
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովհակիմյանի, Է.  
Շաթրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում՝)

Կառավարության ներկայացուցիչ՝ Արտաքին գործերի նախարարի  
տեղակալ Վ. Կոստանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ  
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»

սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի սեպտեմբերի 7-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև 2009 թվականի հունիսի 21-ի՝ դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատելու մասին Փոխըմբռուման հուշագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարություն իր՝ 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1840-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի սեպտեմբերի 7-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև 2009 թվականի հունիսի 21-ի՝ դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատելու մասին Փոխըմբռուման հուշագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագիր վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության աղիթը՝ Կառավարության՝ 2023 թվականի հոկտեմբերի 27-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև 2009 թվականի հունիսի 21-ի՝ դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատելու մասին» Փոխըմբռուման հուշագիրը (այսուհետ՝ Փոխըմբռուման հուշագիր) գործում է 2010 թվականի հունվարի 14-ից:

2. 2023 թվականի սեպտեմբերի 7-ին Աբու Դաբիում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև (այսուհետ՝ Կողմեր) ստորագրվել է Փոխըմբռուման հուշագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն)՝ երկու երկրների միջև գրուաշրջիկների հոսքերի ավելացման, գործարար և առևտրական կապերի ամրապնդման, կրթամշակութային, հումանիտար, առողջապահական և այլ ոլորտներում

համագործակցության խորացման, ինչպես նաև երկողմ հարաբերությունների հետագա զարգացման նպատակով:

**3. Արձանագրությամբ Փոխըմբռնման հուշագրի անվանումը շարադրվում է հետևյալ խմբագրությամբ.**

«Փոխըմբռնման հուշագրի Հայաստանի Հանրապետության կառավարության և Արարական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև քաղաքացիների մուտքի արտոնագրի ստանալու պահանջից ազատելու մասին»:

**4. Արձանագրության համաձայն՝ մուտքի արտոնագրի ստանալու պահանջից ազատված անձնագրեր են համարվելու երկու երկրների վավերական՝ դիվանագիտական, հատուկ, պաշտոնական և սովորական անձնագրերը: Կողմերը կթույլատրեն դիվանագիտական, հատուկ, պաշտոնական և սովորական՝ 6 ամսից ոչ պակաս վավերականության ժամկետով անձնագրեր ունեցող իրենց քաղաքացիներին մուտք գործել, դուրս գալ և տարանցմամբ տեղաշարժվել իրենց համապատասխան երկրների տարածքներով՝ առանց մուտքի արտոնագրի և վճարի: Բացի դրանից, նշված անձնագրերն ունեցող Կողմերի քաղաքացիներին թույլատրվելու է գտնվել մյուս կողմի երկրի տարածքում առավելագույնը 90 օր ժամկետով:**

**5. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը փոխադրման հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.**

**5.1. մուտքի արտոնագրի ստանալու պահանջից ազատված անձնագրեր համարել Արարական Միացյալ Էմիրությունների վավերական՝ դիվանագիտական, հատուկ, պաշտոնական և սովորական անձնագրերը,**

**5.2. թույլատրել դիվանագիտական, հատուկ, պաշտոնական և սովորական՝ 6 ամսից ոչ պակաս վավերականության ժամկետով անձնագրեր ունեցող Արարական Միացյալ Էմիրությունների քաղաքացիներին մուտք գործել, դուրս գալ և տարանցմամբ տեղաշարժվել Հայաստանի Հանրապետության տարածքով՝ առանց մուտքի արտոնագրի և վճարի,**

**5.3. թույլատրել դիվանագիտական, հատուկ, պաշտոնական և սովորական անձնագրերն ունեցող Արարական Միացյալ Էմիրությունների քաղաքացիներին գտնվել Հայաստանի Հանրապետության տարածքում առավելագույնը 90 օր ժամկետով:**

**6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական,**

փոխահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի սեպտեմբերի 7-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արարական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև 2009 թվականի հունիսի 21-ին՝ դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատելու մասին Փոխըմբռնման հուշագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

## ՆԱԽԱԳԱՀՈՂ

## Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

5 դեկտեմբերի 2023 թվականի  
ՍԴՈ-1706

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ  
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ  
ՄԻՋՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԵՎ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի՝ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ  
ԱՆՁՆԱԳՐԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ  
ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՀԱՆՁԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
ՓՈԽԸՆՄՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ  
5-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1706 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դոնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի սեպտեմբերի 7-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև 2009 թվականի հունիսի 21-ի՝ դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատելու մասին Փոխըմբռնման հուշագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի դեկտեմբերի 5-ի ՍԴՈ-1706 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի սեպտեմբերի 7-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև 2009 թվականի հունիսի 21-ի՝ դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատելու մասին Փոխըմբռնման հուշագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի դեկտեմբերի 5-ի ՍԴՈ-1706 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին»

սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նոյն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (որանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ արակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդահին գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիրեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելո՛ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից

որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1706 որոշմամբ 2023 թվականի սեպտեմբերի 7-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արարական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև 2009 թվականի հունիսի 21-ի դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատելու մասին Փոխըմբռնման հուշագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առողջում անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենք 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավող առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը

Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի դեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի դեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Ըստ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նոյն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված էլեկտրոնային եղանակով դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները:

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, եթե Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական կարգավորումը է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

նադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. Նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպես է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերօգրյալ ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրա-

կանացվելու է Էլեկտրոնային փաստաթղթում առկա Էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում Էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների հնչ գործիքազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված Էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան Էլեկտրոնային եղանակով Էլեկտրոնային փաստաթղթի ծևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա Էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ Էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման Էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում Էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում Էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

**Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարրերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:**

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլին, հետևյալ հիմնական հասկացությունները.

**Էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**Էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

**Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ՝** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ՝** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության հսկությունը հաստատելու համար.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝** ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

**Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.**

Նոյն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նոյն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ծեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է Էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, եթե այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթուղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նոյն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթեր,** եթե **նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթուղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նոյն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ծեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, եթե այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթուղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերօքյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթուղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող

իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմումը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմումը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:


Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալ՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլավրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանը իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում։ Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ դպրում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարծելու հիմքեր։ Կարծում եմ, որ դպրում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադարձություն սրանալու հրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պեսք է դրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շրկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար։

## ԴԱՏԱՎՈՐ

## Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«05» դեկտեմբերի 2023 թ.



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՈՒՏՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 398-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ  
ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

19 դեկտեմբերի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),  
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խոնդկարյանի, Հ.  
Հովակիմյանի, Է. Շարիբյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,  
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)  
դիմոդի՝ Արուայակ Ալեքսանյանի ներկայացուցիչ Ա. Մանուկյանի,  
գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի  
ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման  
և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ  
հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատա-  
րանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արուայակ Ալեքսանյանի  
դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավա-  
րության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը  
համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

**Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենս-  
գիրը (այսուհետ նաև՝ Օրենսգիրը) Ազգային ժողովի կողմից ընդունվել է**

2021 թվականի հունիսի 30-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2021 թվականի հուլիսի 27-ին և ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին:

Օրենսգրքի՝ «Վճռաբեկ դատարանում հատուկ վերանայման բողոքով նախնական վարույթը» վերտառությամբ 398-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե Վճռաբեկ դատարանը գալիս է հեվլության, որ վարույթ ընդունելու պայմանների հիմնավորումները բավարար չեն»:

Գործի քննության առիթն Արուսյակ Ալեքսանյանի (այսուհետ նաև՝ Դիմող) 2023 թվականի օգոստոսի 7-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով Օրենսգրքի վիճարկվող իրավադրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

### **1. Սահմանադրական վեճի նախապատմությունը**

Հակառակություն դատարանի 2023 թվականի հունվարի 18-ի թիվ ՀԿԴ/0002/01/23 գործով որոշմամբ մեղադրյալ Ա. Ալեքսանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը՝ երեք ամիս ժամանակով՝ նույն ժամանակահատվածում սահմանափակելով նրա՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը:

Վերաքննիչ քրեական դատարանը, գրավոր ընթացակարգով դատական վերանայման ենթարկելով հակառակություն դատարանի 2023 թվականի հունվարի 18-ի՝ մեղադրյալ Ա. Ալեքսանյանի նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին թիվ ՀԿԴ/0002/01/23 գործով որոշման դեմ մեղադրյալ Ա. Ալեքսանյանի պաշտպանների հատուկ վերանայման բողոքները, 2023 թվականի փետրվարի 23-ին որոշել է հակառակություն դատարանի 2023 թվականի հունվարի 18-ի՝ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին թիվ ՀԿԴ/0002/01/23 գործով որոշումը մասնակիորեն՝ այլ անձանց հետ հաղորդակցության սահմանափակման մասով, բեկանել և մեղադրյալ՝ այլ անձանց հետ հաղորդակցության սահմանափակումները վերացնել, մնացած մասով դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանը, քննարկելով թիվ ՀԿԴ/0002/01/23 քրեական գործով վերաքննիչ քրեական դատարանի 2023 թվականի փետրվարի 23-ի որոշման դեմ մեղադրյալ Ա. Ալեքսանյանի պաշտպանի վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցը, 2023 թվականի ապրիլի 26-ին որոշել է մերժել վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը՝ հետևյալ պատճառաբանությամբ. «Բողոքաբերի փաստարկների, սույն գործի նյութերի, ինչպես նաև բողոքարկվող դատական ակտի պարբռաբանությունների համադրված

վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գլուխ է, որ բողոք բերած անձի կողմից բավարար կերպով չի հիմնավորվել, որ Վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ է տվել դատական սխալ, և որ միաժամանակ բողոքներում բարձրացված հարցերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միաբնակ կիրառության համար, հետևաբար բացակայում են բողոքները վարույթներունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախադեսված պայմանը»:

## 2. Դիմողի դիրքորոշումները

Ներկայացնելով թիվ <ԿԴ/0002/01/23 քրեական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ հիշյալ քրեական գործով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասին Վճռաբեկ դատարանի կողմից փաստացի տրված այն մեկնաբանությունը, ըստ որի՝ հատուկ վերանայման Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը կարող է պարունակել միայն Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի անբավարության մասին եզրահանգում՝ առանց այդպիսի եզրահանգման համար հիմք ծառայած դատողությունների ընթացքի արձանագրման, հակասում է Սահմանադրությամբ ամրագրված արդար դատաքննության իրավունքի բովանդակությանն այնքանով, որքանով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասին Վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանության շրջանակներում թույլատրելի է համարվում հատուկ վերանայման Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել՝ առանց կոնկրետ գործով փաստերի և իրավունքի վերաբերյալ ողջամիտ ու համոզիչ պատճառաբանության, այն է՝ առանց գործի լուծման համար նշանակություն ունեցող և կողմի ներկայացրած փաստի կամ իրավունքի հարցերի վերաբերյալ փաստարկները մերժելու մասին դատողությունների ընթացքի և դրա եզրահանգման առկայության:

Վկայակոչելով արդար դատաքննության հիմնական իրավունքի և դրա բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտերի պատճառաբանվածության վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված մի շարք իրավական դիրքորոշումներ՝ Դիմողը գտնում է, որ հատուկ վերանայման Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին Վճռաբեկ դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված, և թեև Վճռաբեկ դատարանն ունի հայեցողություն՝ որոշելու հատուկ վերանայման Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման պատճառաբանությունների ծավալը և խորությունը, այնուամենայնիվ Վճռաբեկ դատարանի նշված հայեցողությունը չի կարող հիմք հանդիսանալ՝ իր որոշումը պատճառաբանելու այն կերպ, որ դրանում արձանագրվի բացառապես

հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի անբավարարության մասին եզրահանգումը՝ առանց այդպիսի եզրահանգման համար հիմք ծառայած դատողությունների ընթացքի արձանագրման, այսինքն՝ առանց հատուկ անդրադառնալու հատուկ վերանայման վճռաբեկ բողոքում նշված բոլոր այն հանգամանքներին և փաստարկներին, որոնք կարող են որոշիչ լինել գործի համար, և առանց հաստատելու այն, որ այդ հանգամանքների և փաստարկների կապակցությամբ Վճռաբեկ դատարանի համար ընդունելի են ստորադաս դատարանի դիրքորոշումները:

Դիմողի կարծիքով՝ այն դեպքում, եթե հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պարունակում է լոկ արձանագրում բողոքը վարույթ ընդունելու հիմքերի անբավարարության մասին, ապա հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը չի բավարարում դատական ակտերի պատճառաբանվածության չափանիշը, հետևաբար՝ ուղղակիորեն խախտում է իր՝ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված արդար դատարնության իրավունքը:

Ամփոփելով իր փաստարկները՝ Դիմողը խնդրում է Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված արդար դատաքննության իրավունքին հակասող և անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասը՝ թիվ ՀԿԴ/0002/01/23 քրեական գործով տրված այն մեկնաբանության կամ այն բովանդակության շրջանակներում, որ հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը կարող է պարունակել միայն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի անբավարարության մասին եզրահանգում՝ առանց այդպիսի եզրահանգման համար հիմք ծառայած դատողությունների ընթացքի արձանագրման, մասնավորապես՝ առանց հատուկ անդրադառնալու հատուկ վերանայման վճռաբեկ բողոքում նշված բոլոր այն հանգամանքներին և փաստարկներին, որոնք կարող են որոշիչ լինել գործի համար, և առանց հաստատելու, որ այդ հանգամանքների և փաստարկների կապակցությամբ Վճռաբեկ դատարանի համար ընդունելի են ստորադաս դատարանների դիրքորոշումները:

### **3. Պատասխանողի դիրքորոշումները**

Ազգային ժողովը (այսուհետ նաև՝ ‘Պատասխանող’), վկայակոչելով դատական ակտերի պատճառաբանվածության վերաբերյալ Սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվլողական դատարանի, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները, փաստում է, որ դատավարական ակտը պետք է պարունակի նաև պատճառաբանական մաս, քանի որ միայն այդ դեպքում կարող են երևալ փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրա-

ման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

Օրենսգրքի՝ վիճարկվող և վերաբերելի այդ դրույթներով ամրագրված իրավակարգավորումների վերլուծության արդյունքում Պատասխանողն արձանագրում է, որ Դիմողը, ձևականորեն վիճարկելով Օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը, դիմումում բարձրացնում է դատական ակտի իրավաչափության հարց, մինչդեռ դատական ակտի իրավաչափության գնահատումը ենթակա չէ Սահմանադրական դատարանին:

Ամփոփելով իր դիրքորոշումը՝ Պատասխանողը խնդրում է «Արույակ Ալեքսանյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարծել կամ «Արույակ Ալեքսանյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ընդունել վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշում:

#### **4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն գործով սահմանադրակիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- որո՞նք են դատական ակտի, այդ թվում՝ հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության՝ որպես Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի ծավալում ներառված երաշխիքի պահպանվածության սահմանադրական պահանջները՝ հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի որոշումների առանձնահատկությունները,

- արդյո՞ք վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությունը, ըստ որի՝ քրեական դատավարության շրջանակներում հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ նշվում են միայն Վճռաբեկ դատարանի եզրահանգումները՝ առանց դրանց հիմքում ընկած դատողությունների շարադրանքի, համապատասխանում է Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքին:

#### **5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**5.1.** Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաշար դարձարանի կողմից իր գործի արդարացի, իրապարակային և ողջամիկ ժամկետում քննության իրավունք»:

Սույն հիմնական իրավունքի ապահովման երաշխիքներն ունեն տարբեր բովանդակություն և կապված են դատավարության տվյալ փոփի (կամ իրականցվող միջանկյալ վարույթի) խնդիրների հետ: Վճռաբեկ դատարանում վարույթի, այդ թվում նաև՝ Վճռաբեկ դատարանի կողմից հատուկ վերանայման վարույթում դատական ակտի վերանայման շրջանակներում անձի արդար դատաքննության իրավունքի իրացման երաշխիքն արտահայտվում է դատական ակտի **պատճառաբանվածության** օրենսդրական պահանջում, որից հետևում է դատարանի պարտականությունը՝ դատավարության ցանկացած փոփում կայացնելու պատճառաբանված դատական ակտ:

Սահմանադրական դատարանը, 2010 թվականի հունիսի 15-ի ՍԴՈ-896 որոշմամբ անդրադառնալով դատական ակտերի պատճառաբանվածության պահանջին, նշել է. «(...) օրենսդրությունն ընդհանրապես պեղը է բացառի չպարբառաբանված դատական ակտի գոյությունը, որովհետու նման ակտը չի կարող համապատասխանել իրավական պեղության հիմնարար սկզբունքներին, չի կարող երաշխավորել մարդկանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն, ինչպես նաև ապահովել խախտված իրավունքների արդյունավետ վերականգնում»:

2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴՈ-1628 որոշմամբ Սահմանադրական դատարանը զարգացրել է դատական ակտի պատճառաբանվածության նորմատիվ պահանջի վերաբերյալ նշալ ոիրորոշումը՝ դատական ակտի պատճառաբանվածությունը կապելով դատավորի անկախության և անկողմնակալության սկզբունքների հետ: Համաձայն նշալ որոշման՝ «(...) Սահմանադրության 63-րդ հոդվածով նախադեսված արդար դատաքննության իրավունքի սույն բաղադրիչը դատական քննության որակի առաջնային չափանիշ է, իսկ դատական ակտի պարբառաբանության բացակայությունը կասկածի դակ է առնում դատարանի կողմից դպյալ դատական ակտի կայացմամբ արդարադադության նպատակին համահունչ գործունեությունը: Կոնկրետ գործով դատարանի կողմից կայացված դատական ակտի իրավաչափության գնահատման առաջնային չափանիշը, անկախ դատական ակտի նկարմամբ ծևավորված հանրային կարծիքից կամ կողմերի կամ հասարակության կամ դրա մի մասի վերաբերմունքից, դպյալ գործով փաստերի և իրավունքի հարցերի վերաբերյալ դատական ակտի պարբառաբանության բացակայությունը նման պարբառաբանության առկայության իրավական պահանջի պայմաններում կարող է սասանել կողմերի և հանրության վստահությունն առ այն, որ բացակայում են դպյալ դատական ակտը կանխորոշող այլ՝ արդարադադության նպատակների հետ չառնչվող պարբառներ:

(...)

Սահմանադրական դատարանը, վերահսկագիրով դատական ակդերի պարբառարանված լինելու սահմանադրական հրամայականի վերաբերյալ նախկինում իր արդարականացությունը կոչված է համոզելու, որ դատական ակդի պարբառարանվածությունը կոչված է համոզելու, որ դատական ակդի հիմքում ընկած են ոչ թե դատավորների անհակական կամ խմբակային մուլտումներն ու շահերը, նրանց սուբյեկտիվ վերաբերմունքը վեճի լուծման որևէ տարրերակի նկարմամբ, այլ իրավունքը: Հեղևաբար՝ ձախողելով գրամաբանական շղթայի մեջ արդացողել վեճի լուծման համար նշանակություն ունեցող և կողմերի ներկայացրած փասդի կամ իրավունքի հարցերի վերաբերյալ փասդարկներն ընդունելու կամ մերժելու մասին դատարանի դատողությունների ընթացքը և դրանց եզրահանգումը դատական ակդում՝ վերջինս արդարադադություն իրականացնող հանրային իշխանության ապյանի ակդից վերածվում է այն հեղինակող դատավորի կողմից վեճի լուծման վերաբերյալ սուբյեկտիվ մուլտումն շարադրանքի՝ վրանգելով Սահմանադրության 63-րդ հոդվածով նախարեսված՝ անհագի արդար դատաքննության իրավունքը»:

Վերահսկատաելով ՍԴՈ-1628 որոշման մեջ արտահայտված դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ չպատճառաբանված դատական ակտը բովանդակագրկում է տվյալ գրծով իրականացված արդարադատությունը՝ գրկելով պատճառաբանված դատական ակտ ակնկալելու իրավունքից, ուստին՝ իրավատիրոջ խախտված իրավունքների վերականգնման կամ այլ կերպ պաշտպանության՝ հանրային իշխանության սահմանադրական պարտականությունը պատշաճորեն չի կատարվում: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման պայմաններում անձի իմմարար իրավունքների դատական պաշտպանության երաշխավորման՝ հանրային իշխանության պարտականությունը չի կարող լիարժեքորեն կատարված համարվել, եթե դատական ակտը չի պարունակում դրա եզրահանգմանը նախորդող պատճառաբանությունը:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ պատճառաբանված դատական ակտ կայացնելը կարևոր է անձի արդար դատաքննության իրավունքի տարբեր բաղադրիչների իրացման համար և, ընդհանուր առմամբ, օրգանապես փոխկապակցված է արդար դատաքննության իրավունքի իրացման բոլոր կառուցակարգերի հետ:

Սահմանադրական դատարանը, ՍԴՈ-1628 որոշման մեջ անդրադառնալով սույն հարցին, նաև նշել է. «(...) դատական ակդի պարբառարանվածությունը կողմի համար այն արդյունավետորեն բողոքարկելու և նման բողոքարկման հաջողության գնահատականի հիմք է: Այս կապակցությամբ դատական ակդի բողոքարկման ներքո նկադի է առնվում ոչ միայն դատական ակդի եռասպիճան դատական համակարգում բողոքարկման հնարավորությունը՝

փաստերի գնահարման կամ իրավունքի նորմերի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ, այլ նաև դադարական ակտի պարբառաբանության մեջ վկայակոչված իրավական նորմերի սահմանադրականության սկզբանականարարակությունը նման իրավունքն ունեցող անձի՝ Սահմանադրական դադարական ներկայացվող դիմումով, ինչպես նաև Սահմանադրության 61-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան միջազգային համապատասխան մարմիններ ներկայացվող բողոքին (...):

Զարգացնելով իշխալ որոշման մեջբերված դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ, ըստ էության, դատական ակտի պատճառաբանվածությունն ունի ոչ միայն անհատական իրավունքների դատական պաշտպանության հիմնարար երաշխիքի նշանակություն, այլև ժողովրդավարական հասարակությունում հանդիսանում է դատական իշխանության գործունեության հանրային հաշվետվողականության իրավական նախադրյալ:

Վերոնշյալի համատեքստում Վճռաբեկ դատարանում վարույթի, այդ թվում նաև՝ Վճռաբեկ դատարանի կողմից հասուն վերանայման վարույթում դատական ակտի վերանայման շրջանակներում անձի արդար դատաքննության իրավունքից բխող հանրային իշխանության սահմանադրական պարտականությունների շրջանակի որոշակիացումը նկատի ունենալով՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ Վճռաբեկ դատարանի՝ ստորադաս դատարանների դատական ակտերի վերանայման նորմատիվ և բովանդակային ընդգրկմանը և վերջինիս միջոցով օրենքների ու նորմատիվ իրավական այլ ակտերի միասնական կիրառությունն ապահովելով՝ Սահմանադրությամբ Վճռաբեկ դատարանին վերապահված գործառույթի միջև կապի հարցերին:

Այսպես՝ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Վճռաբեկ դադարանը դադարական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միավեսակ կիրառությունը»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրը» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Դատական օրենսգիրը) 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Նույնանման փաստերով այլ գործով Վճռաբեկ դադարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից փարբերվող մեկնաբանության դեպքում դադարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դադարանի մեկնաբանությունից շեղվելը»:

Դատական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Օրինական ուժի մեջ մտած դադարական ակտերը պարտադիր են դրանց հասցեակերերի համար»:

Դատական օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝

«1. Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաբնիշ դատարանի, իսկ օրենքով նախադեսված դեպքերում՝ իր կայացրած դատական ակտերը։

2. Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով։

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միագրեսակ կիրառությունը։

Դատական օրենսգրքից մեջբերված իրավադրույթներից հետևում է, որ Վճռաբեկ դատարանի որոշումները՝ որպես ուժի մեջ մտած վերջնական դատական ակտեր, պարտադիր են դրանց գործողության տիրույթում գտնվող բոլոր սուբյեկտների, ներառյալ՝ հենց Վճռաբեկ դատարանի համար, եթե վերջինս քննում է նույնական կամ նույնանման փաստական հանգամանքներով գործ։

Ընդ որում՝ Վճռաբեկ դատարանի՝ ստորադաս դատարանների դատական ակտերի վերանայման միջոցով օրենքի և նորմատիվ իրավական այլ ակտերի միատեսակ կիրառության սահմանադրական գործառույթն իրացվում է նաև Վճռաբեկ բողոքը, այդ թվում՝ հատուկ վերանայման Վճռաբեկ բողոքը, վարույթ ընդունելը մերժելու մասին դատական ակտ կայացնելու միջոցով։

Նշանով՝ պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը կարևոր է համարում սույն սահմանադրահիրավական վեճը քննության առնել նաև Վճռաբեկ դատարանի բոլոր տեսակի դատական ակտերի պատճառաբանվածության միասնական դատական պրակտիկայի ծևավորման անհրաժեշտության համատեքստում՝ որպես Սահմանադրության 171-րդ հոդվածից բխող նորմատիվ պահանջ։

Այս առումով հատկանշական է Սահմանադրական դատարանի 2007թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշումը, որում անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի դատական ակտերի պատճառաբանվածության խնդրին՝ հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակը, վերջինով պայմանավորված գործառությախն լիազորությունները և Վճռաբեկ դատարանի դատական ակտերի կարևորությունը բողոքաբերների և ողջ իրավակիրառ պրակտիկայի համար։ Մասնավորապես՝ նշալ որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) << Վճռաբեկ դատարանի արդարադարական գործառությը Վճռաբեկության կարգով օրենքի միագրեսակ կիրառությունն ապահովելն է, այսինքն։

- այն պես է առաջին հերթին իրականացվի օրենքների և դրանց կարարումն ապահովող նորմատիվ այլ այնպիսի ակտերի իրավական բովանդակության մեկնաբանմամբ, որոնք սպորտադաս դատարանների

կողմից կիրառվել են (կամ չեն կիրառվել) դրանց փարաբնույթը հրավարնկալման արդյունքում,

- վճռաբեկության կարգով սահմանադրական իր վերահսկողական գործառույթի իրականացմամբ, սպորտաս դադարանների դադարական ակտերը վերանայելիս և դադարական սխալներն ուղղելիս վճռաբեկ դադարանը բացառապես պետք է լուծի իրավունքի իրացման հարցեր,

- որպես սահմանադրորեն նախարեսված շրջանակներում բարձրագույն դադարական ավյան՝ վճռաբեկ դադարանը, իր լիազորություններին համապատասխան, կոչված է երաշխավորելու ընդհանուր իրավասության և մասնագիրացված բոլոր դադարաններում մարդու իրավունքների ու ազատությունների դադարական պաշտպանության արդյունավելի միջոցների, արդարության, հավասարության պայմաններում և ողջամիկ ժամկետում դադարնության՝ անձի սահմանադրական իրավունքների անմիջական գործադրումը,

- վճռաբեկ դադարանի սահմանադրական գործառույթից է անմիջականորեն բխում ոչ միայն ընդհանուր և մասնագիրացված սպորտաս դադարանների թույլ դրվագ դադարական սխալներն իր իրավասության շրջանակներում ուղղելը, այլև այդ դադարանների կողմից կիրառված նորմատիվ ակտերի (դրանց դրույթների) միասնական ընկալման վերաբերյալ իրավական դիրքորոշում արդահայտելը:

(...)

(...) << վճռաբեկ դադարանի գործունեության՝ օրենքով նախանշված նապարակները պայմանավորված են այդ մարմնի սահմանադրահրավակական կարգավիճակով: Օրենքի միավեսակ կիրառությունը, ճիշտ մեկնաբանությունն ապահովելը՝ որպես նաև իրավունքի զարգացմանը նպաստելու միջոցներ, կառուցակարգային փոխկապակցված գործառույթներ են, հերապետում են իրավաչափ նպարակներ և երաշխիք են վճռաբեկ դադարանի կողմից սպորտաս դադարանների դադարական ակտերը վերանայելու ընթացակարգային լիազորությունների իրականացման համար: Այդպիսի երաշխիք է նաև դադարական ակտերի բողոքարկման ինսպիրուվուրը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դադարական պաշտպանության իրավունքի արդյունավելի և լիարժեք իրականացում»:

Հիշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ՝ «(...) նախապայմանների խսկացումը չպետք է դեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար սպեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդունելու: Բացի դրանից, վերաբննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դադարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախարեսված, հսկակ, և անձանց համար

**միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարփականություն»:**

Վերահաստատելով նշալ որոշմամբ արտահայտված դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումները լրացնում են Վճռաբեկ դատարանի կողմից զարգացվող իրավունքի շրջանակը: Հետևաբար՝ արդարադատություն հայցող անձն իրավունք ունի ակնկալելու Վճռաբեկ դատարանի օրենսդրական կանոնների մեկնաբանման արդյունքում առաջադրած բողոքի ընդունելիության կանխատեսելի գործնական չափանիշներ ու պահանջներ: Սույն հանգամանքը կարևոր է ինչպես Վճռաբեկ բողոքը ներկայացնող անձի, այնպես էլ այն անձանց համար, որոնք Վճռաբեկ դատարան կդիմեն հետագայում: Հետևաբար՝ Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման պատճառաբանությունները հնարավոր բողոք բերող անձանց կողմից նույն հարցի առնչությամբ դատավարական կանխատեսելի վարքագիծ դրսուրելու հնարավորություն են ընձեռում:

Ընդունելով բողոքի ընդունելիության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումները, լինելով օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառման գործառույթի իրացման բաղկացուցիչ մաս, պետք է ապահովեն Վճռաբեկ բողոքի ընդունելիության օրենսդրական չափանիշներից յուրաքանչյուրի մեկնաբանման և կիրառման կայունությունն ու հետևողականությունը:

Նշայի համատեքստում Սահմանադրական դատարանի կողմից կարևորվում է նաև խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային իրավական պրակտիկայի ուսումնասիրությունն այնքանով, որքանով Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝ այն հանդիսանում է սահմանադրական իրավունքների պաշտպանության երաշխիքների նվազագույն շեմը:

Սահմանադրական դատարանը, «Աղասի Դանիելյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՍԴՈ-1628 որոշմամբ անդրադառնալով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի շրջանակներում դատական ակտերի պատճառաբանվածության հիմնախնդրին, արձանագրել է. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) ներպետական դատարանների կողմից կայացված որոշումները չպատճառաբանելը ճանաչելով արդար դատական քննության իրավունքի խախտում, նշել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանների կողմից կայացվող որոշումները պետք է ողջամտորեն պարունակեն այդ դատական ակտերի կայացման համար հիմք

հանդիսացած պատճառաբանություններ՝ կողմերի լսված լինելու հանգամանքը ցուց տալու, ինչպես նաև արդարադատության իրականացման նկատմամբ հանրային հսկողություն ապահովելու նպատակով (տե՛ս, օրինակ, Սալովն ընդդեմ Ուկրաինայի գործով (Salov v. Ukraine), թիվ 65518/01, § 89, ՄիԵԴ 2005-VIII (քաղաքացիներ), Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի (García Ruiz v. Spain) [ՄՊ], թիվ 30544/96, § 26, ՄիԵԴ 1999-I):

Դատական ակտի պատճառաբանվածությունը ՄիԵԴ-ը դիտարկել է որպես արդարադատության պատշաճ իրականացման սկզբունքի պահանջ: Այս պարտականությունը ներառում է առնվազն հստակ անդրադարձ այն հանգամանքներին և փաստարկներին, որոնք կարող են որոշիչ լինել տվյալ գործի համար (տես՝ Ռուիզ Տորիխան ընդդեմ Իսպանիայի գործով (Ruiz Torija v. Spain), 1994 թվականի դեկտեմբերի 9, § 29-30, Շարք A թիվ 303-A), Հիգգինսը և այլք ընդդեմ Ֆրանսիայի գործով (Higgins and Others v. France), 1998 թվականի փետրվարի 19, § 42-43, Վճիռների և որոշումների հաղորդումներ 1998-I): Ավելին, այն գործերով, որոնք կարող են առնչվել Կոնվենցիայով նախատեսված իրավունքներին, ՄիԵԴ-ի մի շարք վճիռներով մանրամասն ուսումնասիրության է ենթարկվել նաև այն հարցը, թե որքանով են դատական ակտերում բերված պատճառաբանությունները եղել բովանդակալից, այլ ոչ՝ ձևական բնույթի (տես, mutatis mutandis, Պարադիս և Կամպանելին ընդդեմ Իտալիայի գործով (Paradiso and Campanelli v. Italy) [ՄՊ], թիվ 25358/12, § 210, 2017 թվականի հունվարի 24): Դատական ակտի պատճառաբանվածության սկզբունքի պահպանված լինելու նկատմամբ իրականացնելով բովանդակային վերահսկողություն:

ՄիԵԴ-ի վերը նշված մոտեցումները դատական ակտերի պատճառաբանվածության պահանջի ընդիհանուր կանոններն են, որոնք բարձր (մասնավորապես՝ վճռաբեկ) դատարաններին վերաբերելի մատով մասնավորեցվել են ըստ այնմ, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը դատական ակտերը վերանայող դատարաններին չի պարտավորեցնում որոշումների պատճառաբանություններում արձագանքել կողմերի ներկայացրած բոլոր փաստարկներին, և, օրինակ, այնպիսի իրավիճակներում, երբ որոշումը վերանայող դատարանները համաձայնում են բողոքարկվող որոշումը կայացրած դատարանների որոշմանը, ապա համապատասխան բողոքները մերժելու մասին որոշումներում ընդունելի են ստորադաս դատարանների իրավական դիրքորոշումների հաստատումները, որպես դատարանի պատճառաբանություն (տես, օրինակ՝ Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի գործով վերը նշված վճիռը, § 26, Հելլ ընդդեմ Ֆինլանդիայի գործով (Helle v. Finland), 1997 թվականի դեկտեմբերի 19, §§ 59-60, Վճիռների և որոշումների հաղորդումներ 1997-VIII»):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանի սահմանադրափական կարգավիճակից է բխում Վճռաբեկ

դատարանի դատական ակտերի պատճառաբանվածության առանձնահատուկ անհրաժեշտությունը, քանզի Վճռաբեկ դատարանը ոչ միայն իրականացնում է կոնկրետ գործով իրավունքների դատական պաշտպանություն, այլև իր կայացրած դատական ակտով ապահովում է միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորումը՝ պահպանելով իրավական նորմերին տրվող մեկնաբանության որոշակիությունը, կայունությունը և հետևողականությունը:

Ընդ որում, սույն պահանջները հավասարապես կիրառելի են Վճռաբեկ դատարանի բոլոր դատական ակտերի նկատմամբ: Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Վճռաբեկ դատարանի որոշումներում բողոքաբերների փաստարկների ստուգման և կատարվող հետևողությունների և եզրահանգումների շղթան պետք է լինի որոշակի, այն է՝ տեսանելի լինի դատողությունների և եզրահանգումների միջև տրամաբանական կապը:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը նկատում է, որ ի տարբերություն Վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ առանց քննության թողնելու հիմքերի, որոնք դատավարական օրենսգրքերում սահմանված են սպառիչ բովանդակությամբ, Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի նկարագրությունն ընդհանրական է, ինչն առաջացնում է որոշակի և ողջամտորեն մանրամասն դատական մեկնաբանության անհրաժեշտություն: Այլ կերպ՝ Վճռաբեկ բողոքը վերադարձնելու և առանց քննության թողնելու հիմքերն օրենսդրություն սահմանված են, որպես կանոն, տարամեկնաբանության առիթ չստեղծող հատակությամբ, ինչը նվազեցնում է համապատասխան իրավանորմերի իրավակիրառ պրակտիկայի միասնականություն և հետևողականություն ապահովելու հարցում Վճռաբեկ դատարանի դերակատարումը՝ ի տարբերություն Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու հիմքերի, որոնց վերացրկման բարձր աստիճանը դրանց պատշաճ և որոշակի կիրառումը պայմանավորում է բացառապես Վճռաբեկ դատարանի իրավամեկնաբանությամբ:

Սահմանադրական դատարանի դիտարկմամբ՝ Վճռաբեկ դատարանի դատական ակտերը բողոքաբերների համար առաջացնում են ընդհանուր իրավասության դատական համակարգում վերջնական լուծում ձևավորող հետևանքներ, հետևաապես՝ իրավական որոշակիության և կանխատեսելիության անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանի կայացրած որոշումների որակական հատկանիշները պետք է համարժեք լինեն Վճռաբեկ դատարանի և վերջինիս կայացրած դատական ակտերի սահմանադրահիրավական և գործնական նշանակությանը:

**5.2.** Սահմանադրական դատարանը նկատում է, որ թեև դատական ակտի պատճառաբանվածության պահանջն ինքնին ունի սահմանադրական բովանդակություն, քրեական վարույթում այն ձեռք է բերում հատուկ կարևորություն, քանի որ տվյալ դատական վարույթը կարող է հանգեցնել

մարդու իհմնական իրավունքներին և ազատություններին խիստ միջամտության:

Աներկրա իրողություն է, որ դատարանները՝ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը, օժտված են անձի իրավունքների պաշտպանությունը երաշխավորող սահմանադրահրավական համապարփակ լիազորությունների համալիրով, ուստի՝ բացահիկ նշանակություն ունեն անձի իրավունքների պաշտպանության առումով։ Ըստ այդմ, քրեական վարույթով համապատասխան դեպքերում մերժելով բողոքը վարույթ ընդունելով՝ Վճռաբեկ դատարանը վերջնականորեն մերժում է քրեական վարույթով եռաստիճան դատական համակարգում բողոքաբերի գործով արդարադատության իրականացման հետագա հնարավորությունը, հետևաբար՝ պետք է իր որոշումներում առավելագույնս իրավաբանորեն իհմնավորի և պատճառաբանի արդարադատության իրականացման հնարավորության բացակայությունն այնպես, որ անձի համար օբյեկտիվորեն ըմբռնելի և ընկալելի լինեն դրա պատճառները, հակառակ պարագայում՝ արդարադատությունը կընկալի իբրև ենթադրյալ խախտված իրավունքի պաշտպանության պատրանքային միջոց՝ վերջնարդյունքում նաև հանգեցնելով դատական իշխանության նկատմամբ հասարակության վստահության նվազեցման։

Սահմանադրական դատարանը վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատելիս հարկ է համարում նախ անդրադառնալ հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելով՝ Օրենսգրքով սահմանված պայմանների կիրառման խնդրին, քանի որ վերջինս Վճռաբեկ դատարանի՝ բողոքը վարույթ ընդունելով մերժելու մասին որոշման պատճառաբանության բովանդակության հիմնական բաղադրիչն է։

Օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի՝ համաձայն՝ «Վճռաբեկ դատարանը բողոք ընդունում է վարույթ, եթե գալիս է հետևողական, որ՝

1) վերաբնիչ դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, կամ առերևույթ առկա է բողոքարկվող դատական ակտը ոչ իրավաչափ դարձնող որևէ փաստական կամ իրավական հանգամանք, և միաժամանակ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի միատեսակ կիրառության համար։

2) առերևույթ քրեադատավարական օրենքի էական խախտում թույլ տալու հետևանքով կայացված դատական ակտը կարող էր խաթարել արդարադատության բուն էությունը»։

Օրենսգրքից մեջբերված և սույն գործով վիճարկվող իրավադրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ Օրենսգրքում սահմանված է հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու երկու պայման։ Դրանցից առնվազն մեկի առկայությունն անհրաժեշտ է հատուկ վերանայման բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման կայացման համար

(Օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մաս, 397-րդ հոդվածի 1-ին մաս, 398-րդ հոդվածի 4-րդ մաս):

Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանը հաշվի է առնում Օրենսգրքի 359-րդ հոդվածով սահմանված՝ դատական ակտի՝ ներառյալ սույն բողոքին վերաբերելի հատուկ վերանայման բողոքի վճռաբեկ քննության սահմանների վերաբերյալ իրավակարգավորումները, որոնց համաձայն՝ բացառությամբ նշյալ հոդվածով նախատեսված որոշակի դեպքերի, Վճռաբեկ դատարանը բողոքը պետք է ըննի բողոքի հիմքի և այն հաստատող փաստերի սահմաններում: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանի՝ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման պատճառաբանվածության սահմանադրաբանական պահանջը, բացառությամբ Օրենսգրքի 359-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, սահմանափակվում է վճռաբեկ բողոքի հիմք(եր)ին և այն հաստատող փաստերին, բողոքը վարույթ ընդունելու պայմանները հիմնավորող փաստարկներին բավարար իրավական անդրադարձ կատարելու անհրաժեշտությամբ՝ համապատասխանաբար, բողոքը վարույթ ընդունելու համար դրանց անբավարության առումով:

Սահմանադրական դատարանը պատճառաբանված դատական ակտի հիմնարար իրավունքի երաշխավորվածության համատեքստում կարևոր է համարում, որ վճռաբեկ բողոքը, ներառյալ՝ հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը, վարույթ ընդունելու հիմքերից յուրաքանչյուրի մասով ծևավորվի կայուն և կանխատեսելի իրավակիրար պրակտիկա, ինչը հնարավորություն կտա բողոքաբերին անձամբ կամ համապատասխան խորհրդատվությամբ հստակ ընկալել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերից յուրաքանչյուրի նորմատիվ բովանդակությանն առաջադրվող պահանջները և իր բողոքը համապատասխանեցնել այդ պահանջներին: Սրանից հետևում է նաև, որ կայուն և կանխատեսելի պրակտիկա չի կարող ծևավորվել, և, համապատասխանաբար, Վճռաբեկ դատարանի՝ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը չի կարող համարվել պատճառաբանված, եթե դրանում միայն որպես հետևություն արձանագրված է վճռաբեկ բողոքի՝ Օրենսգրքով նախատեսված ընդունելիության հիմքերին անհամապատասխանությունը՝ առանց այդ հիմքերին բողոքի անհամապատասխանությունը հիմնավորող դատողությունների շարադրանքի:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ ՀԿԴ/0002/01/23 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2023 թվականի ապրիլի 26-ի որոշմամբ, Դիմողի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքերին և բողոքը վարույթ ընդունելու պայմանները հիմնավորող փաստարկներին ի պատասխան, միայն նշվել է, որ բողոքաբերի փաստարկների, գործի նյութերի, ինչպես նաև բողոքաբերի դատական ակտի պատճառաբանությունների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի

կողմից բավարար կերպով չի հիմնավորվել, որ վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, և որ միաժամանակ բողոքաբերի կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողի նկատմամբ դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ Օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասը կիրավել է այն մեկնաբանությամբ, որի արդյունքում դատական ակտի պատճառաբանությունների փոխարեն այն պարունակում է միայն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի անբավարարության մասին եզրահանգում: Հետևաբար՝ Դիմողի գործով Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ վիճարկվող իրավական դրույթը մեկնաբանվել և կիրավել է Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ նախատեսված դիրքորոշումների հիման վրա տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական գործերով իրավակիրար այրականիկայում ուղենչային դեր ունի Սահմանադրական դատարանի ՍԴՂ-1628 որոշումը՝ Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների պատճառաբանվածության կարևորության մասով: Սույնի առնչությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ թեև այն վերաբերում է քաղաքացիական դատավարությանը, սակայն Սահմանադրական դատարանի դիրքորոշումը հիմնված է Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ հանդիսացող՝ դատական ակտի պատճառաբանվածության ընդհանրական սահմանադրական պահանջին, որը նույնական է նաև քրեական դատավարության շրջանակում հատուկ վերանայման բողոքների վերաբերյալ կայացվող Վճռաբեկ դատարանի ակտերի նկատմամբ: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը սույն սահմանադրական վեճի լուծման նպատակով հիշյալ որոշմամբ իր արտահայտած իրավական դիրքորոշումից շեղվելու պատճառ չի տեսնում:

Ենելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն

այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ Վճռաբեկ դատարանի՝ հատուկ վերանայման բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը՝ դրա հիմքում դրված եզրահանգման հետ մեկտեղ, պետք է պարունակի նաև դրան հանգեցրած պատճառաբանությունը:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասը Դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

## ՆԱԽԱԳԱՀՈՂ

## Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

19 դեկտեմբերի 2023 թվականի  
ՍԴՈ-1707



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԹՎԻ ԱՌԱՋԱՋԱՆ ՄԵԿ ՀԻՆգԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ  
ՎՐԱ՝ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ»  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ  
5-ՐԴ ԿԵՏԻ, 138-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ, ԻՆՉՊԵս ՆԱԵՎ ԱՅԴ  
ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ  
ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՏՎՅԱԼ ԱԿՏԻ ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

19 դեկտեմբերի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող) Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովհաննիսի, Է. Շաթրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում՝ դիմողի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի պատգամավոր Ա. Մինասյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

դունքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 138-րդ հոդվածի, ինչպես նաև այդ դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը (այսուհետ նաև՝ Կանոնակարգ) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2017 թվականի հունվարի 14-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի մայիսի 18-ից:

Կանոնակարգի՝ «Խմբակցության լիազորությունները» վերտառությամբ 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված է.

«1. Խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կարգով  
(...)»

5) մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոնում առաջարկելու թեկնածու»:

Կանոնակարգի վիճարկվող դրույթը չի փոփոխվել և (կամ) լրացվել:

Կանոնակարգի՝ «Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրությունները» վերտառությամբ 138-րդ հոդվածով սահմանված է.

«1. Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրություններն անցկացվում են Ազգային ժողովի առաջին նստաշրջանում, ինչպես նաև նրանց պաշտոնը թափուր մնալու դեպքում:

2. Մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի թեկնածու առաջարկելու իրավունք ունի սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով որոշված խմբակցությունը: Թեկնածուների առաջադրման իրավունքը պահպանվում է մինչև Ազգային ժողովի լիազորությունների ավարտը:

3. Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում պատգամավորների կազմից թեկնածուների առաջադրման իրավունքը խմբակցությունների միջև բաշխվում է Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օր՝ ըստ յուրաքանչյուր պաշտոնի համար ստացված գործակցի, որը հաշվարկվում է Գիւ=Ախ/(Պիւ+1) բանաձևով, որտեղ՝

1) Գիւ-ն յուրաքանչյուր պաշտոնի համար խմբակցության ստացած գործակցն է.

2) Ախ-ն խմբակցության անդամների ընդհանուր թիվն է.

3) Պիւ-ն հերթական պաշտոնի համար խմբակցության գործակիցը հաշվելիս թեկնածու առաջարկելու իրավունքով խմբակցությանը վերապահված մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների

պաշտոնների ընդհանուր թիվն է: Գործակիցների հաշվարկի սկզբում Պիս-ն հավասար է գրոյի:

4. Գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը վերապահվում է մշտական հանձնաժողովների նախագահներից կամ նրանց տեղակալներից մեկի թեկնածուին առաջադրելու իրավունքը: Հաջորդ պաշտոնում առաջադրելու իրավունքը վերապահվում է մյուս խմբակցությունների համեմատ առավել մեծ գործակից ունեցող խմբակցությանը: Հավասար՝ ամենամեծ գործակիցների դեպքում մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի հերթական պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը որոշվում է հավասար գործակիցներ ունեցող խմբակցությունների փոխհամաձայնությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում վիճակահանությամբ: Գործակիցների հաշվարկը կրկնվում է մինչև մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների՝ վերջին պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը որոշելը:

5. Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքը որոշելուց հետո խմբակցությունները կարող են փոխհամաձայնությամբ փոխանակել կամ միմյանց զիջել մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց իրավունքը:

6. Մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածուներն առաջադրվում են՝

1) Ազգային ժողովի առաջին նստաշրջանում՝ յուրաքանչյուր մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության հարցի քննարկման սկզբում.

2) Մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

#### **7. (մասն ուժը կորցրել է 22.06.20 ՀՕ-309-Ն)**

8. Մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության հարցն Ազգային ժողովի նիստում քննարկվում է Կանոնակարգի 135-րդ հոդվածով սահմանված կարգով:

9. Մշտական հանձնաժողովի նախագահն ընտրվում է գաղտնի քվեարկությամբ, քվեարկությանը մասնակցող պատգամավորների ծայների մեջամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

10. Եթե մշտական հանձնաժողովի նախագահը չի ընտրվում, ապա իրավասու խմբակցությունը քվեարկությունից հետո՝ տասնօրյա ժամկետում, թափուր մնացած պաշտոնի համար առաջադրում է նոր թեկնածու:

11. Մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալն ընտրվում է իրավասու խմբակցության դեկավարի կամ քարտուղարի առաջադրմամբ՝ հանձնաժողովի որոշմամբ: Մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրությունն անցկացվում է հանձնաժողովի կազմը հաստատվելուց,

ինչպես նաև նրա պաշտոնը թափուր մնալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

11.1. Եթե մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալը չի ընտրվում, ապա իրավասու խմբակցությունը քվեարկությունից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, առաջադրում է նոր թեկնածու:

12. Եթե խմբակցությունը Կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետում մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրեն վերապահված թափուր պաշտոնում թեկնածու չի առաջադրում, ապա տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը»:

2020 թվականի հունիսի 22-ին ընդունված <Օ-309-Ն օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան՝ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 7-րդ մասը ճանաչվել է ուժը կորցրած (1), իսկ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 8-րդ մասի «հարցը» բառը փոխարինվել՝ «հարցն Ազգային ժողովի նիստում» բառերով (2):

2022 թվականի ապրիլի 12-ին ընդունված <Օ-91-Ն օրենքով Կանոնակարգի 138-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ՝ 11.1-ին մասով. «11.1. Եթե մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալը չի ընտրվում, ապա իրավասու խմբակցությունը քվեարկությունից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, առաջադրում է նոր թեկնածու:», իսկ Կանոնակարգի հիշյալ հոդվածի 12-րդ մասը՝ «Կանոնակարգով սահմանված» բառերից հետո լրացվել է «կարգով և» բառերով:

Գործի քննության աղիթը << Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի (այսուհետ նաև՝ ‘Դիմող’՝ 2023 թվականի մարտի 21-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, վերլուծելով Կանոնակարգի վիճարկվող և դրանց հետ փոխկապակցված այլ դրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

## 1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը բարձրացնում է հետևյալ հարցադրումները.

«1. Ո՞րն է Հայաստանի Հանրապետության սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «Մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:» նորմերի սահմանադրահրավական բովանդակությունը, արդյո՞ք հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովում որևէ այլ պաշտոնը (ներառյալ՝ հանձնաժողովի նախագահի

տեղակալի պաշտոնը) ներառվում է խմբակցությանը հասանելիք տեղերի թվաքանակի մեջ:

2. Արդյո՞ք Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոն(ներ)ում թեկնածուներ առաջադրելու և այդ պաշտոն(ներ)ում ընտրությունների անցկացման՝ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ինչպես նաև 138-րդ հոդվածով սահմանված ընթացակարգերը ոչ իրավաչափ կերպով չեն սահմանափակում Ազգային ժողովի քաղաքական փոքրամասնության, առավելապես ընդդիմադիր խմբակցության իրավունքները: Այսինքն՝ Ազգային ժողովի քաղաքական փոքրամասնությունը կազմող խմբակցությունը (իիմնականում ընդդիմադիր խմբակցությունը) լրացուցիչ կախվածության մեջ է ընկնում կառավարող խմբակցությունից սահմանադրի կողմից իրեն վերապահված իրավունքն իրացնելիս:

Դիմողի դիտարկմամբ՝ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված կարգավորումից բխում է, որ քաղաքական մեծամասնությունը և քաղաքական փոքրամասնությունը պահպանում են նոյն հարաբերակցությունն Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմում, ինչահյի հարաբերակցություն առկա է Ազգային ժողովի խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի դեպքում: Ըստ դիմողի՝ դա նաև նշանակում է, որ մշտական հանձնաժողովի կազմում խմբակցության ներկայացուցիչների թիվը չի կարող փոփոխվել՝ կախված այն հանգամանքից, թե խմբակցության ներկայացուցիչը հանդիսանում է տվյալ հանձնաժողովի նախագահ, տեղակալ, թե՛ պարզապես անդամ: Եթե մշտական հանձնաժողովի նախագահի տեղը վերապահվում է կոնկրետ խմբակցությանը, ապա այդ պաշտոնը հաշվառվում է հանձնաժողովում տվյալ խմբակցությանը հասանելիք տեղերի թվում:

Դիմողը նշում է, որ Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով խմբակցությանը վերապահվել են երկու տարբեր իրավունքներ. մասնավորապես՝ 6-րդ կետով սահմանված է, որ խմբակցությունն իրավունք ունի Ազգային ժողովի հանձնաժողովում իրեն վերապահված տեղում նշանակելու խմբակցության անդամի, ինչպես նաև նրան փոխելու, իսկ 5-րդ կետով՝ իրեն հասանելիք մշտական հանձնաժողովի նախագահի (տեղակալի) պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք, այլ ոչ տվյալ պաշտոնում նշանակելու լիազորություն:

Դիմողը գտնում է, որ Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, ինչպես նաև 138-րդ հոդվածի 12-րդ մասով ամրագրված իրավակարգավորումների պայմաններում «(...) լիակատար է դառնում ընդդիմադիր խմբակցության կախվածությունը կառավարող խմբակցությունից»:

Ըստ Դիմողի՝ «(...) ընտրվելու երաշխիքների բացակայությամբ և/կամ կամայական ընտրություններով (պաշտոնանկություններով) պայմանավորված

գործընթացների արդյունքում կարող է առաջանալ այնպիսի իրավիճակ, երբ ընդդիմադիր որևէ խմբակցություն չի ունենա մշտական հանձնաժողովում իրեն հասանելիք պաշտոնը այն պարագայում, երբ Ազգային ժողովի՝ քաղաքական մեծամասնությունը քաղաքական դրդապատճառներով կամ քաղաքական նպատակահարմարությունից ելնելով, առանց որևէ հիմքի չի ընտրի մշտական հանձնաժողովների ընդդիմադիր խմբակցությունը ներկայացնող թեկնածուին»:

Դիմողը, մասնավորապես, նշում է. «(...) ընդդիմության կողմից խորհրդարանական վերահսկողության գործառույթի իրականացումը, ինչպես նաև իրեն՝ Սահմանադրությամբ արդեն իսկ տրված լիազորությունների ամբողջական ծավալով իրացումը չպետք է կախված լինի խորհրդարանական մեծամասնության կամքից և որևէ դեպքում չդառնա կառավարող խմբակցության հայեցողական լիազորություն: (...)»

(...) Տերմինաբանության տեսանկյունից Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունը օգտագործում է «պաշտոնները բաշխվում են» տերմինները, մինչդեռ վիճարկվող դրույթը և դրա հետ փոխկապակցված դրույթները կիրառում են «թեկնածու առաջադրելու իրավունք» տերմինները, որոնք ոչ միայն չեն համապատասխանում միմյանց, այլև «թեկնածու առաջադրելու իրավունք» տերմինը ինքնին սահմանափակում և աղավաղում է «պաշտոնները բաշխվում են» տերմինը, քանի որ պաշտոնների բաշխումը ենթադրում է խմբակցության որոշման հիման վրա նշանակում, որը կախված չէ կառավարող խմբակցության կամքից, մինչդեռ (...) «թեկնածու առաջադրելու իրավունք»-ը տրամադրուեն հակառակն է»:

Դիմումը խնդրում է որոշել Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 138-րդ հոդվածի, ինչպես նաև այդ դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված նշված ակտի այլ դրույթների՝ Սահմանադրության 4-րդ հոդվածին, 5-րդ հոդվածի 1-ին մասին, 6-րդ հոդվածի 1-ին մասին, 88-րդ հոդվածի 4-րդ մասին և 106-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխանության հարցը:

## 2. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ Պատասխանող), մեջբերելով Սահմանադրության, ինչպես նաև Կանոնակարգի համապատասխան դրույթները, մասնավորապես, նշում է. «(...) օրենսդրի կողմից հստակ տարրերակվել են Ազգային ժողովի մարմիններում նշանակումները և ընտրությունները: Ի տարրերություն մշտական հանձնաժողովի անդամի տեղում նշանակման դեպքի, մշտական հանձնաժողովի նախագահի, Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների պաշտոններում ընտրվելու դեպքում պատգամավորն այդ պաշտոնները կարող է ստանձնել Ազգային ժողովի կամահայտնության

**արդյունքում, այլ ոչ թե սուկ այն խմբակցության կամահայտնության արդյունքում, որի կազմում նա ընդգրկված է:**

Մշտական հանձնաժողովի նախագահի, Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների պաշտոններում Ազգային ժողովի կողմից ընտրվելու և ոչ թե մեկ խմբակցության կողմից նշանակվելու կառուցակարգի ամրագրումը, թերևս, պայմանավորված է դրանց գործառույթներով, մասնավորապես, այն հանգամանքով, որ մշտական հանձնաժողովի նախագահը, Ազգային ժողովի նախագահը և նրա տեղակալները այդ կարգավիճակում գործելիս ներկայացնում են (համակարգում են) ոչ միայն այն խմբակցությունը և իրենց խմբակցության պատգամավորներին, այլ նաև այլ խմբակցություններում ընդգրկված պատգամավորներին, իսկ որոշ դեպքերում նաև ամբողջ Ազգային ժողովը»:

Անդրադառնալով Դիմողի բարձրացրած՝ «պաշտոնները բաշխվում են» սահմանադրական և Կանոնակարգով նախատեսված՝ «թեկնածու առաջադրելու իրավունք» օրենսդրական ձևակերպումների հարաբերակցության հարցին՝ Պատասխանողը նշում է. «(...) Երկու նախադասություններից յուրաքանչյուրն ունի ինքնավար բովանդակություն (թեև երկու դեպքում էլ պետք է հաշվի առնվի խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությունը):

(...) Վիճարկվող դրույթը կիրառելով «թեկնածու առաջադրելու իրավունք» տերմինը հստակեցնում է ընթացակարգը, որի կիրառմամբ ապահովվում է բաշխման պահանջը: «Տեղերը բաշխվում են» կամ «Պաշտոնները բաշխվում են» տերմինները ինքնին չի նշանակում այդ պաշտոնների նշանակվել կամ ընտրվել, դրանց իրացումը տեղի է ունենում որոշակի ընթացակարգով»:

Պատասխանողը նշում է. «Օրենսդիրը ամրագրում է Ազգային ժողովի խմբակցությունների՝ նշված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու իրավունքի պահպանումը մինչև Ազգային ժողովի լիազորությունների ավարտը, որը հանդիսանում է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոններում ընդդիմադիր խմբակցությունների ներկայացվածության կարևոր երաշխիք»:

Միաժամանակ, Պատասխանողը գտնում է, որ Դիմողն օրենքի համապատասխան նորմերի սահմանադրականությունը վիճարկում է ոչ թե նորմերի և Սահմանադրության միջև ենթադրյալ հակասության, այլ այդ նորմերով սահմանված ընթացակարգերի կիրառման արդյունքում Դիմողի համար ենթադրյալ ոչ ցանկալի հետևանքների առաջացման համատեքստում:

Պատասխանողը խնդրում է սույն գործով ընդունել որոշում՝ վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

### **3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն դիմումով վիճարկվող օրինադրույթների սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով Դիմողի կողմից ներկայացված հիմնավորումները և ըստ այդմ՝ սահմանադրահրավակական վեմի շրջանակը, առանց Կանոնակարգի ամբողջ ծավալով 138-րդ հոդվածի սահմանադրականության հարցին անդրադառնալու, անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալ հարցադրմանը.

- արդյո՞ք Ազգային ժողովի խմբակցությունների՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների՝ իրենց վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելուն առնչվող՝ Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 138-րդ հոդվածի 5-րդ և 12-րդ մասերով ամրագրված իրավակարգավորումների գործողության պայմաններում երաշխավորվում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ մշտական հանձնաժողովներում տեղերի/պաշտոնների՝ ըստ խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնության բաշխման պահանջը:

### **4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1. Խորհրդարանական մեծամասնության և փոքրամասնության փոխհամագործակցության առումով առանցքային է խորհրդարանական ընդունության դերի արժեսորումը, ընդդիմության՝ խորհրդարանական կյանքին լիարժեք մասնակցությունն ապահովող սահմանադրահրավակական կառուցակարգերի ամրագրման և արդյունավետ գործողության միջոցով, ինչը ժամանակակից խորհրդարանական ժողովորդավարության կայացման միտումներից է: Ընդդիմության կարգավիճակի ծևական-իրավական առումով ինստիտուցիոնալացումը, այդուհանդերձ, դեռևս բավարար չէ նշված գործընթացը երաշխավորելու համար: Անհրաժեշտ է, որ խորհրդարանական մեծամասնությունը և փոքրամասնությունը (ընդդիմությունը) համագործակցեն պաղամենտարիզմին հարիր քաղաքական մշակույթի միջավայրում. խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերը պետք է առաջնորդվեն այն գիտակցմամբ, որ կոչված են կենսագործելու ժողովորդի կամքը և, ըստ այդմ, սպասարկելու, առաջին հերթին, ոչ թե նեղ կուսակցական, անձնական, այլ հանրային/պետական շահը: Այդ առնչությամբ Եվրոպայի խորհրդի «Ժողովորդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) կողմից 2019 թվականի հունիսի 21-22-ի ընդունված «Խորհրդարանական մեծամասնության և ընդդիմության հարաբերությունների պարամետրերը ժողովորդավարությունում. ստուգաթերթ»-ում (CDL-AD(2019)015), մասնավորապես, նշված է. «25. (...) Թե՛ մեծամասնությունը, թե՛ ընդդիմությունը պարտավոր են միասնաբար և բարեխղճորեն գործել հանուն քաղաքացիների/հանրային շահերի, որոնք ժողովորդա-**

վարական իշխանության լեգիտիմ աղբյուր են: Այդ հանձնառու վերաբերմունքը պետք է վեր դասվի ամեն ինչից, այդ թվում՝ քաղաքական առճակատման օրակարգից, թեպետ նման առճակատումը նույնպես բնականոն և անհրաժեշտ երևույթ է ժողովրդավարությունում: Մեծամասնությունը՝ հենց մեծամասնություն լինելու պատճառով, իշխանություն իրականացնելիս պարտավոր է ցուցաբերել ինքնազմապում և հարգանք դրսենորել ընդդիմության հանդեպ (...): Միևնույն ժամանակ, ընդդիմությունը կամ ընդդիմադիր պատգամավորները չպետք է չարաշահեն իրենց ընթացակարգային իրավունքները (...):»:

Խորհրդարանական մեծամասնության և փոքրամասնության (ընդդիմության) միջև քաղաքական հավասարակշռության ապահովման համար առանցքային է խորհրդարանական ընդդիմության լիազորությունների երաշխավորումը խորհրդարանական կյանքի բոլոր ոլորդներում, այդ թվում՝ խորհրդարանի մարմիններում: Այդ առնչությամբ Վենետիկի հանձնաժողովը, մասնավորապես, նշել է. «83. Եթե խորհրդարանում պատասխանատու պաշտոնների (խոսնակ, մշտական հանձնաժողովների ղեկավարներ ու անդամներ և այլն) բոլոր նշանակումները կարող են կատարվել մեծամասնության կողմից միանձնյա, ապա առկա է ոիսկ, որ ընդդիմությունն իսպառ դուրս կթողնվի խորհրդարանի կառավարման մարմիններից:»

84. Ավելի լավ լրիծում է այնպիսի կանոնի ամրագրումը, որն ընդդիմության համար կապահովի արդար պայմաններով խորհրդարանի պատասխանատու պաշտոններին հասանելիությունը (տես ԵԽՆՎ թիվ 1601 (2008) բանաձևը, § 2.3.1): (...):

86. Վենետիկի հանձնաժողովը ողջունում է պատասխանատու պաշտոններում համամասն ներկայացվածության սկզբունքը՝ որպես ընդդիմության իրավունքների ապահովման կարևոր գործիք (CDL-AD(2010)025, 2010 թվականի գեկույցը, §§ 63 – 66; CDL-AD(2009)025, § 18): (...)» (CDL-AD(2019)015):

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2008 թվականի հունվարի 23-ի թիվ 1601 (2008) բանաձևում («Ժողովրդավարական խորհրդարանում ընդդիմության իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ընթացակարգային ուղեցույց»), մասնավորապես, նշված է. «2.1.1. ընդդիմության անդամներն իրավունք ունեն մասնակցելու խորհրդարանի աշխատանքի կազմակերպմանը, նրանք կարող են ստանձնել խորհրդարանի (...) այլ պատասխանատու պաշտոններ, խորհրդարանի ղեկավար մարմինների կազմը պետք է արտացոլի համամասն ներկայացվածության սկզբունքը և խորհրդարանի (...) քաղաքական կազմը:

(...)

2.3. Ընդդիմությունը պետք է մասնակցի խորհրդարանական հանձնաժողովների աշխատանքներին.

2.3.1. մշտական հանձնաժողովների նախագահությունը պետք է բաշխվի խորհրդարանական խմբակցությունների միջև համամասն ներկայացվածության սկզբունքի հիման վրա (...): Կառավարության գործողությունների նկատմամբ մոնիթորինգի համար պատասխանառու հանձնաժողովների նախագահությունը, ինչպիսիք են բյուջեի և ֆինանսների հանձնաժողովը, առողիտի հանձնաժողովը կամ անվտանգության և հետախուզության ծառայությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնող հանձնաժողովը, պետք է տրամադրվի ընդդիմության ներկայացուցչին:

2.3.2. Ցանկացած հանձնաժողով՝ մշտական, թե ժամանակավոր, պետք է ձևավորվի համամասն ներկայացվածության սկզբունքի հիման վրա»:

Վերոնշյալի համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Ազգային ժողովի խմբակցությունները պարտավոր են գիտակցել, որ այն իշխանությունը, որի իրականացման լիազորություններով օժտված են, ուղղված է ժողովրդի կամահայտնության արդյունքում ձևավորված Ազգային ժողովի սահմանադրահրավակական առաքելությունը կյանքի կոչելուն:

**4.2.** Անդրաբառնայով Ազգային ժողովի սահմանադրահրավակական առաքելության կենսագործման առումով առանցքային դերակատարություն ունեցող խորհրդարանական մարմինների, մասնավորապես՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների առաքելության վերհանման հարցին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջիններս Ազգային ժողովի առանձին գործառույթների իրականացմանն օժանդակող մարմիններ են, որոնց գործունեության արդյունավետության նախապայման է խորհրդարանական խմբակցությունների՝ Ազգային ժողովի սահմանադրական առաքելության իրականացման ընդհանուր նպատակի շրջանակում կայուն համագործակցությունը: Այսպես, Սահմանադրության 106-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային ժողովն օրենքների նախագծերի, իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողովը եզրակացնություններ ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար ստեղծում է մշտական հանձնաժողովներ: Ազգային ժողովում կարող է ստեղծվել ոչ ավելի, քան տասներկու մշտական հանձնաժողով:

Սահմանադրի կողմից նախանշվել են Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների սահմանադրական իրավասության շրջանակները, որոնց օրենսդրական մանրամասնումը տեղ է գտել Կանոնակարգում: Ազգային ժողովի հանձնաժողովներին վերապահված է խորհրդարանի գործառույթների իրականացմանն օժանդակելու առաքելություն Ազգային ժողովի իրավասությանը վերաբերող առանցքային հարցերի ոլորտային համակարգման նպատակով, ինչի շնորհիվ Ազգային ժողովի հանձնաժողովները ներկայանուած են որպես խորհրդարանական ուժերի միջև ոլորտային քննարկումների

ապահովման հարթակներ: Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 6-ի՝ «Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ» ստեղծելու մասին» ԱԺՌ-001-Ն որոշմամբ ստեղծվել են տասներկու մշտական հանձնաժողովներ:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում խորհրդարանական ուժերի հավասարակշռումն ապահովելու նպատակով Սահմանադրության նախանշել է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների ծևավորման կարգի առանցքային սկզբունքները, որոնք ընկած են մշտական հանձնաժողովների ծևավորման կարգի օրենսդրական մանրամասնման հիմքում: Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:

**Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրության հիշյալ նորմերն ուղղված են Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում խորհրդարանական ուժերի՝ ժողովրդից ստացած քվեին համաչափ ներկայացվածության ապահովմանը, ինչով պայմանավորված է դրանից բխող համամասնությունը պահպանելու հրամայականը: Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում համապատասխան պաշտոնները բաշխելիս Սահմանադրության վերոնշյալ նորմերով ամրագրված՝ խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությունից ցանկացած շեղում կձևախեղի ժողովրդի՝ Ազգային ժողովի ընդունությամբ արդահայրված կամահայրնության արդյունքը, Ազգային ժողովի՝ Սահմանադրության 88-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ ժողովրդի ներկայացուցչական մարմնի բնույթը:**

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Սահմանադրության հիշյալ պահանջ՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում պետք է ապահովվի խորհրդարանական ուժերի **համամասն ներկայացվածությունը**: Ազգային ժողովի խմբակցությունների միջև մշտական հանձնաժողովների անդամների տեղերի, մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների համամասն բաշխման միջոցով: Սահմանադրի կողմից նախանշված՝ մշտական հանձնաժողովների ծևավորմանն ու գործունեությանն առնչվող կարգավորումների համատեքստում սահմանադրական հրամայականն է՝ **մշտական հանձնաժողովներում գեղերը պեղը** է բաշխվեն ըստ խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնության, **հեփեաբար՝ մշտական հանձնաժողովների ծևավորմանն առնչվող օրենսդրական կարգավորումները պեղը** է ուղղված լինեն նշված սահմանադրահրավական պահանջի

## **գործնական ապահովմանը և պեղը է մեկնաբանվեն ու կիրառվեն բացառապես վերջինիս էռթյանը և նպատակին համահունչ:**

Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության մեջ գործածված «տեղերը բաշխվում են» և երկրորդ նախադասության մեջ գործածված «պաշտոնները (...) բաշխվում են» ծևակերպումների առնչությամբ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկու նախադասություններից յուրաքանչյուրի բովանդակությանը ծևական/մեխանիկական մոտեցում դրսորելու պայմաններում «տեղերը բաշխվում են» ծևակերպումը վերաբերելի է մշտական հանձնաժողովի անդամներին, իսկ «պաշտոնները (...) բաշխվում են» ծևակերպումը՝ մշտական հանձնաժողովների նախագահներին: Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկու նախադասություններն օրգանական կապի մեջ են, որպիսի հանգամանքով պայմանավորված՝ «տեղեր» եզրույթը կարող է մեկնաբանվել այնպես, որ, մշտական հանձնաժողովի անդամներից բացի, ներառի նաև մշտական հանձնաժողովի նախագահին և նրա տեղակալին՝ նկատի առնելով նաև, որ համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալը հանդիսանում են այդ հանձնաժողովի անդամներ:

Այդ համատեքստում Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ վերոնշյալ սահմանադրական սկզբունքի ապահովման նպատակով մշտական հանձնաժողովների կազմավորման կարգը սահմանելիս օրենսդրութաբերակել է մշտական հանձնաժողովի անդամի տեղը, նախագահի և նրա տեղակալի պաշտոններն զբաղեցնելու կարգերը:

Այսպես, ըստ Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կարգով Ազգային ժողովի հանձնաժողովում իրեն վերապահված դեղում նշանակելու խմբակցության անդամի, ինչպես նաև նրան փոխելու:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ անդամակցելով մշտական հանձնաժողովին և ներկայացնելով իր խմբակցությունը՝ պատգամավորն անմիջականորեն իրացնում է իր պատգամավորական մանդատը: Պատգամավորների անդամակցությունը խորհրդարանական հանձնաժողովներին թիսում է վերջիններիս կարգավիճակից, պատգամավորական մանդատի իրացման ձևերից մեկն է, որը ներառում է նաև խորհրդարանական հանձնաժողովներում վերջիններիս կողմից ծավալվող գործունեությանն առնչվող իրավունքներն ու պարտականությունները: Այսպես, Կանոնակարգի՝ պատգամավորի իրավունքները սահմանող 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ և 10-րդ կետերի համաձայն՝ պատգամավորն իրավունք ունի համապատասխանաբար՝ ընդգրկվելու մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքային խմբի կազմում, ընդգրկվելու իր հանձնաժողովի ստեղծած ենթահանձնաժողովի կազմում, ծանոթանալու Ազգային ժողովին, իր

խմբակցությանը կամ հանձնաժողովին հասցեագրված ցանկացած փաստաթղթի, բացառությամբ անվանական կամ անձնական նյութերի, ինչպես նաև պետական գաղտնիք պարունակող այնպիսի տեղեկության, որին հրավասու չէ իրազեկվելու: Կանոնակարգի՝ պատգամավորի պարզականությունները սահմանող 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի համաձայն՝ պատգամավորը պարտավոր է համապատասխանաբար՝ ընդգրկվել մեկ մշտական հանձնաժողովի կազմում, բացառությամբ Կանոնակարգի 11-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերի, մասնակցել իր անդամակցած հանձնաժողովի նիստերին, իր անդամակցած հանձնաժողովի հրավիրած խորհրդարանական լսումներին:

Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կարգով մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա դեղակալի իրեն վերապահված պաշտոնում առաջադրելու թեկնածու:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմավորման գործընթացում օրենսդրությունը նախատեսել է հանձնաժողովի անդամի մասով՝ նշանակման կարգ, նախագահի և նրա տեղակալի մասերով՝ ընդունելու ժամանակաշրջանը:

Մշտական հանձնաժողովի անդամների տեղերի բաշխման պայմաններում խմբակցությունն իր ներկայացնության պատգամավորներին՝ անմիջականորեն նշանակում է իրեն վերապահված տեղերում. այս իրավահարաբերությունը թե՛ սուբյեկտային, թե՛ փուլային զարգացման առումով էականորեն տարբերվում է մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոնների գրադեցման իրավահարաբերություններից, որոնց պայմաններում խմբակցության դերը սահմանափակվում է իրավահարաբերության սկզբնական փուլում մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու լիազորությամբ:

Դիմողի կողմից բարձրացված սույն տարբերակման իրավաչափությունը գնահատելու առումով Սահմանադրական դատարանը կարևորում է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի անդամի, նախագահի և նրա տեղակալի իրավական կարգավիճակների միջև տարբերությունների վերհանումը: Այսպես, Կանոնակարգի՝ մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունները սահմանող 13-րդ հոդվածի համակարգային վերլուծությունից ակնհայտ է, որ մշտական հանձնաժողովի նախագահը, ի տարբերություն մշտական հանձնաժողովի անդամի, օժտված է նաև կազմակերպահիրավական լիազորություններով և իրականացնում է հանձնաժողովի աշխատանքի համակարգմանն առնչվող ներքին կազմակերպական, ինչպես նաև հանձնաժողովի և Ազգային ժողովի այլ մարմինների, քարտուղարության փոխհարաբերությունների համակարգմանն ուղղված արդարին կազմա-

կերպական լիազորություններ: Մշտական հանձնաժողովի նախագահը համակարգում է մշտական հանձնաժողովում ընդգրկված խմբակցությունների ներկայացուցիչների աշխատանքը, ինչպես նաև հանձնաժողովի և Ազգային ժողովի այլ մարմինների համագործակցությունը:

Մշտական հանձնաժողովի նախագահի կազմակերպահրավական լիազորություններն ուղղված են բացառապես հանձնաժողովի գործունեության համակարգմանը: Մշտական հանձնաժողովի նախագահի իրավական կարգավիճակի առանձնահատկությունն է նաև այն, որ վերջինս ի պաշտոն է անդամակցում է Ազգային ժողովի խորհրդին՝ ներկայացնելով համապատասխան հանձնաժողովը, և որպես Ազգային ժողովի խորհրդի անդամ ունի լիազորություններ, որոնք առնչվում են Ազգային ժողովի գործունեությանը և չեն սահմանափակվում միայն համապատասխան հանձնաժողովի գործունեության համակարգմամբ: Այսպես, Կանոնակարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային ժողովի խորհրդին իրականացնում է Ազգային ժողովի գործունեության առնչվող մի շարք լիազորություններ, որոնցից են Ազգային ժողովի հերթական նստաշրջանների և նիստերի օրակարգերի նախագծերը հաստատելը, Ազգային ժողովի հերթական նիստերի օրակարգային հարցերի քննարկման հաջորդականությունը սահմանելը, Սահմանադրության 168-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված դեպքում պատզամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելը, Ազգային ժողովի աշխատակազմի կառուցվածքը և կանոնադրությունը հաստատելը և այլն:

Կանոնակարգի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնը թափուր լինելու դեպքում նրան փոխարինում է տեղակալը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի կողմից որոշված անդամը: Ըստ այդմ՝ մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի կարգավիճակային տարբերությունը հանձնաժողովի անդամի կարգավիճակից պայմանավորված է մշտական հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնը թափուր լինելու ժամանակահատվածում վերջինիս փոխարինելու լիազորությամբ:

Կանոնակարգի 138-րդ հոդվածի 11-րդ մասի առաջին նախադասության համաձայն՝ մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալն ընտրվում է իրավասու խմբակցության ղեկավարի կամ քարտուղարի առաջադրմամբ՝ հանձնաժողովի որոշմամբ: Օրենսդիրը, հաշվի առնելով մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնից բխող լիազորությունների շրջանակը, հիշատակված պաշտոնի զբաղեցման կարգը պայմանավորել է տվյալ հանձնաժողովի որոշմամբ՝ կարևորելով մշտական հանձնաժողովի՝ որպես կոլեգիալ մարմնի, իրավական կարգավիճակը:

Վերոնշյալի առնչությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ համապատասխան օրենսդրական կարգավիրումների տարբերակվածությունն

ինքնին չի վկայում դրանց՝ Սահմանադրությանը հակասելու մասին: Օրենսդրի կողմից Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի ընտրության կարգ նախատեսվելը թելադրված է խորհրդարանական բոլոր ուժերի շահերի հավասարակշռմամբ և հիմնավորված է մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի իրավական կարգավիճակների առանձնահատկություններով: Ի վերջո, Ազգային ժողովը չի կարող բացարձակապես մասնակցություն չունենալ Կանոնակարգի 2-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ իր առանցքային մարմնի՝ մշտական հանձնաժողովի ծևավորման և կառավարման, տվյալ դեպքում՝ մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության գործընթացին: Այլ հարց է, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում համապատասխան պաշտոնները բաշխելիս պարտադիր կարգով պետք է հաշվի առնվի Ազգային ժողովի խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դարպարանը գրնում է, որ օրենսդրի կողմից Կանոնակարգում ամրագրված՝ մշտական հանձնաժողովի անդամի փեղը, մշտական հանձնաժողովի նախագահի և նրա փեղակալի պաշտոններն զրադեցնելու կարգերի դարբերակումը համահունչ է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված ըստ պարզամանավորների թվի համամասնության բաշխման պահանջին:

Կանոնակարգի՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրության առնչվող դրույթներում գործածված «խմբակցությունն իրավունք ունի», «իրավունքն անցնում է» ձևակերպումների առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջիններիս առկայությունը դեռևս չի վկայում, որ խմբակցությունները՝ մշտական հանձնաժողովներում իրենց ներկայացվածությունը (համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոնների մասով) ապահովելուն ուղղված լիազորություններն իրականացնելու հարցում ունեն բացարձակ հայեցողություն: Ընդ որում՝ խոսքը վերաբերում է ոչ թե այս կամ այն անձի թեկնածությունն առաջադրելու հայեցողությանը, որը համապատասխան խմբակցության հայեցողական իրավասության տիրույթում լուծվող հարց է, այլ մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոններում թեկնածուների առաջադրման լիազորությունն իրացնելուն: Սահմանադրի կողմից Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պահանջն իմպերադրիվ է, ուստի՝ դրա կենսագործումը չի կարող կախվածության մեջ դրվել Ազգային ժողովի համապատասխան խմբակցության բացարձակ հայեցողությունից:

**Առհասարակ հարկ է նկատի ունենալ, որ Սահմանադրությամբ ամրագրում սպացած նորմերով սահմանված պարտադիր պահանջների**

**կենսագործումն ապահովող օրենսդրական կառուցակարգերը չեն կարող հիմնվել բացարձակ հայեցողական լիազորությունների վրա՝ անփեսելով այդպիսի լիազորություններով Սահմանադրությամբ նախանշված շրջանակի նկատմամբ հետևանքային ազդեցությունը։ Հանրային իշխանության մարմինների լիազորությունները բխում են վերջիններիս սահմանադրական գործառույթներից և ուղղված են դրանց իրականացմանը, հետևաբար՝ հանրային իշխանության մարմինների գործառույթների իրականացման ապահովմանն ուղղված լիազորությունները չեն կարող մեկնաբանվել այնպես, որ խաթարվի բուն սահմանադրական գործառույթի էությունն ու դրա կենսագործման նպատակը։ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հանրային իշխանության մարմնի սահմանադրական գործառույթի կենսագործումը չի կարող կախված լինել հանրային իշխանության որևէ մարմնի բացարձակ հայեցողությունից։ Անգամ այն դեպքերում, երբ օրենսդրական ձևակերպումներն այնպիսին են, որ հանրային իշխանության մարմնին օրենքով վերապահված լիազորությունները կարող են մեկնաբանվել որպես հայեցողական, դրանք պետք է ընկալվեն որպես համապարտասիան մարմնի սահմանադրական գործառույթների և առաքելության իրականացման նպատակով իրացվող պարտադիր լիազորություններ և իրացվեն այդ մարմնի սահմանադրական գործառույթների ոգուն համահում։**

Սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 31-ի UԴ-1518 որոշման մեջ նշված է. «(...) Հանրապետության նախագահի լիազորությունների տարանջատումը նշանակում է, որ Հանրապետության նախագահը չի կարող հայեցողաբար փոփոխել իր լիազորությունների էությունը կամ որ նույնն է՝ պարտադիր լիազորությունները փաստացի փոխակերպել հայեցողական լիազորությունների, ինչպես նաև չի կարող իրաժարվել իրականացնել իր պարտադիր լիազորությունները հայեցողական լիազորությունների գործադրմամբ կամ որևէ այլ պատճառաբանությամբ։ Նշվածը վերաբերելի է նաև սահմանադրական ցանկացած այլ մարմնի, իրավասու սուբյեկտի կամ պաշտոնատար անձի։»

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ վերոնշյալ իրավական դիրքորոշումը կիրառելի է նաև սույն գործով՝ Ազգային ժողովի խմբակցության՝ որպես Սահմանադրության 105-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Ազգային ժողովի քաղաքական կամքի ձևավորմանը նպաստող մարմնի, Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու լիազորության իրականացման մասով։

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Ազգային ժողովի խմբակցությունը չի կարող իրաժարվել Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում իր համամասն ներկայացվածությունը (մշտական հանձնա-

**ժողովի նախագահի, նրա գեղակալի պաշտոնների մասով** ապահովելու սահմանադրի կամքը կենսագործելուց՝ իրականացնելով իր համապատասխան օրենսդրական լիազորություններն այնպես, որ վերջիններիս հաղորդվի բացարձակ հայեցողական բնույթ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի խմբակցությունների՝ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պահանջի կենսագործումն ապահովելուն ուղղված համապատասխան լիազորություններն ունեն պարտադիր բնույթ: Խմբակցությունները պարփակոր են ձեռնարկել Սահմանադրի վերոնշյալ պահանջի կենսագործումն ապահովելուն ուղղված անհրաժեշտ քայլեր:

Վերոշարադրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համահունչ է մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց դեղակալների պաշտոնների՝ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ ըստ խմբակցություններում ընդգրկված պարզամակորների թվի համամասնության բաշխման սկզբունքին այն մեկնարանությամբ, որի համաձայն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա գեղակալի իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելն իրավասու խմբակցության ոչ թե բացարձակ հայեցողական, այլ պարփառիր լիազորությունն է:

**4.3.** Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 138-րդ հոդվածի համապատասխան իրավակարգավորումների հարաբերակցության հարցին: Այսպես, Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով ամրագրված կարգավորումը վերաբերում է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոններն զբաղեցնելու կարգին. Խմբակցության՝ նշված նորմով ամրագրված թեկնածու առաջադրելու պահանջը ենթադրում է, որ այդ պաշտոններն զբաղեցվում են ընտրությամբ: Կանոնակարգի 138-րդ հոդվածով ամրագրված կարգավորումները սահմանում են մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրության կարգի կենսագործման կառուցակարգերը և գերազանցապես ընթացակարգային բնույթ ունեն:

Դիմողի դիրքորոշումներից պարզ է դառնում, որ վերջինիս համար սահմանադրականության առումով խնդրահարուց է առավելապես մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի ընտրության կարգը, իսկ Կանոնակարգի 138-րդ հոդվածով ամրագրված ընթացակարգային կարգավորումները Դիմողի համար սահմանադրականության առումով խնդրահարուց են այնքանով, որքանով միտված են մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի ընտրության կարգի կենսագործմանն ու

անմիջական ազդեցություն են գործում խմբակցությունների համամասն ներկայացվածության պահանջն ապահովելու վրա:

Կանոնակարգի 138-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքը որոշելուց հետո խմբակցությունները կարող են փոխհամաձայնությամբ փոխանակել կամ միմյանց զիջել մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց իրավունքը:

Այդ առնչությամբ, նկատի առնելով Սահմանադրական դատարանի՝ սույն որոշման 4.2-րդ կետում արտացոլված եղանակներում առ այն, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելն իրավասու խմբակցության պարտադիր լիազորությունն է, սույն որոշման 4.2-րդ կետում արտացոլված արձանագրումն առ այն, որ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկու նախադասություններն օրգանական կապի մեջ են, որպիսի հանգամանքով պայմանավորված՝ «տեղեր» եզրույթը կարող է մեկնաբանվել այսպես, որ, մշտական հանձնաժողովի անդամներից բացի, ներառի նաև մշտական հանձնաժողովի նախագահին և նրա տեղակալին՝ նկատի առնելով նաև, որ համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալը հանդիսանում են այդ հանձնաժողովի անդամներ, ինչպես նաև փաստելով, որ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկու նախադասություններում շեշտադրումը կատարված է մշտական հանձնաժողովներում տեղերը, մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները բաշխելիս խմբակցություններում ընդգրկված պարզամավորների թվի համամասնության վրա, որից ցանկացած շեղում կրովանդակազրկի Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասում արտացոլված նախադասություններն ինչպես առանձին վերցված, այնպես էլ համակցության մեջ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի խմբակցությունների կողմից մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուներ առաջադրելու իրավունքը զիջելու վերաբերյալ՝ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դրույթը համատեղելի չէ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ մշտական հանձնաժողովներում տեղերի/պաշտոնների՝ ըստ պատգամավորների թվի համամասնության բաշխման սկզբունքի հետ: Խմբակցությունների միջև բաշխված տեղերի պատկանելիությունն իրավասու խմբակցություններին չի կանխորոշվում վերջիններիս կամարտահայտությամբ, այլ պայմանավորված է Սահմանադրի իմպերատիվ պահանջով, հետևաբար՝ խմբակցությունները չեն կարող զիջել մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների՝ իրենց վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու

**լիազորությունը:** Այդ առնչությամբ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 5-րդ մասն այնքանով, որքանով նախատեսում է Ազգային ժողովի խմբակցությունների կողմից մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման լիազորությունը որոշելուց հետո փոխհամաձայնությամբ մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց լիազորությունը միմյանց գիշելու հնարավորություն, հակասում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին:

Սահմանադրական դատարանն այս համատեքստում հարկ է համարում արձանագրել նաև, որ վերը նշված դատողությունը վերաբերում է բացառապես մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների՝ իրենց վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու լիազորությունն այլ խմբակցության գիշելու արգելքին, սակայն դրանով չի կարող սահմանափակվել համապատասխան խմբակցության կողմից մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի թեկնածուի ընտրության հարցում այդ խմբակցության հայեցողությունը, որի հրականացման շրջանակը կարող է սահմանափակվել բացառապես մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի թեկնածուի նկատմամբ ընդհանուր բնույթի սահմանափակումներով:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Ազգային ժողովի խմբակցությունների միջև մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների՝ իրենց վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու իրավունքի (Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ պարտադիր լիազորության) փոխհամաձայնությամբ փոխանակումը, որի հնարավորությունը նախատեսված է Կանոնակարգի 138-րդ հոդվածի 5-րդ մասով, չպետք է հանգեցնի Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին համապարասխան՝ մշտական հանձնաժողովներում համամասն ներկայացվածության սկզբունքի խախտմանը, դրա ծևախեղմանը:

**4.4. Կանոնակարգի 138-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ եթե Ազգային ժողովի խմբակցությունը Կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետում մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրեն վերապահված թափուր պաշտոնում թեկնածու չի առաջադրում, ապա տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է Կանոնակարգի հիշյալ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցության իրավասու խմբակցության փոխարեն մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրավասու խմբակցությանը վերապահված թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու հնարավորություն է ընձեռվել:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ օրենսդրական կարգավորումը համահունչ չէ Սահմանադրական դատարանի այն եզրահանգմանը, որի համաձայն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա փեղակալի իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելն իրավասու խմբակցության պարտադիր լիազորությունն է: Իրավասու խմբակցությունը չի կարող հրաժարվել մշտական հանձնաժողովի նախագահի, նրա փեղակալի՝ սահմանադրական պահանջի ուժով իրեն պարկանող համապատասխան պաշտոններում թեկնածուներ առաջադրելու պարտադիր լիազորությունից (խմբակցությունների միջև համապատասխան լիազորության փոխհամաձայնությամբ փոխանակման հնարավորությամբ):

Այդ առնչությամբ, նկատի առնելով նաև Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունում գործածված «տեղերը բաշխվում են» և երկրորդ նախադասությունում գործածված «պաշտոնները (...) բաշխվում են» ձևակերպումների բովանդակության առնչությամբ Սահմանադրական դատարանի՝ սույն որոշման 4.2-րդ կետում արտացոլված մոտեցումը, Սահմանադրական դատարանի՝ սույն որոշման 4.3-րդ կետում արտացոլված այն փաստումը, որ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկու նախադասություններում շեշտադրումը կատարված է մշտական հանձնաժողովներում տեղերը, մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները բաշխելիս խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնության վրա, որից ցանկացած շեղում կրովանդակազրկի Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասում արտացոլված նախադասություններն ինչպես առանձին վերցված, այնպես էլ համակցության մեջ՝ հավելելով, որ նման պայմաններում, մշտական հանձնաժողովների նախագահների տեղակալների պաշտոնները բաշխելիս Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագոված համամասնությունից շեղումը կիսեղաթյուրի Սահմանադրության հիշյալ նորմի բովանդակությունը՝ փաստելով, որ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված կարգավորումները (այդ թվում՝ բանաձևը) վերաբերելի են ինչպես մշտական հանձնաժողովների նախագահների, այնպես էլ նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրումներին, կիրառելի են վերջիններիս նկատմամբ, երկու պաշտոնների մասով էլ նոյնաբռովանդակ են՝ Սահմանադրական դադարանը գրնում է, որ Ազգային ժողովի որևէ այլ խմբակցություն, այդ թվում՝ ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությունը, մեկ այլ խմբակցությանը վերապահված՝ մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա փեղակալի պաշտոններում թեկնածուներ առաջադրելու լիազորության (Սահմանադրական դադարանի գնահակմամբ՝ պարտադիր լիազորության) իրացման իրավասու սույրեկը չէ: Խնդրո առարկա հարաբերություններում Ազգային ժողովի իրավասու խմբակցությունն այն խմբակցությունն է, որին համամասն ներկայացվածության սահմանադրական

սկզբունքով պաշտոնների բաշխմամբ ի սկզբանե վերապահված են մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնները, և իրավասու խմբակցության՝ նշված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու լիազորությունը պահպանվում է մինչ Ազգային ժողովի լիազորությունների ավարտը:

Ամփոփելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 12-րդ մասով ամրագրված կարգավորումների գործողության պայմաններում խեղաթյուրվում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ մշտական հանձնաժողովներում պաշտոնների՝ ըստ խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնության բաշխման Սահմանադրի պահանջը, հետևաբար՝ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 12-րդ մասը հակասում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին:

Ենթելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

**1.** «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի՝ իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելն իրավասու խմբակցության ոչ թե իրավունքն է, այլ պարտադիր լիազորությունը:

**2.** «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 5-րդ մասն այնքանով, որքանով նախատեսում է Ազգային ժողովի խմբակցությունների կողմից մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքը որոշելուց հետո փոխհամաձայնությամբ մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց իրավունքը միմյանց գիշելու հնարավորություն, ճանաչել Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող:

**3.** «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 12-րդ մասը ճանաչել Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող:

**4.** Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետին և 19-րդ մասին համապատասխան՝

Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2024 թվականի մայիսի 31-ը՝ հնարավորություն ընձեռելով Ազգային ժողովին՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշմանը:

5. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

## ՆԱԽԱԳԱՀՈՂ

19 դեկտեմբերի 2023 թվականի  
ՍԴՌ-1708

## Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ՝ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ  
19-Ի ՍԴՈ-1708 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը դոնքաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 138-րդ հոդվածի, ինչպես նաև այդ դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը և 2023 թվականի դեկտեմբերի 19-ին ընդունեց ՍԴՈ-1708 որոշումը (իրապարակվել է 2023 թվականի դեկտեմբերի 22-ին):

Համաձայն չինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի դեկտեմբերի 19-ի ՍԴՈ-1708 որոշմանը՝ ես՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ա. Վաղարշյանս, շարադրում եմ իմ հատուկ կարծիքը՝ որոշման եզրափակիչ մասի կետերի և դրանց հիմքում դրված պատճառաբանական մասերի վերաբերյալ:

**1. ՍԴՈ-1708 որոշման եզրափակիչ մասի 1-ին կետի վերաբերյալ**

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի (այսուհետև՝ Կանոնակարգ) 8-րդ հոդվածի («Խմբակցության լիազորությունները») 1-ին մասի 5-րդ կետը սահմանում է. «1. Խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կարգով»

(...)

5) մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա դեղակալի իրեն վերապահված պաշտոնում առաջադրելու թեկնածու»:

Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1708 որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով վերը բերված իրավակարգավորմանը տրվել է մեկնաբանություն, ըստ որի՝ այդ իրավադրույթը «համապարասխանում է Սահմանադրության այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա դեղակալի՝ իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելն իրավասու խմբակցության ոչ թե իրավունքն է, այլ պարտադիր լիազորությունը»:

Այսպիսի եզրակացության հիմքում դրվել է երկու պատճառաբանություն: **Առաջին՝** «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) շատ ընդհանրացված, առանց կոնկրետությունները հաշվի առնելու և ոչ միանշանակ, դրանց արդյունքում

մեծապես բարոյախրատական բնույթի խորհրդատվությունը: **Երկրորդ** պատճառաբանությունը հետևյալն է: «Հանրային իշխանության մարմինների լիազորությունները բխում են վերջիններիս սահմանադրական գործառույթներից և ուղղված են դրանց իրականացմանը, հեկուաբար՝ հանրային իշխանության մարմինների գործառույթների իրականացման ապահովմանն ուղղված լիազորությունները չեն կարող մեկնաբանվել այնպես, որ խաթարվի բուն սահմանադրական գործառույթի էությունն ու դրա կենսագործման նպագակը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հանրային իշխանության մարմնի սահմանադրական գործառույթի կենսագործումը չի կարող կախված լինել հանրային իշխանության որևէ մարմնի բացարձակ հայեցողությունից: Անզամ այն դեպքերում, երբ օրենսդրական ձևակերպումներն այնպիսին են, որ հանրային իշխանության մարմնին օրենքով վերապահված լիազորությունները կարող են մեկնաբանվել որպես հայեցողական, դրանք պետք է ընկալվեն որպես համապատասխան մարմնի սահմանադրական գործառույթների և առաքելության իրականացման նպագակով իրացվող պարտադիր լիազորություններ և իրացվեն այդ մարմնի սահմանադրական գործառույթների ոգուն համահունչ»:

Այսպիսի կոչտ մեկնաբանությունը հնարավոր է, որ ընդունելի լիներ ցանկացած այլ պետական մարմնի համար, բայց ոչ Ազգային ժողովի, որի կազմակերպման հիմքում դրված է ժողովրդի քաղաքական ներկայացուցության սկզբունքը, որը ենթադրում է նաև քաղաքական առճակատում, ինչը խորհրդարանի՝ որպես ժողովրդի ներկայացուցական մարմնի ու քաղաքական կուսակցությունների՝ իշխանություն-ընդիմություն հիմունքներով կազմակերպված լինելու պարագայում «**նույնպես բնականոն և երեմն անհրաժեշտ երևույթ է**»: Այդ առճակատման մեջ արտահայտվում է նաև ժողովրդի ընտրածայների քազմազանությունը, հետևաբար՝ առճակատման կողմերի վարքագիծը պայմանավորված է ժողովրդի համապատասխան հատվածի քվեով, իսկ կողմերի վարքագիծի գնահատողն ինքը՝ ժողովուրդն է: Բախսման լուծման միջոցը նոր ընտրություններն են կամ խորհրդարանի գործունեության անընդհատությունն ապահովող Սահմանադրությանը համապատասխան կառուցված ճկուն ընթացակարգերով իրավակարգավորումները:

Բացի հայեցակարգային հակասականությունից, «պարտադիր լիազորություն» հասկացությունը քննություն չի բռնում նաև ձևական իրավաբանական տրամաբանության դիրքերից: Անհասկանալի է, թե ինչո՞ւ է Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված տասնյակից ավելի իրավունքների շարքում այս մեկը համարվում պարտադիր, և ի՞նչ է պարտադիր իրավունքը:

**Վերը մատնանշված հայեցակարգային ու տրամաբանական հակասությունները բացառվում են այն դեպքում, երբ Կանոնակարգի 8-րդ հոդվածի**

1-ին մասի 5-րդ կետը տառացիորեն հասկացվում է որպես խմբակցության իրավունք, որը կարող է սահմանափակվել, մասնավորապես, իրավասու խմբակցության կողմից իրեն վերապահված մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար թեկնածու առաջադրելու իրավունքի իրականացումից հրաժարվելը, կամ առաջադրված թեկնածուների պարերական հրաժարականը կարող է հանգեցնել Ազգային ժողովի խմբակցության այդ իրավունքի՝ Կանոնակարգով սահմանված սահմանափակման՝ մշտական հանձնաժողովի անխափան և անընդհատ գործունեության ապահովման համար:

## 2. ՍԴՈ-1708 որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետի վերաբերյալ

Կանոնակարգի 138-րդ հոդվածի 5-րդ սահմանում է, որ «Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց դեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքը որոշելուց հետո խմբակցությունները կարող են փոխհամաձայնությամբ փոխանակել կամ միմյանց զիջել մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա դեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց իրավունքը»:

Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1708 որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետով այդ իրավակարգավորումը «այնքանով, որքանով նախադեսում է Ազգային ժողովի խմբակցությունների կողմից մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց դեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքը որոշելուց հետո փոխհամաձայնությամբ մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա դեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց իրավունքը **միմյանց զիջելու հնարավորություն**» ճանաչվել է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող:

Սահմանադրությունը, ենելով Ազգային ժողովի մարմիններում խորհրդարանական փոքրամասնության պարտադիր ներկայացվածության սկզբունքից, այդ փոքրամասնության համար երաշխավորել է Ազգային ժողովի տեղակալներից մեկի ընտրությունն ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից (104-րդ հոդված, 1-ին մաս), խորհրդարանի մշտական հանձնաժողովներում տեղերի բաշխումը խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ, ինչպես նաև մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխումը խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ (106-րդ հոդված, 2-րդ մաս):

Սահմանադրական այս իրավակարգավորումների տառացի բովանդակությունը իմմք ընդունելով՝ անհասկանալի է, թե ինչո՞ւ է հակասահմանադրական **մշտական հանձնաժողովների տեղակալների պաշտոններում** թեկնածուների առաջադրման իրավունքը որոշելուց հետո խմբակցություններում մշտական հանձնաժողովների առաջադրման իրավունքը որոշելուց հետո խմբակցությունների փոխհամաձայնությամբ մշտական հանձնաժողովի տեղակալի

պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց իրավունքը **միմյանց գիշելու** հնարավորությունը: Չէ որ Սահմանադրությունը մշտական հանձնաժողովների նախագահների տեղակալներին չի ներառել խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ խմբակցությունների միջև բաշխման կարգի շրջանակներու (106-րդ հոդված, 2-րդ մաս):

Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ» իրավակարգավորումը երաշխիք է, որ խմբակցությանը չզրկեն այդ հավակնությունից՝ մեծամասնության որոշմամբ: Սակայն խմբակցությունը՝ որպես խորհրդարանի հիմքային կառուցվածքային օղակ, պետք է ունենա իր ինքնավարությունից բխող մանսերելու լայն հնարավորություններ, ինչը ենթադրում է խորհրդարանական տարատեսակ պայմանավորվածություններ ու փոխհամաձայնություններ, որոնք բխում են կոալիցիաներ կազմելու կամ խորհրդարանական գործունեության ընթացքում համագործակցելու և այլ շահերից: Հետևաբար՝ Կանոնակարգը սահմանել է ճկուն իրավակարգավորում, որի հիմքում ընկած է խմբակցությունների կամավոր փոխհամաձայնությունը՝ հրաժարվել հանձնաժողովի նախագահի թեկնածու առաջադրելու իր իրավունքից՝ գիշելով այն մեկ այլ խմբակցության: Եթե այդ որոշումն ընդունում է ինքը՝ խմբակցությունը՝ կամավոր, առանց որևէ պարտադրանքի, ապա այն չի կարող համարվել հակասահմանադրական:

Փոխհամաձայնեցման հիմքով պաշտոնների հավակնորդների թեկնածուների առաջադրման իրավունքից հրաժարվելու կամ պաշտոնները միմյանց գիշելու կամ այլ տարբերակներով իրավակարգավորումները տարածված են համաշխարհային խորհրդարանական պրակտիկայում, որովհետև դրանք հնարավոր են դարձնում գտնել ճկուն, անհատականացված, հետևաբար՝ պատշաճ իրավիճակային լուծումներ: Այս համատեքստում Կանոնակարգի 138-րդ հոդվածի 5-րդ մասը չի կարող համարվել հակասահմանադրական, որովհետև, նախ ի սկզբանե խմբակցության համար երաշխավորված է, ըստ առկա համամասնության, մշտական հանձնաժողովում տեղերի և դրանց նախագահների պաշտոնների տեղերի քանակը, ինչի պայմաններում հետագայում դրանք կամավոր ինչպես փոխանակելը, այնպես էլ գիշելը բնականոն են, հետևաբար՝ սահմանադրական, հատկապես ո՞ր խմբակցությունը ցանկացած պահի կարող է դուրս գալ կամ հրաժարվել փոխանակման կամ գիշման համաձայնագրից:

### **3. ՍԴՈ-1708 որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետի վերաբերյալ**

Կանոնակարգի 138-րդ հոդվածի 12-րդ մասը սահմանում է. «Եթե խմբակցությունը Կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետում մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա դեղակալի՝ իրեն վերապահված

թափուր պաշտոնում թեկնածու չի առաջադրում, ապա դվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը»:

Սահմանադրական դատարանն իր որոշմամբ այս իրավադրույթը ճանաչել է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող: Այս դիրքորոշման հիմքում դրվել է հետևյալ պատճառաբանությունը. «Սահմանադրական դափարանը գտնում է, որ հիշյալ օրենսդրական կարգավորումը համահունչ չէ Սահմանադրական դափարանի այն եզրահանգմանը, որի համաձայն՝ Ազգային ժողովի մշղական հանձնաժողովի նախագահի և նրա դեղակալի իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելն իրավասու խմբակցության պարբադիր լիազորությունն է: Իրավասու խմբակցությունը չի կարող իրաժարվել մշղական հանձնաժողովի նախագահի, նրա դեղակալի՝ սահմանադրական պահանջի ուժով իրեն պարկանող համապատասխան պաշտոններում թեկնածուներ առաջադրելու պարբադիր լիազորությունից (խմբակցությունների միջև համապատասխան լիազորության փոխհամաձայնությամբ փոխանակման հնարավորությամբ):

(...)

(...) Սահմանադրական դափարանը գտնում է, որ Ազգային ժողովի որևէ այլ խմբակցություն, այդ թվում՝ ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությունը, մեկ այլ խմբակցությանը վերապահված՝ մշղական հանձնաժողովի նախագահի կամ նրա դեղակալի պաշտոններում թեկնածուներ առաջադրելու լիազորության (Սահմանադրական դափարանի գնահատմամբ՝ պարբադիր լիազորության) իրացման իրավասու սույնեկի չէ: Խնդրո առարկա հարաբերություններում Ազգային ժողովի իրավասու խմբակցությունն այն խմբակցությունն է, որին համամասն ներկայացվածության սահմանադրական սկզբունքով պաշտոնների բաշխմամբ ի սկզբանե վերապահված են մշղական հանձնաժողովի նախագահի կամ նրա դեղակալի պաշտոնները, և իրավասու խմբակցության՝ նշված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու լիազորությունը պահպանվում է մինչ Ազգային ժողովի լիազորությունների ավարտը»:

Այս եզրակացությունը հակասական է հենց խնդրո առարկա որոշման եզրափակիչ մասի 1-ին կետի համատեքստում, որում ասված է, որ Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը «համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնարանությամբ, որի համաձայն՝ Ազգային ժողովի մշղական հանձնաժողովի նախագահի և նրա դեղակալի՝ իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելն իրավասու խմբակցության ոչ թե իրավունքն է, այլ պարբադիր լիազորությունը»:

Ստացվում է, որ ՍԴՈ-1708 որոշմամբ խմբակցության իրավունքը դիտարկվում է «պարտադիր լիազորություն», իսկ իրավաբանորեն պարտադրվող ցանկացած վարքագիծ պետք է ունենա ինչ-որ սանկցիոն հետևանք: Սակայն

պետք է նկատի ունենալ, որ եթե Սահմանադրական դատարանը խմբակցության իրավունքը դիտարկել է «պարտադիր լիազորություն», ապա դա չի նշանակում, որ առճակատման գնացած խմբակցությունն իրականում անպայմանորեն կառաջադրի հանձնաժողովի նախագահի թեկնածու: Կանոնակարգի 138-րդ հոդվածի 12-րդ մասը հենց սանկցիոն հետևանք է, որը վկա է հասնում, եթե որ խմբակցությունը չարաշահմամբ չի իրացնում իր իրավունքը:

Արդյունքում՝ գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցության իրավասու խմբակցության փոխարեն մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրավասու խմբակցությանը վերապահված թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու հնարավորության ընծեռումը, որպես իրավակարգավորում, **հակասահմանադրական և անվավեր ճանաչելը պարտադիրությունը վերածում է բարոյախրատական կոչի:**

Մշտական հանձնաժողովներում տեղերը և դրանց նախագահների պաշտոնները թափուր լինելը կարող է պատճառ դառնալ խորհրդարանական կյանքում գործառնական բարդությունների, ճգնաժամերի ու փակուղիների առաջացման, իսկ դրանց արդյունքում խաթարել մշտական հանձնաժողովի և այլ մարմինների արդյունավետ աշխատանքը: Օրենսդրի կողմից սույն իրավակարգավորման ամրագրումը հետապնդում է խմբակցության կողմից մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրեն վերապահված թափուր պաշտոններում թեկնածուներ առաջադրելու իրավունքը չօգտագործելու հետևանքով խորհրդարանական կյանքում առաջացող իրավական փակուղին հաղթահարելու, մշտական հանձնաժողովի անխափան գործունեությունն ապահովելու նպատակ:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների գործառութային անընդհատության ապահովման համար Կանոնակարգը կարող է նախատեսել հանձնաժողովի բնականոն գործունեության ապահովման համար նախատեսված ժամանակավոր կառուցակարգեր մինչև Սահմանադրությանը համապատասխանող ու դրանից բխող կանոնակարգային իրավադրույթներով սահմանված կարգով հանձնաժողովի նախագահի ընտրությունը, սակայն այդ կառուցակարգերը պետք է համապատասխանեն այդ հարաբերությունների կարգավորմանն ուղղված սահմանադրական իրավադրույթներին, այն է՝ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին:

Միաժամանակ վերոնշյալ իրավակարգավորումը սահմանադրականության տեսանկյունից գնահատելիս մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների վերաբերյալ իրավակարգավորումների նկատմամբ անհրաժեշտ է դրսևորել տարբերակված մոտեցումներ:

Համաձայն Կանոնակարգի 138-րդ հոդվածի 11-րդ մասի՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալն ընտրվում է իրավասու խմբակցության ղեկավարի կամ քարտուղարի առաջադրմամբ՝ հանձնա-

ժողովի որոշմամբ: Ըստ Կանոնակարգի 13-րդ հոդվածի 2-րդ մասի՝ մշտական հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնը թափուր լինելու դեպքում նրան փոխարինում է տեղակալը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի կողմից որոշված անդամը, հետևաբար՝ մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի կարգավիճակի առանձնահատկությունը կամ գործառության առաքելությունը նախագահի բացակայության ժամանակ վերջինիս փոխարինելն է:

Ի տարբերություն մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի՝ նրա տեղակալի պաշտոնը սահմանված չէ: Սահմանադրությամբ: Այդ ինստիտուտը նախատեսված է միայն Կանոնակարգով, որը միաժամանակ այն ճանաչել է որպես խմբակցությունների միջև ըստ համամասնության բաշխվելիք պաշտոն, ինչը, որպես օրենսդրական լուծման տարբերակ, իր հիմքում չունի Սահմանադրությամբ պայմանավորված անհրաժեշտություն: Սակայն քանի որ Կանոնակարգն այդ պաշտոնի համար ևս սահմանել է մշտական հանձնաժողովների նախագահների համամասնությամբ խմբակցությունների միջև ըստ համամասնությունների բաշխման կարգ, ուրեմն՝ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 12-րդ մասի՝ հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնի գրադեցման իրավակարգավորումները պետք է նախատեսեն, որ ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությունը պարտավոր է **առաջին հերթին** համապատասխան թեկնածուին առաջարիթել այն իրավասու խմբակցությունից, որին ի սկզբանե վերապահել է համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնը, և միայն այդ կարգով հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրությունները չկայանալու դեպքում սահմանեն, որ առաջադրումն իրականացվում է այլ խմբակցությունների անդամների թվից:

Ուշադրություն ենք իրավիրում այն հանգամանքի վրա, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները և դրանք գրադեցնելու կարգի հիմունքներն ուղղակիորեն (տառացի) ամրագրված են Սահմանադրությամբ, հետևաբար՝ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 12-րդ մասում նախատեսված իրավակարգավորումը՝ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի մասով, անպայմանորեն պետք է նախատեսի այնպիսի իրավակարգավորում, որը համահունչ է Սահմանադրությանը: Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանն առաջին հերթին կարող են փոխանցվել ոչ թե Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համապատասխան թափուր տեղի նկատմամբ խմբակցության իրավունքները, այլ միայն տվյալ տեղի համար թեկնածու առաջադրելու իրավունքը: Սակայն հետագա գործընթացներում հնարավոր է Կանոնակարգով նախատեսել նաև մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համապատասխան թափուր տեղի նկատմամբ խմբակցության իրավունքների ժամանակավոր

փոխանցում այլ խմբակցությանը, եթե հանձնաժողովների նախագահների պաշտոնների թափուր մնալը կարող է առաջացնել համակարգային ու լուրջ խոչընդոտներ խորհրդարանի գործունեության համար:

Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասության ուժով մշտական հանձնաժողովի գործառության անընդհատության ապահովմանն ուղղված ցանկացած իրավակարգավորում պետք է նախատեսի, որ ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությունը պարտավոր է առաջին հերթին համապատասխան թեկնածուին առաջադրել այն իրավասու խմբակցությունից, որին Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասության ուժով ի սկզբանե վերապահված է համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը:

Վերը բերված հիմնավորումները հաստատում են, որ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 12-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ երբ իրավասու խմբակցությունը իրաժարվում է Կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետում մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրեն վերապահված թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելուց, ապա տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը, որը պարտավոր է առաջադրում իրականացնել այն խմբակցության համապատասխան ներկայացուցիչներից, որին ի սկզբանե վերապահված էր թեկնածու առաջադրելու իրավունքը: Եթե այս ընթացակարգով ևս հնարավոր չլինի ընտրել մշտական հանձնաժողովի նախագահ կամ տեղակալ, ապա Կանոնակարգը կարող է նախատեսել պահեստային կարգավորումներ, օրինակ՝ առաջադրման իրականացում նաև այլ խմբակցությունների պատգամավորների թվից: Նման կարգով ընտրված նախագահը կարող է պաշտոնավարել մինչև այն պահը, երբ իրավասու խմբակցությունը, դադարեցնելով առճակատումը, կորոշի անցնել կառուցողական հարթություն և առաջադրել համապատասխան թեկնածու:

#### **4. Կանոնակարգի 138-րդ հոդվածով նախատեսված՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոն(ներ)ում ընտրական կարգի մասին**

Դիմողը բարձրացնում է հետևյալ հարցադրումները.

«1. Ո՞րն է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասում «Մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:» նորմերի սահմանադրահրավական

բովանդակությունը, արդյո՞ք հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովում որևէ այլ պաշտոնը (ներառյալ՝ հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնը) ներառվում է խմբակցությանը հասանելիք տեղերի թվաքանակի մեջ:

2. Արդյո՞ք Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոն(ներ)ում թեկնածուներ առաջադրելու և այդ պաշտոն(ներ)ում ընտրությունների անցկացման՝ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ինչպես նաև 138-րդ հոդվածով սահմանված ընթացակարգերը ոչ իրավաչափ կերպով չեն սահմանափակում Ազգային ժողովի քաղաքական փոքրամասնության, առավելապես ընդիմադիր խմբակցության իրավունքները: Այսինքն՝ Ազգային ժողովի քաղաքական փոքրամասնությունը կազմող խմբակցությունը (իիմնականում ընդիմադիր խմբակցությունը) լրացուցիչ կախվածության մեջ է ընկնում կառավարող խմբակցությունից սահմանադրի կողմից իրեն վերապահված իրավունքն իրացնելիս»:

Դիմողը պնդում է. «(...) Տերմինաբանության տեսանկյունից Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունը օգտագործում է «պաշտոնները բաշխվում են» տերմինները, մինչդեռ վիճարկվող դրույթը և դրա հետ փոխկապակցված դրույթները կիրառում են «թեկնածու առաջադրելու իրավունք» տերմինները, որոնք ոչ միայն չեն համապատասխանում միմյանց, այլև «թեկնածու առաջադրելու իրավունք» տերմինն ինքնին սահմանափակում և աղավաղում է «պաշտոնները բաշխվում են» տերմինը, քանի որ պաշտոնների բաշխումը ենթադրում է խմբակցության որոշման հիման վրա նշանակում, որը կախված չէ կառավարող խմբակցության կամքից, մինչդեռ (...) «թեկնածու առաջադրելու իրավունք»-ը տրամագծորեն հակառակն է»:

Դիմոդի կողմից բարձրացված՝ Սահմանդրության 106-րդ հոդվածի 2-րդ մասում առկա «տեղերը բաշխվում են» և Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «իրեն վերապահված պաշտոնում առաջադրելու թեկնածու», ինչպես նաև 138-րդ հոդվածի «մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրությունները» իրավական ծևակերպումների բովանդակության ու դրանց հարաբերակցության պարզաբանման համար իրականացված համակարգագործառությաին ամբողջական մեկնաբանությունը ցույց է տալիս, որ խորհրդարանական ընտրություններից հետո օրենսդիր մարմնի բնականոն գործունեության ապահովման համար, առաջին հերթին, ծևակորպում են Ազգային ժողովի՝ Սահմանադրությամբ սահմանված մարմինները, ներառյալ՝ մշտական հանձնաժողովները, ընդ որում՝ վերջիններիս կազմավորումն ունի եռափուլ ընթացակարգ, որի իրականացման իրավական հիմունքները սահմանված են Սահմանադրությամբ, իսկ մանրամասները՝ Կանոնակարգով:

Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավակարգավորումը, համաձայն որի՝ մշտական հանձնաժողովներում տեղերը և մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ, նպատակառությամբ է մշտական հանձնաժողովներում խորհրդարանական մեծամասնության և փոքրամասնության՝ ընտրությունների արդյունքներով պայմանավորված անհրաժեշտ հարաբերակցության ապահովմանը, խորհրդարանական կյանքին ընդդիմության մասնակցության երաշխավորմանը, խորհրդարանական ուժերի հակակշռման համատեքստում նրա դերի բարձրացմանը:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմավորման **գործընթացի առաջին փուլում**, ելնելով խորհրդարանական ընտրությունների արդյունքներից՝ որոշվում է խորհրդարանի մշտական հանձնաժողովներում յուրաքանչյուր խմբակցությանը հատկացվող տեղերի քանակը, որի իրավակարգավորումների հիմքում դրված է մշտական հանձնաժողովներում տեղերի որոշման Կանոնակարգով սահմանված բանաձևը, ընդ որում՝ ամբողջական փուլային կառուցակարգում խորհրդարանի մշտական հանձնաժողովներում յուրաքանչյուր խմբակցությանը հատկացվող տեղերի քանակի որոշումը հանձնաժողովի կազմավորմանն ուղղված նախնական բնույթի իրավակիրառական գործընթաց է: Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասն այդ նախնական գործընթացն անվանում է «մշտական հանձնաժողովներում գործընթացի բաշխում»: Ըստ որում՝ Կանոնակարգը փոքրամասնություն հանդիսացող խմբակցությունների համար սահմանում է լրացուցիչ երաշխիք՝ ըստ խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնության տեղերի բաշխման պահանջը տարածելով նաև հանձնաժողովների նախագահների տեղակալների վրա:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմավորման վերը նկարագրված գործընթացի տրամաբանությունից ելնելով՝ Կանոնակարգը, հիմք ընդունելով մշտական հանձնաժողովներում խմբակցությունների ունեցած տեղերի քանակն ըստ բանաձևի բաշխումը, սահմանում է խորհրդարանի մշտական հանձնաժողովների կազմավորման **երկրորդ փուլի** իրավակարգավորումները, մասնավորապես՝ տվյալ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները կոնկրետ պատգամավորներով համալրման կարգը՝ դրա հիմքում դնելով մշտական հանձնաժողովների անդամներին՝ խմբակցությունների կողմից **նշանակման սկզբունքը**. համաձայն Կանոնակարգի 11-րդ հոդվածի 2-3-րդ և 5-րդ մասերի՝ մշտական հանձնաժողովում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ, իսկ խմբակցության անդամը խմբակցությանը վերապահված հանձնաժողովի անդամի տեղում նշանակվում, ինչպես նաև հանձնաժողովի կազմից դուրս է գալիս խմբակցության որոշմամբ:

Խմբակցությունն իրավունք ունի թափուր թողնելու հանձնաժողովում իրեն վերապահված տեղը, ինչպես նաև փոխելու հանձնաժողովի կազմում ընդգրկված իր անդամին:

Այսպիսով՝ մշտական հանձնաժողովների անհատականացված կազմը կամ կոնկրետ անդամներին, ըստ խմբակցությունների համար նախապես սահմանված տեղերի քանակի, ուղղակիորեն որոշում են խմբակցությունները, որեմն՝ Սահմանադրությամբ երաշխավորված է խորհրդարանական փոքրամասնության՝ մշտական հանձնաժողովներում անդամներ նշանակելու իրավունքը՝ առանց խորհրդարանի քաղաքական մեծամասնության որևէ կերպ արտահայտված համաձայնության կամ պարտադրանքի: Այս գործընթացի համար Կանոնակարգի սահմանած իրավակարգավորման համաձայն՝ մշտական հանձնաժողովի կազմը և դրանում փոփոխություն-ները հաստատում է Ազգային ժողովի նախագահը, եթե պահպանված են Կանոնակարգի 11-րդ հոդվածով սահմանված սկզբունքները (12-րդ հոդված, 1-ին մաս), ընդ որում Ազգային ժողովի նախագահի այդ լիազորությունն ունի վավերացնող բնույթ:

«Ետևաբար՝ խորհրդարանի բոլոր, ներառյալ՝ փոքրամասնություն կազմող խմբակցությունների համար երաշխավորված են մշտական հանձնաժողովներում և՝ ներկայացվածության, և՝ դրանցում իրենց ներկայացուցիչների անհատական կազմը (անդամներին) որոշելու իրավունքները: Վերջինիս երաշխիքը Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն է, ըստ որի՝ խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կարգով Ազգային ժողովի հանձնաժողովում իրեն վերա-պահված տեղում նշանակելու խմբակցության անդամի, ինչպես նաև փոխելու նրան:

Մշտական հանձնաժողովին անդամակցությունը բխում է պատգամավորների կարգավիճակից, համարվում է պատգամավորական մանդատի իրացման ծևերից մեկը, որը, ի թիվս այլնի, ներառում է նաև խորհրդարանական հանձնաժողովներում վերջիններիս կողմից ծավալվող գործունեությանն առնչվող իրավունքներն ու պարտականությունները: Ուշադրություն ենք իրավիրում այն հանգամանքի վրա, որ այդ իրավակարգավորումների համաձայն, ի թիվս այլնի, պատգամավորը պարտավոր է ընդգրկվել մեկ մշտական հանձնաժողովի կազմում:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմավորման երրորդ փուլում տեղի են ունենում մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրությունները: Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «իրեն վերապահված պաշտոնում թեկնածու առաջադրելու» խմբակցության իրավունքը մասսամբ, ինչպես նաև 138-րդ հոդվածի «մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրությունները» ծևակերպումը վերաբերում են Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմավորման այս փուլին, որի՝ որպես գործընթացի կարգավորման հիմքում Կանոնակարգը դրել է ընտրովիության սկզբունքը.

մշտական հանձնաժողովների նախագահների ընտրությունը կատարվում է Ազգային ժողովի նիստում՝ Կանոնակարգի 135-րդ հոդվածով սահմանված կարգով, իսկ մշտական հանձնաժողովի նախագահների տեղակալների ընտրությունը կատարվում է հանձնաժողովում՝ դրա անդամների կողմից՝ պահպանելով Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա՝ Կանոնակարգով սահմանված ու իրականացված մշտական հանձնաժողովներում խմբակցությունների միջև տեղերի և մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխման համամասնությունները։ Ընդ որում՝ Կանոնակարգը մշտական հանձնաժողովների նախագահների տեղակալների պաշտոնների համար ևս սահմանում է ըստ համամասնության խմբակցությունների միջև բաշխման կարգ։

Դիմողի դիրքորոշումներից պարզ է դառնում, որ վերջինիս համար սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց է առավելապես մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոնների զբաղեցման ընտրովիլության կարգը, հետևաբար՝ Կանոնակարգի 138-րդ հոդվածում ամրագրված ընթացակարգային կարգավորումները սահմանադրականության տեսանկյունից Դիմողի համար խնդրահարույց են այնքանով, որքանով ուղղված են մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի ընտրությունների կարգավորմանը։

Կանոնակարգը խորհրդարանի մշտական հանձնաժողովների կազմավորման գործընթացի վերոբերյալ իրավակարգավորումները սահմանելիս որդեգրել է տարբեր կարգեր (սկզբունքներ)՝ խորհրդարանական ընտրությունների արդյունքներով հանձնաժողովում տեղերի բաշխման, հանձնաժողովի անդամներին խմբակցության կողմից նշանակման, հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների՝ խմբակցությունների միջև բաշխման, Ազգային ժողովում՝ մշտական հանձնաժողովների նախագահների, իսկ հանձնաժողովներում նրանց տեղակալների ընտրության։

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմավորման գործընթացը կարգավորող վերոբերյալ իրավադրույթներից Սահմանադրությունն ուղղակի ամրագրել է միայն այն, որ մշտական հանձնաժողովներում տեղերը, ինչպես նաև դրանց նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ։ Խմբակցությունների միջև մշտական հանձնաժողովներում տեղերի բաշխման կարգի սահմանադրական իրավադրույթներից, ինչպես նաև մշտական հանձնաժողովների կազմավորման մի շարք առանձնահատկություններից (հատկապես որ պատգամավորը պարտավոր է ընդգրկվել մեկ մշտական հանձնաժողովի կազմում) տրամաբանորեն բխում է, որ մշտական հանձնաժողովի անհատական կազմի համալրման արդյունավետ և հարմար սկզբունքը խմբակցության կողմից նշանակումն է,

որովհետև բոլոր պատգամավորները պետք է ընդգրկված լինեն գոնե մեկ մշտական հանձնաժողովի կազմում:

Մեր գնահատմամբ՝ մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնակալման կարգի վերաբերյալ Սահմանադրությունից չի բխում որևէ նույնիսկ անուղղակի ենթադրություն, որ դրա հիմքում պետք է անպայման դրվի խմբակցության կողմից նշանակման սկզբունքը: Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմի, դրանց նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների համատեքստում Սահմանադրությունը պարտադիր է համարում միայն մշտական հանձնաժողովներում խմբակցությունների միջև տեղերի, ինչպես նաև հանձնաժողովների նախագահների պաշտոնների խմբակցությունների միջև համամասնորեն բաշխումը: Հետևաբար՝ Կանոնակարգի 138-րդ հոդվածում ամրագրված՝ մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների համալրման կարգը՝ կառուցված ընտրովիրության սկզբունքի վրա, չի կարող հակասել Սահմանադրությանը:

Այս համատեքստում անդրադառնալով Դիմողի կողմից բարձրացված մշտական հանձնաժողովների անհատական կազմի համալրման՝ մի կողմից, և դրանց նախագահների ու տեղակալների ընտրության կարգերի՝ մյուս կողմից, տարբերակման խնդրին, գտնում ենք, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրովիրության սկզբունքն արտաքոց իրավակարգավորում չէ: Կանոնակարգի վելուծությունը թույլ է տալիս եղրակացնել, որ Ազգային ժողովի մարմինների կազմավորման հարաբերությունների կարգավորման համար օրենսդիրը որդեգրել է տարբեր սկզբունքներ, ինչի արդյունքում Կանոնակարգում առկա են Ազգային ժողովի մարմինների կազմավորման տարբերակված կառուցակարգեր, մասնավորապես՝ **ընտրովի** (Ազգային ժողովի նախագահ, նրա տեղակալ-ներ), **նշանակովի** (քննիչ հանձնաժողովի նախագահ և անդամներ), ի պաշտոնե ներկայացուցչական (Ազգային ժողովի խորհուրդ), **նշանակովի-ընտրովի** կամ **խառը** (մշտական հանձնաժողովներ):

Կանոնակարգը խորհրդարանի մշտական հանձնաժողովների կազմավորման գործընթացի հերթական փուլերի իրավակարգավորումները սահմանելիս որդեգրել է տարբեր սկզբունքներ՝ ընտրությունների արդյունքներով տեղերի նախական բաշխման, խմբակցության կողմից նշանակման, ներհանձնաժողովային ընտրության: Այդ գործընթացին վերաբերող կարգավորիչ իրավադրույթներից Սահմանադրությունն ուղղակի ամրագրմամբ բարձրագոյն ուժ է տվել միայն մշտական հանձնաժողովներում տեղերի բաշխման և դրանց նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխման կարգերին: Խմբակցություններում տեղերի բաշխման կարգի սահմանադրական իրավադրույթներից, ինչպես նաև մշտական հանձնաժողովների կազմավորման մի շարք առանձնահատկություններից ենելով՝

տրամաբանորեն հնարավոր է բխեցնել, որ բաշխման գործընթացին հաջորդող փուլի՝ հանձնաժողովի անհատական կազմի համալրման իրավակարգավորիչ սկզբունքը խմբակցության կողմից նշանակումն է: Եթե խորհրդարանի մշտական հանձնաժողովների կազմավորման գործընթացի անհատական կազմի համալրման փուլի համար անուղղակիորեն կարող ենք անել նման եզրահանգում, ապա երրորդ փուլ՝ մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնակալման կարգի վերաբերյալ Սահմանադրությունից չի բխում անուղղակի որևէ ենթադրություն, որ դրա հիմքում պետք է անպայման դրվի խմբակցության կողմից նշանակման սկզբունքը: Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնակալման ընտրովիության կարգի փոխարեն օրենսդիրը կարող էր սահմանել նաև խմբակցության կողմից նշանակովի ներկայացուցական կարգը, քանի որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների ստանձնման մասին Սահմանադրությունը տառացիորեն որևէ որոշակի/ուղղակի դրույթ չի ամրագրում: Սահմանադրությունը պարտադիր է համարում միայն մշտական հանձնաժողովներում խմբակցությունների միջև տեղերի, ինչպես նաև հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխելը:

Այս հանգամանքը նկատի ունենալով՝ գտնում ենք, որ խնդրո առարկա պաշտոնների գրադեցման կարգի սահմանում՝ Սահմանադրությամբ ամրագրված հիմնադրությների, այն է՝ տեղերի բաշխման կարգի շրջանակում, գտնվում է օրենսդիր իշխանության իրավասության ոլորտում: Օրենսդիրն այստեղ ունի հայեցողության ազատություն՝ երկու այլընտրանքների միջև՝ որդեգրել կամ նշանակովիության, կամ ընտրովիության սկզբունքը: Սահմանադրական օրենքի գործող իրավակարգավորումներով օրենսդիրը ներկա պահին առավել նպատակահարմար է գտել Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրության, քան նշանակման կարգը՝ հաշվի առնելով ընտրությունների որոշակի առավելությունները՝ գործընթացի հրապարակայնությունը, թափանցիկությունը, թեկնածուի որակների մասին ընտրողների և պատգամավորների մոտ պատկերացումների ձևավորումը, իր լիազորություններն իրականացնելիս ընտրվողի հաշվետվողականությունն ընտրողների առջև և այլն:

Հիմք ընդունելով վերոբերյալ հիմնավորումները՝ գտնում ենք, որ Կանոնակարգի 138-րդ հոդվածում ամրագրված՝ մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների համալրման կարգը՝ կառուցված ընտրովիության սկզբունքի վրա, համապատասխանում է Սահմանադրությանը՝ հիմք ընդունելով նաև այն, որ հնարավոր թեկնածուների տվյալ հանձնաժողովի կազմում ընդգրկվելու

ընթացակարգի հիմքում ի վերջո ընկած է խմբակցության կողմից ըստ նախապես բաշխված համամասնության նշանակման կարգը:

Հետևաբար՝ ակնհայտ է, որ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 1-ին, 2-11-րդ, 1.1-ին մասերում ամրագրված՝ մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների համալրման կարգը՝ կառուցված ընտրովիության սկզբունքի վրա, համահունչ է Սահմանադրությանը և համապատասխանում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին:

### Եզրակացություններ

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը, այն մեկնաբանությամբ, որ իրավասու խմբակցության կողմից իրեն վերապահված մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար թեկնածու առաջադրելը բացառապես իրավունք է, որի իրականացումից հրաժարվելը կամ առաջադրված թեկնածուների պարբերական հրաժարականը կարող է հանգեցնել Ազգային ժողովի խմբակցության այդ իրավունքի՝ օրենքով սահմանված սահմանափակման՝ մշտական հանձնաժողովի անխափան և անընդհատ գործունեության ապահովման համար:

2. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 12-րդ մասն այնքանով, որքանով նախատեսում է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի թեկնածու առաջադրելու իրավունքի փոխանցում խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը, համապատասխանում է Սահմանադրությանը՝ սույն հատուկ կարծիքի մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շղանակում:

3. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 1-ին, 2-11-րդ, 1.1-ին մասերը համապատասխանում են Սահմանադրությանը:

### ԴԱՏԱՎՈՐ

### Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ

29 դեկտեմբերի 2023 թվականի



## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ  
Է ԵԽԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՆՁԱԺՈՂՈՎԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՄԱՁԵԿՈՒՑՈՂՆԵՐԻՆ**




2023 թվականի նոյեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանում հյուրընկալվել են Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԵՎ) Մոնիթորինգի հանձնաժողովի Հայաստանի հարցերով համագեկուցողներ Կիմո Կիյունենը, Բորիանա Աբերգը և ԵԽԵՎ Մոնիթորինգի հանձնաժողովի քարտուղար Մեթյու Մոնինը:

Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, ողջունելով պատվիրակության անդամներին, կարևորել է Եվրոպայի Խորհրդի և միջազգային այլ գործընկերների հետ համագործակցությունը, ընդգծելով արդեն իսկ մեկնարկած բարեփոխումների ընդգրկուն ծրագրերը, որոնք միտված են Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատության շուրջ բաց երկխոսությանը, առավել միասնական իրավական պրակտիկային, սահմանադրական արդարադատության մատչելիության բարելավմանը, ինչպես նաև Հայաստանում ժողովրդավարության, մարդու իրավունքների, իրավահավասարության և իրավունքի գերակայության ամրապնդմանը:

Հյուրերի խնդրանքով Սահմանադրական դատարանի նախագահը ներկայացրել է միջազգային գործընկերների օժանդակությամբ վերհանված այն առաջնահերթ խնդիրները, որոնց համակարգված լուծումն էլ ավելի կրաքարացնի Սահմանադրական դատարանի աշխատանքի արդյունավետությունը, ինչպես նաև դրանց լուծման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության հանդեպ հանրային վստահության ամրապնդման հիմնախնդիրներին: Երկուատեք ընդգծվել է դատաիրավական ոլորտում բարեփոխումների շարունակականության կարևորությունը:

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ՄԱԿ-Ի ՀԱՏՈՒԿ ԶԵԿՈՒՑՈՂԸ



2023 թվականի նոյեմբերի 20-ին Սահմանադրական դատարանի փոխնախագահ Վահե Գրիգորյանն ընդունել է ճշմարտության, արդարության, հատուցման և չկրկնվելու երաշխիքների խթանման հարցերով ՄԱԿ-ի հատուկ գեկուցող Ֆարիան Սալվիոլիին և Մարդու իրավունքների պատասխանատու Բրենդա Վուկովիչին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Սահմանադրական դատարանի կողմից մարդու իրավունքների միջազգային չափանիշների՝ Սահմանադրության գերակայության ապահովման գործառույթի շրջանակներում ապահովման Սահմանադրական դատարանի կողմից լուծվող խնդիրները:

Արձարձվել են նախկինում տեղ գտած՝ մարդու իրավունքների համակարգային խախտումների դեպքերին և դրանց հետևանքների վերացմանն ուղղված միջոցներին վերաբերող հարցեր՝ Սահմանադրական դատարանի որոշումների շրջանակներում:

**ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵԽ ԵՐԵՎԱՆՅԱՆ  
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ**



2023 թվականի դեկտեմբերի 6-ին Սահմանադրական դատարանի նախագահն ընդունել է Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Մարտինա Շմիդտին:

ՍԴ նախագահը բարձր է գնահատել Եվրոպայի խորհրդի դերը Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական ինստիտուտների զարգացման, մարդու իրավունքների պաշտպանության գործում: Արման Դիլանյանը կարևորել է Սահմանադրական դատարանի և ԵԽ Երևանյան գրասենյակի համագործակցությունը՝ ընդգծելով համատեղ իրականացված ծրագրերի բարձր արդյունավետությունը:

ԵԽ Երևանյան գրասենյակի ղեկավար Մարտինա Շմիդտը շնորհակալություն է հայտնել << Սահմանադրական դատարանի նախագահին՝ Բարձր դատարանի բաց և պատրաստակամ համագործակցության համար, ինչն էլ ավելի է ամրապնդել երկկողմ համագործակցությունն ու նպաստել բարեփոխումների իրականացմանը: Մարտինա Շմիդտը ԵԽ կողմից պատրաստակամություն է հայտնել շարունակել համագործակցությունը ինստիտուցիոնալ բարեփոխումների ուղղությամբ:

**ՍԴ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՏՈՒԿ ՄՐՑԱՆԱԿ՝ ԱՐՑԱԽԻՆԵՐԻ,  
ԲՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ԼԱՎԱԳՈՒՅՆՍ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ**



2023 թվականի դեկտեմբերի 11-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը մասնակցել է Մարդու իրավունքների միջազգային օրվան նվիրված՝ «Հոդված 3. լրագրողները՝ հանուն իրավունքների» մրցանակաբաշխությանը:

Ողջունելով միջոցառման մասնակիցներին՝ Արման Դիլանյանը շեշտել է, որ ժողովրդավարական պետության կայացման գործում անգնահատելի է ազատ խոսքի և պատասխանատու լրագրության դերը: ՍԴ նախագահն ընդգծել է բարեխիճճ, պատասխանատու, մասնագիտությանը նվիրված լրագրողների աշխատանքի կարևորությունը՝ հաշվի առնելով, որ տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ, տեղեկատվական կեղծ հոսքերի, տեղեկատվական գրոհների պայմաններում մարդիկ երեմն դժվարանում են տարբերակել իրական և կեղծ ինֆորմացիաները, և այս առումով հսկայական բեռ են կրում հենց լրագրողները՝ ֆիլտրելով ու հանրայնացնելով իսկապես արժանահավատ տեղեկատվություն:

ՍԴ նախագահի խոսքով, լրագրողներն ու դատական իշխանությունը բնական դաշնակիցներ են ինչպես մարդու իրավունքների պաշտպանության, այնպես էլ՝ փոխադարձ գործունեության գնահատման և պաշտպանության առումով: Արման Դիլանյանը նշել է, որ բարձր է գնահատում լրագրողների օբյեկտիվ և կառուցողական քննադատությունը, ինչը թույլ է տալիս առավել հստակ պատողութել և լուծել հնարավոր խնդիրները:

«Լրագրողները՝ հանուն իրավունքների» ամենամյա մրցանակաբաշխության շրջանակներում Բարձր դատարանի նախագահը «Հատուկ մրցանակ» անվանակարգում հուշանվեր ու հավաստագիր է հանձնել արցախցի լրագրող Մարութ Վանյանին՝ ով, հատկապես շրջափակման օրերին տեղեկատվությամբ և որակյալ լրագրությամբ միջազգային մերժաներին հասանելի է դարձրել Արցախում տիրող իրավիճակը, իրավունքների խախտման խնդիրները:

## ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ ԷՀՀ-ՈՒՄ ԵՄ ԴԵՍՊԱՆԻՆ



2023 թվականի դեկտեմբերի 11-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական Միության դեսպան Վասիլիս Մարագոսին:

Ողջունելով ԵՄ դեսպանին՝ ՍԴ նախագահը բարձր է գնահատել Սահմանադրական դատարանի և ԵՄ հայաստանյան ներկայացուցության համագործակցությունը: Արման Դիլանյանը ներկայացրել է վերջին տարիներին համատեղ իրականացված ծրագրերի կարևորությունը, նշելով դրանց էական նշանակությունը Սահմանադրական դատարանում իրականացվող ինստիտուցիոնալ բարեփոխումների համատեքստում:

Դեսպան Վասիլիս Մարագոսը շնորհակալություն է հայտնել ՍԴ նախագահին՝ ԵՄ-ի հետ Բարձր դատարանի արդյունավետ համագործակցության համար: ԵՄ դեսպանը պատրաստակամություն է հայտնել ապահովելու համագործակցության շարունակականությունն ու էլ ավելի ամրապնդելու երկկողմ բարձր մակարդակի հարաբերությունները:

## ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ

### ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ  
Ա. ՇԱՀԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ  
ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ**



2023 թվականի նոյեմբերի 2-ին ճանաչողական այցի շրջանակներում Սահմանադրական դատարան են այցելել Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցի աշակերտները:

Ավագ դասարանների աշակերտները հանդիպում են ոնեցել Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական Ալինա Փխրիկյանի հետ: Տիկին Փխրիկյանը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության դատական իշխանության կառուցվածքը, Բարձր դատարանի դերն ու առաքելությունը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում:

Մասնակիցների խնդրանքով Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդականն անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանի գործառույթների առանձնահատկություններին, լիազորությունների շրջանակին: Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ օրենսդրությանը, արդարադատության ոլորտին, իրավունքների պաշտպանությանն առնչվող՝ աշակերտներին հետաքրքրող մի շարք հարցեր:

Այցի ընթացքում պատանիները շրջայց են կատարել Սահմանադրական դատարանի վարչական շենքում:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ  
ԵՆ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ**



2023 թվականի նոյեմբերի 9-ին Սահմանադրական դատարանում հյուրընկալվել են «Հայաստանում ֆրանսիական համալսարան» իհմնադրամի ուսանողները: Իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողներին ընդունել է Սահմանադրական դատարանի դատավոր Երվանդ Խունդիկարյանը:

«Վարչական դատավարություն» առարկայի շրջանակում կայացած հանդիպմանը քննարկվել են վարչական դատավարությունում վճռաբեկության կարգով դատական ակտերի բողոքարկմանը, ինչպես նաև նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայմանն առնչվող մի շաբթ հարցեր:

Ուսանողները ծանոթացել են նաև Սահմանադրական դատարանի գործունեության առանձնահատկություններին՝ Հայաստանի Հանրապետության դատական իշխանության մյուս մարմինների հետ փոխհարաբերություններին, Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի լիազորությունների տարանջատմանը:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ  
ԵՆ ԳԵՂԱՆԻՍՏԻ ԵՎ ՔԱՍԱԽԻ ՄԻԶՆԱԿԱՐԳ  
ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ**



2023 թվականի նոյեմբերի 20-ին Սահմանադրական դատարանում հյուրընկալվել են Արարատի մարզի Գեղանիստի միջնակարգ դպրոցի և Կոտայքի մարզի Քասախի Ռ. Գևորգյանի անվան 1-ին միջնակարգ դպրոցի ավագ դասարանների աշակերտները, որոնց հետ հանդիպել է Սահմանադրական դատարանի նախագահ Արման Ղիլանյանը:

Բարձր դատարանի նախագահը ներկայացրել է Սահմանադրական դատարանի դերը Հայաստանի Հանրապետության սահմանադրական ժողովութափարության համակարգում, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության պաշտպանությանն ուղղված առանցքային գործառույթները, Բարձր դատարանի գործունեության առանձնահատկությունները, պատասխանել երիտասարդներին հետաքրքրող մի շարք հարցերի:

Ճանաչողական այցի շրջանակներում երկու դպրոցների սաները շրջել են Սահմանադրական դատարանում:

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ



2023 թվականի դեկտեմբերի 14-ին Սահմանադրական դատարանում հյուրընկալվել են Հայ-ռուսական համալսարանի՝ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի իրավագիտության բաժնի ուսանողները:

Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը բաց դասի ծևաչափով ներկայացրել է Բարձր դատարանի առաքելությունը, գործունեության առանձնահատկությունները, Հայաստանի Հանրապետության դատական իշխանության մյուս մարմինների հետ փոխհարաբերությունները:

Հանդիպումը շարունակվել է հարցուապատասխանի ծևաչափով, որի շրջանակներում ՍԴ նախագահը պատասխանել է ուսանողներին հետաքրքրող մի շարք մասնագիտական հարցերի: Արման Դիլանյանն ուսանողներին հորդորել է ցուցաբերել բարձր առաջադիմություն, հավակնուուն նպատակներին հասնելու ճանապարհը հարթել բացառապես գիտելիքների միջոցով և մասնագիտական ձեռքբերումները ծառայեցնել ի նպաստ մեր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության:

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԿԱՐԵՎՈՐՈՒՄ Է ԲՈՒՀ-ԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈԹՅՈՒՆԸ



2023 թվականի դեկտեմբերի 20-ին Սահմանադրական դատարանում հյուրընկալվել են ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր և Դագեյանը, իրավագիտության ամբիոնի վարիչ թ. Շաքարյանը, իրավագիտության ամբիոնի ուսանողները:

Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի ռեկտորի հետ հանդիպմանը նշել է, որ Բարձր դատարանը մեծապես կարևորում է ուսանողների և, հատկապես, իրավագիտությունն ուսումնասիրող երիտասարդների ակտիվ շփումը Սահմանադրական դատարանի հետ:

Ուսանողների հետ տարեվերջյան հանդիպմանը Արման Դիլանյանը ներկայացրել է Բարձր դատարանի առաջնորդությունը, գործունեության առանձնահատկությունները, Հայաստանի Հանդիպության դատական իշխանության մյուս մարմինների հետ փոխհարաբերությունները:

Հանդիպումը շարունակվել է հարցուածախսանի ձևաչափով, որի շրջանակներում ՍԴ նախագահը պատասխանել է ուսանողներին հետաքրքրող մի շարք մասնագիտական հարցերի: Ամփոփելով հանդիպումը՝ Արման Դիլանյանն ուսանողներին հորդորել է մասնագիտական

գուրծունեության ընթացքում առաջնորդվել օրենքի տառով և գիտելիքներն ու մասնագիտական ձեռքբերումները ծառայեցնել ի նպաստ մեր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության:

«Պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Խաչատոր Ղազեյանը շնորհակալություն է հայտնել Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանին՝ ջերմ ընդունելության, հետաքրքիր բանախոսության և քննարկումների համար:

## ՄԻՋԱՇԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ  
ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՀԱՅ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱՐԻՆ**



Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը մասնակցել է 2023 թվականի հոկտեմբերի 27-29-ը Երևանում կայացած Հայ իրավաբանների համագործարի պաշտոնական բացմանը:

Համագործարի նպատակն էր քննարկել Հայաստանին, Լեռնային Ղարաբաղին և հայկական սփյուռքին առնչվող իրավական հարցերի լուծմանը սփյուռքի իրավական ներուժը ներգրավելու, համագործակցության համահայկական հարթակ ստեղծելու վերաբերյալ հարցեր, ինչպես նաև օժանդակել աշխարհի տարբեր երկրներում գործունեություն ծավալող և մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող հայ իրավաբանների միջև կապերի ստեղծմանն ու համագործակցությանը:

Համագործարի պաշտոնական բացման ժամանակ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, ողջունելով մասնակիցներին, կարևորել է այն փաստը, որ առաջին անգամ հայրենիքում են համախմբվել աշխարհասփյուռ հայ լավագույն իրավաբանները՝ Հայաստանի, Արցախի և հայկական սփյուռքի առջև ծառացած հիմնախնդիրների հաղթահարմանն ուղղված համատեղ իրավական լուծումներ գեներացնելու, սեփական փորձով կիսվելու համար:

«Համոզված եմ, որ իրավաբանական հանրության ճիշդ, համակարգված, թիրախային, գրագելը և թիմային աշխարանքը մեծ ներուժ ունի մեր օրակարգային խնդիրները լուծելու և հայկական պետության իրավական «թիկունքը» ամուր պահելու համար։ Սփյուռքի մեր իրավաբան հայրենակիցների դերն ու նշանակությունը անգնահատելի է ոչ միայն հայկական սփյուռքում իրավական գործընթացների առաջմղման գործում, այլ նաև առկա է մեծ ներուժ Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական փոփոխությունների, դադարիավական համակարգի բարեփոխումների, գործարար միջավայրի բարելավման ընթացքում միջազգային առաջավոր փորձի ներդրման կամ արդեն ավանդական դարձած ուղղություններով իրավական սպասարկման իմաստով։ Այսօրինակ միջոցառումները և մասնագիրական քննարկումները, ի վերջո, պետք է դուրս գան «խորհրդաժողովային» դրամաբանությունից և վերածվեն կոնկրետ ոլորտներում կոնկրետ նպատակներ, թիրախներ և արդյունքներ հետապնդող աշխարանքային կայուն հարթակների», - նշել է Արման Դիլանյանը։

Հայ իրավաբանների համագումարին մասնակցել են հանրային, մասնավոր, միջազգային, քրեական իրավունքի և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտները ներկայացնող սփյուռքի շուրջ 200 իրավաբաններ, << դատական, օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցիչներ։

**ՀՀ ՍԴ ԵՎ ՄԻՊ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ՝  
«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿԻ»  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**



Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) Հայաստանի արդարադատության ոլորտի աջակցության ծրագրի կողմից իրականացվող «Սահմանադրական արդարադատության հարթակի» շրջանակներում 2023 թվականի նոյեմբերի 3-ին տեղի է ունեցել աշխատաժողով՝ Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմերի մասնակցությամբ:

Նախաձեռնության նպատակն է նպաստել պետական կառույցների միջև միասնական իրավական պրակտիկայի ծևավորմանը, սահմանադրական արդարադատության մատչելիության բարելավմանը, ինչպես նաև Հայաստանում ժողովրդավարության, մարդու իրավունքների, իրավահավասարության և իրավունքի գերակայության առավել լավ ընկալմանը:

Միջոցառմանը բացման խոսքով են հանդես եկել ՍԴ նախագահ Արման Դիլանյանը, Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանայանը, և ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի Արդարադատության ոլորտի աջակցության ծրագրի ղեկավար Մարկ Լասմանը:

Ողջունելով աշխատաժողովի մասնակիցներին՝ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդգծել է նման աշխատանքային հանդիպումների կարևորությունը պետական գերատես-

չությունների և ներպետական այլ դերակատարների միջև համագործակցության, փորձի փոխանակման տեսանկյունից, ինչը կնպաստի Հայաստանում առկա իրավական պրակտիկայի ընդհանուր մարտահրավերների հաղթահարմանը:

Աշխատաժողովի ընթացքում տեղի է ունեցել երկու թեմատիկ նիստ՝ «Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ. առանձնահատկություններն ու գործնական խնդիրները» և «Մարդու իրավունքների պաշտպանի կողմից սահմանադրական դատարան հասցեագրվող դիմումներին ներկայացվող պահանջներն ու դիմումի ընդունելիության չափանիշները» խորագրերով։ Նիստերը վարել են Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանայանը և Սահմանադրական դատարանի դատավոր Էդգար Շաթիրյանը։

**ՄԴ ԴԱՏԱՎՈՐ Ա. ԹՈՒՆՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԵՎՐԱՍԻԱԿԱՆ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ VI ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ**




Սահմանադրական դատարանի դատավոր Արախիկ Թունյանը մասնակցել է 2023 թվականի նոյեմբերի 16-17-ը Բելառուսի Հանրապետության մայրաքաղաք Մինսկում կայացած Եվրասիական տնտեսական միության դատարանի VI միջազգային համաժողովին, որտեղ հանդես է եկել զեկույցով:

«Միության դատարանի գործունեության ազդեցությունը ԵԱՏՄ իրավակարգի ձևավորման վրա» խորագիրը կրող համաժողովի ընթացքում քննարկվել են դատարանի դերը ԵԱՏՄ իրավակարգի ձևավորման գործում, ԵՏՀ և Միության անդամ երկրների կանոնաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի զարգացումը, ազգային դատարանների հետ դատական երկխոսության առանձնահատկությունները:

Համաժողովի մասնակիցները քննարկել են նաև միջազգային դատարանների պրակտիկայի նորարարություններն ու միտումները, ԵԱՏՄ իրավունքի ոլորտային դրույթների կիրառման արդի հարցեր:

## ԱԳՐԵՍԻԱՆ ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ. ՔՆՆԱՐԿՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ



2023 թվականի նոյեմբերի 30-ին Սահմանադրական դատարանում տեղի է ունեցել «Ագրեսիան միջազգային իրավունքում. ուժի գերակայությունից իրավունքի գերակայություն» թեմայով քննարկում, որին ներկա են եղել Սահմանադրական դատարանի դատավորներ, աշխատակազմի ներկայացուցիչներ, Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության փոխդեսպան Տիմեն Կառլսբենարը, Լեյդենի համալսարանի պրոֆեսոր Նիլս Բլոքերը, Հայ-ռուսական համալսարանի իրավագիտություն ուղղության ուսանողները:

Սահմանադրական դատարանի նախագահը, ողջունելով հյուրերին, ընդգծել է հանդիպման թեմայի արդիականությունը՝ նշելով, որ ժամանակակից աշխարհը և հատկապես մեր տարածաշրջանը պարբերաբար բախվում են այնպիսի մարտահրավերների, որոնք ուղղակիորեն առնչվում են ուժի և իրավունքի փոխազդեցությանը: Արման Դիլանյանը կարևորել է միջազգային գործընկերների հետ համագործակցությունը, փորձի փոխանակումը ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով՝ հանդիպման մասնակիցներին մաղթելով արդյունավետ քննարկում:

Պրոֆեսոր Նիլս Բլոքերը հանդես է եկել «Ագրեսիան միջազգային իրավունքում. ուժի գերակայությունից իրավունքի գերակայություն» բանախոսությամբ, որին հաջորդել է մասնագիտական քննարկում:

Հանդիպման ավարտին հյուրերը երախտագիտություն են հայտնել ջերմ ընդունելության համար: Հանդիպման կազմակերպմանն աջակցել է «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը:

## ՄԴ - ԵԽ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ



«Սահմանադրական դատարանի և Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի համագործակցությամբ՝ «Աջակցություն դատարակական բարեփոխումների իրականացմանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, Երևանում տեղի է ունեցել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձում» թեմայով աշխատաժողով, որին մասնակցել են ՄԴ նախագահը, դատավորները, աշխատակազմի ներկայացուցիչները:

Աշխատաժողովի նպատակն էր մասնագիտական քննարկման միջոցով ուսումնասիրել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հետ կապված տեսական խնդիրները, միջազգային դատարանների նախադեպային որոշումները, ազգային օրենսդրությունների առանձնահատկությունները, առաջատար երկրների փորձը:

Աշխատաժողովի ընթացքում համապատասխան միջազգային չափորոշիչներով քննարկվել է նաև՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին» օրենքի կիրառման միջազգային փորձը:

Աշխատաժողովը վարել է ոլորտի վաստակաշատ փորձագետ Զերեմի Մաքրայդը:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԵՐ

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ Է ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ՍՏՐԱՍԲՈՒՐԳ



2023 թվականի հոկտեմբերի 13-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը Ստրասբուրգում մասնակցել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 16-րդ արձանագրության ուժի մեջ մտնելու հնգամյակի առթիվ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կազմակերպված աշխատաժողովին:

«Դատական երկխոսություն՝ 16-րդ արձանագրությամբ նախատեսված խորհրդատվական կարծիքի մեխանիզմի միջոցով» խորագիրը կրող միջազգային աշխատաժողովը համախմբել է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների ազգային Բարձր դատարանների նախագահներին և մշտական ներկայացուցիչներին:

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել է 16-րդ արձանագրության դերը Սահմանադրությունների և Բարձր դատարանների զարգացման գործում, ինչպես նաև՝ խորհրդատվական կարծիքի մեխանիզմի կիրառումը ազգային դատարանի և Ստրասբուրգի դատարանի տեսանկյունից: Նիստի մասնակիցները կիսվել են մեխանիզմի կիրառման իրենց փորձով:

Կոնվենցիայի 16-րդ արձանագրությամբ առաջարկվող խորհրդատվական կարծիքը գործիք է, որի միջոցով ներպետական դատարանները

հաղորդակցվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) հետ:

**Ծանոթագրություն.** Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (Կոնվենցիա) 16-րդ արձանագրությամբ ներդրված՝ խորհրդադրվական կարծիքի մեխանիզմը չի պարզադրում կողմերին ենթարկվել խորհրդադրվական կարծիքում նշված առաջարկություններին և չի սկեղծում հնարավոր վրանգ ներպեղական օրենսդրությունների համար:

Կոնվենցիայի 16-րդ արձանագրությունը վավերացրել է 22 պերություն:

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՍԵՐԲԻԱ



2023 թվականի նոյեմբերի 15-17-ը Սահմանադրական դատարանի փոխնախագահ Վահե Գրիգորյանը պաշտոնական այցի շրջանակում մասնակցել է Սերբիայի Հանրապետության սահմանադրական դատարանի 60-ամյակին նվիրված՝ Եվրոպական սահմանադրական դատարանների մասնակցությամբ տեղի ունեցած միջազգային կոնֆերանսին, որը նվիրված էր ԵԽ անդամ անդամ պետությունների սահմանադրական դատարանների կողմից Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի կիրառության խնդիրներին և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի հետ ԵԽ անդամ անդամ պետությունների սահմանադրական դատարանների միջև երկխոսության ընդլայնմանը:

Այցի ընթացքում փոխնախագահ Գրիգորյանը ներկայացրել է Հայաստանի Սահմանադրական դատարանի՝ քննարկվող ոլորտներում ունեցած փորձը և Սերբիայի, Ավստրիայի, Սլովենիայի, Էստոնիայի, Մոլդովայի, Խորվաթիայի և Ալբանիայի բարձր դատարանների հրաժարականը պատճենաբանությունը պատճենաբանությունը ինտենսիվացնել ՄիԵԴ և Եվրոպական սահմանադրական դատարանների հետ երկխոսությունը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ Է ԿԱՏԱՐԵԼ ԲԱԹՈՒՄ



Վրաստանի Սահմանադրական դատարանի հրավերով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի գլխավորած պատվիրակությունը 2023 թվականի հոկտեմբերի 19-ից 21-ը պատասխան այց է կատարել Բաթում:

Վրաստանի Սահմանադրական դատարանում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի և Վրաստանի Սահմանադրական դատարանի նախագահ Մերաբ Տուրավայի առանձնազրույցը, որին հաջորդել է Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Բարձր դատարանների դատավորների մասնակցությամբ աշխատանքային հանդիպումը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու պետություններում սահմանադրական վերահսկողությանը, ընդհանուր իրավասության դատարանների հետ Սահմանադրական դատարանների փոխգործակցությանը, Բարձր դատարանների նախադեպային որոշումներին և ինստիտուցիոնալ երկխոսության մեխանիզմներին առնչվող հարցեր:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը բարձր է գնահատել երկու երկրների Սահմանադրական դատարանների համագործակցությունը՝ կարևորելով փոխգործակցության շարունակականությունն ու փորձի փոխանակումը:

Վրաստանի Սահմանադրական դատարանի նախագահ Մերաբ Տուրավան շնորհակալություն է հայտնել Հայաստանի Հանրապետության

Սահմանադրական դատարանի պատվիրակությանը այցի համար՝ ընդգծելով Բարձր դատարանների միջև երկկողմ հարաբերությունների ամրապնդման կարևորությունը:

Այցի շրջանակներում Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Վրաստանի գործընկերների հետ այցելել է Բաթումի «Սուրբ Փրկիչ» հայ առաքելական եկեղեցի:

Ծանչողական այց է իրականացվել Բաթումում գտնվող միջնադարյան շրջանի Պետրա ամրոց:

## ՀՀ ՍԴ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԹՈՒՄՈՒՄ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԱԻՀ ԳԻՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ



Վրաստանի Սահմանադրական դատարանի հրավերով Բաթում կատարած այցի շրջանակներում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի գլխավորած պատվիրակությանը հյուրընկալել է Աջարիայի հնքնավար Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Դավիթ Գաբահձեն։ Հանդիպմանը ներկա էին Վրաստանի Սահմանադրական դատարանի նախագահ Մերաբ Տուրավան և Բաթումում Հայաստանի գլխավոր հյուպատոս Նարինե Մաթոսյանը։

Հանդիպման մասնակիցները կարևորել են Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև տարբեր ոլորտներում սերտ համագործակցությունը։

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կողեզիայի թիվ 37/2-14 որոշմամբ

## Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒՂՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ, Ա.  
ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է.  
ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՉՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

### Գլխավոր խմբագիր՝

ի.գ.թ., դոցենտ Ա. Փիսրիկյան

Ստորագրված է տպագրության՝ 10.02.2024թ.

Դասից՝ 77754

Գրաշափը՝ 70X100 1/16

Տպաքանակը՝ 100 օրինակ

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 011-58-81-81 (189)  
E-mail: armlaw@concourt.am  
<http://www.concourt.am>

Вестник Конституционного Суда Республики Армения N 4(112)2023

Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 4(112)2023

Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 4(112)2023

**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵ՝**  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 011-58-81-81(189)  
E-mail: armlaw@concourt.am  
[www.concourt.am](http://www.concourt.am)

